

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՍՔԱՐՅԱՆ
աշխատասիրությամբ

ԽԱՂԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

MAINTENANCE OF PEACE IN ARMENIA

HEARINGS

BEFORE A

SUBCOMMITTEE OF THE
COMMITTEE ON FOREIGN RELATIONS
UNITED STATES SENATE

SIXTY-SIXTH CONGRESS.

FIRST SESSION

ON

S. J. R. 106

A JOINT RESOLUTION FOR THE MAINTENANCE OF
PEACE IN ARMENIA

Printed for the use of the Committee on Foreign Relations



WASHINGTON
GOVERNMENT PRINTING OFFICE
1919

ԼՍՈՒՄՆԵՐ

ԱՄ ՄԵՆԱՄԻ ԱՐՏԱՔԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՆԹԱՀԱՆՁԱԺՈՂՈՎՈՒՄ
(27.09.1919 – 10.10.1919)

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF HISTORY

MAINTENANCE OF PEACE IN ARMENIA
HEARINGS BEFORE A SUBCOMMITTEE OF THE
COMMITTEE ON FOREIGN RELATIONS OF
THE UNITED STATES SENATE
(27. 09. 1919 – 10. 10. 1919)

Compiled and translated by
AR MENUHI GHAMBARYAN

YEREVAN – 2022

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ ИСТОРИИ

СОХРАНЕНИЕ МИРА В АРМЕНИИ
СЛУШАНИЯ В ПОДКОМИТЕТЕ КОМИТЕТА ПО
МЕЖДУНАРОДНЫМ ОТНОШЕНИЯМ СЕНАТА США
(27. 09. 1919 – 10. 10. 1919)

Составитель и переводчик
АРМЕНУИ ГАМБАРЯН

ЕРЕВАН - 2022

yr - 19
h2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻ ԱԿԱԴԵՄԻ
ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԵՑՈՒՄ

ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՊԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԻ ՍԵՎԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱԽԱՋՈՂՈՎՔԻ ԵՆԹԱՀԱՆԱԺՈՂՈՎՈՒՄ
(27.09.1919 – 10.10.1919)

6555

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻ

աշխատավիրությամբ

ՄԵՐՈՊ ԱՐ. ԱՇԽԵԱՆ



ARCH. MESROB ASHJIAN

ՄԱՍԵՆԱԾՈՒՄ

BOOK SERIES

230

Տեղական գրք

230

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՏՍՈՒԹՅԱՆ
ԲՈՒԺԵՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2022



Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
Ընդհանուր պատմության բաժնում և տպագրիմ է
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Վարուժան Պողոսյան,
պատմական գիտությունների դոկտոր

- Խ 190 Խաղաղության պահպանումը Հայաստանում. լուսմներ
ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների
հանձնաժողովի ենթահանձնաժողովում (27.09.1919 –
10.10.1919) / Արմենուհի Ղամբարյանի աշխատաժողությամբ.
Եր.: Պատմության ինստիտուտ, 2022.- 356 էջ:

Գրքում լուսաբանվում է Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ մասնավորապես 1919 թ. աշնանը հայկական խնդիրների և Հայաստանի Առաջին Հանրապետության հանդիպ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության առնչողությունները: Առաջին անգամ հայերեն քարգմանությամբ ներկայացվում է 1919 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովում՝ «Խաղաղության պահպանումը Հայաստանում» խորագրի ներքո կայացած լուսմների ամբողջական արձանագրությունը:

Սույն հրատարակությունում տեղ գտած ընդարձակ առաջարանը, քացարական տողատակերն ու «Շանոթագրություններ» բաժինը համալրում են բնագրում առկա բացերը: Այն նախատեսված է պատմաբանների, դիլանագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԱՌԱՋԱԲԱՆ

1918 թ. մայիսին վերականգնված հայոց պետականությունն առաջին խև օրերից հաղթահարում էր բազմաթիվ ու բազմապիսի դժվարություններ: Առաջին աշխարհամարտի ավարտին դաշնակիցների հուսալյրող կեցվածքը հայության հանդեպ՝ նորանկախ հանրապետության համար լուրջ ակրն-կալիքների հիմք էր դարձել: Պատերազմից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից էր՝ վերակազմված Հայաստանի համար մեծ տերություններից մեկի՝ գերադասելի էր ԱՄՆ-ի, հովանավորության ներքո անկախության կամ մանդատի ձերբերումը: Սակայն հայության ձգումները տվյալ ժամանակահատվածում կրկին չեն համընկնում մեծ տերությունների շահերին: Թե՛ եվրոպական դաշնակից երկրները, թե՛ նրանց ճամբարը համալրած Ամերիկայի Միացյալ Նահանգները, գործնականում որևէ քայլ այդ ուղղությամբ չեն ձեռնարկում: Հակառակ Հայաստանի նորաստեղծ հանրապետության սպասումների՝ ո՛չ ԱՄՆ-ը և ո՛չ անգամ եվրոպական տերությունները, պաշտոնապես նրան չեն ճանաչում:

ԱՄՆ-ը Հայաստանի Հանրապետության նկատմամբ իր դրսերումներում շարունակեց՝ դեռևս XIX դարավերջին որդեգրած և XX դարասկզբին՝ մասնավորապես Առաջին աշխարհամարտի տարիներին լայնորեն ծավալած մարդասիրական քաղաքականությունը: Քաղաքական հարթությունում՝ Հայաստանի Հանրապետության հոչակմանը թե՛ նախորդած և թե՛

¹ Խառնարար Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 75, 143:

հաջորդած ժամանակաշրջաններում, ԱՄՆ-ի կառավարությունը վճռականություն չէր դրսնորում ի նպատ հայկական խնդիրների լուծման:

Միայն 1919 թ. հունվարին՝ Փարիզի խաղաղության վեհաժողովի մեկնարկով ԱՄՆ-ի քաղաքականության մեջ սկսում են նկատվել հայկական խնդիրներին առնչվող քաղաքական միտումներ: Ուստի և հունվարի 30-ին Փարիզում կայացած խորհրդակցության ժամանակ ԱՄՆ-ի նախագահ Վուլքոն Վիլսոնը դաշնակիցների հետ միասին ընդունում է Օսմանյան կայսրությունից Հայաստանի ամբողջապես անջատմանն առնչվող որոշումը²: Այդուհանդեռ, մի քանի ամիս անց միայն՝ 1919 թ. մայիսին, Չորսի խորհուրդը որոշեց Հայաստանի նկատմամբ մանդատը հանձնել ԱՄՆ-ին³:

Այս որոշմանը՝ ակնկալվող հնարավորինս շտափ գործողությունների փոխարեն, հաջորդեց ամերիկյան վարչակազմի դրսուրած հետևողական ձգձգողականությունը Հայկական հարցում, ինչը ո՛չ հանգամանքների արդյունք էր, ո՞չ է պատահականություն: Այն լավ մշակված քաղաքականությունը Հայկական հարցում, ինչը ո՛չ հանգամանքների արդյունք էր, ո՞չ է պատահական ձգձգողական հետևողական ձգձգողական հարցում, որն աստիճանաբար նվազեցնում էր Հայաստանի մանդատի հնարավորությունները: Մինչև 1919 թ. գարնան ավարտը, Հայաստանի մանդատի ընդունումն աստիճանաբար անփրական էր թվում: Ամռան սկզբին արդեն պատկերն ավելի հստակ է դարնում, իսկ 1919 թ. հունիսի 28-ին Վերսային պայմանագրի ստորագրումից հետո, անկախ Վ. Վիլսոնի «ջանքերի»՝ ներառյալ տարածաշրջան ուղարկվող ամերիկյան արա-

թելությունների կազմակերպումը, ԱՄՆ-ի համար Հայաստանի խնամակալության հարցը փակված էր:

1919 թ. ամռանը, երբ ընթանում էին Վերսայի պայմանագրի վավերացման շուրջ բանավեճերը, ԱՄՆ-ի քաղաքականությունը հայերի հանդեպ շարունակում էր կրել միմիայն մարդասիրական բնույթ և սահմանափակվում էր հումանիտար օգնությամբ՝ նպաստամատույց գործունեությամբ: Այդ նույն ժամանակ Կովկասում ամերիկյան հյուպատոսությունների, հետախուզության և նպաստամատույցի աշխատակիցները չեն դադարում՝ ԱՄՆ-ի միջամտության հետ կապված իրենց գգուշացումներն ու խնդրանքները հղել ամերիկյան պետական կառույցներին: Նրանք հայտնում էին, որ բրիտանացիների ռազմական նահանջի արդյունքում ստեղծված ծանր հետևանքներից և մուտքմանական ապստամբություններից Հայաստանին կարող էր փրկել միայն ամերիկյան միջամտությունը⁴:

Ամերիկյան դիվանագետների՝ Հայաստան ամերիկյան փոքրաբիկ գործ ուղարկելու առաջարկները համարեց սենատոր Ուիլյամ Քինզի՝ օգոստոսի 1-ին Սենատին ներկայացրած բանաձեռ, որով կոչ էր արքում հայերին տրամադրել զենք ու զինամթերք, որպեսզի գործուն կառավարություն ձեավորվի և վերահսկողություն հաստատվի «ազգային տարածքների» վրա⁵: Հարցի շուրջ սկսված քննարկումները սակայն արդյունքում

⁴ Հռվիանեփայան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, Վերսայից-Լուսիրն 1919-1920, հ. II, Երևան, 2014, էջ 444; Օվանինցян Պ. Ղ., Մеждународные отношения Республики Армения, 1918-1920 гг., Ереван, 2007, с. 266:

⁵ United States Congress, Senate Resolution 147, Congressional Record, 66th Congress, 1st Session, 1919, vol. LVIII, pt. 4, p. 3476, 3483-3484, Washington, GPO, 1919; United States Senate, Journal of the Senate, 66th Congress, 1st session, p. 154, Washington, GPO, 1919; United States National Archives, Washington D.C., Record Group (այսուհետև՝ US NA, RG) 59, class 860J.01/ document 29.

² United States Department of State, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919. The Paris Peace Conference (այսուհետև՝ The Paris Peace Conference), in 13 volumes, Washington D.C., 1942-1947, vol. XII, p. 745-746.

³ The Paris Peace Conference, vol. V, p. 614-620.

նավետ չեղան՝ ոչ մեծարանակ զորքի օգտագործման այս առաջարկը չընդունվեց ԱՄՆ-ի կառավարության կողմից:

1919 թ. ամռան վերջին-աշնան սկզբին՝ քանի դեռ խնդրո առարկայի շուրջ կարծիքների փոխանակում էր կատարվում և ԱՄՆ-ը՝ փաստացի «պաշտոնապես» ոչ արդյունավետ քաղաքական դիրքորոշում էր դրսերում, Անդրկովկասում սաստկացել էին հակահայկական տրամադրություններն ու վերսկվել հայերի կոտորածները: Ռազմական օգնություն ցուցաբերելու փոխարեն ԱՄՆ-ը փորձում էր բրիտանական զորքի միջոցով կանխել հայերին սպառնացող կոտորածների վտանգը: Երբ բրիտանացիները, այնուամենայնիվ, որոշեցին հանել իրենց զորքերն Անդրկովկասից⁶, ԱՄՆ-ի կառավարությունը փորձում էր անել հնարավորը, որ նրանք փոխարինվեն ֆրանսիական զորքերով⁷: Այն է՝ ԱՄՆ-ի վարչակազմն ամեն կերպ փորձում էր խոլոյս տալ մանդատ ստանձնող պետությունից ակնկալվող գործողություններից: Ի պաշտպանություն հայերի՝ ԱՄՆ-ի պետական, ռազմական միջամտությունն իրական չէր: Նրա վարած պետական քաղաքականությունը վկայում է, որ Հայաստանի մանդատի ստանձնումը քաղաքական առումով նպատակահարմար չէր:

Հայաստանի Հանրապետությանը ռազմական օգնություն ցուցաբերելու անհետաձելիությունն օրիհասական դար-

⁶ US NA, RG 59, 860J.01/53: Telegram; Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., Сост. и пер. Г. Г. Махмурян, изд. 2-е, доп., Ереван, 2012, с. 191-193.

⁷ US NA, RG 59, 860J.01/82; U.S. Department of State, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919, 2 vols., Washington, 1934, vol. 2, p. 839; Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 105, 209:

ձավ երբ Կովկասի բրիտանական վերջին զորամասերը հավարվել էին Բաթումում վերջնական դուրսբերման նպատակով: Այդ ուղղությամբ աշխատանքներ էր ծավալում Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն (ՀԱԱԿ): Վերջինիս հաջողվեց Սենատի դեկավար Հ. Ք. Լոջին համոզել չհակադրվել օրենսդրության միջոցով Հայաստանում խաղաղության պահպանությանն ուղղված քայլերի արտոնմանը՝ քանի դեռ այնտեղ մշտական կարգավորումը հաստատված չէր: Ուստի երբ Հայաստանին օգնելու միջոցառումների վերաբերյալ՝ մասնակիրապես այնտեղ խաղաղության պահպանմանն ուղղված բանաձև էր մշակվել ՀԱԱԿ-ի գործադիր անդամ սենատոր Զ. Շ. Ուիլյամսի գլխավորությամբ, Հ. Ք. Լոջը հայտարարել էր, որ այն կըննարկվի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում:

Սույն բանաձևը⁸ 1919 թ. սեպտեմբերի 9-ին Սենատին ներկայացրեց փոքրամասնության՝ ժողովրդավարների առաջնորդ Գ. Ա. Հիշքոքը: Չորս ընդարձակ կետից բաղկացած բանաձևն ազդարարում էր, որ ենելով հայ ժողովրդի ազատության, խաղաղության ու առաջադիմության հանդեպ ամերիկյան

⁸ Բանաձևի անգլերեն տեքստը տե՛ս Congresional Record, vol. LVIII, pt. 5, p. 5067; US NA, RG 256, 867B.00/268; Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R.106, A Joint Resolution For the Maintenance of Peace in Armenia, Washington, GPO, 1919, p. 3 (այսուհետ՝ Maintenance of Peace in Armenia); Hovannisian R. G., The Republic of Armenia, From Versailles to London, 1919-1920, vol. II, Berkeley-Los Angeles-London, 1982, p. 435: Բանաձևի հայերեն և ռուսերեն թարգմանությունները համապատասխանաբար տե՛ս Հովհաննիսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 447-448; Հայստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրմ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 566; Օվաննիսյան Ր. Ղ., նշվ. աշխ., էջ 269:

ժողովրդի խորը և անկեղծ համակրանքից, նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կովկասից ու Հայաստանից բրիտանական զորքերի դրւումը հայ ժողովրդին անօգնական է թողնելու թուրքերի և քրդերի հարձակումների դեմ, ԱՄՆ-ի Սենատը և Ներկայացուցիչների Պալատը վճիռ էին կայացնում, որ ըստ Սենատի կարծիքի՝ Հայաստանը (ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթները և Կիլիկիան), Ռուսահայաստանը և պարսկական Աղրբեջան նախանգի հյուսիսային մասն ու Տրապիզոնը պետք է անկախ լինեն: Սենատը հույս էր հայտնում, որ հաշտության վեհաժողովը կօգնի Հայաստանին միջոցառումներ ձեռնարկել անկախ հանրապետություն հիմնադրելու համար:

Բանաձեր լիազորում էր ԱՄՆ-ի նախագահին գործածել ամերիկյան ռազմական և նավատորմային այնքան ուժ, որքան նրա կարծիքով նպատակահարմար կլիներ՝ Հայաստանում խաղաղության ու հանդարտության ապահովման համար, մինչև այդ երկրի գործերի կարգավորումն ավարտվի երկրների միջև կնքված պայմանագրով: Ուստի բանաձեր նախատեսում էր պետական զանձարանից անհրաժեշտ գումար հատկացնել նախագահին՝ վերոնշյալ որոշումն իրագործելու հնարավորություն ստանալու համար:

Առանձին երրորդ կետով, բանաձեր նախագահին իրավասություն էր վերապահում առկախելու օտարերկրյա զինվորագրման օրենքն այնքան ժամանակ, որքան այն անհրաժեշտ էր ԱՄՆ-ի հայերին՝ դրամ, գենք ու զինամթերք հայթայթելու և իբրև զինված ուժեր Փոքր Ասիայի իրենց հայրենակիցներին օգնության հասնելու համար:

Զ. Շ. Ուիլյամսի բանաձերի ներկայացումը և, հատկապես, դրա նախատեսվելիք ըննարկումը Սենատի ենթահանձ-

նաժողովում ոգևորել էր ոչ միայն հայությանն ու ՀԱԱԿ-ի անդամներին և նրա դեկավար Զեյմս Ուորեն Ջերարդին, այլև երկրի նախագահ Վ. Վիլսոնին: Ինքը՝ Զ. Շ. Ուիլյամսը հույս ուներ, որ ԱՄՆ-ը կճանաչեր Հայաստանի Հանրապետությունը, թույլ կտար ամերիկահայերին միանալ հայկական բանակին, գենք ու զինամթերք կուղարկեր Հայաստան:

Այնուամենայնիվ բանաձեր՝ նույնիսկ չմեկնարկած ընտարկումների պարագայում արդեն, դատապարտված էր տապալման: Այսպես՝ հակառակ Զ. Շ. Ուիլյամսի համոզություների, Զ. Ք. Լոջը՝ սեպտեմբերի վերջերին կարծիք էր հայտնում, որ հավանաբար տվյալ պահին Կոնգրեսն անզամ ուշադրություն չէր դարձնի գորքեր ուղարկելու հարցին: Բացի այդ, այն, որ Զ. Ք. Լոջը չէր առարկել Սենատի ենթահանձնաժողովում Հայաստանին վերաբերող հարցի ըննարկմանը, դա դեռևս չէր նշանակում, որ նա չէր խոշընդոտելու այդ հարցի դրական լուծմանը: Զ. Ք. Լոջը՝ իբրև արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ, Զ. Շ. Ուիլյամսի բանաձեր ըննարկելու համար կազմված ենթահանձնաժողովում նրա հետ մեկտեղ ընդգրկեց սենատորներ՝ Ուորեն Գ. Հարդին և Հարի Ս. Նյուին, որոնք թեպետ արտաքուստ համակրանք էին տածում հայերի նկատմամբ, այդուհանդերձ խնդրու առարկա հարցի առնչությամբ անզիջում վերապահություն ունեին:

Բանաձեր ներկայացվեց Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի լսումներին 1919 թ. սեպտեմբերի 27-ից միջև հոկտեմբերի 10-ը: Լսումներն ընթացան «Խաղաղության պահպանումը Հայաստանում» խորագրի ներքո և անցկացվեցին Կապիտոլիումում՝

Ֆիլիպինների հարցերով հանձնաժողովի սենյակում⁹: Սենատոր Ռ. Հարդինքի նախագահությամբ չորս նիստի ընթացքում վկայությամբ հանդես եկան տասներեք անձ, որոնց թվում էին ԱՄՆ-ում հայ համայնքի ներկայացուցիչները, ԱՄՆ-ի տարբեր առյանների պետական պաշտոնյաները, ամերիկյան միսիոներները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները:

Լուսների առաջին օրը վկայությամբ հանդես եկան Ամերիկայի Հայ ազգային միության երեք ներկայացուցիչ՝ Միության նախագահ Միհրան Սվազլին (Սվազյան), քաղաքացիական գործիչ ու հայտնի դրամատուրգ Մոսես Գուլեսյանը և իրավաբան Վարդան Մալքոլմը (Վերջին երկուսը ներկայացնում էին Բոսբենի հայ համայնքը):

Ըստհանուր առմամբ, բնութագրելով ամերիկահայերի վկայությունները, կարելի է հարցականի տակ դնել, թե որքանո՞վ է Սենատի հանձնաժողովում նրանց հանդես գալը նպաստել մտահոգող խնդրի լուծման դրական ընթացքին: Հայաստանում խաղաղությունն ապահովելու նպատակով, ԱՄՆ-ի կողմից գործի տրամադրման անհրաժեշտությունը հիմնավորելու համար խիստ կարևոր էր ունենալ մանրակրկիտ, տեսական քաղաքական և դիվանագիտական, հմուտ պատրաստվածություն և քաջատեղյակ լինել, առնվազն Արևմտյան Հայաստանում և նորանկախ հանրապետությունում ստեղծված իրավիճակին: Իրականում պատկերն այլ էր: Հարկ է նշել, որ Մերձավոր Արևելքից, Կովկասից և Հայաստանից շատ մեծ հեռավորության վրա գտնվելու հանգամանքը որևէ կերպ չի կարող արդա-

րացնել հայազգի վկաներին և հիմք հանդիսանալ տարածաշրջանում տիրող իրավիճակին նրանց վատառեղյակ լինելու համար:

Անհավանական է, սակայն ամերիկահայ վկաները քննարկվող հիմնահարցի վերաբերյալ ոչ միայն անրաժեշտ պատրաստվածություն չըբանորեցին, այլև փոխարենը գերադասում էին իրենց խոսքը ծավալել խնդրո առարկայից դուրս հարակից հարցերի շուրջ, և անզամ այս պարագայում, նոյնպես բացահայտեցին իրենց ապատեղեկացված լինելը, իսկ որոշ կետերի առումով՝ անզամ կատարյալ անտեղյակությունը:

Լուսներին հանդես եկած հայ եղյակի վկայությունները հավանություն չտացան ամերիկահայության՝ բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների, անզամ Հայ ազգային միության կողմից: Մասնավորապես, հնչակյան և դաշնակցական թերթերը կշտամբեցին նրանց՝ անզոր հայի կերպար ներկայացնելու համար և պահանջեցին, որ այդուհետև լուսներին ներկայացուցությունը վստահվի Հայաստանի կառավարության կողմից պատշաճորեն նշանակված լիազոր անձանց, որոնք անտարակույս տեղյակ կլինեն ռազմավարական երկու աշխարհագրական վայրերի միջև ընկած տարածությանը և բավարար հնարամտություն կունենան քաղաքական կշիռ ունեցող հարցերին պատասխանելու համար¹⁰:

Ենթահանձնաժողովի հաջորդ՝ երկրորդ նիստը տեղի ունեցավ սեպտեմբերի 30-ին: Մինչ իր վկայությունը կսկսեր պետական քարտուղարի օգնական Ռ. Ֆիլիպսը, որոշվեց, որ նիստը դոնփակ կլինի, քանի որ բարձրաստիճան դիվանագե-

⁹ Լուսների արձանագրությունը տե՛ս Maintenance of Peace in Armenia, p. 3-125: Նոյն եղությունը հրատարակվել է՝ “Armenian Review”, 1980, vol. 33, N 4, p. 441-443; 1981, vol. 34, N 1, p. 46-79; N 2, p. 199-217; N 4, p. 412-427:

¹⁰ Hovannessian R. G., նշվ. աշխ., էջ 438; Հովհաննեսյան Ռ. Գ., նշվ. աշխ., էջ 453; Օվաննիսյան Ր. Ղ., նշվ. աշխ., էջ 276:

տի վկայությունը կարող է պարունակել հրապարակմանը ոչ ենթակա տեղեկություններ: Ուստի ունկնդրումների սրահից ոչ միայն դուրս հրավիրեցին հանրության ներկայացուցիչներին, այլև որոշվեց, որ անհրաժեշտության դեպքում կարող է նաև ընդհատվել վկայության սղագրությունը:

Որպես պետական քարտուղարի օգնական՝ Ռ. Ֆիլիպ-սը վկայություն էր տալիս վերոնշյալ կետերի շուրջ հիմնվելով ԱՄՆ-ի դիվանագիտական և նպաստամատույցի անձնակազմերից ստացված տեղեկությունների վրա: Նա ներկայացրեց մի շարք հեռազրեր, որոնք հստակ պատկերում էին Հայաստանում ստեղծված իրավիճակը և ընդգծեց, որ այնտեղ տիրող ծանր վիճակը հնարավոր էր փրկել՝ հատկապես մեղմել ձմռանն ակնհայտորեն սպառնացող սովոր վտանգը, եթե հսկողության տակ վերցվեին անդրկովկայան ճանապարհները, մասնավորապես, երկարությին: Նա հայտնում էր, որ արտաքին՝ օտարերկրյա փոքր ուժն անզամ բավարար կլիներ ապահովելու դեպի Հայաստան փոխադրումները: Այդուհանդեռ, Ռ. Ֆիլիպսի ամբողջ վկայության շեշտադրումն այն էր, որ հայերի նկատմամբ ԱՄՆ-ի պետական քարտուղարության վերաբերմունքն ու գործողությունները սույն մարդասիրական էին:

Լուսմների երկրորդ նիստի հաջորդ և վերջին վկան Կարմիր խաչի ծառայության կապիտան թժիշկ Զորջ Բ. Հայդն էր, որը նոր էր վերադարձել Կիլիկիայից: Ներկայացնելով թեպետն կարևոր, սակայն ընդհանուր բնույթի տեղեկություններ իր ծառայությունն ընդգրկող աշխարհագրական շրջանակներում ստեղծված իրավիճակի վերաբերյալ՝ թե՛ նախսկինում իրագործված և թե՛ ներկայում տեղի ունեցող ջարդերի մասին, նա այդուհանդեռ չկարողացավ խնդրու առարկա հարցի վերաբերյալ սպառչ պատասխաններ տալ ենթահանձնաժողովին:

Լուսմների երրորդ նիստի աշխատանքներն սկսվեցին հոկտեմբերի 2-ին՝ ազգությամբ ուսւա ամերիկյան իրավաբան, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի բանակի կապիտան Աբրահամ Թուլինի վկայությամբ: Նա նույնպես նոր էր վերադարձել ԱՄՆ, սակայն ի տարբերություն նախորդ վկայի, ամիսներ շարունակ՝ 1919 թ. ապրիլից մինչև սեպտեմբեր անցկացրել էր բուն Հայաստանի՝ թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան հանրապետության հատվածներում: Որպես Ամերիկյան նպաստամատույցի վարչության տնօրենի և միջդաշնակցային տնտեսական խորհրդի հանձնակատար Հ. Կ. Շուլվերի աշխատակազմի նախսկին անդամ՝ Ա. Թուլինն ականատես էր եղել Հայաստանում տիրող հավաստի իրավիճակին և կարիքներին, որոնք անաշառությամբ ներկայացրեց ենթահանձնաժողովին: Ըստ նրա՝ հումանիտար օգնությանը, որն անպայման պետք է շարունակվեր առնվազն մեկ տարի ևս, անհրաժեշտ էր հավելել զենքի ու զինամթերքի հատկացում և ամերիկյան փոքրաթիվ զորամիավորումների ներկայությունը տարածաշրջանում՝ Քաթոլիկում, Թիֆլիսում, որոնք նաև կիսկեին դեպի Երևան երկարությին: Վերջինս՝ առավել կարևոր լինելով նաև քաղաքական իմաստով, կայուն կպահպաներ իրավիճակը Հայաստանում:

Կապիտան Ա. Թուլինից հետո վկայություն տվեց հայազգի սպա՝ զնդապետ Արւեն Թորգոմը, ենթահանձնաժողովին ներկայանալով իրքը «զեներալ»: Շեղվելով վկայության բուն թեմայից, նա անդրադարձավ նաև իր կողմից 1918 թ. փետրվարին երգրումում ազդարարված անկախությանը և ենթահանձնաժողովին հանձնեց «Հայաստանի անկախության երգրումի հրակագրի» տեքստն անզերեն լեզվով: Միայն սենատորների հարցադրումներից հետո Թորգոմն արտահայտեց

իր կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ՝ նշելով, որ համարիտ է Ա. Թուլինի հետ, այն է՝ միակ ելքն անհապաղ բավարար քանակի գորք ուղարկելն էր Հայաստան։ Հայության օգնելու խնդրանքների հետ մեկտեղ Թորգոնի վկայության ավարտը բավական հավակնութ էր՝ հօգուտ Հայաստանի՝ Ամերիկայում աշխատելու համար իրեն հատկացվելիք թույլտվության դիմումով և անձնական գրասենյակի ու երկու-երեք աշխատակցի պահանջով։

Թորգոնի վկայությամբ ծրագրված էր ավարտել ենթահանձնաժողովի աշխատանքները և այն ցրել։ Այնուամենայնիվ՝ հանգամանքների բերումով ենթահանձնաժողովը շարունակելու էր աշխատանքը և լսումների ևս մեկ՝ չորրորդ, արդեն վերջին նիստը կայանալու էր հոկտեմբերի 10-ին։ Բանն այն է, որ ԱՄՆ էր ժամանել Հայաստանի Հանրապետության տնտեսական և քաղաքական հատուկ առաքելությունը Հանրապետության նախկին վարչապետ Հովհաննես Քաջազնունու զիսավորությամբ։ Վերջինիս հետ հանդիպելու և նրանից տեղեկություններ ու հիմնավորումներ ստանալու նպատակով՝ Զ. Ջերարդի դեկանարած՝ Հայաստանի անկախության ամերիկան կոմիտեի ջանքերով, սենատոր Զ. Շ. Ուիլյամսի ակտիվ գործակցությամբ Սենատի ենթահանձնաժողովի լսումները վերաբեցվել էին մեկ օրով։

Հոկտեմբերի 10-ի լրացուցիչ նիստը, ի դեպ, տևողության առումով ամենաերկարաձիգն էր՝ անգամ ընդհատվեց ընդմիջմամբ և ընթացավ երկու մասով։ Առաջին՝ առավոտյան նիստին վկայություններ տալու համար հրավիրվել էին երեք հայտնի ամերիկացիներ, ովքեր ոչ հեռավոր անցյալում հարուստ փորձառություն էին անցել Կովկասում և նոր էին վերադարձել ԱՄՆ։ Դրանք էին՝ Ֆիլադելֆիայից հայտնի իրավաբան, Սեր-

ձավոր Արևելքի նպաստամատույցի հածնակատար Ռուլթեր Չորջ Սմիթը, Գրինել քոլեջի տնօրեն, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույցի անդամ՝ Կովկաս գործուղված նպաստամատույցի հանձնաժողովի հատուկ հածնակատար Չոն Հ. Ս. Մեյնը, Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույցի կոմիտեի քարտուղարի օգնական Հ. Ք. Ջերուիթը։

Զարմանալի չե, որ նրանց վկայություններն ամենածավալուն եին՝ ինչով պայմանավորվեց չորրորդ նիստի առաջին մասի երկար տևողությունը։ Նպաստամատույցի ամերիկացի նշանակած ծառայողները հանգամանքների բերումով՝ ի տարբերություն ցուցմունք տված վյուս վկաների, ամենաքաջատեղյակն էին Հայաստանում տիրող իրավիճակին և դրսորած մարդասիրության և խոհեմության հետ մեկտեղ ավելի արյունավետ, հատակ ու առավելագույնս անաշառորեն ներկայացրին և առկա խնդիրներն ու պահանջները, և՝ իրենց առաջարկները վերջիններիս լուծումների վերաբերյալ։ Նրանք ընդգծեցին Հայաստանին հատկացվելիք բազմակողմանի օգնության անհրաժեշտությունը, ինչն անհապաղ ու անհետաձգելի էր։ Գովարանելով Հայաստանի Հանրապետության ջանքերն ու ընդգծելով վերջինի՝ վարչական կառավարման հմտությունների առումով տարածաշրջանում լավագույնը լինելու պարագան, Զ. Մեյնը նշեց, որ այնուամենայնիվ, առանց արտաքին օժանդակության հանրապետությունն ի վիճակի չեր լինի երկար գոյատենել։ Ուստի, Զ. Մեյնը, ինչպես և իրեն նախորդած Ու. Սմիթը, հույս հայտնեց, որ սենատոր Զ. Շ. Ուիլյամսի բանաձեռ կընդունվի Սենատի կողմից և հայերին տրամադրվող օգնությունը չի ուշացվի։

Ամբողջովին համաձայնելով Զ. Մեյնի և Ու. Սմիթի վկայությունների հետ, Հ. Ք. Ջերուիթը որպես հավելում սենատոր-

Ներին ներկայացրեց արձանագրության մեջ ընդգրկելու համար մի շաբթ նկարներ, քարտեզ՝ Հայաստանում իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար, ինչպես նաև հաշվետվություններ և տեղեկություններ նպաստամատույցի կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ամփոփելով երեք մարդասեր վկաների ցուցմունքները նախագահող՝ ընդիմադիր Ու. Զարդինը խոստովանեց, թե կուզու ոչ խոստումնալից, որ այժմ ավելի հատակ սկսեց հասկանալ իրադրությունն ու կարեկցանքով լցվեց հայ ժողովրդի հանդեպ: Հ. Ք. Ջերուիթի հաղորդումից հետո ենթահանձնաժողովին ներկայացվեցին Հայաստանի Հանրապետության պատվիրակները՝ նախկին վարչապետ Հ. Քաջագիտնին, ԱՄՆ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո) և ՀԱԱԿ-ի նախագահ Ջեյմս Ջերարդին ներկայացնող Վահան Քարտաշյանը:

Քանի որ Հ. Քաջագիտնուու խմբի առաքելության հիմնական նպատակը ԱՄՆ-ից տնտեսական ու քաղաքական աջակցություն ստանալն էր, վերջինիս՝ թարգմանչի միջոցով ներկայացված խոսքը, առավել էր ընդգրկում հայ ժողովրդի ազգային, մշակութային, քաղաքական նկարագրի և իրավունքների հետ կապված տեղեկությունները: Նախկին վարչապետը վստահեցնում էր, որ քննարկվող՝ Զ. Շ. Ուիլյամսի քանաձեռվ նախատեսվող օժանդակության դեպքում հայերն ի վիճակի կլինեն ապահովել իրենց ինքնապաշտպանությունը, ինչպես նաև կկարողանան՝ սեփական աշխատափրության և Հայաստանի բնական պաշարների շնորհիվ վճարել վերցրած վարկերը:

Գ. Փաստրմաճյանը, համամիտ լինելով Հ. Քաջագիտնուու վկայությունների հետ, նշեց նաև, որ խնամակալ ԱՄՆ-ի փորարժիվ զորամիավորումները Բաթումում և Երևանում շատ

ցանկալի էին և կարևորագույն դեր կխաղային միայն իրենց ներկայությամբ, քանզի մեծ տպավորություն կթողներին առաջին հերթին հենց Հայաստանի հարեւանների վրա:

Վ. Քարտաշյանը սկսեց վկայությունն այն հայտարարությամբ, որ լսումներին ներկայացնում է ՀԱԱԿ-ի նախագահ Զ. Ջերարդին և ենթահանձնաժողովին հանձնեց վերջինիս փոխանցած հուշագիրը, որտեղ նշվում էին ԱՄՆ-ի կողմից Հայաստանին օգնություն ցուցաբերելու պատճառները: Նա սենատորներին փոխանցեց նաև Զ. Ջերարդի բազմակետ խնդրանքը, միջնորդել, որպեսզի Սենատն ընդունի Զ. Շ. Ուիլյամսի բանաձեռ, կոչ անել, որպեսզի նախագահը ճանաչի Հայաստանի Հանրապետությունը, սնունդ, զորք և զինամթերք ուղարկվի Հայաստան, հորդորել ամերիկյան կառավարությանը լիազորել ԱՄՆ-ի հայերին հավաքագրելու կամավորներ և օգնել նրանց փոխադրվել Հայաստան:

Վ. Քարտաշյանի վկայությամբ՝ ենթահանձնաժողովն ավարտեց իր աշխատանքները: Արդյունքում, ենթահանձնաժողովի անդամ սենատորներին՝ Զ. Շ. Ուիլյամսի բանաձեռի պաշտպանությանն ուղղված հայ և ամերիկացի խոսնակների վկայություններից պարզ դարձավ, որ Հայաստանում խաղաղության պահպանման համար անհրաժեշտ էր ապահովել անհապաղ զործողություններ:

Ենթահանձնաժողովի նախագահ Ու. Զարդինը լսումների ավարտի հաջորդ օրը՝ հոկտեմբերի 11-ին իրազեկել էր լսումների մասնակիցներին, որ խոստանում է առաջիկա շաբաթվա ընթացքում որոշակի քայլեր ձեռնարկել իր եզրակացություններն ու առաջարկությունները Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով ներկայացնելու համար:

1919 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում՝ սենատոր Զ. Շ. Ուխյամսի առաջադրած «Խաղաղության պահպանումը Հայաստանում» քանաձեզի վերաբերյալ ԱՄՆ-ի Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի կողմից կայացրած լսումները պետք է քննարկվող հարցի կարևորությունից ելնելով ենթադրելուն անհետաձգելի գործողություններ: Սակայն ենթահանձնաժողովը՝ մասնավորապես վերջինիս նախագահ սենատոր Ռ. Հարդինգը, ամենեին չեր պատրաստվում որևէ շտապ որոշում կայացնել և գործնական քայլեր իրականացնել չնայած խոստացել էր հնարավորինս կարճ ժամկետում կոնկրետ քայլեր ձեռնարկել: Ամիսներ շարունակ նա ձգձգեց իր եզրակցությունների և առաջարկությունների ներկայացումը Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողով:

Միայն հաջորդ տարի՝ 1920 թ. մայիսի 15-ին, Զ. Շ. Ուխյամսի հայերին օգնելու և Հայաստանում խաղաղությունը պահպանելու համար Հայաստանի Հանրապետություն գործ ու զինամթերք ուղարկելու բանաձեր ներկայացվեց ԱՄՆ-ի Սենատի լրակազմ նիստին: Ամբողջությամբ ձևափոխված և նախնական իմաստը կորցրած բանաձեր մերժվեց:

Հայաստանին ռազմական օգնություն տրամադրելու մերժումն իր հերթին ազդեցություն ունեցավ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունման «քնականոն» ընթացքի վրա: 1920 թ. հունիսի 1-ին Սենատը՝ ընդունելով Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը, այնուամենայնիվ՝ հետամուտ ԱՄՆ-ի քաղաքական և տնտեսական շահերին, մերժում է Հայաստանի մանդատի ստանձնումը:

Որպես եզրահանգում՝ երախտագիտություն հայտնելով

ամերիկյան ժողովրդին, ԱՄՆ-ի կառավարությանը, նպաստամատույցի հայտնի գործիչներին հայությանը հատկացված փրկարար հումանիտար օգնության համար և ընդգծելով ամերիկյան բազմաթիվ պետական այրերի մարդասիրական հատկանիշները, նշենք, որ Եվրոպա-Արևելք պատմական զարգացումների բատերաբեմում «ուշացած» մասնակցություն դրսւրող ԱՄՆ-ի համար Առաջին աշխարհամարտից հետո ևս սեփական շահերից բխող ակտիվ դերակատարման ապահովումը շատ ավելի կարևոր էր, քան քրիստոնյա մի փոքր ժողովրդի՝ հայերի լինել-չլինելու, կամ անզամ Հայաստանի ինքնավարության, անկախության կամ պետականության հարցերը:

Հայության հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականությունը կանխորշված էր հատուկ մշակված քաղաքական գծով, ըստ որի՝ ԱՄՆ-ի կառավարությունը՝ անզամ աշխարհամարտին միանալով պատերազմ չեր հայտարարել Թուրքիային, իսկ դիվանագիտական հարաբերությունները նրա հետ խզել էր հենց Թուրքիան: ԱՄՆ-ի պետական միջամտությունն ի պաշտպանություն հայերի անհավանական էր, քանզի նրա պետական քաղաքականության օրակարգում դրա անհրաժեշտությունը չկար:

Լսումների վերջում վկաները ենթահանձնաժողովին կին հանձնել մի շարք փաստաթղթեր՝ հիմնականում հեռագեր, որոնք տեղ էին գտել լսումների արձանագրությունում:

Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի՝ 1919 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում կայացած լսումների արձանագրությունները, ներառյալ ոնկնդրումների ընթացքում վկաների ներկայացրած բոլոր փաստաթղթերը, նույն տարվա

Վերջում տպագրվել են Սենատի կողմից առանձին զրույկով՝ Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R.106, Washington, Government Printing Office, 1919: Վերջինիս մեր կողմից կատարված հայերեն թարգմանությունը ներկայացված է տվյալ աշխատության մեջ:

Ելնելով նյութի սկզբնադրյուր լինելու հանգամանքից, լսումների արձանագրությունների շարադրանքը թարգմանվել է առանց ազատ թարգմանության մեթոդի կիրառման, բուն տերսութիւն համապատասխանող մոտեցմամբ, որը բնագրում ներկայացված է XX դարասկզբի ամերիկյան անզերենով՝ տեղ-տեղ բավական լուրջ լեզվաբանական շեղումներով և քերականական թերություններով: Տեքստը հայերեն լեզվով ներկայացվում է նոյնանման՝ պարբերություն առ պարբերություն, առանց շեղվելու, նոյնը վերաբերում է նմանեցված տառատեսակին և տառաչափին, համապատասխանաբար նոյն տեղերում են դրված գծիկները, կետերը, շակերտները, փակազճերը որոնց քերականորեն ոչ ճիշտ լինելու պարագայում, ինչպես նաև անավարտ նախադասությունների դեսպան, մեր կողմից տողակատակում տրվում է պարզաբանում: Բնագրին համապատասխան ձևով են նշված նաև այսուսակների բոլոր թվերը, կետերը և այլ նշաններ: Բնագրում տեղ գտած փաստական՝ պատմական, աշխարհագրական, կրոնական, թվային սիմվոլը բացահայտելու և ընկալելի մատուցելու համար անհրաժեշտ տեղերում տրվել են բացադրական տողատակեր:

Խնդրու առարկա թեման, պիտմական ժամանակաշրջանն ու իրադարձություններն ընթերցողի համար ավելի ըմբռնելի, պատկերավոր և հասկանալի դարձնելու նպատակով աշխատությունը հավելվել է «Ծանոթագրություններ» բաժնում:

ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԽԱՂԱԴԻԹՅԱՆ ՊԱՇՊԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՄ-Ի ՍԵՆԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ԵՎԹԱՀԱՆԱԺՈՂՈՎԻ
ՀՍՈՒՄՆԵՐԻ

(27.09.1919 – 10.10.1919)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

23

MAINTENANCE OF PEACE IN ARMENIA

HEARINGS

REPORT A

SUBCOMMITTEE OF THE
COMMITTEE ON FOREIGN RELATIONS
UNITED STATES SENATE

SIXTY-SIXTH CONGRESS.

FIRST SESSION

ON

S. J. R. 106

A JOINT RESOLUTION FOR THE MAINTENANCE OF
PEACE IN ARMENIA

Printed for the use of the Committee on Foreign Relations



WASHINGTON
GOVERNMENT PRINTING OFFICE
1919

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԼՍՈՒՄՆԵՐ

ՄԻԱՅՅԱ ՆԱՀԱՎԱԵՐԻ ՍԵՆԱՏԻ
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁԱԺՈՂՈՎՔԻ ԵՆԹԱՀԱՆԱԺՈՂՈՎՈՒՄ

ՎԱԹՍՈՒՆՎԵՑԵՐՈՒՄ ԿՈՆԳՐԵՍ
ԱՌԱՋԻՆ ՆԱՏԱԴՐԱՆ

U. Հ. Բ.* 106

ՀԱՄԱՏԵՂ ԲԱՆԱՉԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Տպագրված է Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի
օգտագործման համար

ՎԱՇԻՆԳՏՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

1919

* Մենատի համատեղ բանաձև:

COMMITTEE ON FOREIGN RELATIONS.

HENRY CABOT LODGE, Massachusetts, <i>Chairman.</i>	GILBERT M. HITCHCOCK, Nebraska.
PORTER J. McCUMBER, North Dakota.	JOHN SHARP WILLIAMS, Mississippi.
WILLIAM E. BORAH, Idaho.	CLAUDE A. SWANSON, Virginia.
FRANK B. BRANDEGEZ, Connecticut.	ATLEE POMERENE, Ohio.
ALBERT B. FALL, New Mexico.	MARCUS A. SMITH, Arizona.
PHILANDER C. KNOX, Pennsylvania.	KEY PITTMAN, Nevada.
WARREN G. HARDING, Ohio.	JOHN K. SHIELDS, Tennessee.
HIRAM W. JOHNSON, California.	
HARRY S. NEW, Indiana.	
GEORGE H. MOSES, New Hampshire.	

C. F. REDMOND, *Clerk.*

SUBCOMMITTEE ON S. J. RES. 106.

WARREN G. HARDING, Ohio.	JOHN SHARP WILLIAMS, Mississippi.
HARRY S. NEW, Indiana.	

2

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԵՆՐԻ ՔԱԲՈԹ ԼՈԶ, Մասաչուսեթս, նախագահ

ՓՈՐՏԵՐ Ջ. ԱքԱՍԱԲԵՐ,	ԳԻԼԲԵՐՏ Մ. ՀԻՉՔՈԿ,
Հյուսիսային Դարպահ	Ներքանկա
ՈՒԻԼՅԱՍ Է. ԲՈՐԱՀ, Այդահո	ԶՈՒ ՇԱՐՓ ՈՒԻԼՅԱՍՍ, Միսսիսիպի
ՖՐԵՆք Բ. ԲՐԱՆԴԵԳԵ, Քուերթիքուր	ԿԼՈՆ Ա. ՍՈՒԱՆՈՈՆ, Վիրջինիա
ԱԼԲԵՐԹ Բ. ՖՈԼ, Նյու Սերվիք	ԱԹԼԻ ՊՈՍԵՐԵՆ, Օհայո
ՖԻԼԱՆԴԵՐ Չ. ՆՈՔՍ, Փենսիլվանիա	ՍԱՐԿՈՒՆ Ա. ՍՍԻԹ, Արկոնա
ՈՒՈՐԵՆ Գ. ՀԱՐԳԻՆԳ, Օհայո	ՔԵՅ ՓԻԹՍԱՆ, Նեալյա
ՀԱՅՐԱՍ ՈՒ. ԶՈՒՍՈՆ, Կալիֆորնիա	ԶՈՆ Ք. ՇԻԼԴՆ, Թենեսի
ՀԱՐՐԻ Ս. ՆՅՈՒ, Բնյիանա	
ԶՈՐՃ Հ. ՍՈԶԵՆ, Նյու Հեմփշիր	

Ք. Ֆ. ՌԵԴՄՈՒՆ, քարտուղար

**Սենատի 106 համտեղ բանաձևի համար
ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՒՈՐԵՆ Գ. ՀԱՐԳԻՆԳ, Օհայո	ԶՈՆ Ք. ՇԻԼԴՆ, Թենեսի
ՀԱՐՐԻ Ս. ՆՅՈՒ, Բնյիանա	ԶՈՆ ՇԱՐՓ ՈՒԻԼՅԱՍՍ, Միսսիսիպի

ԽԱՂԱՐԴԻԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՇԱԲԱԹ, ՍԵՊԵՍԵՍՔԵՐԻ 27, 1919 թ.

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԵՆԱՏ,
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՀԱՆՁՈՂՈՎ
Կաշինգոռն, Կ. Շ.

Ենթահանձնաժողովը՝ ըստ նախագահի կոչի, հավար-
վեց ժամը 10:30-ին Կապիտոլիումում՝ Ֆիլադելֆիայի հարցերով
հանձնաժողովի սենյակում, սենատոր Ուորեն Գ. Զարդինզի նա-
խագահությամբ:

Ներկաներ. սենատորներ Ուորեն Գ. Զարդինզ (նախա-
գահ), Նյու և Ուիլիամս¹¹:

Ենթահանձնաժողովի քննարկման օրակարգում է
հետևյալ բանաձևը՝

[Սենատի 106 համատեղ բանաձև,
66-րդ Կոնգրես, 1-ին նստաշրջան]

¹¹ Սենատորներ Ուորեն Գ. Զարդինզի (Warren G. Harding), Հարրի Ս. Նյուի (Harry S. New) և Ջոն Շարփ Ուիլիամսի (John Sharp Williams) մասին տես սույն աշխատության «Շանոքագրություններ» բաժնում:

ՀԱՄԱՏԵՂ ԲԱՆԱՁԵՎ Հայաստանում խաղաղության պահպանման համար

Նկատի ունենալով, որ բրիտանական գորքերի դուրս բերումը
Կովկասից և Հայաստանից հայ ժողովրդին անօգնական կթողնի
բրդերի և թուրքերի հարձակումների դեպքում, և քանի որ
ամերիկյան ժողովուրդը խորապես ու անկեղծորեն համակրում է
հայ ժողովրդի ազատության, խաղաղության և առաջադիմության
ձգումները, ուստի՝

Կոնգրեսում¹² հավաքված Ամերիկայի Միացյալ Նահանգների
Սենատի և Ներկայացուցիչների Պալատի կողմից որոշվեց¹³, որ
Սենատի կարծիքով Հայաստանը (Ներառյալ Թուրք-
այաստանի¹⁴ վեց վիլայեթները և Կիլիկիան), Ռուսա-
հայաստանը, Աղրեջան նահանգի¹⁵ հյուսիսային հատվածն ու
Տրավիզոնը պետք է լինեն անկախ, և որ Սենատը լիահույս է, որ
Խաղաղության վեհաժողովը միջոցներ կձեռնարկի՝ օգնելու
Հայաստանին անկախ հանրապետություն հիմնադրելու:

Սաս 2. Միացյալ Նահանգների նախագահն այսու իրավասու-
է օգտագործել Միացյալ Նահանգների ուղմական և նավա-
տորմային այնքան ուժ, որքան իր կարծիքով նպատակահարմար

¹² Թարգմանության շարադրանքը ներկայացված է բնագրին համապա-
տավանան, որ որոշման առաջին մասը փաստացի սկսվում է «Կոնգրեսում»
բառով, սակայն այդ հատվածը ձևակերպված չէ որպես «Սաս 1»: Որոշման
կետերի համարակարումն սկսվում է «Սաս 2»-ով:

¹³ Տերուում շեղ տառատեսակով ներկայացված հատվածները համապա-
տավանում են բնագրին:

¹⁴ Բնագրին համապատասխան՝ շարադրանքում թարգմանեաբար Արևմտյան
Հայաստանը՝ ներկայացված է Թուրքահայաստան, իսկ Արևելյան
Հայաստանը՝ Ռուսահայաստան:

¹⁵ Բնագրում՝ Province of Azerbaijan: Նկատի են ունեցել Պարսկաստանի
Աղրեջան նահանգը:

կինի Հայաստանում խաղաղության և հանդարսության պահպանման համար, մինչ այդ երկրի գործերի կարգավորումն ավարտվի պետությունների միջև պայմանագրով:

Մաս 3. Նախագահն այսու իրավասու է առկախելու օտարերկրյա զինվորագրման օրենքն այնքան ժամանակ, որը այն անհրաժեշտ է Միացյալ Նահանգների հայերին՝ դրամ և գենք ու զինամթերք հայթայթելու և իրեն զինված ուժեր Փոքր Ասիայի իրենց հայրենակիցներին օգնության հասնելու համար:

Մաս 4. Սկզբանի հատկացվում է գանձապետարանի ցանկացած պաշարներից, և ոչ այլ կերպ, \$-----ի¹⁶ չափով գումար՝ նախագահին թույլ տալու իրավործել վերոհիշյալ բանաձևը:

Անեստոր ՀԱՐԴԻՆԳ. Առաջին վկան, ով ցանկանում է ունկնդրման արժանանալ այս առավոտ, պրն Ավազին է: Դուք կարող եք հայտնել Ձեր անունը և Ձեր բնակության վայրը սղագրողին և շարունակել:

Անեստոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Ի՞նչ աշխատանքով եք զբաղվում:

ՊՐՆ ՄԻՀՐԱՆ ՍՎԱԶԼԻԻ¹⁷ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դրեն ՍՎԱԶԼԻԻ. Դրն նախագահ և պարոնայք, թույլ տվեք շնորհակալություն հայտնել Ձեզ՝ հայերին կամ հայկական ծագում ունեցող ամերիկյան քաղաքացիներին ընձեռած հնարավորության համար՝ հանդես գալու Ձեր առջև և համառոտ ներկայացնելու իրենց հարցը հայ ժողովրդի անունից, ում հանդեպ, մենք զիտենք, որ այս հզոր Հանրապետությունն անկեղծ համակրանք է տածում:

¹⁶ Բնագրում որևէ թիվ նշված չէ:

¹⁷ Միհրան Սվազլի (Miran Sevazly) մասին տես սույն աշխատության «Մասնագրություններ» բաժնում:

Թուրիս և չպետք է մտահոգվեմ Հայկական հարցի քաղաքական որևէ հայեցակետ մանրամասներու առնչությամբ: Ես միայն կանորադառնամ մանդատի հարցին, սակայն չեմ խոսի այդ մասին, որը, զիտեմ՝ զբաղեցնում է բազմաթիվ ամերիկյան քաղաքացիների մտքերը: Ես նույնիսկ որևէ կերպ չեմ շոշափի քաղաքացիների մտքերը: Ես նույնիսկ որևէ կերպ չեմ շոշափի Հայաստանի ապագա կարգավիճակի կամ Հայաստանի քաղաքացիների հարցերն են, որոնք պետք է կարգավորվեն խաղաղության այս հարցերն են, որոնք պետք է կարգավորվեն խաղաղության վեհաժողովի կողմից: Ես միայն հպանցիկ կերպով կանորադառնամ այս վերջին պատերազմի ընթացքում հայերի մատուցած ծառայություններին, ինչը նրանց իրավունք է տալիս համարվելու պատերազմի կողմ: Նրանք ավելի քան 100 000 մարդ են տրամադրել ուսական բանակին, և այդ գորքն ուղարկվել է Լիհաստանի ուղմածակատ, որտեղ ուսւների հետ կովել է Կենտրոնական¹⁸ տերությունների դիմ:

Անեստոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Նրանք ուսահայե՞ք ի՞ն:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ուսահայեք ի՞ն: Երկրորդ, հայերն ավելի քան մեկ տարի պահել են Ռուսաստանի Կովկասյան ճակատը՝ այսպիսով օգնել Անգլիային հաջողության հասնել Միջազգետքի արշավանքում՝ թուրքիայի դեմ: Եթե հայերը չպահեին Կովկասյան ճակատը, Անգլիան այդպիսի դյուրին հաջողությամբ չեր պասկի այդ արշավանքը:

Անեստոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Կամ Միջազգետքի արշավանքը:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Այո:

Անեստոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Կամ Պաղեստինի արշավանքը:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Կամ Պաղեստինի արշավանքը: Լորդ Անգլիլը վկայում է այդ մասին մի պաշտոնական փաստաթղթում, որը նա որոշ ժամանակ պատաշ ուղարկել է Փարիզում Հայկական պատվիրակության նպահագահին:

¹⁸ Բնագրում՝ the Central Powers: Այն է Քաղյակ միություն:

ԱՆԴԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՈ. Գեներալ Ալլենբին նույնապես ընդունում է այդ փաստը:

Պրեն ՄՎԱԶՈՒԻ. Այս, սըր: Հայերը ոչ միայն դա են արել, այլև աջակցել են Սուրբ Հռովում և Սիրիայում Թուրքիայի դեմ կովող ուժերին: Հայոց Ազգային Միության շանքերի շնորհիվ այս երկրից նույնապես շուրջ 2000 կամավոր է մեկնել ռազմաճակատ: 2000 կամավոր այստեղից կովելու է մեկնել Պաղեստին: Նրանք կովել են արիաբար ու որոշել՝ ճակատամարտի ելքը՝ հօգուտ Դաշնակիցների՝ ընդդեմ թուրքերի, և այդ ճակատամարտի արդյունքում Դաշնակիցները կարողացել են նվաճել Սիրիան և վերցնել Երուսաղեմն ու Ճանապարհ բացել դեպի Հայաստան և Կիլիկիա: Բայց նրանք ավելին են արել: Հազար հայ կամավորներ մեկնել են ֆրանսիական ճակատ և քաջարար կովել Պիկարդիայի ու Շամպայնի հարթավայրերում, և այդ հազար հոգուց հազիլ 50-ն է կենդանի մնացել: Այս ամենից հետո ասել, որ հայերը չպետք է համարվեն պատերազմական կողմ և չպետք է նոյն կերպ հաշվի առնվեն, ինչպես արաբները կամ Հեջազի արքան, իմ խոնարի կարծիքով, թյուրիմացություն է:

ԱՆԴԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ո՞վ է դա վիճարկում:

Պրեն ՄՎԱԶՈՒԻ. Դե —

ԱՆԴԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՈ. Շարունակե՞ք Ձեր վկայությունը:

Պրեն ՄՎԱԶՈՒԻ. Սա ամենը չէ, պարոնայք. հայերը կորցրել են 1 000 000 մարդ, քանի որ երաժարվել են միանալ թուրք բարբարոսին: Նրանց դաշինք էր առաջարկվել: Նրանց ասվել էր, որ եթե միանան թուրքերին, ապա նրանց կտրվի ամեն ինչ, բայց նրանք դա ամբողջությամբ մերժել են, և 1914 թ.՝ այս պատերազմի նախօրեին, Էրզրումում կայացած համագումարում հայերը մերժել են համագործակցել թուրքերի հետ: Այս նկատառումները Ձեզ բավականին լավ են հայտնի, քանի որ ձեր դիմաց նստած հոչակավոր սենատորն այնքան լավ վկայեց, որ ես ավելորդ եմ

համարում այս իրադրության շուրջ քննարկում ծավալելը:

Այժմ Թուրքիայի հետ զինադադարի պայմանները հայերի նկատմամբ մեկ այլ՝ շատ անարդար իրավիճակ են ներկայացնում: Թուրքիային իրավունք տրվեց փաստացի վերահսկողության տակ առնել հայկական նահանգները:

ԱՆԴԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այդ կապակցությամբ բույլ տվեք փաստել, որ Միացյալ Նահանգներն այդ զինադադարի կողմ չի եղի, քանի որ Թուրքիայի հետ պատերազմի մեջ չեր գտնվում:

Պրեն ՄՎԱԶՈՒԻ. Այսպիսով, իրավիճակն այժմ այսպիսին է. Երկրի այս հատվածում՝ Կիլիկիայում, հայերը գնացել են այնտեղ, ուերի է ունեցել հայերի աստիճանական ներհոսք, և քանի որ անջիւղիներն ու ֆրանսիացիներն այնտեղ որոշ զորքեր ունեն և երկրը ծովին հարակից է՝ այնտեղ ավելի ապահով է, և ես ուրախ եմ հայտնելու, որ այժմ այդ տարածքում բնակվում են շուրջ 200 000 հայեր, և բնականոն պայմանները վերականգնվում են:

ԱՆԴԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՈ. Դա հարավարևմտյան Հայաստանն է:

Պրեն ՄՎԱԶՈՒԻ. Այս, սըր:

ԱՆԴԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՈ. Միջերկրականի ափին, Ալեքսանդրետում և հարակից քաղաքներում: Ֆրանսիական և մյուս դաշնակիցների բավարար ուժեր այժմ գտնվում են այնտեղ՝ կարգ հաստատելու և բնակիչներին պաշտպանելու համար, դուք սա՞ նկատի ունեք:

Պրեն ՄՎԱԶՈՒԻ. Այս: Բնականոն պայմանները վերականգնվում են, խանութները բացվում, և այս անհանգիստ իրավիճակից, հայերի տեղահանությունից ու կոտորածներից հետո, նրանք այժմ աստիճանաբար ոտքի են կանգնում, նրանք երկու օրաքերթ ունեն Աղանա քաղաքում, և այն ցույց է տալիս վերականգնվելու նրանց ուժը:

Այժմ Կիլիկիայի և Կովկասի միջև գտնվող այս երկիրը [ցույց է տալիս քարտեզի վրա] բավականաշատ դատարկվել է: Այստեղ

մեծ ծավալի հայարափում է տեղի ունեցել տեղահանությունների և կոտորածների պատճառով: Սա երկրի այն հատվածն է, որը, իմ կարծիքով, ամենաշատն է տուժել: Ես չեմ սիրում թվերը չափազանցնել, բայց կարծում եմ շուրջ 750 000 հայ է իրականում անհետացել՝ մահացել տեղահանությունների կամ կոտորածների ժամանակ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Նկատի ունեք Սև ծովի և Կասպից ծովի միջև ընկած տարածքը հյուսիսարևելյան Հայաստանում: Դրա՝ մասին եք այժմ խոսում:

Դրն ՍՎԱԶԼԻ. Այո, այսուեղից մինչև այս հատվածը [ցույց է տալիս քարտեզի վրա]:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Դուք ցույց եք տալիս ընդհուպ մինչև Սև ծովի հարավարևելյան մաս՝ սր:

Դրն ՍՎԱԶԼԻ. Այո:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ասում եք 750 000 հայ՝ է անհետացել:

Դրն ՍՎԱԶԼԻ. Առնվազն այդքան:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Գիտե՞ք արդյոք կոտորածների ենթարկվածների մոտավոր թիվը:

Դրն ՍՎԱԶԼՈՒ. Կոտորածների ենթարկվածների թիվ ասելով՝ նկատի ունեք կոտորածներից մահացածների՝ թե՝ տեղահանումներից և հնարավոր ամեն ինչից մահացածներին:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ենթադրենք՝ կիրառում ենք երկուսն ընդգրկող հասկացություն:

Դրն ՍՎԱԶԼՈՒ. Ըստ վերջին գեկույցի —

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ճիշտ հասկանալու համար կցանկանայի մի քանի հարց տալ:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ի դեպ, Մենատոր, ես պրն Սվազլիին հարց եմ տվել, և նա դեռ չի պատասխանել:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ես չեմ լսել: Ներողություն եմ խնդրում:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ես ցանկանում եմ իմանալ թուրքերի դաժան վերաբերմունքից տուժածների թիվը:

Դրն ՍՎԱԶԼԻ. Այստեղից եկած ձանապարհորդների, մեր դիսպասն պրն Սորգենթաուի¹⁹ և այլոց միջոցով մեզ հասած հաղորդագրություններում նշվում է, որ առնվազն 800 000 հայ անհետացել են կամ կոտորածի, կամ սովի, կամ անապատ տեղահանության պատճառով, և հարցականի տակ է ես տեղյակ չեմ, թե արդյո՞ք երկրի այդ հատվածում կան հայեր, բայց չեմ կարծում, թե կենտրոնական Հայաստանում մնացած հայերի թիվը գերազանցի 100 000-ը:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Եկեք սա մի փոքր հստակեցնենք: Դուք ասում եք, որ անհետացել է 800 000 մարդ մի հատվածից, որտեղ միայն 80 000-ն են մնացել: Ես ճի՞շտ եմ հասկացել Ձեզ:

Դրն ՍՎԱԶԼԻ. Ոչ, ես ասում եմ՝ բոլորը պատմել են, որ անկախ նրանից՝ արդյո՞ք խոսում ենք Կիլիկիայի, թե ամբողջ Հայաստանի մասին, կոտորածների, կամ տեղահանության, կամ սովի պատճառով մահացած հայերի թիվը 800 000-ից պակաս չէ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Կամ անապատ ուղարկվելո՞ւ պատճառով:

Դրն ՍՎԱԶԼԻ. Մենք ունենք գեկույցներ առաքելություններից և մեր պետական դեպարտամենտից, հյուպատոսական հաղորդագրություններ, և այս բոլոր գեկույցները հաստատում են իմ հայուարարությունները, որ ներկայացնում եմ Ձեզ: Դրանք ներկայացնելը կնշանակեր երկար մանրամասների մեջ մտնել:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ես մտավախություն ունեմ, որ Դուք և նախագահը միմյանց չեք հասկանում: Թոյլ տվեք մի քանի հարց տալ Ձեզ: Պատերազմի ընթացքում քանի՞ հայ է սպանվել Ֆլանդրիայի ռազմաճակատում, Կովկասում, Պաղեստինում, և մյուս բոլոր վայրերում՝ այնքան ոքքան Դուք եք տեղյակ:

¹⁹ Բնագրում՝ Mr. Morgenthau, տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Կովի մասնակիցները:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այս, կովի մասնակիցները:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ֆրանսիայում սպանված կովի մասնակիցները շուրջ 950 հոգի են: Ես հստակ չգիտեմ, թե որքան են թվերը Պաղեստինում, բայց կարծում եմ՝ մոտավորապես 2000 հոգի:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Միջազգերում այդպիսիք կա՞ն:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ոչ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Քանի՞ն են սպանվել Կովկասում թուրքերի դեմ կովելիս՝ թե՝ ոռուսահայ, թե՝ թուրքահայ:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Կարծում եմ՝ 35 000-ից ոչ քիչ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Քանի՞ն հայ է կոտորածի ենթարկվել, տեղահանվել դեպի անապատ կամ այլ վայր պատերազմի ընթացքում:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Կարող եմ ասել, որ պատերազմի ընթացքում տեղահանվել է Կենտրոնական Հայաստանի, վեց նահանգների և Կիլիկիայի բնակչության երկու երրորդը կամ երեք քառորդը, և ոչ միայն այդ վայրերից, այլև թուրքական տարածքի՝ այսպես կոչված Հայաստանի նահանգների մեջ չխոնող հատվածներից:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Հասկանալի է: Նավահանգստային քաղաքներում՝ ծովափի երկայնքով, բնակչությունը հիմնականում հույներ կամ թուրքեր էին, բայց կային նաև շատ հայեր և ումանք Կոնստանդնուպոլսում էին: Այժմ, ի՞նչ տվյալներ ունեք, որոնք կարող եք տրամադրել կոմիտեին այն բայոր տղամարդկանց, կանանց և երեխաների մասին, ովքեր ենթարկվել են այսպես կոչված «սպիտակ մահվան», կողոպտվել ու թալանվել են և առանց սննդի նետվել անապատ կամ որևէ այլ վայր:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Կարծում եմ՝ դա մի հարց է, որն արդեն մանրամասն ուսումնասիրվել է, և փաստացի կարծիքների համաձայնության են հանգել: Ես մանրամասներ չունեմ այսուել, սակայն դրանց վերաբերյալ կա միացյալ Հայաստանի

պատվիրակության հուշագիրը: Ես կտրամադրեմ Ձեզ դրա պատճենը:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Գտեք տեղը, որպեսզի սղագրողը կարողանա այն ընդգրկել իր արձանագրության մեջ:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այս տեղեկություններն առկա են այն փաստարդերում, որոնք ցանկանում եք արխիվացնել:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ոչ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Ես ցանկանում եմ դրանք մեկը մյուսից առանձնացված ստանալ:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Մենք կարող ենք դրա վերաբերյալ հուշագրեր ներկայացնել, եթե ցանկանում եք:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ես կարող եմ հուշագիր ներկայացնել՝ Ձեր ուզած ցանկացած պահի:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Շատ լով, հանձնեք դա սղագրողին: Այժմ, թույլ տվեք հետեւյալ հարցը տալ. ներկայացրեք մեզ պատմական և ժամանակագրական պատկերն այնքան լավ, որքան կարող եք՝ այն մասին, թե ի՞նչ է տեղի ունեցել զինադարից հետո, որը Թուրքահայաստանում ընթացել է բացահայտ ընդհարումների և կյանքի ու ունեցվածքի կործանման ձանապարհով:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Լավ, կցանկանայի ասել, որ Հայաստանի այս հաստվածի բնակչության շուրջ կես միլիոնն ապաստան է գտել Կովկասում: Կցանկանայի դրան անդրադառնալ, քանի որ դա շատ կարևոր է: Այդ կես միլիոն հայերը փրկվել են կոտորածից և տեղահանությունից, անցել հարակից երկիր և ապաստան գտել Կովկասում, որտեղ գտնվում են այժմ, և մեր ունեցած կարևոր խնդիրներից մեկն այս մարդկանց իրենց երկիր վերադառնալու և բնակվելու հնարավորություն ընձեռելն է, իսկ նրանք չեն գնա այժմ այնտեղ բնակվելու, քանի որ դա անվտանգ չէ, քանզի երգրումում թուրքերը կազմավորել են 30 000 կամ 40 000 մարդուց

բաղկացած մի մեծ բանակ և հակված են հարձակվելու Հայաստանից հեռացած այն ներգաղթյալների վրա, ովքեր պետք է վերադառնան՝ Անդրկովկասում գտնվող հայերի հետ, երկիրը վերականգնելու համար:

Մենասոք ՈՒԽԼՅԱՍՍ. Հասկանալի է: Ես հասկանում եմ, որ վերջերս, վրացիները, ինչպես և թուրքերը նույնպես սկսել են հարձակվել հայերի վրա: Հարցու հետևյալն է. ցանկանում եմ, որ դուք հիմա ներկայացնեք, իսկ եթե չեք կարող, հետազայում սղագրողին հանձնեք, որքան հնարավոր է ճշգրիտ գեկուցում զինադադարի ստորագրման պահից սկսած հայերի վրա կատարված հարձակումների պատմության մասին, և ներկայացնեք կործանված կյանքերի՝ տղամարդկանց, կանանց և երեխաների թիվը և ոչնչացված ունեցվածքի չափը: Եթե հիմա չեք կարող ներկայացնել —

Դրեն ՄՎԱԶՈՒ. Չեմ կարծում, որ հիմա կարող եմ մանրամասն գեկույց ներկայացնել, բայց իրավիճակն այնպիսին է, որ թուրքերը չեն զորացրել իրենց բանակը, որ թուրքերն ամբողջությամբ զինված են, իսկ հայերը զինված չեն, որ թուրքերն ունեն մոտավորապես 30 000 կամ 40 000 հոգանոց բանակ, ինչը հակառակ է հենց զինադադարի պայմանների կետերին և որ նրանք հակված են հարձակվելու, և իրականում, ըստ երեկ հրամարակված հեռագրերի՝ նրանք սկսել են հարձակվել այն հայերի վրա, ովքեր գաղթել են Թուրքահայայաստանից Ռուսահայաստան և ում հայրենադարձությունն անհրաժեշտ է երկրի վերականգնման համար: Դա շատ կարևոր փաստ է: Եվ մասնակի կոտորածներ են տեղի ունեցել Ռուսահայայաստանի՝ Ղարաբաղ կոչվող վայրում, ինչի համար հայերը բռնորդել են, Կովկասում գտնվող անզիհական գեներալին բռնորդ եր ներկայացրել Կաթողիկոսը՝ հայերի առաջնորդը, Դաշտոնական բռնորդ՝ հաստատված Կոնստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի և

Երիվանի²⁰ հայ կառավարության բողոքներով: Մի քանի ամիս առաջ մասնակի կոտորածներ են տեղի ունեցել Հալեպում, և մենք ամենօրյա հաղորդագրություններ էինք ստանում Կոնստանդնուպոլսի հայկական թերթերից ամբողջ երկրում տիրող անհանգիստ իրավիճակի և անվտանգության անհրաժեշտության մասին:

Մենասոք ՈՒԽԼՅԱՍՍ. Դա այն հարցը չէ, որք ես ցանկանում եմ հասկանալ: Բրիտանացիները ե՞ւ են կանչել իրենց զորքերը:

Դրեն ՄՎԱԶՈՒ. Նրանք ետ են քաշում դրանք:

Մենասոք ՈՒԽԼՅԱՍՍ. Եվ ես տեղեկացված եմ, որ հայերի նոր կոտորած է տեղի ունեցել, նրանցից շատերը նահանջում են ներայի Պարսկաստան բրիտանական և ամերիկյան քաղաքացիների կամ հպատակների հետ միասին, ովքեր գտնվում են այսուղի: Սակայն իմ վերջին հարցի նպատակն է պարզել, եթե Դուք զիտեք՝ իսկ եթե զգիտեք, ուղղակի ասեք, որ զիտեք, բրիտանական զորամասերի նահանջից հետո կամ բրիտանական զորամասերի նահանջի ընթացքում թուրքերի, վրացիների և բրիտանական զորամասերի ժամանակ կոտորված հայերի թիվը՝ ըստ Ձեր ունեցած լավագույն տեղեկության:

Դրեն ՄՎԱԶՈՒ. Հաղորդագրություններ կան, որ շուրջ 600 հայ կոտորվել է Ղարաբաղի շրջանում: Այժմ, ես զիտեմ, թե արդյո՞ք բրիտանական զորամասերն արդեն դուրս են թերվել, սակայն միանգամայն վստահ եմ, որ նրանք դուրս են թերվում այժմ, և որ նրանք դուրս են թերվում Բաքումից: Նրանք զորքեր ունեն Բաքումից Թիֆլիս և դեպի Բաքու երկարուղային գծի երկայնքով՝ դեպի մեծ նավթային կենտրոն:

Մենասոք ՈՒԽԼՅԱՍՍ. Որպես փաստ՝ նրանք նահանջել են, բայց մեկ կայազորից Բաքումում և մեկ կայազորից Բաքվում՝ պաշտպանելու հետագա նահանջը, որք դեռևս ամբողջությամբ չի ավարտվել: Նրանք ետ են քաշել երկարուղային գծի

²⁰ Բնագրում՝ Erevan.

պաշտպանությունը երկու վայրերի միջև:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Մենք դա ասում ենք, քանզի անհրաժեշտ կլինի պահել այդ գիծը, քանզի դա միակն է, որի միջոցով օգնությունը կարող է հասնել Հայաստան, և մենք այդ օգնության աշխատանքներն ունենք այնտեղ:

Գնդապետ Հասրինար գնացել է այնտեղ, իսկ գնդապետ Հասրինսից առաջ պրն Հուվերը²¹ մարդիկ է ուղարկել այնտեղ կապիտան Աբրահամ Թուլինի²² դեկավարությամբ, ով վերադարձել է մեկ ամիս առաջ, և ես հաճախակի գրուցներ եմ ունեցել նրա հետ երկրի իրավիճակի մասին՝ Ամերիկայի ապագա կառավարման կամ ինամակալության վերաբերյալ:

Նա ասում է, որ եթե Ամերիկան ընդունի պրոտեկտորատը, ապա անհրաժեշտ չի լինի ունենալ ավելի քան 10 000-ից 20 000 զորք՝ երկրի պաշտպանության համար, որ այն բոլոր մտավախությունները, թե երկրի այդ մասը քողարկված Մեքսիկայի նման մի քան է, անհիմն են՝ դա այդպես չե, որ Ամերիկայի հեղինակությունը՝ փոքրաքանակ գործով այնտեղ, քավական կլինի խաղաղությունը պահպանելու համար տեսնելու, որ Հայաստանը վերականգնման շրջանում գտնվում է անվտանգության և պաշտպանության ներքո:

Սենատոր ՈՒՒԼՅԱՍՏՈՒ. Ես կցանկանայի այս հարցը տալ Ձեզ. ենթադրենք՝ Ամերիկան այնտեղ ուղարկի փոքրաթիվ զորք և երավիրի գլխավոր դաշնակից և միավորված երկրներն իրեն միանան Դուք կարծու՞մ եք, որ կարելի է կազմավորել միջազգային զորք՝ այնպիսի համալրումներով, ինչպիսին բնիկ հայերը կարող

²¹ Հ. Ք. Հուվերի (Herbert Clark Hoover) մասին տե՛ս սույն աշխատության «Ծանոթագրություններ» բաժնում:

²² Կապիտան Աբրահամ Թուլինը (Abraham Tulin) հանդես է եկել վկայությամբ խնդրա առարկա լաւմաներին 02.10.1919թ. տե՛ս սույն աշխատության էջ 123-143։ Ա. Թուլինի մասին տե՛ս սույն աշխատության «Ծանոթագրություններ» բաժնում։

եին տրամադրել, որը կարող է խաղաղություն հաստատել այդ տարածքում։

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ես այդպես եմ կարծում, Սենատո՞ր։

Սենատոր ՈՒՒԼՅԱՍՏՈՒ. Դուք, իհարկե, ուզմական գործի փորձագետ չեք, այնպես որ չեք կարող դատել, թե քանի զորամաս անհրաժեշտ կլիներ։

Դրեն ՍՎԱԶԼԻ. Ոչ, սո՞ւ, ես պարզապես կրկնում եմ, ինչ այս կապիտաններ²³ ասաց ինձ: Ես զինվորական չեմ, ամեննին։

Սենատոր ՈՒՒԼՅԱՍՏՈՒ. Եթե Միացյալ Նահանգների Սենատն ընդուներ նման բանաձև, Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն կլիներ բարոյական ազդեցությունը թուրքիայի և այն ժողովուրդների վրա, ովքեր այժմ փորձում են բնաջնջել հայ ազգը՝ Հայկական հարցին վերջ տալու նպատակով։

Դրեն ՍՎԱԶԼԻ. Անզինայս մարդկանց շրջանում ասկում է, որ դա կախարդանքի նման կգործի ամբողջ Արևելքում, ամբողջ արևելյան աշխարհում։ Հենց որ նրանք իմանան, որ արծիվը սավառնում է Արարատի շուրջ, այլև ոչ մի անհանգստություն չի լինի։

Սենատոր ՈՒՒԼՅԱՍՏՈՒ. Այսպիսով, Դուք գտնում եք, որ բանաձևի ընդունման բարոյական ազդեցությունը՝ նոյնիսկ եթե երբեւ, ոչ մի զինվոր կամ նավաստի չուղարկվեր, մեծ կլիներ, որ հեղինակությունը շատ արժեքավոր կլիներ հայ ազգի պահպանման գործում։

Դրեն ՍՎԱԶԼԻ. Բարոյական ազդեցությունը մեծ կլինի, սակայն մի քանի զինվորը —

Սենատոր ՀԱՐԻՆԳ. Կուտեղացնեի՞ն բարոյական ազդեցությունը։

Դրեն ՍՎԱԶԼԻ. Այո, ես նկատի ունեմ, որ դա կլիներ արտաքին

²³ Մ. Ավազին հավանաբար նկատի է ունեցել մեր կողմից արդեն նշված կապիտան Աբրահամ Թուլինին։

նշան, որ սա, որ այս թուղթը զուտ տպագրված չէ, այլ այն ունի —

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Զորություն:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այս, զորություն: Ես չգիտեմ՝ արդյո՞ք ճիշտ եմ շարադրում իմ փաստարկը:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Շարունակե՞ք Ձեր վկայությունը:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այժմ, օգնության հարցը կա, որը շատ կարևոր է այստեղ: Եթե ոչ մի զորամաս չգնա այնտեղ, նպաստամատույց աշխատանքները շատ դժվար կինեն: Կարծում եմ, գնդապես չասրինսը երիվանում էր, որը փոքր հայկական հանրապետություն է: Այնտեղ ապրող հայերը կազմավորել են փոքր հանրապետություն, որպես նստավայր այնտեղ ունենալով երիվանը: Այն Ռուսահայաստանում է:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ցանկանում եի այս հարցը տալ Ձեզ. ենթադրենք հայերն ազատ լինեին կոտորածի և պատերազմի սպառնալիքից, ունե՞ն նրանք բավարար սուրեղ և պաշարներ վերակառուցման աշխատանքներ նախաձեռնելու համար:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Նրանք օգնության կարիք ունեն ճիշտ այնպես, ինչպես այլ պետությունների բնակչությունը, ինչպես Սերբիան և այլ երկրներ մյուսների օգնության կարիքն ունեն:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այդ կապակցությամբ, պրն նախագահ, Բարումը Սև ծովի ափի՞ն է:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այն պահվում է Անտանտի, դաշնակից զորքերի կողմից:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Անզլիան այնտեղ գերիշխանություն ունի:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այն նավահանգիստ է:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այն նաև Սև ծովից դեպի Կասպից ծով ձգվող երկաթուղու վերջին կայա՞ն է:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այսպիսով, եթե այդ երկիրը մատակարարվեր, այն պես է մատակարարվեր Բարումի միջոցն վ:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո, սը թ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այն չէ՞ր կարող բնականն մատակարարվել Միջերկրականից երկաթուղով:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Երկաթուղին ավարտված չէ այնտեղ և երկիրն այստեղ լեռնային է ու ոչ հարթ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այս, ես խոսում եմ Անդրկովկանյան Հայաստանի, Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի մասին²⁴: Այդ երկիրը չի կարող մատակարարվել այլ կերպ, քան Բարումի միջոցով: Այն չի կարող մատակարարվել Միջերկրականով՝ Ալեքսանդրենի կամ այլ նավահանգստի միջոցով երկաթուղային կառույցների բացակայության պատճառով:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո, սը թ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այնտեղ կա երկաթուղի դեպի Կասպից ծով, Բարու: Անկախ նրանից, թե որտեղով է այն անցնում, այն անցնում է այնտեղով:

Պրեն ՍԱԼՔՈԼՍ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այսպիսով պաշարների մատակարարման պահեստն ու դեպոն այժմ Սև ծովի միջոցն վ է:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Եվ Բոսֆորի ու Դարդանելի միջոցն վ և Ռուսաստանի ց:

Պրեն ՍՎԱԶԼԻ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այսպիսով, Ալեքսանդրենի և Միջերկրականի առափնյալի ֆրանչական գինագրավումը այս

²⁴ Բնագրում՝ ... the trans-Caucasian Armenia, Russian and Turkish Armenia:

իրադրությունը չի թերևացնում:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Ոչ սը թ:

Մենատոր ՈՒԽԼԵՍՍՍ. Դա այն է, ինչ ես ցանկանում եմ իմանալ:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Ոչ, սը թ: Նախ մեզ ասվեց, որ ֆրանսիացիները 10 000 կամ 12 000 հոգանոց բանակ են ուղարկել: Իրականում ես այս թեմայով հայտարարություն եմ արել պետական դեպարտամենտին, և շուրջ երկու շաբաթ առաջ ինձ ասացին, որ ֆրանսիացիներն ուղարկել են 12 000 մարդ, և դա իմ վրա սխալ տպավորություն թողեց, բանի որ ես հասկացա, որ Ֆրանսիայի ուղարկած 12 000 անձինք պետք է փոխարինեին բրիտանացիներին, ովքեր պատրաստվում են հեռանալ Կովկասից:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այո:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Այժմ մենք որոշ իմքեր ունենք կարծելու, որ այս տեղեկությունն այնքան էլ ճիշտ չէր, նկատի ունեմ այն ձևով, ինչպես ես ներկայացրի Ձեզ: Կարծես թե ֆրանսիացիներն ուղարկում են զինվորներ, բայց նրանք չեն ուղարկում նրանց Կովկաս: Նրանք ուղարկում են նրանց զբաղեցնելու այն տարածքը

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Որը ֆրանսիակա՞ն է:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Ոչ, զբաղեցնելու այն տարածքը, որը 1916 թ. գաղտնի համաձայնագրերի սահմաններում է:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ֆրանսիական ազդեցության շրջանակներու մեջ:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Այո:

Մենատոր ՈՒԽԼԵՍՍՍ. Կարո՞ ո եք ինձ ասել Ալեքսանդրետից Բաքում մոտավոր կամ ճշգրիտ հեռավորությունը կամ եթե կարող եք պարզել դա՝ ներկայացրեք այն արձանագրության համար ավելի ուշ:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Ես այժմ դա ձեռքի տակ չունեմ:

Մենատոր ՈՒԽԼԵՍՍՍ. Ինչպես նաև Ալեքսանդրետից Բաքու հեռավորությունը: Իմ նպատակն է ցոյց տալ, որ երես Ալեքսանդրետը լիներ ֆրանսիական զորամասերինը, այն չեր կարող կանխող ուժ լինել այն կուտրածների համար, որ տեղի են ունենում:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Լրագրերը և հեռազբերք հայտնում են, որ ֆրանսիացիները մտադիր են գրավել մինչև Մարդին, այն է Հայաստանի հարավը: Ալեքսանդրետից Մարդին ուղիղ գծի կա լցուց է տախի քարտեզի վրա: Այսպիսով, դա այնպիսի ազդեցություն կունենա, որ մարդիկ կմտածեն, թե ֆրանսիացիները զախի են այդ Ճախապարհով: Սակայն Մարդինից մինչև Ալոյկովկաս հեռավորությունը մեծ է:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Շարունակեք: Մեր ժամանակն արագ է անցնում:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Այո: Ես աղաջում եմ կոմիտեին հաշվի առնել Անդրկովկասում հայերին պաշտպանելու հրատապ կարիքը: Եթե բրիտանական զորքերը հեռանում են, այնուեղ կա բանակ, որը թուրքերն են կազմավորել, հավելած թաթարները՝ հյուսիսում: Թուրքերի զինամթերքի հիմնական պաշարները սպառվում են, և այսպիսի երկարատև պատերազմից ու փորձություններից հետո այս մարդիկ պաշտպանության կարիք ունեն: Ենթադրեեք այս Ազգերի լիգան վաղն անցնում է գործի, եթե մեծ տերություններից որևէ մեկն իր վրա չվերցնի Հայկական պետության կազմավորման պատասխանատվությունը, ոչ մի հայ չի մնա այն ստեղծելու համար:

Մենատոր ՈՒԽԼԵՍՍՍ. Հայկական հարցը կլուծվի՝ նրանց ազգի ոչնչացմամբ:

Դրեն ՄՎԱԶՈՒԻ. Այո: Շատ փաստեր կան այս պատմական ազգի առաջադիմական միտումների վերաբերյալ, բայց ես չեմ պատճենաբանության շուրջ, պատրաստվում ծավալել նրանց անցյալի պատմության շուրջ,

ինչը Ձեզ հայտնի է: Հայերը դիմել են երկրին (ԱՄՆ-ին – Ա. Չ.) վաղուց: Ես հիշում եմ թե ինչպե՞ս էր պետական դեպարտամենտին հուշագիր ներկայացվել՝ շատ ավելի վաղ, քան ծրագրել էր Ազգերի լիգան, և թե ինչպե՞ս 75 տարի սուած Ամերիկան՝ ուղարկելով ձեր միսիոներներին ու կրթության ոլորտի աշխատողներին և դպրոցներ ու ուսումնարաններ բացելով, ընդունեց բարոյական մանդատը: Այժմ մենք չենք պատրաստվում փակել այդ ճանապարհը:

Սենատոր ՈՒՀԻԼՅԱՍՏՈՒՄ. Դա ներառված չէ սրա մեջ: Սա գուտ խաղաղության պահպանման համար է՝ մինչև պայմանագիրը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դժվար թե դուք պնդեք, որ դա մանդատն ընդունելու հիմք է: Քանի որ այդ դեպքում մենք ամբողջ երկրագնդի հավատարմատար պետք է լինեինք: Մենք միսիոներներ ունենք ամենուր:

Դրն ՍՎԱԶԼԻ. Ես չի ասի, որ դա ինքնին հիմք է, սակայն դա կետ է, որը բարոյական արժեք ունի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ցանկանում եի Ձեզ հատուկ հարց տալ: Իր քանաձեռում սենատոր Ռիխյամն ունի դրույթ, որը թույլ է տալիս նախագահին հետաձգել օտարերկրացիների հավաքագրումը, հնարավորություն ընձեռելով այս երկրի հայերին այսուղ հավաքել, զինել և հանդերձավորել զորամիավորումներ:

Դրն ՍՎԱԶԼԻ. Ես ամբողջությամբ հաստատում եմ դա:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Որքա՞ն ուազմական ուժ, Ձեր կարծիքով, հայկական ծագմամբ ամերիկացիները կամ բաղադրացիություն չունեցող հայերը կկարողանան հավաքել:

Դրն ՍՎԱԶԼԻ. Դե, ես լավ վիճակագիր չեմ:

Դրն ԳՈՒԼԵՍՑԱՆ. Ուր կամ տասը հազար:

Դրն ՍՎԱԶԼԻ. Ես կասեի մենք կարող ենք յոթից տասը հազար զինվոր գտնել: Ես շատ ամերիկացիներ զիտեմ, ովքեր ասել են, որ իրենք ցանկանում են գնալ այսուղ և ծառայել: Ես գտնում եմ, որ

երե դուք ընդունեք քանաձեռ՝ շատ լավ քան կլինի այս անցկացնելը: Նրանք կկարողանան ստեղծել շտաբներ ու այս երկրում ստորաբաժանում կազմավորել, և դա կկանչի Ամերիկայի կողմից սեփական զինվորներին ավելի ուշ այնտեղ ուղարկելը:

Սենատոր ՆՅՈՒ. Հայերի գորքը բավարար կլինի⁹: Ես նկատի ունեմ հայերին, ում կարող եք հավաքագրել այսուղ, այդ ուժը բավարար կլինի⁹ այս իրադրության ուազմական կարիքները հոգուլու համար:

Դրն ԳՈՒԼԵՍՑԱՆ. Գործնականում, լիովին:

Դրն ՍՎԱԶԼԻ. Եթե մենք հավաքագրենք մի ստորաբաժանում այսուղ, մի քանի ամիս կպահանջվի՝ նախքան այս ստորաբաժանումը պատրաստ կլինի: Մենք այս երկրում ունենք մի հայ գեներալ, և մեծագույն հայ գեներալներից ևս մեկին՝ գեներալ Անդրանիկին, ով զալիս է այսուղ այս նպատակով, այս բանաձեռի երրորդ կետը գործողության մեջ դնելու համար: Մենք մարդ ունենք, ով պատրաստվել է Փարիզի ուազմական դպրոցում, ևս կարծում եմ, այսօր այսուղ՝ Վաշինգտոնում է, և նա կներկայացնի պլանները: Նա և մյուս գեներալները, ովքեր ժամանում են, կներկայացնեն պլանները պետական դեպարտամենտին՝ ցույց տալով, թե ինչպես կարող է իրագործվել այս նախագիծը:

Սենատոր ՆՅՈՒ. Դուք որևէ զաղափար ունե՞ք, թե որքան ուազմական ուժ անհրաժեշտ կլինի այսուղ: Ես գիտեմ՝ դուք ասացիք, որ զինվորական չեք, և որ լիազորված չեք որոշակիորեն խուլու այդ թեմայի մասին, սակայն դուք որևէ հաշվարկ ունե՞ք: Այն կպահանջի 15 000, թե 30 000, թե 50 000 մա՞րդ:

Դրն ՍՎԱԶԼԻ. Ես կասեմ, ինչ ինձ ասել է այս ամերիկյան կայիտանը՝ ջենթլմենը, ով ուղարկվել էր Հայաստան պրն Հովհերի կողմից նպաստամատուց աշխատանքների

պարտականությունների բերումով —

Սենատոր ՆՅՈՒ. Շատ լավ:

Դրն ՍՎԱԶԼԻ. Նա ասաց ինձ, որ չի կարծում՝ ավելի, քան 20 000 զինվոր կարահանցվի դրա համար: Անշուշտ, ես չեմ կարող պատասխանատվությամբ խոսել դրա մասին:

Սենատոր ՌԻՒԹԱՍՍ. Թույլ տվեք այս հարցը Ձեզ ուղղել: Ինչպիսին է որ լինի գորքը, որ հայերը կարողանան հավաքագրել Միացյալ Նահանգներում, այժմ բրիտանական և ֆրանսիական բանակներում, ինչպես նաև մեր սեփական բանակում, չե՞ն լինի արդյոք բավական մեծ ուժեր, որ շատ ուրախ կլինեն ազատ արձակվելուց հետո համագործակցել այստեղ հավաքագրիած գորքի հետ Հայաստան գնալու համար՝ հանուն իրենց սեփական ժողովրդի:

Դրն ՍՎԱԶԼԻ. Կարծում եմ՝ դա նույնապես համապատասխանում է իրադրությանը: Բայց մենք դիմել ենք մի քանի ամիս առաջ, ապրիլին ես ուղարկեցի այս հուշագիրը պետական դեպարտամենտին հենց նույն թեմայով, և առաջարկեցի ինչպես հարզարժան սենատորն ասաց, որպեսզի հայերը, ովքեր այժմ ամերիկյան բանակում են, ներզրավվեն որա (ծրագրի - Ա. Դ.) մեջ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Բրիտանական և ֆրանսիական բանակներում ևս երանք շատ են՝ որպես առանձին ստորաբաժանումներ:

Դրն ՍՎԱԶԼԻ. Այս, որպես առանձին ստորաբաժանումներ: Մենք գտնում ենք, որ եթե կարողնանք այստեղից ուղարկել 10 000 -15 000-անոց կազմակերպված խումբ, արդյունքում կկազմակորվի ամերիկացիների միավորում, և արդեն իսկ Միլեգիայում կա հայկական լեզեռն, որի մասին ես խոսեցի իմ ելույթի սկզբում: Այս հայկական լեզեռնի և Կովկասում հայկական բանակի միջուկի հետ, որն այժմ վատ է մատակարարվում

զինամթերքով, մենք շատ հեշտությամբ՝ համեմատաբար կարծ ժամանակահատվածում կարող էինք ձևավորել հայկական բանակի միջուկը, որը կատանձնի բոլոր զավթիչներից պետության պաշտպանության պարտականությունը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ուրիշ որեւէ բան ունե՞ք ասելու:

Դրն ՍՎԱԶԼԻ. Ոչ, սը ք:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Կոմիտեն ուրախ կլինի այժմ լսելու պրն գուլեսյանին:

ՊՐՆ Ա. Հ. ԳՈՒԼԵՍՅԱՆԻ²⁵ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Դրն նախագահ և սենատորներ, ես նոյնապես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ, ջենքլմեններ, իմ ժողովրդի անունից, որ դուք բավականաշափ բարի գոնվեցիք այս առավոտյան մեզ ժամանակ տրամադրել:

Ես կարծում եմ, որ այստեղ ամբողջ իրադրությունը, բարյական կողմը, ինչպես նաև որոշ իմաստով ուզմական հայեցակետը կախված է Սենատի բանաձևից: Եթե Սենատն այստեղ ընդունի Սենատի բանաձև, բարյական ազրեցությունը ոչ միայն ժուրքիայի, այև Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս դաշնակիցների վրա այնպիսին կլինի, որ գործնականում հարցը կլուծվի: Մենք հեշտությամբ կարող ենք այստեղ հավաքագրել 10 000 հայեր, որոնցից շատերը ծառայել են վերջին պատերազմի ժամանակ, ինչպես նաև հայեր Եգիպտոսից, նաև հայեր Կովկասից և Ֆրանսիայից, Բուլղարիայից և Բալկանյան որոշ երկրներից: Այնպես որ զինվորների թիվը, որի կարիքը մենք ունենք, 10 000-ից 20 000-ի միջև է, և դա բավարար կլինի:

²⁵ Ա. Հ. Գուլեսյանի (M. H. Gulesian) մասին տես սույն աշխատության «Ծանոթագրություններ» բաժնում:

Ես առաջին տարում մի փոքր փորձառություն ունեցա
Պլատոպուրգում, երբ նրանք մեզնից 1200 կամ 1500 հոգու տարան
և ուզմական ուսուցման տվյալին: Ենթադրենք, որ մենք, ունենք
գեներալ Լեռնարդ Վուդի կամ գնդապետ Թեոդոր Ռուզվելտի
նման մեկի ու նմանատիպ ևս երեք կամ չորս մարդու, որոնք երեք
ամսվա ընթացքում կկարողանային վերահսկել Հայաստանը և
կարգ հաստատել ամբողջ Երկրում: Թող այս փառապանծ երկիրը,
որին մենք սովորեցինք սիրել, Հայաստան ուղարկի այդպիսի
գորք: Դա ամենն է, ինչի կարիքը մենք ունենք՝ փոքրաթիվ գորք և
ուղեկցող բարոյական աջակցություն: Աշխարհում չկա
պետություն, որը հայերի նկատմամբ ունի այնպիսի համակրանք,
ինչպիսին այս Երկիրն ունի: Մենք սովորել ենք սիրել նրանց, և
շուրջ 50 000 հայեր են կվերադառնան, հենց որ մենք ունենանք
Միացյալ Նահանգների բարոյական աջակցությունը:

Այժմ, այս հզոր և առատաձեռն երկիրը կարող է նվիրաբերել
50 000 հայ բաղաքացիներ: Նրանք բոլորը ձգուում են ետ
վերադառնալ, քանի որ իրենց երկիրը տառապում է, և քանի որ
Հայաստանը պարտվող կողմն է և իրենց համակրանքը նրանց
հետ է:

Ես երկու օր առաջ, ձեր հեռագիրը ստանալուց հետո խոսեցի
թ. Ուոշբրընի հետ, ով անցել է ամբողջ տարածքով, որ դուք
տեսնում եք այդ քարտեզի վրա [ցույց է տալիս], և բրիտանացի
գնդապետն ինձ ասաց, որ 5000 զինվորը բավարար կինքի, և վեց
ամսվա ընթացքում նա կարող էր զինվորացրել բավականաշափ
հայերի և հոյների ու այնտեղ գտնվող այլ ազգությունների՝
կատարյալ կարգ պահպանելու համար:

Մենատոր ՌԻՒԼՅԱՍՍ. Բոլոր քրիստոնյա՝ ազգություններից:

Դրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այո, սը՝ թ, քանի որ նրանք չեն կարողա-
նում լեզու գտնել թուրքերի հետ, ովքեր սպանել են մեր հայերին
ու եղայրներին; և բոնությունների ենթարկել մեր քույրերին ու

մայրերին: Թուրքերը չեն մնա քրիստոնյաների կառավարման
ներու: Եթե երբեք այս քանաձեն ընդունվի՝ բարոյականորեն
աջակցելով Փարիզում գտնվող դաշնակիցներին, և Թուրքիայի
հետ ստորագրված՝ Հայաստանն առանձնացնելու և դրա սահման-
ները նշելու պայմանագրով, թուրքերն անմիջապես կլրեն Հայա-
ստանը և ետ կզնան թուրքական տարածքներ, ճիշտ ինչպես դա
եղավ Բալկաններում ոռու-թուրքական պատերազմում: Եթե Բուլ-
ղարիան ազատագրվեց, ի՞նչն էր պայմանը: Թուրքերը լրեցին ա-
մեն ինչ, գնացին և հաստատվեցին Փոքր Ասիայում: Հետևաբար,
շատ թիզ թուրքեր են մնացել Կովկասում կամ Բալկանյան պե-
տություններում: Ուստի հայերն ու բուրքերն այժմ, այն սիրով, որ
տածում են Միացյալ Նահանգների հանդեպ, գրկարաց կընդունեն
Ամերիկային և ամերիկյան դրոշը: Եվ ոչ մի Ազուինալդոս²⁶ չի լինի
Հայաստանում: Այստեղ նրանք կանգնած են եղել դարեր շարու-
նակ: Եվ իսկապես, մի ազգ, որը տառապել է ինչպես Հայաստանն
է տառապել դարեր շարունակ, որն ունի իր պատմությունը,
ավանդույթները, որոշակիորեն մեծ առաքինություն ունի:

Եթե Միացյալ Նահանգներն այժմ ետ կանգնի, ազգը կորած է,
այսպիսով, ես խնդրում եմ այդ ազգի անունից: Եթե դուք մեզ չեք
կարող որևէ այլ քան տայ տվեք մեզ սա, և տվեք մեզ բարոյական
ազդեցության օգուտը: Հակառակ դեպքում, մեզնից ոչինչ չի մնա:

Ես այստեղ էի տասը տարի ստաց նախազահ Կիլվենդին
տեսնելու համար՝ որպես այս երկիր ուղարկված պատվիրակ և
այդ ժամանակաշրջանում Մոնրոյի²⁷ դոկտրինն ու այլ քաներ
խանգարեցին, բայց այդ ժամանակներն անցել են: Շատ նախադե-
պեր կոտրվել են, և մենք այժմ օգնության ենք հասնում այլ երկր-

²⁶ Ազուինալդոս (բնագրում՝ Aguinaldo) մասին տե՛ս «Ծանոթագրու-
թյուններ» բաժնում:

²⁷ Ջերմ Մոնրոյ (James Monroe) մասին տե՛ս «Ծանոթագրություններ»
բաժնում:

ների:

Մենք՝ մեզնից շատերը նայում են այս երկրին, որը մեր սեփական մայր երկիրն է: Մենք այստեղ հազարավոր հայեր ունենք, ովքեր համասարանների շրջանավարտներ են՝ ունակ և կարող: Ունենք նաև բազմաթիվ բիզնեսկառավարիչներ այստեղ: Նրանք բոլորը կամենում են ևս վերադառնալ:

Մի մարդ երեկ ինձ հարցրեց, թե արդյո՞ք ես ուզում եմ ես գնալ: Տերը բարեհած էր իմ նկատմամբ այս երկրում, քանի որ ես ունեցել եմ բոլոր հնարավորությունները: Ես կցանկանայի ես վերադառնալ այնտեղ Վաղը և հրաժարվել ամեն ինչից և լինել նույնան աղքատ, որքան այն ժամանակ, երբ ես ափ իջա Քաղաք Գարդենում 35 տարի առաջ, առանց որևէ գրոշի և առանց բարեկամի, քանի որ այդ խեճ մարդիկ մահանում են, և միակ հույսը, որը մենք ունենք՝ Միացյալ Նահանգներում է: Թոյլ մի տվյալ այս ազգը մահանա: Դա ձեր ձեռքերում է: Եթե դա լիներ մի անհատի կյանք, ում համար մենք խնդրեինք, որքա՞ն դուք կմտածեիք, եթե մարդու կյանքը լիներ վտանգված, եթե նրան կախադան հանելու լինեին վաղը: Դուք լուրջ կմտածեիք, նախքան ձեր որոշումն ընդունելը: Բայց սա ազգ է, քրիստոնյա ազգ: Եթե մենք չենք կարող դիմել Միացյալ Նահանգներին, ձեր նման շենթլմեններին, ես չզիտեմ, թե ուր մենք կզնանք:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Թոյլ տվյալ Ձեզ հարց տալ: Ձե՞ս որ Հայաստանն աշխարհագրորեն և ուսասարք ոչ միայն քրիստոնեության առաջապահ ուղեկալ է, այլև պատնեշ՝ բոլոր արևելյան ներխուժումներից դեպի Եվրոպա:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այո, սը՞ր, այս կամուրջ է եղել Ասիայի և Եվրոպայի միջև, այո, սը՞ր:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Եվ եղել է դարերով:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այո:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Արգե՞լք:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այո:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Դեռևս Չինգիզ խանի ժամանակ և նոյնին է մնում այսօր:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ուզում եի Ձեզ հարցնել մոտավորապես քանի՞ հայ մարդ՝ հայկական ծագմամբ և բաղարացիություն ունեցող, կա այս երկրում:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Մոտավորապես 125 000-ից 150 000, ամբողջ երկրով մեկ:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Դա ի՞նչ թիվ է:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Միացյալ Նահանգներում ծնված հայերի:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Ես ասում եմ, որ հայերի ընդհանուր թիվը 125 000-ի և 150.000-ի միջև է:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Նրանցից քանի՞սն են բաղարացիներ:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Մեծամասնությունը, կարծում եմ, ինը տասներորդը բաղարացիներ են: Մենք բաղարացիություն ենք ստանում, եենց որ մեր հինգերորդ տարին լրանում է:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Ես ցանկանում եմ ասել, պրն Խախագահ, այդ կապակցությամբ, և թող այն գրանցվի այս լուսների մեջ, որ մի անգամ ատիք եմ ունեցել աշքի անկացնելու այս հարցը. Միացյալ Նահանգներ եկող բոլոր օտարերկրացիներից հայերն առաջինն են բաղարացիություն ստացածների ցուցակում:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Դա ճիշտ է:

Պրե ՄԱԼՔՈՒ. Ես կարող եմ կոմիտեին որոշ թվեր ներկայացնել դրա վերաբերյալ:

Մենասոր ՌԻՒՅԱՍՍ. Ես դա գիտեմ: Ես այն աշքի եմ անցկացրել:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Մենք ամերիկյան բաղարացիներ դառնալու բիզնես ենք անում, և մեզնից շատերն ամուսնացել են

ամերիկուհիների հետ՝ մասնավորապես, Մասաչուսեթսի շրջակայրում, որոնցից շատերն՝ ինչպես մենք ենք անվանում «Յանկիներ» են, և նրանք լավագույն ամուսիններն են ում են երբեկ հանդիպել եմ: Մենք չենք խորանա դրա մեջ, բայց երբ դուք ես գնաք խաչակիրների ժամանակաշրջան, հայերը միակն եին, ովքեր օգնեցին խաչակիրներին ձիերով, զենքով և սննդով:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Այս:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Եվ այս ազգն արժանի է փրկվելու, և ամենը, ինչի կարիք մենք ունենք, փոքր բայլն է, եթե սա անցնում է²⁸, և բող Ամերիկայի փառապանձ դրոշը բարձրանա այնտեղ և օգնի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Կետը, որին ցանկանում էի հասնել, այս է, եթե մենք լիազորենք Հայաստանի համար այս կամավորական բանակի հավաքագրումը, այն պարզապես բաղկացած կլինի հիմնականում ամերիկյան քաղաքացիներից, այնպես չէ²⁹:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Որոշակիորեն այո, ըստ իս, չնայած ես լիազորված չեմ:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Նկատի ունեք հայկական ծագմամբ ամերիկյան քաղաքացինեն՝ թի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այս, բայց ես խոսում եմ «ամերիկյան քաղաքացիներ» իրավական տերմինի մասին:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Ես կարծեցի միգուցե Դուք նկատի ունեք մեր սեփական տղաներին, չնայած մեր սեփական տղաներից շատ շատերը մեծ պատրաստակամությամբ կգնային, քանի դեռ հարցը դրան է վերաբերում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այս:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Բիզնեսի հետ կապված մի կետ կա, որը բիզնեսմենը չի կարող անտեսել: Ահա Հայաստանը: Այն կուսական երկիր է: Նրա ամբողջ արդյունաբերությունը

Արքահամբ ժամանակներից սկսած երբեք չի փոխվել: Այժմ, երբ այդ երկիրը բացվում է, մենք զյուղատնտեսական գործիքների կարիք կունենանք, մենք էլեկտրական մեքենաների և բոլոր տեսակի մեքենաների կարիք կունենանք, և մենք ստիպված կլինենք ու կգնենք Ամերիկայից, և Ամերիկայի առևտուրը Հայաստանի հետ տասնապատիկ ավելին կլինի, քան բուրքական կատավարության ներքո:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Այդ կապակցությամբ, թոյլ տվեր հարցել, Հայաստանը չունի³⁰ կամ ունի³¹ երկարի և ածխի մեծ պաշարներ, և որոշ պղնձանման պաշարներ, և կա³² կովկասյան տարածաշրջանի մի հատված՝ Սև ծովից հարավարեւելը, ուր մեծ հաջողությամբ բամբակ է աճեցվում:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Հիանալի: Այդ ամբողջ հատվածում և լեռների միջև ընկած հովիտներում, ամենաբերի երկիրն է բամբակ, գարի, ցորեն և բրինձ աճեցնող, և ամենից հրաշալի երկիրն աշխարհում:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Հայաստանի լեռները երբեկ շահագործվել են երկարի կամ ածխի համար ինչ-որ չափով, և ի նշ է դրա արդյունքը:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այնքանից ոչ հեռու, երբ ես տղա երեխա լի, մի անզիական ընկերություն եկավ ածխի հանքերը բացելու, բայց թուրքերն այնքան խոշընդուներ հարուցեցին այդ ճանապարհին, որ մարդկի այն փակեցին:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Բայց երկար ու ածուխ և որոշ չափով պղինձ ու բենզին կա³³ ծովափին մոտ:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այս:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍ. Կասայից և Սև ծովերի մի ջև:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այս:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ցանկանում եք կոմիտեին հասկացնել, որ զյուղատնտեսության մեթոդները մակերեսային

²⁸ Դրն Գյուլեսյանը նկատի ունի բանաձևի ընդունումը:

վիճակում են և անփոփոխ են Աբրահամի ժամանակների⁹ ց:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Դրա պատճառն այն է, որ թուրքերը երբեք չեն թույլատրել որևէ տեսակի բարեփոխում: Արանք փաստեր են, որ ցանկացած ուսումնասիրող կամ շրջազայռ կամ տեղացի առնվազն կվկայի: Նրանք չունեն ոչինչ, բացի հասարակ մանգաղից: Դուք կտեսնեք հարյուրավոր տղամարդկանց և կանանց ցորենի դաշտերում այսօր՝ մանգաղը ձեռքներին հնձելիս, ճիշտ նույն կերպ, ինչպես կտեսնեք այս երկրում սիզամարզի եզրը մաքրող մարդու:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Թուրքական օրենքով, եթե մեկը մերենա զներ, նա միանգամից կրացահայտեր այն փաստը, որ ինքը կապիտալիստ է և մահացու կհարկվեր:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այո, նա շատ ծանր կհարկվեր: Նա պարզապես կսպանվեր:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Հենց որ նրանք բացահայտեին, որ մեկը որևէ բան ունի, նրանք միանգամից կավելացնեի¹⁰ ն հարկերը դրա համար:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Ես ծնվել եմ Մարաշ քաղաքում: Այնտեղ երկաթը մակերեսույթին է, ժայռի մեջ, և ցանկացած մեկը կարող էր վերցնել սառը հաստիչը ու մուրճը և ուղղակի հանել այն, հանքերն այնքան հարուստ են: Ամբողջ քաղաքը լի է հայերով, և այնտեղ ընդհանրապես ոչ մի թուրք չկա: Այդ ամբողջ տարածքը հարուստ է և պղնձով, և երկաթով, և ցինկով, և ածուխով ու դրանց երբեք ձեռք չեն տվել անհիշելի ժամանակներից:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Նկատի ուներ, դրանց երբեք զիտական եղանակով վ չեն ձեռք տվել:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այո:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Նրանք այդ մետաղները ստանում եին իրենց համար, նրանք՝ ովքեր օգտագործում եին դրանք:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Ոչ, ոք՝ Լորդ Կելվինն Արարատ լեռան

ստորոտի պղնձի և ոսկու հանքերի մասին իր գրքում խոսում է այդ մասին: Դրանք երբեք չեն մշակվել որևէ եղանակով: Այնպես որ այս երկիրը ոչ միայն մեծագույն մարդասիրական գործողություններից մեկը կկատարի՝ մեզ բարոյական աջակցություն տալով, այլև մեծապես կշահի ֆինանսապես, և կունենա խեղճ, տառապող հայերի հավերժ օրինանքն ու աղոքքները: Ես չեմ կարծում, որ Դուք, զենթլմեններ, կամ Միացյալ Նահանգների Սենատը, թիկունք կդարձնեք: Բազմաթիվ լավ մարդիկ կան այստեղ: Ես վստահում եմ նրանց:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ես ցանկանում եմ Ձեզ հարց տալ այստեղ: Սենատոր Լոջն իր բանաձեռում, որն իմ կողմից ներառվել է, որպես այս բանաձեի առաջին բաժին, խոսում է Աղրբեջան նահանգի մասին: Ես կասկածներ ունեմ այստեղի բնակչության վերաբերյալ: Կարծես թե նա գտնում է, որ այն հիմնականում հայկական է: Ես կարծում եի, աղրբեջանցիներն առանձին ազգ են: Լուսավորեք ինձ այդ հարցում որքան կարող եք:

Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Նրանք հիմնականում խառը ազգեր են, այդ ամբողջ հատվածում: Ոչ մի որոշակի ազգ չկա, բացի Վիլիկիայի մի հատվածից:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ոչ, ես խոսում եմ Աղրբեջանի մասին:
Պրե ԳՈՒԼԵՍՅԱՆ. Նրանք հիմնականում խառը ազգեր են:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Դա այն է, ինչ ես կարծում եի: Ես կասկածում եի այն բանաձեռում ներառելու պատշաճությանը, քանի որ ես կասկածում եի, արդյո՞ք այն բավականաշափ հայկական է՝ Հայաստանի Հանրապետության մաս դառնալու համար: Ինչորկե, այն կթողներ սահմաններ, որոնք ռազմավարական չեն: Սակայն մենք այժմ ռազմավարական սահմաններ չենք փնտրում, մենք ազգարանական սահմաններ ենք փնտրում:

Պրե ՍԱԼՔՈՒ. Երբ ես զամ իմ հայտարարությունն անելու, ես կբացատրեմ դա:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ենթադրենք՝ Դուք այն հիմա եք անում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Թող այս գեկուցողն ավարտի, այնուհետև նա կշարունակի:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես կցանկանայի այն արձանագրության մեջ ունենալ այս հայտարարության հետ, որը նա անում է հիմա:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Նախագահը ոչ մի առարկություն չունի, բայց ժամանակի սպառվելուց:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես կարծում եմ դա ժամանակ կինայեր: Շարունակե՞ք, այդ դեպքում:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Այդ ամրող հատվածում խառը բնակչություն է: Այդ ամրող հատվածում մեծամասնությունը հայեր են, քանի որ այն ամրող երկարությամբ սահմանակից է Հայաստանին, և մենք մեծարիկ հայկական բնակչություն ունենք:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես զիտեմ, որ այն սահմանակից է Հայաստանին, բայց ինչի՞ն է այն սահմանակից մյուս կողմից:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Պարսկաստանին:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Դա այն է, ինչ ես կարծում եմ: Ես կարծում եմ՝ այս մարդիկ հայեր չեն, պյոտեղ:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Նրանք բարեկամական հարաբերություններ ունեն պարսիկների հետ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես այդպես էի կարծում, բայց ես կարծում եմ, որ նրանք պարսիկներից և հայերից առանձին ազգ են, այլ լեզվով խոսող: Դա ճի՞շտ է, թե՞ ոչ կամ Դուք զիտե՞ք:

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Ես ճշգրիտ զիտեմ որքան կան, իսկապես խառը ազգերում, և հայերը միշտ ել յուրացնում են լեզուն:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այո, ես զիտեմ, բայց —

Դրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Ես այլև չեմ ցանկանում ջենթլմենների ժամանակը խլել: Ես ներկայացրի իմ խնդրանքը, և ես հույս ունեմ,

որ Դուք կուսումնասիրեք այս հարցը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Շատ լավ: Մենք այժմ կլսենք այն Մալրումին:

ՊՐՆ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱԼՔՈՍԻ²⁹ ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Դրն ՍՍԼ. Դրն նախագահ և ջենթլմեններ: Հարց տրվեց Ալրրեցանի մասին: Այս նախանզի հյուսիսային մասն ամբողջությամբ բնակեցված է հայերով (ցույց է տալիս քարտեզի վրա): Հարավային հատվածը, որն այժմ Պարսկաստանի մասն է, բնակեցված է մասամբ հայերով և նաև այլ ազգություններով, ներառյալ թաթարներին: Հայերը պահանջում են այս հյուսիսային հատվածը միայն (ցույց է տալիս քարտեզի վրա), քանի որ հիմնական ազգությունն այստեղ հայերն են:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այդ դեպքում սա պետք է ուղղվի ներառյալ համար — ոչ, սենատոր Լոջն իրավացի եք: Նա ասում է «Ալրրեցան նախանզի հյուսիսային մասը» և այլն:

Դրն ՍՍԼ. Այո: Այժմ, կարո՞ղ եմ ես ինձ վերագրել, պրն Խախագահ, ձեր հարցն այս երկրում հայերի թվաքանակի վերաբերյալ: Դա բավականին հետաքրքիր է:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այո:

Դրն ՍՍԼ. Ես շատ մանրամասն ուսումնասիրություն եմ կատարել այս թեմայով և մի փոքրիկ գիրք եմ հրատարակել Միացյալ Նահանգներում հայերի մասին: Իմ վիճակագրական հիմքերը ստացվել են Միացյալ Նահանգների կառավարության գեկույցներից:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դա ի՞նչ զիրք է:

²⁹ Ա. Վարդան Մալրումի (M. Vartan Malcom) մասին տե՛ս սույն աշխատության «Օսմանքարություններ» բաժնում:

Դրեն ՄԱԼՔՈՆ: Այն վերնագրված է «Հայերն Ամերիկայում»^{30:}

Սենատոր ՌԻՒԹԱՍՍՈ. Ես այն կարդացել եմ, սակայն շարունակեք և պատմեք կոմիտեին:

Դրեն ՄԱԼՔՈՆ: Հայերի թիվը, ովքեր իրականում այսօր բնակվում են այս երկրում, շուրջ 80 000 է: Ժամանակը խնայելու նպատակով ես ուրախ կինեմ ներկայացնելու հուշագիր Ամերիկայի հայերի վերաբերյալ:

(Վերոնշյալ հուշագիրն՝ այստեղ տպագրվել է հետևյալ տեսքով):

[Հատված «Հայերն Ամերիկայում» գրքից]

Այսօր հայերի ընդհանուր թիվը Միացյալ Նահանգներում մոտավորապես 77 980 է: Նրանց մեծ մասն այստեղ է եկել սկսած 1895 թ. այն տարածքներից, որոնք հայտնի են որպես Թուրքահայաստան, Կիլիկիա և Օուսահայաստան: Կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը 3-ը 1-ի է:

Սուրբ բերվող աղյուսակը ներկայացնում է ներզադայալների ցույց տված՝ մեկ շնչի հաշվով միջին զումարը Միացյալ Նահանգներ ժամանելու պահին:

Հայ	\$ 31.67
Բուլղարացի և սերբ	19.23
Խորվար-պոլվենացի	16.14
Հույն	24.10
Հրեա	29.09
Իռալացի (հարավ)	17.14
Լեհ	14.76
Ռուսիացի	16.82
Ռուբեն	14.39
Սլովակ	16.54

Հետևյալ աղյուսակը համոզիչ կերպով բնութագրում է հայերին

այլ ներզադայալ ազգությունների համեմատությամբ: Միացյալ Նահանգներ մոտք գործելու բոլյուսփություն ստուգածների 2.3 տոկոսն այնպիսի մասնագետներ են, ինչպես օրինակ բժիշկներ, իրավաբաններ, արվեստագետներ և այլն, իսկ 39.5 տոկոսը որպես մասնագետներ են: Ուշադրությունը դաձրեք հայերի և ներզադայալ այլ ազգությունների միջև առկա տարբերությանը:

Ազգություն	Արհեստագործական գործեր	Որակական մասնագետներ	Հողագործ գործեր	Սևագործ բանվորներ	Այլ մասնագործություններ
Հայեր	2.3	39.5	23.5	17.8	17.1
Բուլղարացիներ.	.1	3.3	47.7	44.3	4.6
Հույներ.....	.3	7.7	19.4	66.8	5.8
Իռալացիներ.	1.3	12.6	4.6	30.6	50.9
Լեհեր2	6.3	30.5	44.8	18.1
Ռուսիացիներ..	.2	2.7	59.4	34.4	3.3
Միացյալներ	1.2	22.7	29.7	21.1	25.3

Սուրբ բերվող աղյուսակները ցույց են տալիս արդյունաբերության մեջ հայերի միջին եկամուտը պատերազմից առաջ. Միջին շաբաթական

Հայ	\$ 9.73
Հույն	8.41
Միացյալ	8.12
Միջին տարեկան	
Հայեր	454.00
Բուլղարացիներ	255.00
Հույներ.....	300.00
Լիռվացիներ	454.00
Հունգարներ	395.00
Լեհեր	428.00

³⁰Տե՛ս Malcolm Vartan Malcom, The Armenians in America, Boston, Pilgrim Press, 1919:

Ռուսինացիներ	402.00
Ռուսներ	400.00
Սերբեր	212.00
Ալվակներ	442.00
Միքայիլներ	370.00
Թուրքեր	231.00

Ըստակիքի միջին տարեկան եկամուտը

Հայեր	730.00
Հույներ	632.00
Ճեկաներ	685.00
Հյուսիսային խոտացիներ	657.00
Հարավային խոտացիներ	559.00
Սերբեր	452.00
Լիտվացիներ	636.00
Լեհեր	595.00
Ռուսներ	494.00
Ռուբեններ ³¹	569.00
Ալվակներ	582.00
Միքայիլներ	594.00
Անգրագիտություն Միացյալ Նահանգներ ժամանելու պահին	Տակոս
Հայեր	23.9
Բուլղարացիներ	41.7
Հույներ	26.4
Ճեկաներ	26.0
Ռումինացիներ	35.0
Հարավային խոտացիներ	53.9
Լեհեր	35.4
Պորտուգալացիներ	68.2
Ռուսներ	38.4
Միքայիլներ	53.3

Արդյունաբերության մեջ կարդալ և գրել կարողացող ներգաղթյալների միջին քիվը

Ազգություն	Կարդալ	Գրել	Ազգություն	Կարդալ	Գրել
Հայեր	92.1	90.5	Հույներ	80.5	79.5
Բուլղարացիներ	78.1	76.8	Միքայիլներ	63.6	62.0

Հիե և նոր ներգաղթյալները կարդալու կարողության համեմատության մեջ

Հիե ներգաղթյալներ

Կանադացի (Քրանսխացի)	88.1
Կանադացի (այլը)	98.9
Դանիացի	97.6
Անգլացի	98.8
Գերմանացի	98.0
Իռլանդացի	95.8
Շոտլանդացի	99.5
Շվեդ	99.8
Ուկրացի	98.1

Նոր ներգաղթյալներ

Հայեր	92.1
Բուլղարացիներ	78.1
Հույներ	80.5
Լիտվացիներ	77.3
Լեհեր	79.9
Պորտուգալացիներ	47.5
Ռումինացիներ	82.6
Ռուսներ	74.5
Սերբեր	71.3
Միքայիլներ	63.6

Արյունաբերության մեջ անգիտուս ներգաղթյալների միջին տոկոսը

Հայեր	82.9
Հույներ	65.5
Լեհեր	50.6

³¹ Բնակչության մասին տե՛ս «Շանոթագրություններ» բաժնում:

Ներգաղթյալ երեխաների թիվը 37 բաղաքների հանրային դպրոցներում (1910)

Ազգություն	Բնակչա ծների մոտա- վոր թիվը	Աշակեր տների թիվը հասար ականկա ն հանրայ ին դպրոցն երում	Ուսանող- ների թիվը բոլեջներ ու և համա- լսարաննե րում	Ազգություն	Քննված ների մոտա- վոր թիվը	Աշակ երների թիվը հասա րական կանոն գետ րում	Ուսա նողների թիվը
Հայեր.....	26,498	1,031	29	Ռումին ացիներ..	82,704	1,265	9
Բուլղարացիներ	97,391	504	10	Ռումին Ռումին			
Խորվարժներ....	335,543	497	1				
Հույներ.....	216,962	1,002	13	Ներ..... Սիրիաց իներ.....	147,375	511	7
				56,909	1,281	17	

Այսօր Միացյալ Նահանգներում կան ավելի քան 300 հայ ուսանողներ ավագ ուսումնական հաստատություններում (բոլեջներում և համալսարաններում): Հարավարևելյան Եվրոպայից և Ասիայից ներգաղթյալ ոչ մի այլ ազգ չի օգտվել այս երկրի կրթական հաստատություններից և հնարավորություններից ավելի շատ, քան հայերը:

Կյանքի պայմաններ – ստորև բերված այլուսակը, որին ես հրավիրում եմ ձեր հատուկ ուշադրությունը, ցույց է տալիս բնակարանների սենյակների միջին թիվը, դրանց համար վճարվող ամսական վարձը, յուրաքանչյուր նման բնակարանում բնակչների միջին թիվը: Դրա ոչ խորն ուսումնասիրությունն ի հայտ է բերում այն փաստը, որ հայերի շրջանում կյանքի պայմանները շատ ավելի լավ են, քան տասնյակ այլ ազգերի, որոնց ես ընտրել եմ պատահականորեն:

Ա.դեր	Բնակարա- նում սենյակների միջին թիվը	Վճարված միջին ամսական վարձը	Մեկ շնչին հասնող միջին վարձը	Բնակարա- նում բնակչների միջին թիվը
Հայեր	4.83	11.17	2.25	4.98
Բուլղարացիներ ...	2.41	5.91	.97 ³²	6.19
Խորվարժներ	4.01	8.55	1.09	7.65
Հույներ	4.13	9.02	1.47	6.13
Իռանացիներ (հյուսիս)	3.89	7.66	1.40	5.50
Լիտվացիներ	4.08	8.81	1.47	5.89
Լեհեր	3.82	7.30	1.24	6.06
Շումաներ	3.35	7.46	1.27	5.93
Սերբեր	4.88	9.78	1.03	9.62
Ալբանիներ	3.68	6.84	1.18	5.87
Սլովակիներ	4.19	9.80	2.09	4.80

Հաջորդ այլուսակը համեմատում է հին և նոր ներգաղթյած ազգություններին գերբնակեցվածության տեսանկյունից: Կնկատնեք, որ գերբնակեցվածությունը հայերի շրջանում ոչ միայն ավելի քիչ է մյուս նոր ներգաղթյած ազգությունների համեմատությամբ, այլև նրանք ավելի լավ վիճակում են գտնվում այսպէս կոչված հին ազգությունների համեմատությամբ:

Ազգություն	Մեկ սենյակ ում մարդկա նց թիվը	Նեցած նյակում մարդկա նց թիվը	Ազգություն	Մեկ սենյակ ում մարդկա նց թիվը	Նեցած նյակում մարդկա նց թիվը
Հին ներգաղթյալներ			Նոր ներգաղթյալներ		
Կանադացի.....	1.17	2.07	Հույներ	1.48	2.13
Անգլիացի.....	.87	1.89	Լեհեր	1.58	2.77
Գերմանացի.....	1.02	2.15	Շումանացի.....	2.57	3.72
Իռանացացի.....	1.02	1.98	Ալբանիներ	1.62	2.66
Շումանացի	1.08	2.18	Սլովակիներ	1.15	1.87
Հայեր	1.03	1.97			
Բուլղարացիներ	2.53	3.20			

³² Համապատասխան գնագրի՝ 97:

Հին և նոր ներգաղթած ազգությունները՝ համեմատած յուրաքանչյուր 100 տնային տնտեսություններում կենվորների կամ տնվորների թվով.

Հին ներգաղթյալներ

Անգլիացիներ	185
Գերմանացիներ	316
Իռլանդացիներ	169

Նոր ներգաղթյալներ

Հայեր	196
Բուլղարացիներ	829
Խորվաթներ	639
Լեհեր	301
Ռումինացիներ	1,223
Սլովակներ	322
Միրիացիներ	339

Դարձվում է՝ հայերը հիմնական ազգություններից մեկն են, որ դառնում են Ամերիկայի բաղադրացիներ:

Արտադրության և հանքարդյունաբերության ոլորտում աշխատող ներգաղթյալների շրջանում ուստանասիրությունը ցույց է տալիս, որ նրանց ավելի քան 58%-ը ամբողջությամբ քաղաքացիություն է ընդունել: Սա հրաշալի ցուցանիշ է, եթե համեմատում ենք մյուս ազգությունների հետ, ինչպես ցույց է տրված հետևյալ աղյուսակում.

Հայեր	58.2
Խորվաթներ	19.4
Հույներ	3.7
Հրեաներ	24.1
Իռալացիներ	32.9
Լիտվացիներ	21.9
Հունգարներ	15.0
Լեհեր	21.6
Պորտուգալացիներ	5.3
Ռուսներ	8.3

Ուրգենիներ	14.7
Սլովակներ	17.1
Միրիացիներ	20.0

Դրեն ՄԱԼՔՈՒ. Որոշ քան ասվեց պարզունակ եղանակի մասին, որով բիզնեսը և զյուղատնտեսությունը վարվում է հին երկրում (Հայաստանում – Ա. 2): Ես չեմ ցանկանում որևէ ձևով դիմ արտահայտվել պրն Գուլեսյանի կարծիքին, բայց ես ավելի լավ եմ ծանոթ այդ թեմային: Այնտեղի հայերը պատկերացնում ունեն զյուղատնտեսական սարքավորումների օգտագործման մասին: Վերջին տարիներին նրանք ունեն որոշ մերենաներ դաշտերը վարելու համար, և որոշ վայրերում նրանք նաև ներկուծել են անգլիական և ամերիկյան մերենաներ հացահատիկի ու ցորենի համար:

Մենառոր ՈՒԽԼՅԱՍՍ. Դա Ռուսահայաստանն ու, թե՞ Թուրքահայաստանում:

Դրեն ՄԱԼՔՈՒ. Ես խոսում եմ Թուրքահայաստանի մասին: Իհարկե, այս սարքավորումներն այնուեղ այլքան էլ շատ չեն, սակայն զյուղատնտեսական մերենաները հայտնի են և, որտեղ հնարավոր է, կիրառվում են: Հայերը, ովքեր վերադարձել են Հայաստան Միացյալ Նահանգներից, զգալի մերենաներ են ներկուծել Հայաստան, ինչը պայմանականորեն ասած, թիշ է: Բայց ես ցանկանում եմ ասել, որ նրանք տեղյակ են դրանց մասին, և եթե նրանք հնարավորություն ունենան, ես հավատացած եմ, կունենան ավելի շատ: Հայերը շատ առաջադեմ ժողովուրդ են:

Մենառոր ՈՒԽԼՅԱՍՍ. Դա ճիշտ չէ, որ նրանք օգտագործում են դրանք այնքան, որքան համարձակվում էին հարկման թուրքական համակարգի ներքո:

Դրեն ՄԱԼՔՈՒ. Այո՛, այնքան, որքան համարձակվում էին: Այժմ, հանքերի մասին, որոշ արժեքավոր հանքեր կան, և ես կարող եմ ավելացնել, որ մոտավորապես 1909 թ. Նյու Յորքի Կան,

Լեք & Կո-ն³³ ուղարկել էր հատուկ կոմիտե՝ Հայաստանում այս հանքերն ուսումնասիրելու համար: Ես պատահաբար Կոնստանդնուպոլսում էի գտնվում այդ ժամանակ, և այրն Զեսթերը, ով այս կոնցեռնի ներկայացրուցիչն էր, առաջարկեց թուրքերին կառուցել երկաթուղու որոշ գծեր Հայաստանի տարածքում, ես խոսում եմ Թուրքահայաստանի մասին, պայմանով, որ այս ընկերությանը թույլ տրվի օգտագործել երկաթուղու յուրաքանչյուր կողմի հանքերը մի քանի տարով, որի ավարտին երկաթուղին կվերադարձվեր կառավարությանը: Ես սրան վերաբերվում եմ որպես կարևոր փաստի, այն պատճառով, որ Կան, Լեք & Կո-ի նման մեծ կոնցեռնը, որը հետաքրքրված է իր գումարը ներդնելու հարցում, Հայաստանի հանքերի և բնական ռեսուրսների հատուկ ուսումնասիրությունն է արել և ցանկանում է ներդնել մեծ գումար երկիրը զարգացնելու համար, եթե թուրքական կառավարությունը թույլատրի դա անել: Այս հարցի կապակցությամբ ես որոշ հատվածներ կկարդամ Հայ ինձեններների ասոցիացիայի քարտուղար Գ. Հ. Փակելյանի պատրաստած հուշագրից՝ Հայաստանի բնական ռեսուրսների և այլնի վերաբերյալ: [Վարդում է].

Երկրում շատ անտառներ կան, իիմականում Մերսինի հյուսիս-արևմտյան հատվածում, Հաճ(ը)նում, Դերսիմում, Արդանա-Սաղինում և Տավրոսի ու Ամանուսի լեռներում:

Ինչ վերաբերում է հանքային ռեսուրսներին, ըստ Կոնստանդինոսպոլսի զիշավոր հյուպատոս Գ. Բի Ռավենոնյալի³⁴ «կարելի է վստահարար պնդել, որ Թուրքիան չափազանց հարուստ է արժեքավոր հանքաքարերով, և որ այս հանքային հարատությանը դեռևս գրեթե ձեռք չի տրված»: Այսպիսին են եղել նաև անզիացի և գերմանացի հետազոտողների վկայությունները: Նրա (Թուրքիայի – Ա. 2.) զիշավոր հանքային ապրանքներն են.

³³ Բնագրություն՝ Kuhn, Loeb & Co.:

³⁴ Բնագրում՝ G.Bie Ravendal:

Ածուլքը հիմնականում գտնվում է Խարպութի³⁵, Պալուի³⁶, Սվարզի³⁷, Քյումոր Խանի (ածխի շրջան), Շեմիշզեկեկի³⁸ շրջաններում, Հայաստանի Լեռներում և Տավրոսի Նախալեռներում:

Պղնձի հանքերը Արդանա-Սաղենում³⁹, Դիարբեկիրի մոտավայրում, համարվում են աշխարհի ամենախոշորներից և ամենաբարյունավետներից մեկը։ Արդյունահանումը սահմանափակվում է սև պղնձով, որը վերջին մի քանի տարիների ընթացքում հաշվարկվում է մոտավորապես 1500 տոննա՝ պարունակելով 70-75 տոկոս մարուր պղինձ։ Պղնձի հանքանյութ գունվում է նաև Ցրապիզոնի խորքում (Գյումուշ Խանե, Հիրասանը⁴⁰, Գարահիսար և այլն), բոլոր Խարպութի և Աղանայի շրջաններում⁴¹:

Երկարի հանքանյութ կա Վասի մոտակայքում և Աղանդի շրջանում (որի արտադրողականությունը 40 000 տոննա է տարեկան), ինչպես նաև Բուլղար Դաղում և Բեյրութ Դաղում, Զեյթունի հարևանությամբ:

Քրոմի հանքերը Մերսինի մոտակայքում են, որոնց արտադրողականությունը 1900 թ. 1 800 տոննա է եղել: Կան նաև Ակրասանորեսի մերձակայքում և այլն:

Արծարի հանքերը Բուլղար Մադենում տարեկան արտադրություն էն 57 200 տոննա արծար և 400 տոննա արծարյա կա-

¹¹ Խարբութ (քնազըն)՝ Kharput)՝ հայկական՝ Խարբերդ

Խ Պալու (թագորում՝ Palu)՝ հայկական՝ Բալու

¹⁹ Մայ (ընապրում) (Sivas) հայկական Սեբաստիա

¹⁹ Չեմշգազակ (բնագրում՝ Chemeshgazak)՝ հայկական Ղմշկածագ՝

¹⁹ Արգանա-Մադենը (Քնաքրում՝ Arghana-Maden) զմնվում է Ելյաղիքի սու (Քառորդը):

⁴⁰ Հինգանի (Քեսպում՝ Herasund) ամենայի հսկանականությամբ սածովսա գրանտիկ (հուն.՝ Κεραυνός) մասն է:

⁴⁴ Ըստադրանքում տեղ գտած աշխարհազրական ասձտությունապելը ներկայացված էն ըստ բնագրի: Նշված բնակավայրերը իրականում բնուրերի և Աղանայի շրջաններում չեն:

պար: Արծաթ կա նաև Աղանայի և Խարպութի (Քերան Մադենի)⁴² մերձակայքում, Գյումուշ Խանեի մերձակայքում և այլն:

1911 թ. Սերսինի շրջանում գործող անզլո-ֆրանսիական կոնցենտրի հանքերից ցինկի գնահատված արտադրողականությունը եղել է 2 000 տոննա:

Աղք առատ է Հայաստանում: Ավագի, Էրզրումի և Վանի հանքերը տարեկան մեծ արտադրանք են տալիս:

Այլ հանքային արտադրանքներն են հղկարարը՝ հայտնաբերված Աղանայում, ասֆալտը՝ Եփրատում, ոսկին՝ Բուղար Դաղում⁴³, Խարպութի մերձակայքում և Վանում:

Կապարը Բուղար Դաղում, պլատինումը Չորակ⁴⁴ գետի ափին և Սասունում, նաևթը Տրավիզոնի մերձակայքում և Վանա լճի արևելքում և այլն:

Արյունաբերական զարգացման համար Հայաստանն ունի անհրաժեշտը՝ հումք և հզորություն: Հայաստանում կան հանքային աղբյուրների, ածուխի, հիդրոէներգիայի մեծ պաշարներ (Տարսոնի Էլեկտրական լույսի համար էներգիան ստացվում է Կիդիուս գետից), բայց թուրքերի ձեռքում երկիրը գործնականորեն մնում է չշահագործված:

Հայաստանը ցորեն մշակող երկիր է և ինն ալրադացներն այսուղե ամենուր են, չնայած արդիական հիդրավլիկ հզորությամբ աղացները՝ հագեցած ժամանակակից սարքավորումներով, տեղադրվել են երկուսը՝ Սերսինում, երեքը՝ Տարսոնում, մի քանիսը՝ Սվագում և այլն:

⁴² Բնագրում՝ Silver is also found near Adana and Kharpoon (Kebban Maden):

⁴³ Բուղար Դաղ (Բնագրում՝ Bulghar Daagh) կա երկու տեղ. առաջինը Կիլիկիայից հյուսիս Մալաթիա-Քոհյու գծով և երկրորդը Տրավիզոն-Զանիկ սանցակում: Բնագրում խոսք ամենայն հավանականու յամբ երկրորդի մասին է:

⁴⁴ Չորակ (բնագրում՝ Choruk River)՝ հայկական Չորուկ գետը՝ Էրզրումից հյուսիս-արևմուտք:

Կիլիկիան բամբակի արտադրության կենտրոնն է: 1913 թ. Աղանայում և Սերսինում գործում էին 35 բամբակի վերամշակումներ և չորս բամբակի մանման և հյուսման գործարաններ, նաև գործարաններ «մանուսա»-ի (տնային պայմաններում գործված կոորդեդեն) արտադրության համար՝ մեկը Տարսոնում, մեկը Տրավիզում, ևս մեկը Արարկիրում⁴⁵:

Գորգագործական արտադրությունն իրականացվում էր Կեսարիայում, Սվագում (500 հաստոց, 1500 բանվոր), Աղանայում և Խարբերդում (170 հաստոց, 500 բանվոր):

Աղանայում կա սառուցի հինգ ֆաբրիկա. Երկուսը՝ Սերսինում, երկուսը՝ Տարսոնում, մեկը՝ Տրավիզոնում:

Կաշվեգործարաններ կան Այնթապում, Մարաշում, Սվագում, և այլ բաղաբներում, կան նաև օճախի գործարաններ:

Բացի վերոնշյալից, Հայաստանի արյունաբերության հիմնական ճյուղերն են մետաքսագործությունը և բրդագործությունը, ձեռքի ասեղնագործությունը, դեկորատիվ գենքերի, պլանե անորների, կաշվե իրերի, շալերի, արծաթյա և ոսկյա թելերով գործվածքների արտադրությունը, գինեգործությունը, ձիթայուղի արտադրությունը և այլն:

Հայաստանը կամ փաստացի ամբողջ նախապատերազմյան Թուրքական կայսրությունը Եվրոպայի և Ամերիկայի արյունաբերողների համար համարվել է մեծ հնարավորությունների դաշտ: Բազմաթիվ կապիտալիստների առևտրային և արյունաբերական ձեռնարկությունների համար մեծ հնարավորություններ են տեսել, և դիմել են բազմաթիվ զիշումների երկարութիւն, էլեկտրակայաններ, հեռախոսագիծ, նավահանգիստներ, պահեստներ և այլ կառուցելու համար: Սակայն, ի հեճուկս նրանց բոլոր ջանքերի, առաջընթացը չափազանց դանդաղ էր: Դրա զիսավոր պատ-

⁴⁵ Հս նրահայտ է, որ Տրավիզոնն ու Արարկիրը Կիլիկիայի տարածքում չեն, սակայն բնագրում այդպէս է ներկայացված:

ձառներն էին. տերությունների մրցակցությունը՝ Թուրքիայի հանդեպ վերահսկողություն ապահովելու հարցում և կաշառասուն թուրքական կառավարությունը: 1911 թ. հայկական վեց վիլայեթներում (Էրզրում, Բիթլիս, Դիարբերի, Սվագ, Խարբերդ և Վան) Թուրքիայի ֆինանսների հետ կապված հետևյալ ցուցանիշները լուսաբանում են նշված կետը՝

Եկամուտներ	\$ 8 809 090
Ծախսներ	7 639 764
Հիմնական ծախսներ՝	
Բանակ	3 093 124
Ֆինանսական վարչություն	1 103 625
Ոստիկանություն	862 039
Գլխավոր գրասենյակներ	1 079 175
Ուժմաներ (մուսուլմանական կրոնական հաստատություններ)	192 130
Հանրային աշխատանքներ	235 708
Կրթություն	233 886
Գյուղատնտեսություն	65 494

Վերը նշված ցուցանիշներից երևում է, որ ամբողջ եկամուտների միայն 538 088 դրամը կամ մոտ վեց տոկոսն է (վերջին երեքը) ծախսվել երկրի զարգացման և բնակչության բարեկեցության համար: Մնացածը ծախսվել է բանակի (ավելի քան 36 տոկոսը) և հարկահավաքների հորդաների ու «Ուժմաների»՝ կրոնական ֆանատիկոսների վրա, ուրեր մակարույծների նման ապրում են երկրի աշխատասեր գյուղատնտեսների հաշվին:

Թուրքիայի պարտությունը վերջ դրեց բոլոր այս հետադիմական պատճառներին և երկիրը շուտով բաց կինի Եվրոպայի և Ամերիկայի առևտորի համար: Երկար սպասված արդյունաբերական «բուլը» վերջապես մոտ է: Ամերիկացիները,

անկասկած, պետք է գործոն դառնան այս արդյունաբերական «բուլ»-ում և կապ լինեն Մերձավոր Արևելքի հետերոգեն բնակչության և Եվրոպայի ու Ամերիկայի առևտրականների միջև, երանք պետք է շարունակեն իրենց դերը՝ արևմուտքի բաղարակրթությունն Արևելքի մարդկանց մոտ տարածելու հարցում: Բայց ո՞վ պետք է ֆինանսավորի երկիրը: Պատերազմից առաջ Գերմանիայի երազանքն էր Թուրքիան դարձնել Գերմանիայի գաղութ: Ավստրիան վերահսկում էր Թուրքիայի առևտորի մեծ մասը: Անգլիան ու Ֆրանսիան, և որոշ չափով Ռուսիան ու Բելգիան բաց չեն թողնում ոչ մի հնարավորություն իրենց առևտուրն այս երկրում ընդլայնելու համար:

Պատերազմը հիմնարար փոփոխություններ է բերել Գերմանիան ու Ավստրիան հեռացվել են մրցակցությունից որոշ ժամանակով, Եվրոպան զրադարձ է իր սեփական կորուստները վերականգնելով: Սա Ամերիկայի հնարավորությունն է քայլ անել այս դաշտում, ֆինանսավորել երկիրն ու վերահսկել առևտուրը: Դա չի պահանջում մեծ կապիտալ և շատ կարծ ժամանակի ընթացքում Հայաստանը կդառնա ինքնակառավարվող, դրանից հետո Ամերիկայի առևտուրը Հայաստանի վրայով կտարածվի դեպքում՝ Ռուսաստան ու Պարսկաստան և Ասիայի մեծարիկ երկրներ:

Ամերիկան պատերազմին իր մասնակցությամբ դարձել է համաշխարհային ուժ և իր նոր ծովային առևտորի, իր ֆինանսական վիճակի և դաշնակիցների հետ իր բարեկամական հարաբերությունների հիման վրա գտնվում է գերազանց վիճակում՝ ստանձելու այս աշխատանքը:

Այժմ, անդրադառնալով մասնավորապես այս համատեղ բանաձևին, ես ցանկանում եմ որոշ բաներ ասել դրա առաջին մասի առնչությամբ: Ինձ թվում է՝ հաստատված նախադեպ կահօգուտ Հայաստանի, այն որպես անկախ պետություն ձանաշելը՝

Ես նկատի ունեմ միացյալ Հայաստանը: Այժմ մենք ունենք Լեհաստան, Ուկրաինա, Չեխոսլովակիայի հանրապետություն և Հեջազի թագավորություն, որոնք պատերազմից առաջ եղել են այլ երկրների մասեր: Լեհաստանի, Ուկրաինայի, Չեխոսլովակիայի հանրապետության դեպքում՝ նրանց անկախ պետություններ ճանաչելու հարցում, որեւէ դիմադրություն շառաչացավ, չնայած որ այդ պետությունների մաս կազմեցին տարածքներ, որոնք պատկանում էին Ռուսաստանին:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այն ժամանակ, երբ մենք դա արեցինք, Ռուսաստանը դադարել էր դաշնակից լինել և նոր կառավարության ներքո դարձել էր թշնամի:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Ես կարծում եմ դա շատ տեղին է, սենատոր Ուխլյամս, բայց ինչ կատեր Հեջազի մասին՝ նոր Արաբական թագավորության: Թուրքիան պատերազմի մեջ չէր Միացյալ Նահանգների հետ, բայց Միացյալ Նահանգները ճանաչեց Հեջազի անկախությունը՝ քույլ տալով նրան խաղաղության պայմանագիր կնքել Գերմանիայի հետ՝ Միացյալ Նահանգների հետ հավասար հիմունքերով:

Ինձ թվում է, հետագայում, Հայաստանի՝ որպես անկախ պետության ճանաչումը Միացյալ Նահանգների կողմից կօգնի կանխարգելել ամբողջ Հայաստանի բաշխումը իշխանությունների միջև: Ինձ համար միանգամայն ակնհայտ է առնվազն, որ ըստ 1916 թ. զարոնի համաձայնագրերի⁴⁶, որոնց կողմերում էին Անգլիան⁴⁷, Ֆրանսիան և Ռուսաստանը, նրանք պատրաստվում են բաժանել Հայաստանը, մինչ մենք կդարձնենք նրան անձեռնմխելի՝ ճանաչելով անկախությունը, և առավել ես —

⁴⁶ Խոսքը Սայըս-Դիկոյի համաձայնագրի մասին է:

⁴⁷ Բնագրում՝ England: Համապատասխանաբար այսուեղ և շարադրանքի որոշ հատվածներում թարգմանված է Անգլիա և ոչ Մեծ Բրիտանիա:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ի դեպ, այդ համաձայնագիրը չեղալ էր հայտարարվել Ռուսաստանի դուրս գալով:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Այդպես ո, թե Ֆրանսիայի և Անգլիայի —

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Չեղալ է հայտարարվել նաև Ֆրանսիայի կողմից, Փարիզի վեհաժողովում Ֆրանսիան հրաժարվել և չեղալ է հայտարարել այդ համաձայնությամբ ստացած իր իրավասությունները:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Դա գրավո՞ր է արվել թե՝ պարզապես բարավոր հայտարարություն է:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ես չեմ հիշում, ավելի ճիշտ երբեք չեմ իմացել, այնպես որ չեմ կարող ասել՝ ես չեմ հիշում, բայց ուղղակի համոզված եմ, որ Ֆրանսիան հրաժարվել է այդ օրենքից: Թե նա դա արել է գրավոր կամ վեհաժողովի ժամանակ, կամ Կեմանսոյի հրաժարականի հետևանքով նախքան վեհաժողովը, ես չգիտեմ, բայց դա մերժվել է:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Մենք հայերս —

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Դուք խոսում եք այն համաձայնության մասին, որով Ալեքսանդրետը և արաֆինան շրջանը —

Պրեն ՄԱԼՔՈՒ. Առավելա շրջանը տրվել է Ֆրանսիային:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. (Չարունակելով) տրվել են Ֆրանսիային, այս:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Այս:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ամբողջը մասնատվել է:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Ռուսահայաստանը Ռուսաստանին:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այս:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Եվ Միջագետքին սահմանակից Հայաստանը՝ Անգլիային:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ռուսաստանյան մասը՝ նրա վլուգումից հետո, անցել է թշնամուն, իսկ Փրանսիական

հատվածից հրաժարվեցին կամավոր: Հնարավոր է Ֆրանսիան ձգում է մանդատի, և ուրիշ ոչինչ:

Պրեն ՄԱԼՔՈՍ. Կետը, որի վրա ես ցանկանում եմ հրավիրել հանձնաժողովի ուշադրությունը այն է՝ նույնիսկ եթե դա այդպես է, այսինքն հասկանալի է, որ Անգլիան ու Ֆրանսիան հրաժարվել են այդ պայմանագրով իրենց հատկացված իրավունքներից: Նույնիսկ եթե դա այդպես է, ինձ թվում է, որ միասնական Հայաստանի ձանաշումը՝ որպես անկախ պետություն —

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Կամրապնդի⁴⁸ նրան:

Պրեն ՄԱԼՔՈՍ. Դա կամրապնդի ըմբռնումը: Ավելին, ազատ, անկախ Հայաստան պետությունը, ինձ թվում է աշխարհի այս հատվածում վահան կլինի աշխարհի ապագա խաղաղության համար: Հայերը դարեր շարունակ պայքարել են քաղաքական ազատության և անկախության համար: Նրանք ցանկանում են անկախ լինել: Այժմ, եթե ինչ-որ քան տեղի ունենա, և Հայաստանի հատվածները հայտնվեն տարբեր մանդատների կամ «ազդեցության ոլորտների» ներքո՝ բաժանված Ռուսաստանի, Բուլղարի, Հունաստանի, Անգլիայի կամ Ֆրանսիայի միջև, Հայաստանի տարածքը և բնակչությունը կմասնատվի, ինչն անբանական է: Այս բաժանումը երբեք չի գոհացնի հայերին: Ճանաչելով ամբողջական Հայաստանի անկախությունը Միացյալ Նահանգները հաստատապես կստեղծի միացյալ Հայաստան, և դրանով առնվազն կօգնի կանխել ապագա խնդիրները:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես լիովին համաձայն եմ Ձեզ հետ այդ հարցում, բայց ինչ վերաբերում է Հայաստանն ինքնին առանձին մանդատների միջև բաժանելուն, ապա իմ կարծիքով՝ և ենթադրում եմ, որ Ձեր կարծիքով նոյնպես, Ֆրանսիան, Անգլիան, Բուլղարի և Հունաստանը շատ մտահոգված են, որ Միացյալ Նահանգներն իր վրա վերցրեց մանդատը, նրանք ավելի քան

ցանկանում են, որ դա անեն, քանի դեռ Հայաստանը ոտքի չի կանգնել: Սակայն, այդ հարցը ընդհանրապես ներառված չէ այս բահաձևում:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք խոսում եք Հայաստանի նկրտումների մասին: Այս կապակցությամբ ես ցանկանում եմ հարցել Ձեզ՝ արդյո՞ք Հայաստանի ժողովուրդը⁴⁸ կնախընտրի սեփական ինքնորշման քաղաքականության շրջանակներում ամբողջական պետության ձանաշումը՝ պայմանագրում առաջարկված ցանկացած մանդատից:

Պրեն ՄԱԼՔՈՍ. Ոչ, ես իմ անունից կասեմ, որ հայերը ներկա հանգամանքում կնախընտրեն մանդատը:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Սահմանափակ ժամանակահատվածոն՝

Պրեն ՄԱԼՔՈՍ. Սահմանափակ ժամանակահատվածով:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք սրանով նկատի ունեք, որ նրանք ի վիճակի⁴⁹ չեն ինքնապաշտպանության:

Պրեն ՄԱԼՔՈՍ. Մեր բնակչությունը սփռված է, և այդ պատճենով մենք հիմա չենք կարող կենտրոնացնել մեր ուժերը և համապատասխան կերպով պաշտպանել ինքներս մեզ [ցույց է տալիս Հայաստանի քարտեզը]: Դուք գիտեք, որ Թուրքահայաստանի հայերը վտարվել են դեպի հարավ և հիմա սփռված են Միջազգետքում, ընդիուպ մինչև Բաղդադ: Համաձայն մեր լավագույն տեղեկության՝ ավելի քան 700 000 հայ կա Միջազգետքի հարթավայրում, որը ներառված չէ այնտեղ, որը կոչվում է Հայաստան:

Եվ, կրկին, մեկ այլ մեծ քանակությամբ հայեր, ովքեր մինչ պատերազմն ապրում էին Թուրքահայաստանում, տարվել կամ ապաստանել են Ռուսահայաստանում: Ըստ այդմ, մենք տարանջատված և սփռված ենք այն աստիճան, որ անհնար կլինի

⁴⁸ Բնագրում՝ People of Armenia:

ինքնապաշտպանվել, ոչ այն պատճառով, որ մենք ֆիզիկական ուժ չունենք այդ անելու համար եթե միասին լինենք, այլ պայմաններն այնպիսին են, որ մենք չենք կարող դա անել:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍՈՒ. Ճի՞շտ է, որ այդ հայերից շատերն ապաստան գտան Միջազգեստի բրիտանական սահմաններում:

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Այո:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍՈՒ. Նրանք, ովքեր գոյատևեցին անապատն անցնելուց հետո՝

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Այո, ես զրուցել եմ ամերիկացի միսիոներների և Կարմիր Խաչի աշխատակիցների հետ, և մասնավորապես մի հիանալի ջենթլմենի՝ Կարմիր Խաչի ակնառու բժիշկ Կապիտան Հայդի⁴⁹ հետ, ում կցանկանայի տեսնել այստեղ: Նա ուղարկվել էր Հայաստան և ստեղծել իր շտաբն Այնթապում վեց ամսով: Նա ինձ ասաց, որ Միջազգեստի դաշտավայրից հայերը հետ էին զնում դեպի Կիլիկիա, որովհետև անզիական և ֆրանսիական զորքերն այնտեղ էին և պաշտպանության մեջ հնարավորություն կար այնտեղ: Եթե մենք Հայաստանի այլ մասերում պաշտպանություն ունենայինք, բոլոր վերապրածները, այժմ բնակվող հյուսիսում՝ Շուտահայաստանում կամ հարավում՝ Միջազգետքում, աստիճանաբար տուն կվերադառնային և, միևնույն ժամանակ վստահ եմ, որ եթե հայերը համախմբվեն, նրանք ունակ կլինեին ինքնապաշտպանվելու:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍՈՒ. Ես մի պատմություն տեսաթերթում, ու դա անհավատալի թվաց ինձ, որ այդ փախստականների մի մասը հասել է մինչև Պաղեստին:

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Այո:

⁴⁹ Կապիտան Ջորջ Բ. Հայդ (George B. Hyde) հանդես է եկել վկայությամբ խնդրու առարկա լսումներին 30.09.1919 թ.: Տե՛ս սույն աշխատության էջ 113-122:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍՈՒ. Անցնելով այդ երկար, երկար ձանապարհը:

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Այո: Կցանկանայի պատասխանել ձեր այլ հարցերին, որ ունեք:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ զիտեր բրիտանացիների կողմից իրենց զինված ուժերը Հայաստանից ետ քաշելու շարժադրիթների մասին:

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Իմ անունից կասեմ, որ դա մի բան է, իհարկե, որն իր պատճառը պետք է ունենա: Պետք է լինի մի բան, որ բրիտանական կառավարությունն ունի իր տեսլականում: Բրիտանական կառավարությունը ներկայացրել էր պատճառներ. այն է՝ աշխատութիւն խնդիրներն Անգլիայում, զորքի՝ տուն վերադառնալու ցանկությունը, Անգլիայի ներքին խնդիրները և այլ տարրեր պատճառներ: Ըստ իմ անձնական տեսակետի, և սա մյուս հայերի տեսակետը չէ, սա ասում եմ առանց երկմտանքի, ենթադրում եմ՝ Անգլիան ցանկանում է ճգնաժամ առաջացնել, նա ցանկանում է հասնել Հայկական հարցի վերջնական լուծմանը:

Սենատոր ՈՒԻԼԹԱՍՍՈՒ. Այո:

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Կարծում եմ, նա ստեղծել է այս առանձնահատուկ վտանգը, որ Հայկական հարցը լուծվի մեկընդմիշտ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Արդյո՞ք կարծում եք, որ նրանք փորձում են ստիպել Միացյալ Նահանգներին ընդունել մանդատը:

Դրեն ՄԱԼՔՈՍՈՒ. Ոչ, ես չեմ կարծում, թե նրանք փորձում են ստիպել Միացյալ Նահանգներին ընդունել մանդատը, բայց կարծում եմ՝ նրանք փորձում են Միացյալ Նահանգներին ստիպել այս կամ այն կողմն անցնել, որպեսզի Մեծ Բրիտանիան հասկանա՝ թե ինչ անի: Հնարավոր է Միացյալ Նահանգները չվերցնի մանդատը՝ ինչ-որ բան պետք է արվի, և Ֆրանսիան ու Անգլիան պետք է դա անեն միասնաբար կամ համաձայնաբար:

Սենատոր ՀԱՐԻՆԳ. Դուք, հետևաբար, կարծում եք, որ նրանք ընդունում են իրենց ներկա դիրքը՝ որպես անվերահսկելի՝ որպեսզի ստիպեն մեզ կամ ընդունել մանդատը, կամ թույլ տալ նրանց առաջ շարժվել:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Զգիտեմ: Ես չեմ ցանկանում ասել, որ իմ անձնական կարծիքն այն է, որ նրանք փորձում են հարցը հանգուցալութել:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Ինչ-որ տեղեկություն ունեք, որ Մեծ Բրիտանիան ձգում է վերցնել Հայաստանի մանդատը: Արդյո՞ք նա ավելի հակված չէ խուսափել դրանից:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Ինչպես լսել եմ, Մեծ Բրիտանիան չի ցանկանում վերցնել Հայաստանի մանդատը, բայց ոչ այն պատճառով, որ Հայաստանը արժանի չէ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Եթե դա մեզ շանցնի, չի՞ անցնի նաև Բոտալիային կամ Ֆրանսիային:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Ինձ թվում է, դա կանցնի Անգլիային կամ Ֆրանսիային. կարծում եմ, որ դա կբաժանվի այս երկու տերությունների միջև:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Բայց այդ հարցն այսուղ ներառված չէ:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Կարծում եմ, այս կողմից մեր ամրող տեղեկատվության հիման վրա, Անգլիան և Ֆրանսիան, և Բոտալիան, և Հունաստանը բոլորը ցանկանում են, որ Միացյալ Նահանգները վերցնի Հայաստանի մանդատը, որովհետև դա լավագույնն է հայերի համար, և որովհետև դա կկանխի, որ այս եվրոպական տերություններից որևէ մեկը ստանա այն և դրանով իսկ մյուսների նկատմամբ առավելություն ունենա:

Սենատոր ՆՅՈՒ. Ենթադրենք, մանդատը ընդունվել է կամ Ֆրանսիայի, կամ Բոտալիայի կողմից, դա նույն արդյունքի չի հանգեցնի արդյոք Հայաստանի համար, ինչ Միացյալ

Նահանգների կողմից ընդունվելու դեպքում:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Ո՛չ:

Սենատոր ՆՅՈՒ. Ինչո՞ւ ոչ: Սա այն է, ինչ ես ցանկանում եմ իմանալ:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Առաջին հերթին, ո՞չ Բոտալիան, ո՞չ Ֆրանսիան, ֆինանսապես և տնտեսապես ունակ չեն օգնելու հայերին: Նրանք իրենց իրենց չեն բավարարում: Երկրորդ պատճառն այն է, որ փաստորեն այս բոլոր եվրոպական տերությունները՝ Անգլիան, Ֆրանսիան և Բոտալիան տարիներ յարունակ ներքաշել են Հայաստանը քաղաքական խաղերի մեջ: Այս պատճառով, Միացյալ Նահանգների մանդատն ամենալավ մասնաւոն է Հայաստանի համար: Ամերիկան ավելի հարուստ է, նա անշահախնդիր է: Այն վերցնելով նա կվերացնի հայերին առևշտող բանարկությունների պատճառները տերությունների միջև: Ավելին, Ամերիկայի պաշտպանությամբ կամ հոգածությամբ շատ հայեր կվերադառնան Հայաստան իրենց ամերիկյան փորձառությամբ և ունեցվածքով:

Սենատոր ՆՅՈՒ. Պրեն նախազահ, կարծում եմ, որ սա այս հարցի շատ կարևոր փուլն է, և ես իրոք շատ կցանկանայի դրան հետապնդում ինքս հետևել, բայց ստիպված եմ ներողություն խնդրել հիմա: Ես պետք է ժամը 12-ին նիստերի դահլիճում լինեմ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Քանի դեռ այս որոշումը խնդրահարույց է, այս վերջին վկայությունն ու քննարկումն անտեղի է: Այսուղ խնամակալության հարց ներառված չէ:

Սենատոր ՆՅՈՒ. Այո՛, բայց ելնելով ընդհանուր պատճառներից, կցանկանայի հետևել այս ուսումնասիրությանը, բայց ես հիմա պետք է գնամ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Գլխավոր պատճառն այն չէ արդյոք, որ հայերը Միացյալ Նահանգների մանդատը կեախընտրեն ավելի, քան մյուսներից որևէ մեկինը, այն

պատճառով, որ Միացյալ Նահանգները կլինի միակ ալտրուիստ տերությունը, որ կդիտարկի բացառապես հայերի շահերը:

Դրն ՍԱԼՔՈՒԾ. Սա այն էր, ինչ ես ցանկանում էի ասել, բայց ես ասացի այլ կերպ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այժմ, վերադառնանք ուսումնասիրությանը: Դուք հենց նոր խոսեցիք հավանաբար Հայաստանի նկատմամբ ձեր ազգային շահերից ելնելով —

Դրն ՍԱԼՔՈՒԾ. Այս:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. (Չարունակելով). — Հայերի տեսակետից ամերիկյան մանդատի ցանկալիության մասին: Դուք Ամերիկայի քաղաքացի եք:

Դրն ՍԱԼՔՈՒԾ. Այս:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ցանկանում եմ ձեզ հարցնել, թե ի՞նչ եք մտածում մանդատի մասին ամերիկացու տեսանկյունից:

Դրն ՍԱԼՔՈՒԾ. Ես ձեզ շատ շատ անկեղծ պատասխան կտամ, սենատոր Հարդինք:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Շատ լավ:

Դրն ՍԱԼՔՈՒԾ. Ես կասեմ, որ Միացյալ Նահանգները պարտավորված է օգնել Հայաստանին ուրիշ կանգնել, անկախ այն բանից թե պարտավորվածությունը ենթադրվում է մանդատ բառով կամ այլ բանով, որովհետև պատերազմը դեռ չի ավարտվում, պայմանագրերը դեռ չեն ստորագրվել և վավերացվել, և հայերը փաստացի պատերազմող կողմ լինելով և շխնայելով իրենց արյունը Գերմանիային և նրա դաշնակից Թուրքիային հաղթելու համար, իրավունք ունեն օգնության: Կարծում եմ՝ օրենքով Միացյալ Նահանգները պարտավորված է նրանց օգնություն ցույց տալ և նրանց համար ինչ-որ բան անել, մինչև վերջապես Հայաստանի կարգավիճակը կհաստատվի: Սրանից բացի ես ոչ մի տեսակետ չունեմ առ այն, թե Միացյալ Նահանգները պետք է ստանձնի որևէ մանդատ, թե ոչ: Բայց

խոսելով իմ անոնից՝ և որպես Ամերիկայի քաղաքացի, և՝ հաշվի չառնելով պատերազմին հայերի մատուցած ծառայությունն ու նրանց ներկայիս կացությունը, ես կարծում եմ, որ Միացյալ Նահանգները պետք է արձագանքի որոշ օգնությամբ: Ես Միացյալ Նահանգներ եմ եկել, երբ երիտասարդ էի: Ես իմ ամրոջ կրթությունը ստացել եմ այստեղ, և ինձ զգում եմ այնպահ ամերիկացի, որքան մեկ ուրիշը: Նրան ամերիկացի, սրտանց զգում եմ, որ Միացյալ Նահանգները հարկ է, որ ձեռք մեկնի հայերին այս ճգնաժամի պայմաններում: Ամերիկան պարտավոր է դա անել: Եվ ես սա ասում եմ որովհետև խոսել եմ բնիկ ամերիկացիների հետ, ովքեր վերջին երկու կամ երեք տարին աշխատել են Հայաստանում: Ես այստեղ հանդիպել եմ Յանքի տիպի ամերիկացիների: Նրանցից շատերից լսել եմ, որ կարծում են, թե Ամերիկան պետք է ինչ-որ բան անի Հայաստանի համար: Եվ կա դրա՝ ինչպես իրավաբանական, այնպես էլ բարոյական արդարացումը: Պատերազմը դեռ չի ավարտվել, համաձայնագրերը դեռ չեն ստորագրվել, հայերը դեռ կովում են, և մենք բրիտանացիների և ֆրանսիացիների հետ միասին պետք է նրանց պաշտպանելու բայլեր ձեռնարկենք:

Սենատոր ՈՒԽԵՑԱՍՍ. Մինչև նրանց կարգավիճակը կկարգավորվի՝

Դրն ՍԱԼՔՈՒԾ. Մինչև նրանց կարգավիճակը կկարգավորվի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Թույլ տվեք մի քիչ առաջ անցել: Եթե ձեր փաստարկի հիմքը ճիշտ է՝ թե նրանց մասնակցությունը պատերազմին պարտավորեցնում է մեզ նրանց հովանափորությունը հանձն առնել, ապա հենց նույն փաստարկը չի կիրառվի արդյոք պատերազմին մասնակցություն ունեցող մյուս բոլոր ազգերի և ազգությունների, պայքարող ժողովուրդների համար:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Ոչ այնքան: Օրինակ, Լեհաստանի և Ռուսականայի դեպքում, և Չեխոսլովակիայի հանրապետության դեպքում, այդ ժողովուրդները կարող են պաշտպանել իրենք իրենց: Նրանք ոչնչացման վտանգի առջև չեն: Միացյալ Նահանգներն արդեն օգնել է նրանց, և ոչ մի պատճառ չկա, թե ինչո՞ւ Միացյալ Նահանգները չպետք է փոքր-ինչ օգնի հայերին:

Մենատոր ՈՒԽԹԱՍՍ. Նոյն չափո՞վ:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Նոյն չափով: Ես չեմ ասում, որ Միացյալ Նահանգները պետք է դուրս գա և հսկի Եվրոպային: Ես դեմ եմ դրան: Ոչ ել ասում եմ, որ նա պետք է հսկի Հայաստանին: Բայց ասում եմ, որ հայերն այնքան իրավունք ունեն Միացյալ Նահանգներից օգնություն ստանալու, որքան Լեհաստանը, և մյուս երկրները, որոնց արդեն օգնել են: Եվ գուցե այստեղ ավելացնեմ, որ ոչ մի ուրիշ երկիր չի խնդրում Միացյալ Նահանգներից այսպիսի օգնություն: Ոչ մի ուրիշ ժողովուրդ այնպիսի օգնության կարիք չունի, ինչպիսին է այն, որը հայ ազգին պահպանելու համար է:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Հիմա, հենց այստեղ, կասե՞ք, թե ինչ եք կարծում, Միացյալ Նահանգները մասնավորապես ի՞նչ պետք է անի այդ օգնությունը ցույց տալու համար: Ես հստակ բան եմ ցանկանում:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Այո, ես կպատասխանեմ դրան: Հենց այս պահին ես կառաջարկեմ ձեր ասածը:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այո: Ո՞րն է մեր պատվավոր պարտը հիմա, որ կարծում եք մենք պետք է անենք:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Կարծում եմ, մենք պարտավոր ենք Հայաստան ուղարկել առևլազն 10 000-անց զորք և մի բանի ռազմանավ: Զորքի ներկայությունը բավարար կլինի խաղաղության պահպանման համար, Հայաստանի հյուսիսային հատվածում 2 000 000 հայերի կյանքը պաշտպանելու համար: Դա

կիրքի ազնիվ, քրիստոնյա ազգին: Եթե ասում եմ, որ պետք է 10 000-անց զորք և մի բանի ռազմանավ ուղարկենք, ես նկատի չունեմ, որ այս զինվորները գնում են կրվելու: Ես ցանկանում եմ իրազեկել կոմիտեին, որ վերջին չորս տարիներին հարյուրավոր հայեր՝ տղամարդիկ և կանայք, գնացել են Հայաստան ամերիկյան օգնության կոմիտեի կողմից և անցել են Հայաստանը լայնորով ու երկայնքով, և նրանցից ոչ ոք ունձգության չի ենթարկվել: Դուք, որ երբեք չեք ապրել Հայաստանում, չեք կարող հասկանալ հարգանքը, որ տեղացիները տածում են ամերիկացիների նկատմամբ: Ամերիկացի միսիոները, ում դուք գուցեն չընդունեք որպես գործավար, արքա է Հայաստանում, և ամերիկյան գորքի այն է կառավարության ներկայությունը, որը թուրքիային պատերազմ չի հայտարարել, ոչ միայն կընդունի տեղացի բուրքերի կողմից, այլ նաև կունենա կայուն արդյունք խաղաղության պահպանման և հայերի պաշտպանության առումով: Ես կարծում եմ, որպես ռազմական բայլ, Միացյալ Նահանգները պետք է առևլազն գրամասերի փոքր ջոկատ ուղարկի կարծ ժամանակով:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ընդունում եք, իհարկե, որ այս գորամասերն ուղարկելը կլինի պատերազմական գործողությունն է:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Նպաստամատույց գործի համար չեք գնում կրվելու այստեղ, ինձ համար դա պաշտպանություն է, ոչ թե պատերազմ:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք նրանց անզեն չե՞ք ուղարկի:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Դուք նրանց անզեն չեք ուղարկի: Շատ մարդիկ Վաշինգտոն քաղաքում՝ այստեղ գենք են կրում, նրանց բույլատրվում է գենք կրել:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ուզում եք ասել, որ դուք նկատի ունեք թե ցանկացած զորք ցանկացած օտար երկիր ուղարկելն այլ բան է, քան պատերազմական գործողությունն ուր:

Սենատոր ՈՒԽԵԱՍՍ. Ի՞նչ է դա:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես հարցնում եմ, թե արդյոք նույնի կարծում, որ այս գորքը Հայաստան ուղարկելը պատերազմական գործողություն կլինի:

Սենատոր ՈՒԽԵԱՍՍ. Ոչ մի կասկած չկա այդ առումով:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Դուք այդ գորքերը չեք ուղարկում թուրքերի դեմ կովկալու: Դա պատերազմական գործողություն կլինի: Դուք գորքերին այնտեղ եք ուղարկում պաշտպանելու հայերին, ովքեր կովկել են դաշնակիցների կողմից: Աշխարհի ներկայիս պայմաններում օժանդակել հայերի փրկությանը Թուրքիային պատերազմ հայտարարելը չէ:

Սենատոր ՈՒԽԵԱՍՍ. Այս առումով՝ թե արդյո՞ք դա պատերազմական գործողություն է, թե ոչ, քննարկում չկա, դա պատերազմի առիթ է, եթե Թուրքիան որոշի այդպես համարել, բայց նա շատ թույլ է, և շափազանց ծնկի իջած դա անելու համար: Անզիացիները փոքր ջոկատներ են ուղարկել այնտեղ գտնվող փոքր պետություններ, և թուրքերը երբեք չեն փորձել դրանք են ուղարկել:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մեր գորքերի դուրս բերաւմը Ռուսաստանից հզոր արձագանք ստացավ այդ երկրում, որովհետև մենք Ռուսաստանի հետ պատերազմի մեջ չենք: Երբեք էլ չենք ենկել:

Սենատոր ՈՒԽԵԱՍՍ. Մենք հիմա պատերազմի մեջ ենք Ռուսաստանի այժմյան կառավարության հետ: Ամերիկյան գորքերը կովկում են նրանց դեմ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ամեն դեպքում, դա ոչ մի կարևորություն չտնի:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Այլ բան կա՞, որ կարող եմ ասել:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք խոսեցիք հանձնաժողովին մի փաստաթուղթ թողնելու ցանկության մասին:

Դրեն ՄԱԼՔՈՍ. Կցանկանայի ներկայացնել այս համառոտագրությունը, որ պատրաստել եմ ձեր արձանագրության համար:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դա կարող է ներառվել արձանագրության մեջ:

(Թնարկվող հուշագիրն ամբողջությամբ տպագրվել է արձանագրության մեջ հետևյալ տեսքով).

Ամերիկայի Հայ Ազգային Միության Հուշագիր

Ամերիկայի հայկական ազգային միություն
Վաշինգտոն, Կ. Շ., Սեպտեմբերի 27, 1919

Հարգարժան Հենրի Քարոր Լոզ

Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ

Հարգելի պարոն, Ամերիկայի հայկական ազգային միության անունից, որը ներկայացնում է հայերին և Միացյալ Նահանգներում այժմ բնակվող հայկական ծագումով ամերիկյան բաղարացիներին, ներկայացնում եմ հուշագիր ի աջակցություն ձեր հեղինակած՝ Սենատի 38 բանաձեի, և Սենատի 106 միացյալ բանաձեի, որի հեղինակն է Սենատոր Զոն Շարպ Ուիլյամսը:

Արտանց Ձեր

Ս. Վարդան Մալքոս

I

Սենատոր Լոշի՝ Միասնական Հայաստանը որպես անկախ պետություն ճանաչելու բանաձևի օգտին կա հաստատված նախարեայ: Լեհաստանը, Ռուկրախիան, Ֆինլանդիան, Շեխտուղվակիան և Հեջազի թագավորությունը, որոնք պատերազմից առաջ այլ կառավարությունների տիրապետության տակ էին, պաշտոնապես և կիսապաշտոնապես ճանաչվել էին անկախ պետություններ: Ֆինլանդիայի, Լեհաստանի և Ռուկրախիայի դեպքում ոչ մի առարկություն չծագեց այս նոր երկների ձեռվորման առնչությամբ, չնայած նախկինում նրանք Ռուսական կայսրության՝ դաշնակիցներից մեկի մասն էին կազմել: Հեջազի թագավորության օրինակն ավելի տեղին է: Սա տարածք էր, որ պատկանում էր Թուրքիային, որի հետ Միացյալ Նահանգները պատերազմի մեջ չեն, մինչդեռ Միացյալ Նահանգները փաստացի ճանաչել է արարական այս թագավորության անկախությունը՝ բոլով տալով նրա ներկայացուցիչներին խաղաղության պայմանագիր ստորագրել Գերմանիայի հետ՝ Միացյալ Նահանգների և այլ դաշնակից ու միացյալ ազգերի հետ հավասար հիմունքով:

II

Միասնական Հայաստանի՝ որպես անկախ պետության ճանաչումը Միացյալ Նահանգների կողմից կկանխի Հայաստանի բաժանումը Եվրոպական տերությունների միջև: Ակնհայտ է, որ 1916 թ. զայտենի համաձայնագրով, որի կողմերում էին Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, Հայաստանը պետք է բաժանվեր այս տերությունների միջև, ինարկե առանց հայերի ցանկությունը հաշվի առնելու: Այս համաձայնագրի որույնները խախտում էին նախազահի կողմից հայտարարված և Գերմանիայի հետ համաձայնագրում ներառյած սկզբունքը, այն է՝ «Թուրքական կայսրությանը նախկինում պատկանող որոշ համայնքներ զարգացման այն փուլին են հասել, որտեղ նրանց գոյությունը որպես անկախ ազգություններ, կարող է նախնական ճանաչման առարկա լինել՝ ստանալով մանդատի վարչական խորհուրդն ու աջակցությունը, մինչև այն ժամանակ, եթե նրանք ունակ կլինեն միայնակ գոյատել: Այս համայնքերի ցանկությունները մանդատի ընտրության սկզբունքային հիմնավորումները պետք է լինեն»: Մենատոր

Լոջի որոշումը, հետևաբար, իրականացնում է մեջբերված պարբերության դրույթները և միևնույն ժամանակ աշխարհին տեղնկացնում, որ այս երկիրը լուրջամբ չի ընդունի ավելի փոքր ազգությունների իրավունքների և ազատությունների փոխարինումը և իրուսական տերությունների իմպերիալիստական ցանկությունների բափարամամբ:

III

Միասնական Հայաստանի անկախությունն անհրաժեշտ պատճեց է աշխարհի ապագա խաղաղության համար: Հայերը երբեք բափարաված չեն լինի, մինչև չվերականգնեն իրենց ամբողջական երկրի անկախությունը: Ոչ մի ժողովուրդ չի կարող ապրել երջանիկ և խաղաղությամբ, եթե իր բնակչությունը և երկիրը բաժանված են իրենց կամքին հակառակ: Սա կանխորոշված եղակացություն է, որ Հայաստանի բաժանումը ազգեցության ոլորտների՝ անպայման աղիք կրառնա պատերազմի համար: Ուստի Հայաստանի անկախության և տարածքային սահմանների ճանաչմամբ Միացյալ Նահանգները կօգնի սուեդել միացյալ Հայաստան և նյութապես կաջակցի կանխել ապագա պատերազմները:

Ավելին, Մերձավոր Արևելքի խաղաղությունը պահանջում է պետության ստեղծում, որը կկատարի այն դերը, ինչ այժմ Շվեյցարիան՝ Եվրոպայի սրտում: Հայաստանը կարգի և հավասարակշռության տարր կինք աշխարհի այդ հատվածում: Հայերը կիսեն պան-թուրանիզմի տարածումը Կոստանդնուպոլիսից մինչև Հնդկաստան և կկասեցնեն բոլշևիզմի տարածումը Ռուսաստանից դեպի Միջազգետը: Նրանք կծառայեն բաղարակքության և խաղաղության ու առաջնորդացի բարձրագույն շահերին Մերձավոր Արևելքում: Ամերիկան, հետևաբար, պաշտպանելով Հայ դատը, հարատև խաղաղության հիմք կդնի ամրող աշխարհում:

IV

Հայերի ավանդը ներկայիս պատերազմում նրանց անկախության իրավունք է տալիս: Պատերազմի սկզբից այս մարդիկ մերժեցին թշնամու առաջարկները և իրենց ընտրությունն ուղղեցին

դաշնակիցների կողմը: Նրանցից ավելի քան 150 000-ը ծառայում էր արեւելյան ճակատում՝ Ռուսաստանի հետ: Ռուսաստանի փլուզումից հետո հայերը միայնակ կանգնեցրին թուրք-օւրմանական առաջխաղացումը Կովկասում՝ դեպի Բաքու: Շարունակելով կովել թուրքերի դեմ՝ պահելով վերջիններին կովկասյան տարածաշրջանում, ըստ Լորդ Սեսիլի՝ նրանք օգնեցին բրիտանական միավորումներին հաջողության հասնել Միջազգետում և Միջայում: Ֆրանսիայում, «Օտարերկրյա Լեզիոնին» միացած հայերի միայն մեկ տասներորդը առողջ մնաց: 8000-ից ավելի հայեր, հիմնականում կամավորներ՝ Միացյալ Նահանգներից, կովում էին Պաղեստինում գեներալ Ալեքսի Ենթակայությամբ, ով նրանց մեծարել է խիզախությամբ և փառքով: Եթե Միացյալ Նահանգները ընդգրկվեց պատերազմում, հարյուրավոր հայեր այս երկրում կամավոր ներկայացան և հազարավորներ զորակոչվեցին, և նրանցից շատերը գոհվեցին մարտի դաշտում: «Հետևաբար հայերը եղել են պատերազմող կողմ: Պատերազմի հետևանքով նրանց կորուստները, որը գերազանցում է միլիոնը (զորս և կես միլիոնաց ազգից) համամասնաբար շատ ավելի ծանր է, քան որևէ այլ պատերազմին մասնակից կողմի համար»:

V

Հայերն անհապաղ աշակցության կարիք ունեն, այլապես այն երկու միլիոնից ավելի անձննք, ովքեր կենտրոնացել են Հայաստանի հյուսիսային մի փոքր տարածքում, բնաշնչման վտանգի տակ են: Սենատոր Ռիխամսի որոշումը, որը բույլատրում է Միացյալ Նահանգների ռազմամածովային և ռազմական ուժերին պաշտպանել հայերին, անհապաղ է, և Միացյալ Նահանգները, ինչպես նաև Ֆրանսիան, Անգլիան և Բուլղարիան, պարտավորված են աջակցություն ցուցաբերել: Պատերազմի ավարտված չէ: Համաձայնագրերից ոչ մեկն ամրողությամբ հաստատված չէ, և այս փոքր աջակցությունը պետք է տրվի հայերին, որպես պատերազմական գործի մաս և շարունակություն: Կարիքի ժամերին Հայաստանն արեց իր առավելագույնը դաշնակիցների համար, և Միացյալ Նահանգներն իր դաշնակիցների հետ պարտավորված է նրան օգնություն ուղարկել, մինչև պատերազմի

փաստացի ավարտը, և նրա կարգավիճակի ու իրավունքերի սահմանումը:

VI

Ինչ գորք և ռազմանավեր նախազահը բավարար համարի ուղարկել՝ դա ոչ թե կովելու, այլ միայն կայտնացնող ազդեցության նվաստակով է լինելու: Միացյալ Նահանգները հայերին պաշտպանելու համար կարիք չունի ուղարկել 10 000-ից ավելի զինվորներ՝ աջակցելու Անգլիային և Ֆրանսիային, որոնց գորքներն արդեն տեղում են: Ամերիկացիները չեն գնում այսուել կովելու: Նրանք գնում են միայն տպավորություն բողնելու համար: Անհնար է բառերով նկարազրել Միացյալ Նահանգների ազդեցությունը, որը նա ունի Մերձավոր Արևելքում: Բոլոր ազգությունները՝ թե՛ բուրքերը, թե՛ բրիտանյանները, վերաբերվում են ամերկացիներին որոշակի ակնածալից վախով և հարգանքով, ինչը դժվար է նկարազրել: Վերջին չորս տարիների ընթացքում հարյուրավոր ամերիկացիներ անցել են Հայաստան լայնով և երկայնք՝ օգնելու փախստականներին, և նրանցից ոչ մեկը երբեն ունձգության չի ենթարկվել: Բրիտանական և ֆրանսիական գորքերի փոքր միավորումները (երկուսն էլ Թուրքիայի հետ պատերազմում)⁵⁰ խաղաղաբար գրադեցրել են տարածքներ Թուրքիայում, և ոչ մի փոքր երբեն չի կատարվել նրանց վտարելու: Փաստն այն է, որ թուրքերն իրենք պատերազմի ընթացքում այնափ սարսափելի կորուստներ էին կրել, որ երանք կողջուններին դաշնակիցների կողմից գրավումները: Միացյալ Նահանգներն ընդունվում է որպես բացարձակապես շշահազրոված և ալտրուիստ և նրա ներկայությունն ուղեկցող գործոնը կլինի ազգերի անհանգստությունը մեղմելն ու խաղաղություն պահպանելը: Ավելին՝ դա այս միտքը կծնի, որ Թուրքիայի ռազմական ուժը գործնականում զրո է, չնայած բավականաշափ ուժեղ է վնասելու անպաշտպան հայերին: Կոստանդնուպոլիսը, օսմանյան կառավարության նստավայրը, գրավված է դաշնակիցների կողմից, Զմյուռնիան հույների ձեռքում է, Անգլիան պաշտպանվում է բրիտանական և ֆրանսիական գորքերի կողմից: Հայաստանից հարավ գտնվող բոլոր տարածքները՝ Միջազգետքը,

⁵⁰ Փակագծերը համապատասխանում են բնագրին:

Արաբիան և Պարսկաստանը, բրիտանական հսկողության տակ են: Ուստի ամբողջ Փոքր Ասիան իրականում Միացյալ Նահանգների դաշնակիցների ձեռում է: Սա փաստ է, որն ուժեղագույնս հերում է որևէ կովի կամ կորսոի հնարավորությունն այս շրջանում:

Հարգանքներով՝ Ամերիկայի հայկական ազգային միության կողմից:

Մ. Վարդան Մալքոս

Վաշինգտոն Կ. Շ. Մապուելմեր 27, 1919 թ.

Մենատոր ՀԱՐԴԻԳ. Ամերիկան կոմիտեի այլ ներկայացուցիչներ ունե՞ք, որ ցանկանում են իրենց լսենք:

Պրն ՄԱԼՔՈՍ. Ոչ, սըր:

Դրն ՄՎԱԶԼԻ: Այսուել է Հայկական պատվիրակության հուշագիրը, որը կցանկանայինք կցել և ես ուզում եմ բոլորություն ստանալ կցելու կարծ հուշագիր, որը մենք պատրաստել ենք, բայց իմ սղագրողը որոշակի սղագրական սխալներ է բույլ տվել, և ես դա կներկայացնեմ երկուշաբթի առավոտյան:

Մենատոր ՀԱՐԴԻԳ. Շատ լավ:

Պրն ՄՎԱԶԼԻ. Մի քանի հայերի թվի մասին, որ մեացել են: 3 500 000 են մեացել, որոնցից 2 000 000-ը Կովկասում են, և մոտ 150 000-ը Կոստանդնուպոլսում, և գրեթե 200 000-ը Կիլիկիայում, այնպէս որ երբ միասնական Հայաստանը կազմավորվի, հայերի ներհոսք կլինի այս բացը լրացնելու: Ես սա ասացի, որովհետեւ իմ ընկերը մտածում էր, որ այս տեղեկությունը չէր ներկայացվել: Ես չէի կարծում, որ դա անհրաժեշտ էր, որովհետեւ մտածեցի, թէ դուք պատկերացնում էիք ամբողջ իրավիճակն այնպէս, ինչպէս մենք:

Պրն ԳՈՒԼԵՍՅԱՆ. Ես ուղղակի ցանկանում եմ ասել, որ իրական տեսլականն այն էր, որ երբ պայմանագիրը թուրքիայի հետ կնքվի, հասկանալի է, որ Հայաստանը պետք է անջատվի,

անկախանա: Ուստի ես կարծում եմ, որ ամերկյան գորքերը կրկնունվեն զրկարաց, և այնուեղ ոչ մի առարկություն կամ խնդիր չի լինի:

Պրն ՄՎԱԶԼԻ. Մենատոր Հարովինզը հարցրեց, թէ ինչո՞ւ է Անգլիան դուքս քերում իր գորքերն այնուեղից: Իհարկե մենք ասում ենք մեր կարծիքը: Ես չեմ կիսում կարծիքն այն մասին, թէ ինչո՞ւ է Անգլիան ետ քաշում իր գորքերը: Ես կասկած չունեմ, որ Անգլիան տատանվում է՝ ենելով պրոխալմիզմից: Նրա շահերը Պարսկաստանում, Աֆղանստանում և Հնդկաստանում կայ ունեն դրա հետ: Բայց ես նաև նոր տեղեկություն ունեմ, որ զինվորների մի մասը, որոնք հնդիկներ են, ցանկանում են տուն վերադառնալ: Անգլիան փաստացի հետ է քաշում իր գորքերը: Սա այն պատճառով չէ, որ Անգլիան ցանկանում է ստիպել այս պիտությանը արագացնել և ընդունել մանդատը: Ես չեմ կարծում, որ սա է դրա հետևում: Իհարկե սա միայն անձնական կարծիք է:

Պրն ՄԱԼՔՈՍ. Միացյալ Նահանգների կառավարությունը որոշ ժամանակ առաջ գորամասեր է տեղակայել Զմուռնիայում: Դա պատերազմական գործողություն էր, ինձ թվում է:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Ոչ, ես ցանկանում եմ զգուշ լինել, որպեսզի սա չներկայացվի այն հոդի վրա, որը ճիշտ չէ: Մենք տեղակայեցինք այս գորամասերը նավահանգստում, որ պաշտպանենք ամերիկյան շահերը: Դա միանգամայն տարբեր նախապայման է:

Պրն ՄԱԼՔՈՍ. Այո՛, ես ևս այդպես եմ կարծում:

Պրն ՄՎԱԶԼԻ. Կապիտան Թուլինը մեզ ասաց, որ մի փոքր գորամավը բավարար կլինի: Նա իցել է այնուեղ երկու մարդկանցով և ընդդիմության է հանդիպել վրացիների կողմից ու ասել է. «Այս երկու մարդիկ եկել են այսուղ Ամերիկայի կառավարության անունից», և դա զապող ազդեցություն է ունեցել, և դրանից հետո օգնության աշխատանքներն իրականացվել են

հաջողությամբ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Իհարկե, ձեր վկայությունը մեջբերվում է լուրերի իհման վրա, և ես կարծում եմ, ավելի լավ կինի պարզաբանենք այդ հարցը:

Պրն ՍՎԱԶԼԻ. Եթե հանձնաժողովը կարծում է, որ ես պետք է կապիտան Թուլինին և կապիտան Շայդին խնդրեմ ներկայանալ կոմիտեի առաջ՝ նրանք երկուսն էլ եղել են այստեղ և հենց նոր են եկել այստեղից —

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Որտե՞ղ են նրանք:

Պրն ՍՎԱԶԼԻ. Նրանք Նյու Յորքում են:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Եթե նրանք կարող են այստեղ հասնել նախքան մենք կավարտենք ցուցմունքները, ես կարծում եմ, որ մենք կցանկանայինք լսել նրանց:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք պատրաստվում ենք հարցի առնչությամբ լսել պրն Ֆիլիպսին՝ պետական դեպարտամենտից և կտեղեկացնենք ձեզ, եթե լսումներին ես մեկ առավոտ հատկացնենք:

Պրն ՍՎԱԶԼԻ. Ես կապահովեմ նրանց այստեղ լինելը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք կարող եք տեղեկացվել Վաշինգտոնի ձեր գրասենյակում:

Պրն ՍՎԱԶԼԻ. Այո՛:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Լավ, կարծում եմ մենք կարող եմ պրն Ֆիլիպսին լսել երեքշաբթի:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Դուք կարող եք վստահ լինել, որ հանձնաժողովի նիստը կկայանա երկուշաբթի և երեքշաբթի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Եթե դուք կարող եք ապահովել նրանց այստեղ լինելը մինչ այդ, եթե կարծում եք, խելամիտ կլինի ձեր կողմից ատանձնել նրանց ներկայության ապահովումը երեքշաբթի, եթե մենք չփոխենք մեր ծրագրերը, մենք կվերսկսենք ենթահանձնաժողովի լսումները երեքշաբթի: Դուք կարող եք

կապվել, պրն Մալրու, իմ գրասենյակի հետ:

Պրն ՍՎԱԶԼՈՒ. Այո, սըր:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Մենք կշարունակենք, ուրեմն, երեքշաբթի 10:30-ին:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այո:

Պրն ՍՎԱԶԼՈՒ. Այո:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես առարկություն չունեմ լսելու այս մարդկանց, եթե կարող են հակիրճ լինել: Մենք պատրաստվում ենք լսել պրն Ֆիլիպսին, պետական դեպարտամենտից, երեքշաբթի:

(Այդ պահից՝ ժամը 12:30-ին, ենթահանձնաժողովի լուսները հետաձգվեցին մինչև երեքշաբթի, սեպտեմբերի 30, 1919 թ., ժամը՝ առավոտյան 10:30):

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՐԵԲԱՆՔԻ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 30, 1919 թ.

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՄԻՆԵՐԻ ՄԵԸԱՅ, ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՀԱՆԱԺՈՂՈՎՐԾ
Վաշինգտոն Կ. Շ.

Ենթահանձնաժողովը՝ համաձայն հետաձգմանը, հավաքվեց 10:30-ին, Կապիտոլիումում՝ Ֆիլիպսիների հարցերով հանձնաժողովի սենյակում, սենատոր Ուորեն Գ. Շարդինգի նույնությամբ:

նախագահությամբ:

Ներկաներ, սենատորներ Հարդինգ, Նյու և Ուիլյամս:

Հայոց ազգային պատվավորություն

ՆԱԽԱԳԱՀ. Դրն Սվազլիին ուղղեցին մի քանի հարց նախորդ օրը, և նա խնդրեց լրացուցիչ գեկուցի արտոնություն, որը նա ներկայացնում է:

ՍԵՆԱՏՈՐ ՈՒԻԼՅԱՄՍ. Ես միջնորդում եմ թույլատրություն շնորհել այն նախագահ:

ՍԵՆԱՏՈՐ ՀԱՐԴԻՆԳ. Առարկություն չկա և գեկուցը կտպվի:

(Քննարկվող գեկուցը տպված է արձանագրությունում՝ հետևյալ կերպ):

ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ

Վաշինգտոն, Կ. Շ. Սեպտեմբեր 29, 1919 թ.

1. Ալեքսանդրետի և Բաթումի միջև տարածությունը շուրջ 500 մղոն է:

2. Մալաթիայի և Բաթումի միջև տարածությունը շուրջ 350 մղոն է:

3. Անդրկովկասում հարձակման ենթարկված և սպանված հայերի թիվը գերազանցում է 10 000-ը: Հայերը հարձակման են ենթարկվել Նախիջևանում և Ղարաբաղում այս տարվա ընթացքում թաթարների կողմից և Բրիտանիայի միջնորդությամբ եր, որ դադարեցվեց կոտորածը Ղարաբաղում:

4. Հարց բարձրացվեց սենատոր Հարդինգի կողմից, թե արդյո՞ք գործերի ուղարկումը Անդրկովկաս կհամարվի պատերազմական գործողություն ընդունել Թուրքիայի: Ես վստահաբար պնդում եմ, որ դա չի համարվի, քանի որ տարածքի այն մասը, որտեղ ամերիկան գորամասերը պետք է գործեն, Թուրքիայի մաս չի կազմում, և

Ուստաստանի մասն է համարվում: Զորամիավորումները, եւտևաբար, կիմեն բարեկամական հողում, որպեսզի պաշտպաննեն բնակչներին, ովքեր վտանգի մեջ են հյուսիսից թաթարների և հարավից թուրքերի կողմից:

Խնդրում եմ հանձնաժողովին ներկա պահին անհապաղորեն անոնեսել այնպիսի հարցեր, ինչպիսին մանդատն է, և Հայաստանի ապագա բաղարական կարգավիճակը, և խորհուրդ տալ, որ այս մեծ Հայրապետությունն օգնող ձեռքը պարզի հայերին նրանց գոյության այս օրինասկան պահին՝ Անդրկովկաս ուղարկելով ամերիկյան գորամասերի մի քանի գումարտակներ՝ պաշտպանելու տեղաբնիկներին, մինչև Հայկական հարցը կկարգավորվի և Հայաստանի անկախությունը կպաշտպանվի:

Միիրան Սվազի

Հայկական ազգային պատվիրակության ներկայացուցիչ

ՍԵՆԱՏՈՐ ՀԱՐԴԻՆԳ. Ուրիշ այլ քան կա՝ իմաս պրն Սվազի:

ԴՐՆ ՍՎԱԶԻ. Ուրիշ ոչինչ բացի նրանից, որ կապիտան թույնը, ում ենտ ես կապվեցի, շկարողացավ զալ այստեղ: Ես երան երկու հաղորդագրություն գրեցի և հրատապ նամակ ուղարկեցի և իմաս հաղորդագրություն եմ ստացել, որ նա չի կարող զալ այսօր:

Մյուս պարոնը, ում նշեցի, կապիտան Հայդը, չի եղել Հայաստանի այն վայրում, որն այժմ քննարկում ենք՝ Անդրկովկասում, բայց եղել է Հայաստանի մյուս մասերում: Նա այստեղ կլինի այսօր առավոտյան: Նա զանգահարեց ինձ, և ես սպասեցի նրան հյուրանոցում որոշ ժամանակ, բայց նա չեկալ: Ես երկուու եմ թողել նրան, որ այստեղ զա և սպասում եմ, որ կզա ամեն բոլե: Նա Կարմիր Խաչի ներկայացուցիչն է:

ՍԵՆԱՏՈՐ ՀԱՐԴԻՆԳ. Շատ լավ, եթե նա զա, կլսենք նրան:

ՍԵՆԱՏՈՐ ՈՒԻԼՅԱՄՍ. Դրն նախագահ, առաջարկում եմ անցնել գործադիր նիստին պրն Ֆիլիպսի հետ: Հնարավոր է լինեն որոշ նյութեր, որ նա կցանկանա ներկայացնել ենթահանձնա-

ժողովին և չի ցանկանա հրապարակային դարձնել:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ոչ մի առարկություն չկա գործադիր նիստին անցնելու:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍ. Ամեն ինչ կարող է արձանագրվել բացառությամբ նրա, ինչը մենք կհամաձայնենք, որ իսկապես պետք չէ արձանագրվի սովորողի կողմից, եթե այդպիսին լինի: Ես առաջարկեցի այն Ֆիլիպսին, որ նա կարող է իր զեկույցը ներկայացնել քաց նիստին այնքան, որքան կցանկանա, և երբ նա հասնի այն կետին, որ չի ցանկանա խոսել հրապարակայնորեն, մենք կանցնենք գործադիր նիստին: Երբ մենք հասնենք այն կետին, որ մենք կամ նա կարծում ենք, որ իսկապես պետք չէ հրապարակել, դա պետք չէ արձանագրել:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դրև Ֆիլիպս, ընդունած եք այդ տարբերակը:

Պրն ՖԻԼԻՊ. Կարծում եմ, դա շատ ընդունելի կլին:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Լավ, ես ևս դրան ոչ մի առարկություն չունեմ:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍ. Ուրեմն, մենք վկայությունը հասանելի կդարձնենք, եթե անցկացնենք գործադիր նիստը:

(Այդ պահին հանրությունը դուրս հանվեց սենյակից, և հանձնաժողովը շարունակեց գործադիր նիստը):

**ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ,
ՀԱՐԳԱՐԺԱՆ ՈՒԽԼՑԱՍ ՖԻԼԻՊՄ⁵¹
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Սենատոր ՈՒԻԼԵՍՍ. Դրև Ֆիլիպս, կցանկանայի, որ զեկույցեիք այս Հայկական հարցի վերաբերյալ պատմեք մեզ, ինչ է տեղի ունեցել, ինչ է սպասվում և մեր կապը դրա հետ, ըստ ձեզ:

Պրն ՖԻԼԻՊ. Դրև նախագահ, ինչպես ես հասկանում եմ, Ռուսահայաստանի հետ կապված երկու հարց կա մեր առջև. 1. ի՞նչ է պետք անել եթե հարկ է արվի, Հայաստանում ջարդերի շարունակությունը կանխելու համար. 2. ի՞նչ կարող է արվել, որ հայրահարվի սովի իրավիճակը: Այս իրավիճակը Հայաստանում գարգացավ բրիտանացիների՝ Անդրկովկասից հետ քաշվելու արդյունքում, ինչը սննդամբերքի փոխադրումը Հայաստանում ներարկեց հարձակումների տարբեր ժողովուրդների կողմից, ութեր թշնամարար են տրամադրված հայերի հանդեպ: Եթե փոխադրման համակարգը հնարավը լինի պաշտպանել այնպես, որ սննդի մատակարարումն անցկացվի, ապա սովորական վտանգը կականորեն կկանխվի, բայց Ռուսահայաստան ներխուժելու և հաջորդական ջարդերի վտանգը մնում է:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դրև Ֆիլիպս, հենց այսաւել քովլ տվեր հարցնել, ի՞նչ կապ ունի սովը ջարդերի հետ:

Պրն ՖԻԼԻՊ. Իհարկե երկու հարց է ներառված, բայց եթե փոխադրման համակարգը վերահսկվի, հայկական զորամիավորումների տեղաշարժերը կցուրացվեն և նաև սննդի մատակարարումը կկայունանա:

Երկրի հետ կապված խնդիրը ներկայում այն է, որ այն

⁵¹ Ուիլյամ Ֆիլիպսի (William Phillips) մասին տե՛ս սույն աշխատության «Սանորագրություններ» բաժնում:

թույլ է, որ սովամահության պայմաններում է, որ հայերն իրենք չեն կարող վերադառնալ իրենց հողերը: Նրանք ամբողջությամբ արգելափակված են: Ոչ մի ձեռներեցություն հնարավոր չէ երկրում: Եթե ամերիկյան սնունդը կարողանար հասնել, եթե ամերիկյան զյուղատնտեսական սարքավորումները, պարագաները կամ գրձիբները հնարավոր լիներ հասցնել՝ օգնելու նրանց վերադառնալ իրենց հողերին, եթե հնարավոր լիներ դրանք մատակարարել, եթե երկարուղիները պաշտպանվեին՝ իհարկե ռազմական տարբերակով, համոզված ենք, որ հայ ժողովուրդը կարող է սկսել ինքն իր մասին հոգալ:

Սենատոր ՌԻՒԹԱՍՍՈՒ. Դրա հետ կապված թույլ տվեր հարցնել, չկա՞ նաև հարց՝ թույլատրելու հայերին, ովքեր Ռուսաստանում են, կամ ովքեր Հայաստանի սահմանից անցել են Ռուսաստան, կամ նրանք, ովքեր վտարվել են դեպի Անատոլիա, ինքնուրույն վերադառնալ իրենց հողերը, ինքնուրույն ետ զալ երկիր:

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Այո, սկզ:

Սենատոր ՆՅՈՒ. Ես պատրաստվում էի հարցնել՝ պետական դեպարտամենտն ունի՞ որեւէ հաշվարկ, թէ ինչ կապահանջվի, որպեսզի ռազմական ուժի միջոցով այս ճանապարհները բաց պահվեն տեղափոխումների համար:

Պրեն ՖԻԼԻՊՈՒ.Գեներալ Հարբորդը⁵² վերջերս Հայաստան է ուղարկել հենց այդ հարցն ուսումնասիրելու համար և մեզ տեղեկացնելու, թէ ռազմական որքան ուժ անհրաժեշտ կլինի խաղաղություն պահպանելու համար: Նրա հետ է գեներալ Մըր Քոյլ, ով զբաղվում է փոխադրման խնդրով: Մենք ոչ մի գեկույց չենք ստացել այդ առաքելությունից, որը հիմա հենց այդ աշխատանքի ընթացքում է: Նրանք ավտոմեքենայով շրջում են

ժողովրիայում, և ըստ երևոյթին կապ չունեն հետապորդագրության հետ, ըստ այդմ ոչ մի լուր չունենք երանցից: Ես հեռազրեցի Կոստանդնուպոլիս երկու կամ երեք օր առաջ այն հույսով, որ նրանք որևէ լուր կունենան գեներալ Հարբորդից, որը ես ձեզ կներկայացնեի այս առավոտ, բայց նա դեռ ոչիչ չի հաղորդել Կոստանդնուպոլիսից:

Սենատոր ՀԱՐՄԻՆՉՈՒ. Կարծում եք, այդ մասին իմանալը մեզ համար կարևո՞ր է մինչ զործելու:

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Դա շատ կարևոր է:

Սենատոր ՀԱՐՄԻՆՉՈՒ. Դա միանգամայն էակա՞ն է, որս ես մեզ համար անհրաժեշտ լինի այդ մասին իմանալ:

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Այո, միանգամայն: Հաշվարկները յափազանց տարբեր են, երկու կամ երեք հազար մարդուց մինչև 50 000 կամ 60 000 տղամարդ: Այսպէս. 1915 թվականին՝ թուրքերի կողմից հայերի վտարումների և կոտորածների ընթացքում, ժողովրիայում բնակվող շուրջ 350 000 հայեր տեղաշարժվեցին դեպի Անդրկովկաս՝ թողնելով այստեղ իրենց ամբողջ ունեցվածքը: Այդ ժամանակ այստեղ կար մոտ 160 000 հայ, ովքեր կոլում էին ուսուների հետ միասին, այլ կերպ ասած, այս 160 000-ը մասնակցում էին պատերազմին Անտանտի դաշնակիցների հետ ընդդեմ Գերմանիայի և Ավստրիայի:

Սենատոր ՌԻՒԹԱՍՍՈՒ. Ռուսահայերին նկատի ունեք:

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Ռուսահայերին: Բայց երկիրը չափազանց գերբանակեցվել էր, փախստականները չեն կարողանում որեւէ աշխատանք գտնել, և հենց այստեղ էր, որ սովոր պայմաններն առաջինը տեղ գտան, որովհետև մեծ թվով կարողունակ ուսուահայ տղամարդիկ բանակում էին, մինչդեռ 350 000 փախստականներ հայերի էին տեղական բնակչության քանակը, արդյունքում ունենալով պակաս արտադրանք և ավելի սպառողներ, քան սովորական ժամանակ: Ավելի ուշ՝ ուսուաստանյան

⁵² Գեներալ Հարբորդ (Gen. Harbord) մասին տե՛ս աշխատության «Ծանոթագրություններ» բաժնում:

հեղափոխությունից և ռուսական բանակի տարալուծումից հետո երր 1918 թ. բուրքերը զավթեցին Շուսահայաստանի մասը, նրանց ոչնչացրին ձեռքերն ընկած հնարավոր ամեն ինչ՝ ամրոց զուղատնտեսական գործիքներն ու ամրող տնտեսի կենդանիներին և արդյունքը եղավ ահասարսութ մահածացություն:

Հետո եկավ Ամերիկյան պարենի վարչությունը⁵³, և համագործակցելով հայերի և սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեի⁵⁴ հետ, նրանք շատ արդյունավետ աշխատանք կատարեցին և կարողացան մեծ քանակությամբ միջոցներ բաշխել, որոնք փրկեցին հազարավոր կյանքեր....

Բայց խնդիրն այն է, որ այս փրկված մարդիկ չեն կարող վերադառնալ Թուրքահայաստան: Նրանք դեռևս ապրում են Անդրկովկասում և այստեղ պայմաններն այնպիսին են, որ նրանք չեն կարող վերադառնալ իրենց նախկին տները:

Նախ հանձն առնելով սննդի հարցը, միակ ճանապարհը, որ նրանք կարող են տեղափոխվել —

Մենասոք ՈՒԽԱՑԱՍՍ. Թույլ կտա՞ք հարցնել: Այստեղ երկու համանման հարց կա, հայ ազգի կործանումը եղել է սովո՞ և հայերի ոչնչացումը եղել է կոտորածների՝ միջոցով:

Պրե ՖԻԼԻՊՈՒ. Այո:

Մենասոք ՈՒԽԱՑԱՍՍ. Քրդական և վրացական հարձակումներով:

Պրե ՖԻԼԻՊՈՒ. Այո, քրդական, թուրքական, թաթարական, ինչպես նաև վրացական: Աննդի վիճակի կարգավորման միակ ուղին մնում է երկարութայինը, որը նախանզատային կայան

⁵³ Ամերիկյան պարենի վարչության (The U.S. Food Administration) մասին՝ տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

⁵⁴ Հայ-սիրիական ամերիկյան նպատամատույց հանձնախմբի (The American Committee for Armenian and Syrian Relief) մասին՝ տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

ունի Բարումում, ապա Բարումից Էրիվան: Դա միակ երկարություն է Շուսահայաստանում: Դա Բարումից Էրիվան⁵⁵ ուղիղ գիծ չէ: Այն բարձրաւում է մինչև Թիֆլիս և ապա իջնում Էրիվան, այնպես որ յայուծ այս քաղաքների միջև հեռավորությունն ընդամենը 200 մետր է. Երկարությին անցնում է հսկայական տարածք, այն պատճառով, որ գնում է Թիֆլիս, ապա վերադառնում Էրիվան:

Բրիտանացիները հսկում են ճանապարհի մի մասը, բայց նրանք հեռանում են, իսկ դա նշանակում է, որ այդ ամբողջ երկարության համակարգը կրաւուի:

Սննդի պայմաններից զատ, այն, ինչից մենք վախենում ենք բրիտանացիների հեռանալուց հետո, մուտքմանների ներխուժումն էր Հայաստան: Մեզ փոխանցվել էր, որ Թուրքական ազգային կուսակցության, Աղրբեջանի թաթարական կառավարության և որոշ քրդերի միջև կան համաձայնեցված գործողություններ, որ այդ շրջաններում կան մուտքմանական ուժերը կազմակերպող մեծ թվով թուրք պաշտոնյաներ, և որ Աղրբեջանի թաթարական կառավարությունը ֆինանսվորում և օժանդակում է այդ շարժմանը: Նրանք ցանկանում են հեռավորության դեպքում ձերբագատվել բոլոր այս քրիստոնյացներից, և կարծում են, որ դա անելու համար շատ լավ պահ էր:

Մենասոք ՀԱՐՄԻՆՉ. Դա ձեր պատկերացմանը է, որ հայերի նկատմամբ այդ ամբողջ հակակրանքը կրոնական է:

Պրե ՖԻԼԻՊՈՒ. Այստեղ քաղաքական և կրոնական հակարանքի համադրություն է: Թուրքերի մի մասը ցանկություն ունի քաղաքականապես վերահսկել Թուրքիայի ասիմանակից շրջանները, այդ թվում Պարսկաստանը և Հնդկաստանի հարավից երկրները: Նրանք հոյս ունեն այսպիսով իրականացնել պանթուրիզմը, որի նպատակն է իրենց իշխանության և դեկավարության ներքո համախմբել թուրքական ծագմամբ բոլոր

⁵⁵ Բնագրում՝ Erivan:

ժողովուրդներին Եվրոպայում, և հատկապես Ասիայում: Դրա զուգահեռ պանխալամիստական շարժումն է, որին նրանք տպայի էին կրոնական ասպեկտ՝ մուսուլմաններին հակադրելով քրիստոնյաններին: Թուրքերը հույս ունեին պանխալամիզիով միջոցով իրենց կրոնական և քաղաքական դեկավարության տակ համախմբել ամբողջ աշխարհի մուսուլմաններին: Պատերազմի սկզբում այս երկու շարժումները գործում էին խառագրային միասին, և գերմանացիները ջանաբար փորձեցին օգտագործել այս երկու շարժումներն Անտանտի դաշինքի դեմ իրենց հետազո ծրագրերի համար: Հեջազի քաղաքուրության ձևավորմամբ պանխալամիստական շարժումը կարող է համարվել ձախողված Բայց ես հավատում եմ, որ պանթուրքիզմը, որը թուրքերի ուսասական քաղաքական նկրտումն է, դեռևս նրանց մտքին է: Այլ կերպ ասած՝ կա կրոնական շարժմանը երկրորդող քաղաքական ծրագիր, և բարդ է այս երկուսն առանձնացնել:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Քաղաքական ծրագիրը ներառ ու չարդերը:

Դրեն ՖԻԼԻՊՈՍ. Վախենամ՝ այո՛, և պատմությունը դա ցույց տվեց, որովհետև քրիստոնյաները խոչընդոտում էին նրանց ծրագրերին, և դա այն մերոդն էր, որով նրանք ազատվում էին ամեն ինչից, ինչը խոչընդոտում էր նրանց ծրագրերին:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Դրն Ֆիլիպս, հատկապես ի՞նչ նկատի ունեք ասելով «խոչընդոտում էր – թե էին – նրանց ծրագրերին»: Ինչո՞ւ են քրիստոնյաները խոչընդոտում:

Դրեն ՖԻԼԻՊՈՍ. Սուսուլմանների՞ն:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Ոչ մուսուլմաններին, այլ, ինչպէ՞ս ես դա կոչեմ, ի՞նչ եզրույթ դուք օգտագործեցիք, պանթուրքի՞ցմ:

Դրեն ՖԻԼԻՊՈՍ. Այո, այս պանթուրքիստական շարժման կենտրոնում գտնվում են հայերը, ովքեր քրիստոնյա են և թուրքեր չեն, և որոնց աշխարհագրական դիրքը, ի լրումն իրենց կրոնի,

նորման և քաղաքակրթության, խոչընդոտում է թուրքերի պատրիարքական նկրտումները, քանի որ Արևմտյան թուրքիայի թուրքերի և Կովկասի ու Կենտրոնական Ասիայի թուրքերի միջև գտնվում են հայերը, ովքեր չերքեզական ծագումով բրիտանիաներ են⁵⁶:

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Ովքեր ազգությամբ թուրք չե՞ն:

Դրեն ՖԻԼԻՊՈՍ. Այո՛, ազգությամբ թուրք չեն, այն է՝ բրիտանում չեն: Թուրքերը ջանում են լուծել իրենց խնդիրը, և նրանք հայության հասան շատ լավ: Նրանք անշափ թուլացրին հայ ժողովրդին, իհարկե թե՝ սովի և թե՝ շարդերի միջոցով:

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Ուրեմն, երբ ես ներկայացնում էի հայինական բանաձր, որն ուղղվել է այս հանձնաժողովին, ես կասկածում էի, որ ճնշող, զանգվածային կոտորածներ կարող էին տեղի ունենալ զրեթե ամեն պահի, երեւ բրիտանացիները դուրս գան, և ինչից ես վախենում էի, այն էր, որ դա կարող էր ազդեցություն ունենալ ոչ միայն հայերի, այլև այդ երկրի բրիտանացիների և ամերիկացիների վրա: Կցանկանայի, որ դրա համեմատողովին հայտներ այնպիսի տեղեկություն, ինչպիսին սուսում է պետական դեպարտամենտն այն ժամանակից, երբ այդ ամենն իրականում կատարվել էր:

Դրեն ՖԻԼԻՊՈՍ. Ես կարող եմ տալ այս հեռագերը:

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Շատ լավ:

Դրեն ՖԻԼԻՊՈՍ. Սա սեպտեմբերի 25-ի՝ Փարիզի Ամերիկյան առարկելությունից ստացված հեռագիրն է, որտեղ մեջբերվում է ամերիկացի սպա, զնդապետ Հասկելից⁵⁷ ստացված հեռագիրը: Գնդապետ Հասկելը, ներկայացնելով ամբողջ Գերազուն խորհուրդը, զբեթե երկու ամիս առաջ ուղարկվել է այնտեղ՝

⁵⁶ Բնագրում՝ the Armenians who are Christians of the Circassian race:

⁵⁷ Ընդապետ Ռ. Ն. Հասկելի (Col. W.N. Haskell) մասին տե՛ս « Սանոքագրություններ» բաժնում:

դաշնակից և համագործակցող երկրների կառավարությունները անունից ստանձնելու Հայաստանի համար նախատեսվու օգնության իրականացումը: [Կարդում է:]

[Վերաշարադրանք]

Փարիզում Ամերիկյան առաքելությունը՝ Կովկասում ներկա իրավիճակի ռազմական պահանջների հետ կապված, ստացել է հետևյալ հեռագրային տեղեկատվությունը գնդապետ Հասկելից, ով անձամբ է հետազոտում իրավիճակը Հայաստանում և հաստատում է, որ իրավիճակը սարսափելի է և վեր է նկարագրությունից: Գնդապետ Հասկելը պնդում է, որ օգնությունը կարող է և պես է հասնի ժամանակին՝ կանխելու հարձակումները և, եթե իրեն՝ գնդապետ Հասկելին տրամադրեն գորքեր, իրավիճակը Ռուսահայաստանում կփրկվի մեկ ամերիկյան ուժեղացված հետևակային բրիգադի միջոցով:

Գնդապետ Հասկելը պնդում է, որ բարանները գրոհում են հյուսիսը և արևելքը՝ ներքին բոլոր շրջաններում աճող բարանների ապստամբությունների հետ միաժամանակ: Նրա կարծիքով մեր հայ դաշնակիցների ճակատագիրը կորոշվի անգամ մեկ գնդի ժամանումից Եթե գորքերը չշտապեցվեն, հայերը կարող են ցանկացած պատի բնաջնջվել:

Գնդապետ Հասկելն այս պահին հենց այնտեղ է:

Սիա նաև մեկ այլ հեռագիր, որը Կոստանդնուպոլսից է: Սա Ամերիկյան պարսկական նպաստամատույց հանձնաժողովից պար Ֆ. Թրեդվել Սմիթի հաշվետվությունն է: Ես սա ես կրներցեմ: Նա Կոստանդնուպոլսում էր այս ամսվա 19-ին՝ Երիվան, Ուրմա, Նախիջևան և Թավրիզ այցելելուց հետո: [Կարդում է:]

[Վերաշարադրանք]

Կոստանդնուպոլսում ամերիկյան հանձնակատարի՝ սեպտեմբերի 20-ի հեռագիրը դեպարտամենտին հայտնում է, որ պար Ֆ. Թրեդվել Սմիթը Ամերիկյան պարսկական նպաստամատույց հանձնաժողովի հետ

անդինով Երիվանը, Ուրման, Նախիջևանը և Թավրիզը, ամսի 19-ին նույն է Կոստանդնուպոլսում: Օգոստոսի վերջերին Երկրորդ անգամ անցնելով Նախիջևանից Թավրիզ՝ հատկով թաքարական սահմանները, նու նկատեց, որ մինչորդուն ամրողությամբ փոխվել են: Նա տեսավ, որ բրիուսացիների կյանքերն այլև պաշտպանված չեն, քանի որ չկային բրիուսական գորքեր: Նա նկատեց նաև, որ ամերիկացիները ևս գոտեցի մեջ էին: Հուլիսի 20-ին բարանները Նախիջևանում ժակատամարտ էին սկսել հայերի դեմ, և եռօրյա ճակատամարտի վերջում երանը դուրս էին քշել բրիուսացիներին Ամերիկյան օգնության աշխատավորների հետ միասին և սկսել էին հայ կանանց, երեխաների և առամարդկանց ջարդը Նախիջևանում: Զոհերի թիվը գնահատվում է 6000-ից մինչև 12 000: Ամերիկացիները վկայել են պար Սմիթին, որ երբ կոստը անցնելիս են եղել Պարսկաստան Զուլֆայի կամրջով, գետը լին է եղել զիստված, այլանդակված մարմիններով: Եթե պար Սմիթը այս զիստի երկայնքով վերադարձել է Ռուսաստան, մարդկային մարմինները գտնու տևանելի են եղել զետափերին:

Նախկինում արեւելյան ճակատի թուրքական գորքերի երանակատար Հայի թեյն այժմ թաթարների հրամանատարն է, նեղույի երկարուղով Բայազետից Մակույով թերում է օսմանյան թուրքերին հարձակվելու Երիվանի վրա: Ակնհայտ է, որ ոչինչ, բացի դաշնակիցների լորքերից չի կարող կանգնեցնել այս բաղարի անկումը: Այս, ինչ կատարվում է Կովկասում, անմիջապես ազդում է Թավրիզի և կյուսիարևմտյան Պարսկաստանի վրա: Ոչ մի ամերիկացի ապահով չէ Ռումիայում, քանի դեռ մայիսին և հունիսին սկսած ողբերգական իրադարձությունները շարունակվում են և Թավրիզի 5000 ասորի գուխտականները, ովքեր գոյատեսում են Ամերիկյան նպաստամատույց կոմիտեից ստացված օգնության հաշվին, գտնվում են կյանքի համար շատ վտանգավոր պայմաններում: Եթե Երիվանը գրավվի թաթարների կողմից, հասրավոր է, որ հակարիսառնեական և օտարաշուց բարողությունը կնորացվի և թե՛ Արևելքի բրիուսակաների, թե՛ բարողությունը կյանքվի և թե՛ Արևելքի բրիուսակաների կյանքը Թավրիզում կլինի վտանգի մեջ: Նախիջևանի ամերիկացիների կյանքը Թավրիզում կլինի վտանգի մեջ: Նախիջևանի տարածքում բրիուսացիների կյանքերն ամրողությամբ փուանգված են և Թավրիզում Բրիուսականի հյուպատոսը քոյլ չի տա որևէ բրիուսացու մոտ գործել այդ երկիր: Եթե ամերիկացիները, փորձելով հաստատել

խաղաղություն առանց ուսկմական աջակցության, զայրային քարարներին, ապա կհայտնվեն նույն վիճակում, ինչ բրիտանացիները Թաթարները պետք է հարգեն դաշնակից ուժերին: Կոստանդնուպոլսի կորսարն ամփոփում է պըն Սմիթի եզրակացությունները հետևյալ կերպ:

Առաջին. Թաթարների առաջիսաղացման պայմաններում՝ Հարավային Կովկասը պաշտպանելու և քաղաքացիական հայերի անխուսափելի կոտորածները կանխելու համար, այս երկում դաշնակիցների գորքերի խիստ կարիք կա:

Երկրորդ. Շատ լուրջ վտանգ կա Էրիվանի համար:

Երրորդ. Օսմանյան բուրքերի գորքերն անընդմեջ ժամանում են ուժեղացնելու թաթարներին:

Չորրորդ. Թաթարների ցանկացած հաջողություն Հարավային Կովկասում անապահով կրաքանի Հյուսիսարևմտյան Պարսկաստանն արևմուտքիների համար:

Հինգերորդ. Մայիս, հունիս և հուլիս ամիսների ընթացքում, այլ կերպ ասած՝ զինադադարի կնքումից երկար ժամանակ անց, տեղի բնակչության և դաշնակից երկրների ներկայացուցիչների հանդեպ իրականացվող այս վայրագություններն անհապաղ ուշադրություն են պահանջում:

Հնարավո՞ր է, որ դուք հեռագիր ունեք պըն Զեյմս Ու. Զերարդից⁵⁸:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես տեղյակ չեմ, եթե դա դրվել է արձանագրության մեջ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Կարդացեք դա, համենայն դեպ:

Սենատոր ՆՅՈՒ. Դա պըն Զեյմս Ու. Զերարդից է:

Պրն ՖԻԼԻՊՈՒ. Այս, պըն Զեյմս Ու. Զերարդից:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Ո՞ւմ է ուղղված այդ հեռագիրը:

Պրն ՖԻԼԻՊՈՒ. Սա Նյու Յորքից պըն Զերարդի հեռագիրն է:

ուղղված պէտքարտուղարին:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Մենք չենք ստացել դա: Մենք պատեղ ոչինչ չունենք, բացի այս հեռագրից:

Պրն ՖԻԼԻՊՈՒ. Սույն հեռագիրը հետևյալն է [կարդում է.]:

Նյու Յորք, սեպտեմբերի 19, 1919 թ.

Պետքարտուղար

Վաշինգտոն, Կ. Շ.

Այսօր, Փարիզում Հայաստանի Հանրապետության ներկայությացից ստացվել է զադանի հեռագիր, որի մաս են կազմում ստորև նշվածները և խնդրում ենք ձեզ հեռագիրը ներկայացնել նախազահին. Այսուհետեւ, թուրքական սպաների ուղղորդմամբ, Հայաստանի դեմ պատուեազմի պատրաստություններ է տեսնում: Վրաստանն ու Անդրքանը բացահայտ դաշինքի մեջ են մտել հարձակվելու Դենիկինի վրա, բայց վաստացի գրոհելու Հայաստանը: Բրիտանացիներն արդին յրել են Հայաստանը, իսկ Հասկելը ժամանել է առանց զինվորների: Մինամթերքի բացարձակ սակավություն: Վրացիներն արգելել են այսուից բացի որևէ մթերքի փոխադրումը Վրաստանի տարածքով: Բացարձակապես փող չունենալով՝ բնակչությունն ուժասպառ է, մարդիկ անփառ են ամենուր, Էրիվանի փողոցներում օրական հայտնաբերվում են 30-50 մահացած մարդիկ: Բնակչությունը հազուստ չունի, չկան զեղութքոցներ, այս են հնարավոր չեղմադրել. շուտով ամբողջությամբ լրացնեցվել: Վահենամ՝ այս բացարձակ ոչնչացումով մեկ ամսվա ընթացքում լուծվի Հայկական հարցը: Թուրքերը մեզ են համարում պատասխանատու իրենց կայսրության տապալման համար: Բառերը բայխար չեն նկարագրելու սարսափելի իրավիճակը: Դուք կարող եք յափազանց ուշանալ մեզ փրկելու համար:

ԶԵՅՄՍ ՈՒ. ԶԵՐԱՐԴ

⁵⁸ Զեյմս Ու. Զերարդի (James W. Gerard) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ե՞րբ է դա գրվել:

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Այս հեռազիքը՝ ուղղված պետությունարտուղարին, գրվել է պրն Զերարդի կողմից սեպտեմբերի 19-ին։ Մեջքերված հեռազիքը, ինչպես պրն Զերարդն է ասում, հենց նոր է ստացվել Փարիզից։ Նա չի նշում դրա ամսաթիվը։

Ահա ևս մեկ հեռազիք Փարիզում Ամերիկյան առաքելությունից։ [Կարդում է։]

[Վերաշարադրանք]

Փարիզում Ամերիկյան առաքելությունից ստացված հեռազիքը՝ թվագրված սեպտեմբերի 26-րդ, հաղորդում է, որ հայկական ուժերը հիմս կազմված են վատ հանդերձավորված ու զինված մարդկանեցց, որոնց թիվը մոտավորապես 10 000 էր։ Նրանց դեմ կանգնած է Ալեսսիոյի⁵⁹ վրա հարձակված 40 000-անոց թուրքական զորքը և երիվանի վրա շարժվող թաթարական զզալի ուժը։ Այս թաթարներին առաջնորդում են թուրք սպաներ։ Առաքելության ստացած բոլոր զեկույցները՝ դրկտոր Բարբոնից, պրն Սուրից, ծովակալ Բրիսթոլից⁶⁰ և զնդապետ Հասկելից, ինչպես նաև հայերից ու բրիտանացիներից հավատում են, որ հայկական զորքը զզալիորեն փորբարիվ է, և հաստատապես, եթե մոտ ապագայում համարում և զինամթերք չտանա՝ կշախօսալի։ Ենելով այն հանգամանքից, որ Թուրքահայաստանի հայ բնակիչներն ապաստան են գտել և այժմ կենտրոնացած են Ռուսահայաստանում, վերջինիս զրավումը թուրքերի և թաթարների կողմից, ամենայն հավասարականությամբ, կհանգեցնի հայ ազգի գործնական ոչնչացմանը։

Հիմա մենք գործ ունենք Ռուսահայաստանի, այլ ոչ թե Թուրքահայաստանի հետ, որովհետև սահմանամերձ զավառներում մնացած թուրքահայերը փաստացի Ռուսահայաստանում են։

⁵⁹ Ալեսսիո (բնագրում՝ Allessio)՝ կոմունա Սիցիլիայում (Բուալիա)։

⁶⁰ Դոկտոր Բարբոնի (Dr. Barton), պրն Մոոր (Mr. Moore), ծովակալ Բրիսթոլի (Admiral Bristol) մասին տես «Ծանոթագրություններ» բաժնում։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ինչո՞ւ զինադադարի ստորագրումը յանդարձեց շարդերը։

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Այսի՞նքն։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ինչու զինադադարի պայմանագիրը յանդարձերէ՞ց թուրքական այս շարդերը։

Սենատոր ՈՒՒԼՅԱՍՏՈՒ. Սկզբունքորեն այն պատճառով, որ Ռուսաստանը դա երբեք չի ճանաչել։

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Ես փորձեցի նկարագրել Ռուսահայաստանի անկայուն և ճշնաժամային վիճակը՝ պայմանագրամաս տիրող սովոր, որն ավելի է սաստկանալու, քանի դեռ ամրող երկարգիծը չի վերահսկվում, և երկիր ներխուժման վասնեցով, որը սովորաբար զուգորդվում է շարդերով ու կողոպուտներով՝ ինչն արդեն տեղի է ունեցել որոշ վայրերում։

Պետական դեպարտամենտը համարում է սա զուտ մարդասիրական հարց։ Դրա հիման վրա նա վճռական հայտարարություններ է արել բրիտանացիներին և ֆրանսիացիներին, զգուշացում է կայացրել թուրքական իշխանություններին, որպեսզի պարտադրի նրանց զսպել սեփական ժողովրդի՝ Ռուսահայաստան ներխուժելու նախաձեռնումն այլ մուտքմանների հետ։

Ես կարծում եմ՝ մի քանի օրվա ընթացքում մենք պետք է գիտերալ Հարբորդից տեղեկանանք ռազմական իրավիճակի մասին պահանջվող տեսակետին, և ես կարծում եմ, որ նա ի վիճակի կլինի լիարժեք տեղեկություն ներկայացնել։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Քանի՝ ամերիկացի կայախառնում։

Պրեն ՖԻԼԻՊՈՒ. Նրանց մեծ մասը նպաստամատույց աշխատանքներ է կատարում, հավանաբար 70-ի սահմանում, բայց ես կարծում եմ մեծ մասը զնացել է վերջին շրջանում։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Նրանք բոլորն ամերիկացինեն։

Մենատոր ՆՅՈՒ. Կա՞ն քաղաքացիություն ունեցող անձինք:

Դրն ՖԻԼԻՊԱ. Ենթադրում եմ, մի քանիսը քայլա քացիություն ունեն, այս:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Քանի՞ բրիտանացի կա այնտեղ:

Դրն ՖԻԼԻՊԱ. Ես ընդհանրապես չեմ կարող ասել: Ես կարծում եմ՝ խսկապես սա այն ամենն է, ինչ ես ունեմ: Մեծարա նակարագրություն կա, բայց ես անդրադարձել եմ միայն սկզբունքային կետերին:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Եթե դուք վերադառնաք ձեր գրասենյակ և պարզեք, որ կա այնպիսի մի բան, որը կպարա բաներ այս հարցը, դուք կուտարկե՞ք այն սղագրողին, որպեսզի այն դրվի արձանագրության մեջ:

Դրն ՖԻԼԻՊԱ. Այո, սըր:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Հենց որ ակնարկ ստանաք, թե ձեր հետազոտողներն ինչ են մտածում ուսումնական ուժի անհրաժեշտության վերաբերյալ, դուք մեզ կտեղեկացնե՞ք դրա մասին:

Դրն ՖԻԼԻՊԱ. Այո, անշուշտ:

Մենատոր ՆՅՈՒ. Հենց որ լուր ունենաք գեներալ Հարբորդից, մեզ տեղեկացրեք: Դա շափականց կարևոր է:

Դրն ՖԻԼԻՊԱ. Այո:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Եթե սա ամբողջն է պրն Ֆիլիպսի հետ, պրն Սվազի, դուք գրուցե՞լ եք այն մարդու հետ, ում մասին դուք խոսում էինք:

Պրն ՍԵՎԱՍԱԼԻ. Այո, սըր: Դա կապիտան Հայդն է, Կարմիր Խաչից:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք կլսենք, թե նա ինչ ունի ասելու:

ՊՐՆ ԶՈՐՉ Բ. ՀԱՅԴՆԻ ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Ձեր մասնագիտությո՞նը:

Դրն ՀԱՅԴՆ. Մասնագիտությամբ ես բժիշկ եմ: Ես ապրու ի՛ կու շեմփշիրի ազարակներից մէկում:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Որտե՞՞ եք եղել վերջերս:

Դրն ՀԱՅԴՆ. Ես նոր եմ վերադարձել Թուրքիայից: Մասնակի մեծ մասը ես կանգ եմ առել Այնթապում, որը գտնվու է Միլիկիայի հարավային հատվածում:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Ի՞նչ գործով էիք կայանել այնտեղ:

Դրն ՀԱՅԴՆ. Ես նպաստամատույցի գործով էի այնտեղ՝ Ալիբայի շրջանում, դեպի Միջազգետքն ընկած տարածում: Ես նորմիր Խաչի ծառայության կապիտան եի:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Առացեք մեզ, ի՞նչ գիտեք այս գործի մասին:

Դրն ՀԱՅԴՆ. Կարո՞՞ եք ինձ պարզապես որոշ ուղղություն ունել, թե հատկապես ինչ տեղեկություններ եք դուք ցանկանու ուստանալ:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Մենք ցանկանում ենք պատկերացնել իրավիճակը Հայստանում այնքան, որքան կարող ենք. մարդկանց վիճակը, և թե ի՞նչ զինված ուժեր ունեն երանք, եթե այդպիսիք կան, ի՞նչ զինված ուժեր կան նրանց դեմ, ի՞նչ պաշտպանություն ունեն նրանք, եթե ունեն՝ իրենց սեփական կառ դրսից, ուղղակի իրավիճակը:

Դրն ՀԱՅԴՆ. Եմ առաջին շփումը հայստանյան իրավիճակին եղել է Կանտարայում:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Քարտեզի վրա ձեր մատը դրեք, որտեղ է այն գտնվում:

†) Թագորում George B. Hyde:

Պրե ՀԱՅԹ. Դա Սուեզի ջրանցքից ներքև է [ցոյց է տալիս քարտեզի վրա]: Ես հանձնարարական ունեի Քիլիսից մինչև Մարաշ և ընդուու Միջազգետքից դեպի արևելք [ցոյց է տալիս քարտեզի վրա], որտեղ ես գտա շուրջ 7000 հայ գաղթական հավաքված բրիտանացիների համակենտրոնացման ճամբարում: Նրանցից շատերը ցած էին իջել արաքների օգնությամբ և Հարավային Միջազգետքում էին: Նրանց հավաքել էին այսուղև և խնամում էին:

Ես ժամանեցի Հալեպ, որը 60 մղոն է հեռու Այնթապից, կոտորածների հաջորդ գիշեր: Սա առաջին շաբաթն էր Մարաշում:

Սենտոնը ՀԱՐՄԻՆԳ. Անցյա՞ն թե այս տարի:

Պրե ՀԱՅԹ. Այս տարի՝ 1919 թվականին: Այդ ժամանակ մոտավորապես 500 հայ է կոտորվել Հալեպում: Այնթապն այն դարպաններից մեկն էր, որտեղ տեղի էր ունենում տեղահանությունը: Տավրոսի լեռներից իջնելով՝ նրանք անցնում էին Այնթապի և Մարաշի ճանապարհով, Աֆրիտիսի⁶² ճանապարհով, Բիրեջիկի ճանապարհով և Ուրֆայի ճանապարհով, որի ընկած է 150 մղոն դեպի արևելք:

Այնթապն ունեցել է սովորական շուրջ 70 000-ի հասնող բնակչություն, որի կեսը հայեր են եղել, մյուս կեսը՝ բուրքեր ու մի քանի բուրդ:

Երբ ես ժամանեցի այսուղև, քաղաքում կար գուցէ 2000 հայ Բրիտանացիները-զինազրավել էին քաղաքը փոքր ինչ ավելի վայ. ունեին այսուղև գունդ՝ մի քանի դաշտային հրետանիով և մեկ կամ երկու խումբ հեծելազորով:

Եվս մեկ գունդ գրեթե միևնույն ժամանակ ուղարկվել էր Մարաշ, մեծամասամբ հնդկական զորքեր:

Գաղթականները հետ գալով, վերադառնալով ներքին

խոլոյից՝ ցրվում են Հոմս⁶³ և Համա⁶⁴ քաղաքներու մինչև Համակոս: Մեծ մասին անապատով քշեցին Դամասկոսի արևելք և հարավ-արևելք, իսկ մի մեծ հատված թողեցին կյուսիսային Ուրիխայում, որա լեռնային հատվածում:

Ես կարող էի ասել, որ սիրիացիները չեն ենթարկվել կոտորածների ուղղակիորեն, բայց նրանք սիստեմատիկորեն սպամահության են ենթարկվել թուրքերի կողմից, ուստի բավականին մեծ թվով ամբողջական զուղեր գործնականում ավելիք են: Ես երբեք որևէ տեղ չեմ տեսել այդքան սովահար երեխաներ, որքան տեսա Սիրիայի Լիբանան շրջանում: Նրանք կենուրուացվել են այսուղև: Հայերը սկսեցին գալ Այնթապ՝ յուրաքը մոտավորացես 1500-ի հասնող թվով: Բրիտանական բանակը հոգում էր մեր սննդի գումարը: Այնթապում եղած ժամանակ, ես բրիտանական բանակից ամսական ստանում էի գուստացի 10 000 դրամը՝ սննդի ապահովման նպատակով:

Մի քանի շաբաթվա ընթացքում ես հավաքել էի ավելի քան հազար որք երեխաներ և տեղափորել էի նրանց կազմակերպված երկու որբանցում: Ես ստեղծեցի մի արտադրամա, որն աշխատանքով ապահովեց ավելի քան 1000 հայ կանանց, մենք կերակում էինք 2500-ից մինչև 4500 գաղթականի, որոնք համարագրված չեն որևէ հաստատությունում: Բացի դրանից, ես մերը բաղարի ամենամեծ շենքերից մեկը և այն փրկության տուն գործիք այն կանանց համար, ովքեր դեռ պահպատ էին թուրքական հարեւներում: Այդպիսիք մինչ այժմ կան թուրքիայի այդ հատվածում: Եթե խոսենք թուրքիայի հարավային հատվածի, Ուրիխայութիւն և Արաքիայի մասին, ապա մոտավորացես 200 000-ը զիս թուրքերի, բրդերի և արաքների ձեռքերում են:

Իմ այսուղև գնալուց քիչ առաջ Կոստանդնուպոլսից

⁶³ Հոմս (քաղաքում՝ Homs) տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

⁶⁴ Համա (քաղաքում՝ Hama) տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

հրաման էր ստացվել որ բոլոր հայերը պետք է ազատ արձակվեին, մեծ թվով թուրքեր բացեցին իրենց դռներն ու նրանց դուրս շպրտեցին, և նրանք տեղ չունեին զնալու: Նրանք անկանոն զինվորական հրոսակախմբերի և ամբողջ երկիրը հեղեղած ավագակների զոհ դարձան, նրանցից շատերը ստիպված վերադարձան այն տները, որտեղից դուրս էին եկել:

Մենք սիստեմատիկորեն՝ որքան հնարավոր էր արագ, նրանց հանում էինք այդ տներից, մենք շաբաթական մոտավորապես 150-ից 250-ի բերում էինք: Նրանց պահում էին փրկության տանը մինչև նրանք՝ հնարավորինս արագ կվերականգնեին իրենց բնականն վիճակը և հետո, հնարավորության դեպքում հայրենադարձում էին: Բարեբախտաբար, այդուն մեր գաղթականներից շատերը եկել էին Աղանայից կամ Աղանայի մոտ գտնվող շրջանից և մենք կարող էինք նրանց պահել: Մենք ունեինք մեծաթիվ անձանց Սվագից, որոնց մենք ստիպված էինք պահել, քանի որ նրանք չին կարող հայրենադարձել, որովհետև երկիրն այդ ժամանակ գրավված չէր:

Մեծ թիվ էին կազմում նաև Դիարքեքիրից և Սալաթիայից եկածները:

Թուրքերի տներից փրկված այս կանանց վիճակն իսկապես ցավալի էր: Նրանցից ոմանք զաղափար անզամ չունեին, որ որևէ հայ մարդ ինչ-որ տեղ առողջ է մնացել, նրանք գտնվում էին ահարեկվածության ամենասդաշխ վիճակում, որ ես երբեւ տեսել էի, թեպեսու կարծում էի, թե այդ ուղղությամբ մի փոքր փորձ էի ձևոք բերել նախքան թուրքիա մեկնելը:

Սովորաբար մի քանի ամիս էր պահանջվում այդ կանանց հոգեվիճակը կարգավորելու համար: Մենք մեծ դժվարություններ ունեցանք այս կանացից շատերին փրկելու: Եթե թուրքերին ինչ-որ աննշան լուր էր հասնում, որ մենք նպատակադրված կանանց

խոსից էինք զնում, նրանք նրանց ուղարկում էին դուրս այլ քաղաք, կամ ավելի հեռու՝ երկրի խորքերը: Ոչ Այնթապ քաղաքում, բայց հարեան քաղաքներում նրանց սպանում էին: Դա տեսի է ունեցել Այնթապից ոչ շատ հեռու մի քանի վայրերում:

Մեզ հաջողվեց Այնթապի հարեւներից հանել հազար կնոջ, մենք կարծում էինք, որ ապահովել էինք զութեալ նրանց կեսին: Հիմա, երբ ամբողջ շրջանը կազմված է մեկ ընդարձակ քաղաքից և բազմաթիվ փոքր գյուղերից և այս գյուղերից յուրաքանչյուրում կան 50-ից շուրջ 150 կին և աղջիկ, անհնար էր նրանց հանել այդտեղից: Բրիտանական զորքերն այնքան փորբարիվ էին, որ չկարողացան գրավել ամբողջ տարածքը, և եթե մենք փորձում էինք դա անել՝ ուղարկում էինք (զինվորականներին – Ա. 7.) որևէ քարաք և հարկադրում (թուրքերին – Ա. 7.) մեզ հանձնել նրանց, դա ահազանգվում էր մյուս քաղաքներում, և նրանք հեռացվում էին քաղաքից մինչև մեր հասնելը: Դա պատահում էր կրկին ու լրիկին, և ստացվում էր, որ մենք նրանց կյանքն ավելի մեծ վտանգի էինք ենթարկում, քան նրանց մենակ քողինելով:

Պարոնայք, ներեցեք, սակայն զգացված կլինեմ որ զուշացնեք ինձ, եթե ես ասում եմ քաներ, որ դուք չեք ցանկանում լինել:

Մենասոր ՈՒԽԵՍՍՍ. Ոչ, պարզապես շարունակեք և պատմեք պատմությունը ինչպես գիտեք:

ՊՐՆ ՀԱՅՉ. Այս կանանցից շատերը, այն քանից հետո, երբ իմացան, որ մենք փրկության տուն ունենք այնտեղ, սկսեցին զալ այնուղ Միջազետքից՝ գետի երկանքով, անզամ Տեր-Զորից⁶⁵: Տեր-Զորն ընկած է Հալեպի և Բաղդադի գրեթե կես Ճանապարհին: Այն գրեթե Արաբական անապատի եզրագծին է և այն տերասանության ամենամեծ կենտրոններից մեկն էր: Հալաւատացած էինք, որ ոչ պակաս քան 300 000-ից մինչև 500 000

⁶⁵ Բագրում՝ Der Zor:

հայ իրենց մահկանացուն կնքել էին Տեր-Զոր կոչված այս անապատում: Նրանցից շատերին պահել էին արարները և այժմ գրեթե անհնար է նրանց ազատել արարներից, բացառությամբ առուվաճառքի ճանապարհին: Լավ գործարքի դեպքում նրանց ազատությունը վաճառվում է:

Ուրֆան Միջազգեսքի սրտում է, շուրջ 150 մղոն դեպի արևելք: Ես կարող եմ ասել, որ Այնթապում փաստացի բոլոր հայերի տներն ավերվել են թուրքերի կողմից՝ ոչ միայն թնդանոթների կրակի հետևանքով, այլ մտադրված քանդվել են նրանց կողմից: Պատերը կառուցված են քարից, իսկ հատակները, տանիքներն ու պատուհանի շրջանակները՝ փայտից, ուստի նրանք նախ հանում էին փայտը և այսպիսով քանդում տունը, այնպէս որ բնակվելու խնդիրն այս եկող ձմռանն ամենամեծ դժվարություններից մեկն է:

Ուրֆայում կոտորածները հասնում են առնվազն 35 000-ի: Պատերազմից առաջ Ուրֆայի 35 000 բնակչությունից միայն 2500-ը կամ 3000-ն է վերադարձել շուրջ երկու և մեկ ու կես տարս առաջ:

Ուրֆայի հայկական հատվածի շրիորները փակված էին և կնքված, որովհետև դրանք լցված էին մարդկային մարմիններով, և ես ինք եմ տեսել քաղաքի շրջապատում գտնվող հին քարհանքերում հարյուրավորների ու հազարավորների ոսկորները ու կմախքներ և կիսով չափ մումիացված մարմիններ:

Նրանց գույքն ամբողջությամբ թուրքերի ձեռքում է: Նրանք ունեն լավ երկրագործական պայմաններ այս հատվածում: Սա շատ լավ երկրագործական հատված է: Դրանք օգտագործվել են թուրքերի կողմից վերջին հինգ տարիների ընթացքում և չեն վերադարձվել, ինչպէս զինադադարի պայմաններն էին նախատեսում: Դրանից խուսափել են որոշ իրավաբանական ձեականություններով: Առաջին հերթին նրանք բռնագրավել են հայերի գույքը որպես լրված գույք և այն վաճառել թուրքական

բանկերին և ապա այն վերավաճառվել է, այնպէս որ դրանք կեղծված են: Համենայն դեպքում, դա էր կառուցվածքը:

Ներկայումս հայերի համար շատ բարդ է ինչ-որ քան անել, որը նրանց ապրուստի միջոց կտա: Ես երբեք չեմ տեսել իրենց կարիքները հոգալու համար ավելի մտահոգ մարդկանց, քան հայերին: Ես կարողացած աշխատանք տալ գրեթե 1500 հոգու և նրանք շատ արդյունավետ ու ազնիվ աշխատողներ են, և եթե ինչ-որ հանրային կազմակերպություն ստեղծելու հնարավորություն լիներ, ինչպէս ճանապարհաշինարարության կամ նմանատիպ այլ քան, որին աշխատատեղեր կապահովեր, դա օգնության ամենալավ ձեր կիխներ, որը կապահովեր նրանց:

Մենասոք ՀԱՇԽՆՔ. Կարո՞՞ եք ավելի մանրամասն երկայացնել սովոր և ջարդերի պայմանները:

Պրեն ՀԱՅԹ. Ես կասեմ, որ երկրի այդ հատվածի՝ նկատի ունեմ Մարաշը, Ուրֆան, Այնթապը և Հալեպը, մարդիկ ապրում են կրկնվող ջարդերի ծայրահեղ վախի պայմաններում: Մարտին կոտորած էր եղել Հալեպում, իսկ հովհանների Ուրֆայում, շատ վատ կատարած զգացում կար երկուստեր՝ և բրիտանացի սպանների, և՝ իրենց հայերի շրջանում: Զգացողություններ, որ եթե բրիտանական զորքերը դուրս հանվեին և իրենց փայտերն այլ զորքերով չպաշտպանվեին, ոչ մի հայ չի մնա համբենիանուր էր: Անշուշտ, շատ քիչ մարդիկ են մնացել այդ հաստվածում: Գաղթականների մեծ մասը կանայք և երեխաներ են: Հարավային Հայաստանում ոքք երեխաների թիվը հասնում է մոտավորապես 150 000-ից մինչև 200 000-ի:

Մենասոք ՀԱՇԽՆՔ. Իսկ ո՞ր են զնացել տղամարդիկ:

Պրեն ՀԱՅԹ. Տղամարդիկ ջարդի են ենթարկվել: Եղանակնությունն իրականացնելիս սովորաբար տղամարդիկ ստացին են կոտորվել, և այն քաղաքներում, որտեղ ես եղել եմ, ստացնորդ տղամարդիկ, կրթված և դեկալար հայ տղամարդիկ

ընտրվել են առաջինը, շատ շրջաններում նրանք կորցրել են իրենց ղեկավարներին և հոգևոր առաջնորդներին նախարար տեղահանությունը:

Հայաստանի այն հատվածում, որտեղ ես էի գոտիում, պետք է որ սովոր պայմաններ չինեին: Չնայած բերքը նորմալ չէր, բավականին սնունդ կար, որը գործնականում բավարար էր բնակչության աջակցելու համար, բայց այդ ամրողջը թուրքերի ձեռքում էր, և նրանք սպառում էին դա սովին հատուկ գներով:

Կասկած չկա, որ բրիտանական բանակն իրականացնելով կերակրելու գործողությունները, երկրի այդ շրջանում գործնական դեր էր կատարում մեծ թվով հայերի կյանքը փրկելու համար:

Մեհասոր ՈՒԻԼՅԱՍՍ. Դուք ինչ-որ բան գիտե՞ք Ռուսահայաստանում առկա պայմանների մասին:

Պրե ՀԱՅԹ. Ոչ, սը ք, ես չեմ ենել Ռուսահայաստանում, այն ինչ ես գիտեմ դրա մասին միջնորդավորված է: Ես ենել եմ Խոտայիա՝ Տարանտո, Կոնստանդնուպոլսից բրիտանական փոխադրամիջոցով, որը բեռնված էր սպաներով և մարդկանցով Կովկասից, և ես հանդիպեցի մեր աշխատակիցներին, ովքեր ենել են Կովկասում: Ես հասկացա, որ սննդի վիճակն այնտեղ շատ ավելի վատ է, քան Կիլիկիայում և Հայաստանի այլ մասերում: Միակ բողոքը, որ նրանք ուղղեցին ինձ այն եր, որ իրենք ի վիճակի չին հասցնել սննդի մատակարարումներն իրենց նշանակետերին: Դրանք ճանապարհին թալանվում էին:

Մեհասոր ՈՒԻԼՅԱՍՍ. Կա միայն մեկ երկարգիծ Սիցերկրականի շրջակայքից դեպի Կասպից⁶⁶ և Բաթումից մեկը Երիվան, իսկ մյուսը Բարու: Դրանք բոլորն են, այդպես չե՞ն:

Պրե ՀԱՅԹ. Այո, այս հատվածում, այո:

⁶⁶ Բնագրում տեղ գտած տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը՝ ուստինասիրվող ժամանակահատվածում Միջերկրականի շրջակայքից դեպի Կասպից ծով երկարգիծ չի եղել:

Իրավիճակը փոքր-ինչ ավելի լավ էր Աղանայում, քանի որ այսուեղ կային ավելի մեծ թվով զորքեր, և նրանք չունեին գործականության այնքան սուր խնդիր, որքան մենք ունենք հետափոր հարավում, քանի որ նրանք՝ այդքան մեծ թվով, Աղանա դիւնու չեն հասել:

Մեհասոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք թի՞ շկ եք:

Պրե ՀԱՅԹ. Այո՝

Մեհասոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք բանակում բժշկական հաւայության էիք:

Պրե ՀԱՅԹ. Ես Կարմիր Խաչի բժշկական ծառայությունում եմ, սը:

Մեհասոր ՀԱՐՄԻՆԳ. Նշանակո՞ւմ է, որ դուք՝ պաշտպանության համար անհրաժեշտ ռազմական ուժի վերաբերյալ ի վիճակի չեք որևէ որոշում կայացնել:

Պրե ՀԱՅԹ. Ո՛չ սըր, ես ընդհանրապես չեի համարձակվի կայծիք հայտնել, բացի այն, որ ես տեսել եմ այդ երկրի վիետագրավումն այլ ուժերի կողմից և գիտեմ թե ինչ արդյունք ունեցավ այդ գինագրավումը:

Մեհասոր ՀԱՐՄԻՆԳ. Կարծում եմ այսքա՞նը, եթե ինչ-որ այլ բան չունեիք հարցնելու, սենասոր:

Մեհասոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես ոչինչ չունեմ ասելու:

Մեհասոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք երախտապարտ ենք ձեզ, կապիտան:

Պրե ՄՎԱԶԼԻ. Պրեն նախազահ, պրն Մալքումը հեռազբեց ինձ, որ նա ունի ինչ-որ վկաներ: Ես չգիտեմ՝ ովքե՞ր են նրանք և ինչի՝ մասին է լինելու նրանց վկայությունը: Կապիտան Թուլինը պետք է որ այստեղ լիներ: Ես չգիտեմ արդյո՞ք այս գրասենյակից երան հետազիք է ուղարկվել՝ հայցելով նրան այսօր լինել այստեղ: Ես երեկ նրան ուղարկել եմ հատուկ պատվիրված նամակ և երկու հեռողիք:

Կա ևս մեկ մարդ, ով կարող է նրա հետ կապվել: Ես իրաքարձում եմ, որ պրն Հովհանքի կողմից Կովկասի այդ հատված ուղարկված կապիտան Թուլինը, ում անդրադարձակ սենատորը, կարող է լինել կարևոր վկա:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Մենք ծանուցում կուղարկենք պրն Մալքոնին, որ մենք լսենք նրան հինգշաբթի առավոտյան: Մենատոր, հինգշաբթի առավոտյան ձեզ հարմա՞ր է:

Սենատոր ՈՒՒԼՅԱՍՏՈՒ. Այո՞:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Այս նիստը հետաձգվում է:

(Ըստ այդմ, առավոտյան ժամը 11:30-ին ենթահանձնաժողովի լսումները հետաձգվեցին մինչև հինգշաբթի, 1919 թ հոկտեմբերի 2-ը, ժամը՝ առավոտյան 10:30):

ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՃԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2, 1919

ՄԻԱՅՅԱ, ՆԱՀԱՆԳԱԵՐԻ ՍԵՆԱՏ,
ԱՐՄԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱՀԱՆԱԺՈՂՈՎ
Վաշինգտոն Կ. Շ.

Ենթահանձնաժողովը՝ համաձայն հետաձգմանը, հանդիպեց 10:30-ին, Կապիտոլիումում՝ Ֆիլիպինների հարցերով համաժողովի սենյակում, սենատոր Ռուրին Գ. Հարդինզի նախագահությամբ:

Ներկաներ՝ սենատորներ Հարոհնակ (Ասխազահ), Նյու և Ռիփամ:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Այժմ մենք կլսենք պրն Թուլինին:

ՊՐՆ ԱԲՐԱՀԱՄ ԹՈՒԼԻՆԻ⁶⁷ ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Կարո՞ն եք ասել սղագրողին ձեր սկզբանը ու պաշտոնական առնչությունը:

ՊՐՆ ԹՈՒԼԻՆ. Աբրահամ Թուլին, Վանդերբիլթ պողոտա 50, քաղաք Նյու Յորք: Ես մասնագիտությամբ իրավաբան եմ և

⁶⁷ Թեագորում՝ Abraham Tulin:

Միացյալ Նահանգների բանակի հետևակի կապիտան եմ եղայութեազմի ընթացքում: 37 տարեկան եմ:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Խոսեր և այնպիսի վկայություն տվեք, որն ըստ ձեզ՝ հանձնաժողովը պետք է խմանա, ներկայացրեք այնպես, ինչպես ինքներդ կկամենաք, իսկ եթե ինչոր մեկը ցանկանա ընդհատել, մենք կընդհատենք ձեզ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ես կցանկանայի հանդես գալ հակիրճ գեկուցմամբ և ապա զնահատել այն, ես կարծում եմ ավելի լավ կլինի, որ դուք հարցեք տար մանրամասների համար:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Շատ լավ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Նոյեմբերի 11-ին զինադադարից հետո, երբ ես Թուլում⁶⁸ երկրորդ ամերիկյան բանակի շտաբում գեներալ Բելլի անձակազմում էի, ինձ ծառայության նշանակեցին Փարիզում, և մոտավորապես փետրվարի 1-ին ես կցվեցի պրե Շուվերին, որը գերազույն տնտեսական խորհրդի և Եվրոպայի ու ընդհանրապես պատերազմական գոտու կարիքավոր բնակչության օգնության՝ Ամերիկյան նպաստամատույց վարչության⁶⁹ զյուսպոր տնօրենն էր:

Սոյն թվականի մարտին պրե Շուվերն ինձ ուղարկեց Հայաստան՝ ուսումնասիրելու այնտեղ տիրող իրավիճակը, կազմելու վերջինիս մասին արձանագրություններ և խորհրդատվություն, կապված այն գործողությունների հետ, որոնք պետք է ձեռնարկի Ամերիկյան նպաստամատույց վարչությունը, ինչպես ինքս տեղին կիամարեմ: Ես Փարիզից Հայաստան մեկնեցի մարտի 13-ին և ժամանեցի Բաքում Ան ծովով, կարծում եմ 1919 թ. ապրիլի 7-ին: Այնտեղից ես մեկնեցի

Թիֆլիս, որտեղ մնացի հինգ օր, հետազոտելով վոխադրումների իրավիճակը և հավաքելով նման այլ տեղեկատվություն, որքան ես կարող էի, ապա մեկնեցի Թիֆլիսից և անցա Ալեքսանդրապոլ, այլտեղից զնացի Կարս, ապա վերադարձա Ալեքսանդրապոլ, այլուհետև ներքին Էրիվան: Ալեքսանդրապոլը նախկին ուսական Էրիվան նահանգի ամենախուսային հատվածի մասն է: Այժմ, այն մասն է de facto գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության, որի մայրադարձ Էրիվանն է: Կարսից ես ետ վերադարձա Ալեքսանդրապոլ, այնտեղից՝ Էրիվան, այստեղից՝ Էրիածին, և այնքան հարավ, ուր Ծգդիրն է, որը մոտ է Հայաստանի Հանրապետության հարավային սահմանին, և մի քարտ այլ ոչ խոշոր բնակավայրեր:

Այս տեղերը, որոնք ես նշեցի, այնտեղ կենտրոնական վայրեր են: Ես կատարել եմ իմ հետազոտությունը երկրի փոքր թաւկավայրերում նույնպես՝ ընդհանուր առմամբ ամենուր: Դա այն տարածքն էր, ուր ընթանում էր իմ ճամփորդությունը՝ տարածքը, որտեղ ես իրականացնում էի իմ ուսումնասիրությունները:

Մենասոր ՈՒԽԻՅԱՍՍՍ. Ի՞նչ պաշտոն էիք դուք գրադեցնում:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ես պրե Շուվերի ներկայացուցիչն էի՝ Ամերիկյան նպաստամատույց վարչության, որը գործում էր Կուզբեսի հատկացրած 100 000 000 դոլար ֆոնդի շրջանակներում: Այդ ժամանակ ես ամերիկյան բանակում կապիտան էի: Ես վերջերս եմ գորացրվել, վերջերս եմ ետ վերադարձել:

Ամենալավ տեղեկությունը, որ ես կարողացա ստանալ հայերի թվի մասին այն տարածքում, որն այժմ ընդգրկված է Հայաստանի Հանրապետության սահմաններում, ինչպես ես նշել եմ այստեղ քարտեզի վրա, դա 1919 թ. ապրիլին էր, երբ ես այնտեղ էի: Ասուալորապես 750 000 հայ կար այնտեղ: Այնտեղ կային նաև

⁶⁸ Բնագրում՝ Touz, տե՛ս « Ծանոթագրություններ » բաժնում:

⁶⁹ Ամերիկյան նպաստամատույց վարչության (American Relief Administration) մասին տե՛ս « Ծանոթագրություններ » բաժնում:

թաթարներ և քրդեր նույն տարածքում: Թաթարներն ու քուրքերը այնուամենայնիվ, այնտեղ փոքրամասնություն էին: Այս տարածքում հայերն անտարկելիորեն մեծամասնություն էին կազմում:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք չե՞ք ներառում թաթարներին ու քրդերին այդ 750 000-ի մեջ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ոչ: 750 000-ը վերաբերվում էր միայն հայերին:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Մոտավորապես որքա՞ն թաթար ու քուրդ կար այնտեղ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Դա սոսկ վարկած կլինի: Նրանք այս տարածքում շատ ավելի քիչ էին, քան հայերը: Օրինակ, թաթարներն իրենք ապրում են գյուղերում, այսինքն, որտեղ նրանք ապրում են՝ գյուղեր են ընդհանրապես: Նրանցից ումանք քոչվորներ են: Քրդերը նույնպես բնակվում են գյուղերում: Աշխարհի այս տարածաշրջանում չկա այնպիսի բան, որ գյուղում մեկ տան մեջ ապրի հայ, իսկ կողքի տանն ապրի թաթար, ինչպես Ամերիկայում, մեր խառը բնակչությամբ: Բնակչությունն ինըն իրեն պահում է առանձնացված:

Թաթարների գյուղերը, որոնք ես հաշվել եմ, գրեթե մեկը տասի հարաբերությամբ էին հայկական գյուղերի համեմատությամբ: Խոսքն այդ տարածքի համամասնության մասին է: Սա գերազանցապես հայկական տարածք է: Այդ 750 000 հայերից գրեթե 400 000-ն այս տարածքի բնիկներ չեն, նրանք գաղթականներ են Թուրքահայաստանի վեց վիլայեթից, որոնք կոտորածից առաջ էին փախել հյուսիս կամ կոտորածից փրկվածներ և ապաստան գտածներ են այն ժամանակա ոռուսական էրիվանի և Ելիզավետպոլ նահանգներում, որտեղ նրանք գտնվում էին ոռուսական բանակի պաշտպանության ներքո: Ես կասեի, որ ոչ ավելի, քան 350 000 հայեր, որոնց այժմ կարելի է

գտնել կամ որոնք հայտնաբերվել են ապրիլին Ռուսահայաստանում, տեղաբնիկներ են: Երկիրը երբեք չի սատարել շատ մեծ բնակչության՝ մասնավորապես այս երկիրը, որի մասին ես խոսում եմ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Դա Ռուսահայաստանո՞ւմ է:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ռուսահայաստանում է:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Կովկասի մո՞տ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Կովկասում:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Կովկասում, այս:

Պրե ԹՈՒԼԻՆ. Դա Կովկաս կոչվող տարածքի ամենահարավային հատվածն է:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՏ. Դա աշխարհի ամենահամախմբված բնակչությունն է, դրանք թաթարները, քրդերն ու հայերը չե՞ն: Այն երբեք բազմամարդ, խիստ բնակեցված չի եղել մի պարզ պատճառով, որ մեծ թվով բնակչություն չի կարող ապրել գավառում:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ճիշտ այդպես, սենատոր:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք խոսում եք այն հատվածի մասին, որը կոչվում է Անդրկովկա ։

Պրե ԹՈՒԼԻՆ. Այո, սը:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Լեռներից հարա՞վ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Լեռներից հարավ: Ես խոսում եմ այս տարածաշրջանի ամենահարավային հատվածի մասին: Վրաստանը նույնպես այս տարածաշրջանի մասն է, իսկ ես խոսում եմ Վրաստանից հարավ գտնվող երկրի մասին: Այս քարտեզի վրա կապույտով նշված հատվածը ցույց է տալիս ներկայիս Հայաստանի Հանրապետությունը:

Այսպիսով, այդ մարդկանց վիճակն աննկարագրելի էր, եթե ես այնտեղ էի: Դա ծայրահեղ սրտաճմլիկ էր: Նրանք մեռնում էին սովոր: Սովահարված էին ամիսներ շարունակ: Նրանք

ապրում էին խոտով և արմատներով: Ես տեսել եմ, թե ինչպես նրանցից շատերը խոտ և արմատներ էին հավաքում դաշտում: Որից հետո ես տեսա, թե ինչպես էին նրանք պատրաստում այդ խոտը: Նրանք եփում էին այդ խոտը և ապա փորձում դա ուտել: Որովհետև անհնար է ուտել հում խոտը: Նրանք չեին կարողանում մարսել դա: Այն քայրայում էր նրանց ստամոքսները: Մեծ բժոյի մարդիկ մահացան սովից և հիմանդրություններից, որոնք սովու էր առաջացնում, նրանց վիճակը սաստկացել էր, մինչ ես գետի այնտեղ և տեսա դա՝ նրանցից շատերը տառացիորեն մեռնում էին իմ աչքի առաջ: Ես ամեննին ստիպված չեի փնտրել նմանատիպ քաներ: Դա աչքի էր զարնվում ամենուր, որ կողմ է գնայիր: Երկարուդու բոլոր փոքր կայարաններում նրանք տեսանելի էին ճանապարհի երկայնքով: Այդ իրադարձությունների շորջ վիճակազրությունը սարսափելի է, սակայն նրանք չեն ասում ճշմարտությունը: Ալեքսանդրապոլ քաղաքում, օրինակ, Ալեքսանդրապոլի շրջանում, որտեղ կար հավարիած մոտավորապես 110 000 հայ, ապրիլի 17-ին երբ ես հասաւ այնտեղ, քաղաքապետն ինձ ասաց, որ նախորդ օրն այնտեղ 140 մարդ մահացել էր սովից, իսկ 168-ը՝ դրանց մեկ օր առաջ: Ամեն օր միշինում 150 մարդ մահանում էր սովից, և ես իմ աչքով տեսա, որ դա ավելի քան ճշմարտություն է: Դա գուստ հայտարարություն էր: Նրանք սկսեցին ջանքեր գործադրել որբերին՝ երեխաներին հավաքելու ուղղությամբ: Ես անցաւ մի քանի այսպես կոչված որբանոցներով, որոնք ոչ ավելին էին, քան դատարկ շենքեր, հիմնականում իին ուսական ուսումնական քարաքներ, առանց կահույրի, որտեղ նրանք հավաքել էին այդ խեղճ երեխաներին: Այս երեխաները սարսափելի վիճակում էին՝ պարզապես երեխաների շնչող կմախքներ, կանայք ու տղամարդիկ ևս նոյն վիճակում էին:

Այժմ նրանք երիվանում կառավարություն ունեն,

Հայաստանի կառավարությունը, որը լավ գրուի չեր հանում այդ ամենից, բայց՝ ստեղծված հանգամանքներում իր ուժերի ներածին յափով անում էր հնարավորը: Անհնար է ունենալ արդյունավետ կառավարություն, որի բնակչության 100 տոկոսը սովահար է, սովամահ է լինում և զուրկ է բոլոր միջոցներից: Այս Հայաստանի կառավարությունն ազնվորն ջանում չէ պահել քանակ՝ մարդկանց պաշտպանելու համար, քանակ, որն արևմտյան ցանկացած չափանիշներով, մեր չափանիշներով՝ կատակ էր, բայց որի այնուամենայնիվ, հրաշալի մի քան էր՝ այդ հանգամաքների տևանկյունից:

Հանրապետության նախագահն ինձ ցույց տվեց այդ բանեակի մի ջոկատ Ալեքսանդրապոլում այն օրը, երբ ես հասա այնուեղ: Նա եկել էր Երիվանից դիմավորելու մեջ: Նա իրական հպատությամբ նշեց, որ այդ զինվորները հինգ օր շարունակ հաց չեին ունեցել, բայց նրանք մնում էին իրենց տեղերում: Նրանց մեծամասնությունը կոշիկ չուներ, բայց նրանք մնում էին իրենց տեղերում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Նրանք զինվա՞ծ էին:

ՊՐՆ ԹՈՒԼԻՆ. Նրանք զինված էին, նրանք ունեին իրացաններ: Ես չգիտեմ, թե ինչ ռազմամթերք ունեին նրանք: Դա ոչ այնքան կարգապահությունն էր, որքան իմ կարծիքով հայրենասիրական և ազգային ողին: Անկասկած, հայերի մոտ կա ուժեղ ազգային ողի, որը ստորադասում է՝ զրեթե բոլոր զբացմունքները, որ նրանք ունեն այսօր: Պաշտպանության նպատակով այդ քանակն արդյունավետ չէ իր ներկայիս վիճակում: Նրանք բավականին կամք ունեն, դրանում հարց չկա: Բայց նրանք միշոցներ չունեն և ուժ չունեն: Մարդիկ ովքեր ուտելու բան չունեն՝ ու չեն ունեցել ուտելու բան երկար ժամանակ, և չունեն ուսումնամթերք և այսպես շարունակ, չեն կարող արդյունավետ պինդուններ լինել՝ աշխարհի ամենամեծ կամքով հանդերձ:

նրանց թվերը, բայց իրական բանակում, ես կասկածում եմ, թև նրանք ունեին ավելի քան 6000 կամ 7000 մարդ:

Սենատոր ՈՒԽԵՍՍՍ. Այն է՝ եթե նրանք ունեին 6000 կամ 7000 մարդ իրենց զինված ուժերում, նրանք ներկայացրել են ավելի՞ն, քան կարող էին գորակոշվել իրենց ցուղերից:

Պրե ԹՈՒԼԻՆ. Կարծում եմ, մոտավորապես այդպես: Հիմա, իմ կարծիքով, խնդիրն այն է, որ ապահովվեն առարկումները, որոնք ուղարկվում են հայ բնակչությանը սովոր փրկելու համար, հասնեն նրանց: Դա առավել հրատապ խնդիրն է Հայաստանում:

Իհարկե, կա ևս խնդիր՝ թաթարների և քուրքերի հարձակումները՝ ջարդերը, բայց ես խկացես կարծում եմ, որ այնտեղ սուսնդ հասցնելու շարունակականության ապահովումն առնվազն մեկ տարի ամենակարևոր հարցն է, որովհետև նրանք չեն կարող ցանքով գրադիվել այս տարի: Ես չեմ կարծում, որ նրանք այս տարի ցանել են սովորական ցանքսի տասը տոկոսը, ինչը նշանակում է, որ նրանց պետք է փրկել մինչև հաջորդ բերքը՝ մեկ տարի:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Այս կոչը հիմնված է երկո՞ւ բանի վրա. Մեկը սովահարության կամ սովի իրավիճակի, իսկ մյուսը հայերի կոտորածների:

Պրե ԹՈՒԼԻՆ. Այո, սըր:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Դուք կարո՞՞ն եք մեզ ասել՝ ովքեր են իրականացնում այդ կոտորածները:

Պրե ԹՈՒԼԻՆ. Այսպես, իմ դասողությամբ, սենատոր, կոտորածների վտանգը միայն երկու հատվածում է: Մեկը՝ Կարսի հատվածն է՝ ցուցադրված ձեր քարտեզի վրա, որը Հայաստանի Հանրապետության ծայր արևմուտքում է գտնվում, իսկ մյուսը Նախիջևանում է, որը Պարսկաստանի սահմանին է: Միայն այդ երկու շրջանները՝ հարավում և մյուսն արևմուտքում բնակեցված

ին գերազանցապես թաթարներով: Այնտեղ հայերը փորբամասնություն են կազմում հիմա: Այնտեղ հայեր եղել են:

Սենատոր ՈՒԽԵՍՍՍ. Սա այն շրջա՞նն է, որի մասին նա պատմում էք՝ առ այն, որ պետական դեպարտամենտի ներկայացուցիչները փաստել են, թե տեղի ունեցած վերջին քարդերի ժամանակ մեծ թվով մարմիններ են նետվել գետը:

Պրե ԹՈՒԼԻՆ. Սա այն տեղն է, որը մենք կոտորածներ ենք սպասում, եթե ես այնտեղ էի և որտեղ դրանք անկատկած բռնկվել են: Ով եղել էր այնտեղ՝ սպասում էր դրանց: Դրանք անխուսափելի են: Այս երկու շրջանում թաթարները ծայրաստիճան դաժան են հայերի նկատմամբ, ծայրաստիճան թշնամական: Ես կրուսաբանեմ: Դա կապված է մի դեպքի հետ, որը տեղի է ունեցել այս ժամանակ, եթե ես այնտեղ էի, և ուր կզաք այդ թշնամության ուժգնությունը: Մենք շատ էնք փորձում հայերի համար հացահատիկի սերմ հայթայթել, որպեսզի նրանք կարողանային ցանել և բերք ստանալ ու կարողանային իրենք իրենց պահել: Նրանք չունեին ոչ մի հատիկ սերմ: Մենք որոշ բաներ գտանք Պարսկաստանի Սակուի շրջանում: Դա Նախիջևանից արևմուտքում է:

Սենատոր ՈՒԽԵՍՍՍ. Կասպից ծովի՞ սփին:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ո՛չ սըր: Դա Նախիջևանի ճիշտ արևմուտքում է՝ Պարսկաստանում: Սակուից եկող մի նեղ երկայնքով երկարգիծ կա դեպի Նախիջևան, դա ստանդարտ երկարություն է, որն իջնում է Նախիջևան, ուր մեզ պետք էր հացահատիկի սերմը: Սակուի շրջանը բնակեցված է թաթարներով, ոչ թե պարսկիներով:

Մենք այնտեղ փորձեցինք գնել հացահատիկ, բայց նրանք հրաժարվեցին դա մեզ վաճառել, որովհետև մենք ամերիկացի եինք՝ նրանք զիտեին, որ մենք հետաքրքրված ենք հայերով, ուստի մենք պայմանավորվեցինք բրիտանացիների հետ՝ բրիտանացի

սպա գնաց այնտեղ ու գնեց այդ հացահատիկն իբրև թէ բրիտանական բանակի համար, և թաթարները պատրաստակամորեն վաճառեցին հացահատիկը բրիտանացի այդ սպային: Ապա այդ հացահատիկը տեղափոխելու հարցն առաջացավ, և մենք սխալ գործեցինք: Մենք դատարկ վազոններով գնացք ուղարկեցինք մի ամերիկացու ուղեկցությամբ: Նա բարձեց 900 տոննա հացահատիկի սերմ այդ դատարկ վազոնները և ճամփա ընկավ դեպի արևելյ և հյուսիս: Երբ մենք անցել էինք Նախիչևանի ճանապարհի կեսը, թաթարները հասկացել էին, որ գնացքում ամերիկացի կա և կրահել էին, որ հացահատիկը հայերի համար էր, երանք ավերեցին գնացքը, գծերից զցեցին և ոչնչացրին զրեթե վազոնների կեսն ու դրանց պարունակությունը, պարզապես որովհետև այդ հացահատիկը հասնելու էր հայերին: Նրանք գիտեին, որ հայերը սովոր էին ու մեռնում էին սովից: Դա է զգացողությունը և դրանից շատ դյուրին է եզրակացնել, որ այդ շրջանում գունվող հայերն արյունահեղության սպառնացող վտանգի առջև են, ինչն որ եվրոպական զորքերի պաշտպանությունը դադարեցվի այնտեղ:

Սենատոր ՈՒԽՎԱՍՍ. Պարզապես հարցենում եմ տեղեկության համար, ազգակցական ի՞նչ կապ կա թաթարների և քրդերի միջև:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ես կասեի՝ ո՞չ մի:

Սենատոր ՈՒԽՎԱՍՍ. Ո՞չ մի, քրդերը թուրքական ցեղ են: Դուք գիտե՞ք:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ես չգիտեմ, սըր: Հայերն ինձ պատմել են, որ քրդերի մեծ մասն իսկապես հայեր են, ովքեր դարեր առաջ մուսուլմանացվել են, բայց ես իրավասու չեմ այդ հարցում:

Պրե ՄՎԱԶԼԻ. Ենթադրիմ է, որ քրդերը հնագոյն պարթեների սերունդներն են, ում մասին մենք կարդում ենք Միհրդատի պատմության և Քսենոփոնի

«Անսրասիս» աշխատության մեջ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Եթե ես ձեզ ճիշտ եմ հասկանում, հայերի ամենամեծ սպառնալիքը նոր Հայաստանի Հանրապետության հարավային հատվածում բխում է այն տարածքից, որը գտնվում է բրիտանական հովանավու տակ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Վախենամ, չեմ կարող պատասխանել այդ հարցին, սենատոր:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ձեզ ճիշտ եմ հասկանում, որ հայերի ամենամեծ սպառնալիքը Պարսկաստանի քրդերից է:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ո՞՛:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Թե՞ Պարսկաստանի թաթարներից:

Պրե ԹՈՒԼԻՆ. Հայաստանի այդ հատվածի թաթարներից: Զեմ կարծում, որ Պարսկաստանի թաթարներն ասպատակում են Հայաստանը: Նրանք դրա կարիքը չունեն: Այն հատվածը, որ կոչվում է Հայաստանի Հանրապետություն առավելապես թաթարական է:

Սենատոր ՈՒԽՎԱՍՍ. Դիմակայելով Պարսկաստանի թաթարների՞ն:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ճիշտ այդպես:

Սենատոր ՆՅՈՒ. Եթե սպառնալիքը պայմանավորված է հանրապետության սահմաններում ապրող բնակչությամբ, դա նշանակում է ոչ միայն այնտեղ զինված ուժեր ուղարկել, այլև պահել այնտեղ զինված ուժերը, քանի դեռ դուք պատրաստվում եք վտարել թաթարներին:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ես կարծում եմ, սըր, որ մի զգալի ժամանակահատվածում զինված ուժերն անհրաժեշտ է պահել Նախիչևանում:

Սենատոր ՆՅՈՒ. Որքա՞ն զինված ուժեր:

Պրե ԹՈՒԼԻՆ. Բրիտանացիներն անմիջապես այդ միջամբեպից հետո, որի մասին ես խոսեցի, զորքերի մեկ

գումարտակ էին ուղարկել այնտեղ:

Նրանք ընդհանրապես այնտեղ գորքեր չէին ունեցել մինչև այդ, և գեներալ Միլսը, ով նրանց զիսավոր հրամանատարն էր, մի գումարտակ գորք՝ շուրջ 1000 մարդ, ուղարկել էր պահպանելու այդ շրջանի կարգուկանոնը: Ես հասկանում եմ, որ այն պահից երբ բրիտանացիներն իրենց գորքերը հանեն Նախիջևանից, արդյունքում կրոնկվեն կոտորածներ:

Սենատոր ՆՅՈՒ. Այս: Կոտորածները կվերսկվեի՞ն այն պահին, եթե գորքերը դուրս հանվեն:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Դա ճիշտ է, համենայն դեպս, դա ճիշտ էր մինչ օրս: Կարսում էականորեն նույն վիճակն է, ինչ Նախիջևանում: Այնտեղ գերակշռող բնակչությունը թարարներ են: Կարսի գավառում կա 230 000 բարար, ըստ վերջերս կատարված հաշվարկների:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Որտե՞ղ է, ասացիք, տեղակայված հայկական բանակը:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Այն հիմնականում տեղակայված է Հայաստանում: Նրանք որոշ գորքեր ունեն երիվանում, մի հատվածն Ալեքսանդրապոլում է, իսկ մյուսներն այլ տեղերում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ոչինչ չեմ հասկանում ռազմական գործից, բայց ես ցանկանում եմ հասկանալ արդյո՞ք կիրառելի է, ինչպես դուք ասացիք, 7.000-ից մինչև 30.000-անց հայկական բանակի մեկ կամ երկու զնդի տեղափոխումը Նախիջևան և Կարս: Դրա հնարավորությունը կա՞:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Այդպես չեմ կարծում, սենատոր: Դա պարզապես կարագացնի արյունահեղությունը: Ես չեմ կարծում, որ հայկական բանակն ի զորու է կանգնել թարարների դեմ: Թարարները կուշտ են, նրանք կուշտ են եղել երկար ժամանակ, բացի այդ նրանք լավ զինված են: Այժմ ես կատամեմ ևս մեկ դեպք և դուք ինքներդ կկարողանաք հանգել ձեր եզրակացությանը:

Մենք Ալեքսանդրապոլում կոնֆերանս ունեինք, որին ներկա էր Հայաստանի Հանրապետության նախագահը —

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Նախքան դրան անցնելը, բույլ տվեք ձեզ հարցնել, եթե մենք այնուղ գորք ուղարկենք, մենք դրանք չենք ուղարկելու Միջերկրականից Ալեքսանդրետի և Արանայի ճանապարհով:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Ո՛չ, սըր:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Մենք ինչպես այեւոք է հասցնենք իրանց այնտեղ:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Բարումի և Թիֆլիսի վրայով:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Կոստանդնուպոլիսի նեղուցով և Սև ծովի արևելյան ափով:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Այո, սըր: Դա այս պահին միակ գործնական ձևն է երկիր մտնելու: Փոքր Ասիայով երկաթզիծ չկա: Նրանք պետք է քայլերթով անցնեն Փոքր Ասիայի տարածքներով և դա արդյունավետ չի լինի:

Սենատոր ՆՅՈՒ. Ես քարտեզի վրա երկաթզիծ եմ նկատել դեպի Բարու:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Այո, սըր:

Սենատոր ՆՅՈՒ. Բայց, ըստ երևույթին, այստեղ չկա երկաթուղի Բարումից, ո՛չ արևելք, ո՛չ էլ հարա վ:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Օ՛հ, այո:

Սենատոր ՆՅՈՒ. Դա քարտեզի վրա ցուցադրված չէ:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Այս քարտեզն ավելի լավ ցույց կտա ձեզ երկաթուղին, քան ձեր ունեցածք [ցույց է տալիս մեկ որիշ քարտեզ]: Ահա երկաթուղին: Այն անցնում է այստեղով, վերցրեք այս քարտեզն ու հետևեք դրան [ցույց է տալիս]:

Սենատոր ՆՅՈՒ. Դա հյուսիսի է [ցույց է տալիս]:

Պրեն ԹՈՒԼԻՆ. Այո: Դա անցնում է այդ տեղով լեռների պատճառով: Այն չի կարող ուղիղ անցնել: Այստեղից սկսեք,

այստեղ այն բարձրանում է, և սա միակ առավինյա գիծն է: Ասրա այն գնում է արևելք դեպի Թիֆլիս: Թիֆլիսից մի ճյուղը շարունակվում է արևելքով դեպի Բաքու: Մյուս ճյուղը գնում է հարավ՝ Ալեքսանդրապոլ: Այստեղից էլ մի ճյուղը գնում է արևմուտք՝ Ալեքսանդրապոլից դեպի Կարս:

Մեկ այլ ճյուղ գնում է Ալեքսանդրապոլից ավելի հարավ՝ դեպի Երիվան, այստեղ անընդմեջ շրջանցելով [ցույց տալով], քանի որ այդտեղ շուրջ բոլորը բարձր լեռներ են՝ ամբողջ ձանապարհը դեպի Երիվան և ավելի հարավ՝ դեպի Նախիջևան: Այժմ դա միակ ձանապարհն է այդ երթուրով երկիր ինչ-որ քան հասցնելու համար՝ Բաքում, Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, ապա Կարս՝ մեկ ուղղությամբ և հետո դեպի հարավ՝ Երիվան և Նախիջևան:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այս երկաթուղիները լա վ վիճակում են:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ոչ, դրանք վատրարագույն վիճակում են, մասնավորապես շարժակազմը: Չկա նոր շարժակազմ, իսկ դրանք մաշվել են պատերազմի հինգ տարիների ընթացքում:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Վիճակը բնորոշ չէ, իհարկե, Հայաստանին:

Պրե ԹՈՒԼԻՆ. Ոչ, դա բնորոշ չէ Հայաստանին:

Ինչպես ես ասում էի, Կարս զավառում հիմնականում նույն վիճակն է, ինչ Նախիջևանում, և նրանք պետք է հսկեն այնտեղ ակնկալվելիք կոտորածների պայմաններում, եթե դրանք արդեն չեն իրականացվել:

Մենատոր ՆՅՈՒ. Ի՞նչ է նշանակում «բուրուն» բառը, ես այն տեսնում եմ ամբողջ ափի երկայնքով:

Պրե ԹՈՒԼԻՆ. Դրանք բուրքերեն բառեր են բարտեզի լրա-

Պրե ՄՎԱԶԻՆ. Բուրուն նշանակում է հրվանդան, սարավանդ:

Պրե ԹՈՒԼԻՆ. Սրանք բրիտանական բարտեզներ են բուրքերեն բառերով:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այժմ, կապիտան, մեր ժամանակը շատ արագ է սահմում: Որո՞նք են մեր գործնական անելիքները:

Պրե ԹՈՒԼԻՆ. Գործնական քայլերն են. հսկել հայ ժողովրդի հետ հաղորդակցության միջոցները՝ սա առաջին քանի ն, պաշտպանել հայ ժողովրդին Հայաստանի նշված հատվածում կուռածներից՝ սա երկրորդն է: Երկուսն էլ պահանջում են արևմտյան գորքեր: Իմ կարծիքով, երկուսն էլ կարելի է արյունավետորեն իրականացնել ավելի քիչ զորքով, քան ամերիկյան մեկ դիվիզիայի միջոցով՝ հավանաբար շուրջ 20 000 մարդոց բաղկացած: Ես պատմ եմ 20 000, որովհետև դա այն գորքերի քիվն է, որ բրիտանացիներն ունեն ամբողջ տարածաշրջանում, շատ ավելի ընդարձակ տարածք, քան ես նկարագրեցի: Նրանք գնացել են ուղիղ Բաքու, և մենք ևս, հայանաբար, ստիպված կլինենք գնալ հենց Բաքու՝ ապահովելու վարելիքի մատակարարությունը երկարգիծ գործարկելու համար:

Մենատոր ՈՒԽԻՑԱՍՏ. Եվ ամբողջ երկաթգիծը պաշտպանելու համար նույնպես:

Պրե ԹՈՒԼԻՆ. Այո՛, սըր: Բրիտանացիներն ունեն շուրջ 20.000 զորք, որի կեսից ավելին հնդիկներ են՝ փանջարցիներ⁷⁰, որուար կովող գորքեր չեն: Գուրկիերը⁷¹ հնդկական կովող գորքերն են, իսկ փանջարցիներին նրանք օգուազործում են հարողակցության գծով, հսկողություն կատարելու համար և այլն: Նրանք ունեն ավելի քան 10 000 հնդիկ փանջարցի, որոնք ներառվում են ամբողջ տարածաշրջանում եղած 20 000-անց

⁷⁰ Փանջարցիների (the Punjabis) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

⁷¹ Գուրկիերի (the Gurkhas) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

ամբողջ գորքում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Նկատի ունեք բրիտանացինե՞րը:

Պրես ԹՈՒԼԻՆ. Այո, բրիտանացիները, նրանք պաշտպանում են երկաթուղու հատվածը, և կոսորածներ չեն եղել:

Սենատոր ՆՅՈՒ. Փանջաբին կհսկի, մինչև ստիպված լինի կրակե՞լ:

Պրես ԹՈՒԼԻՆ. Այդպես է:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք այնտեղ բախվե՞լ եք մանդատի վերաբերյալ որևէ քննարկման:

Պրես ԹՈՒԼԻՆ. Այո:

Պրես ՄԱԼՔՈՎ. Ի՞նչ հարցի շուրջ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես հարցեցի նրան, թե արդյո՞ք նա երբեք լսել է Հայաստանի հովանավորության հարցի հանրային քննարկման մասին:

Պրես ԹՈՒԼԻՆ. Կասկած չկա, որ բոլոր հայերը ցանկանում են, որ Միացյալ Նահանգներն ստանձնի խնամակալությունը: Սա ճիշտ է, սակայն, ամբողջ արևելյան բնակչության համար: Ես հանդիպեցի նույն բանին Կռատանդնուպոլսում: Հայերն անշուշտ տեսնում են Միացյալ Նահանգներին որպես իրենց պաշտպանի: Ինչ օգնություն է, որ նրանք ստացել են այսքան ժամանակ Միացյալ Նահանգներից՝ եղել է բրիտանացիների հետ շատ անհրաժեշտ ու արդյունավետ համագործակցությամբ: Թույլ տվեք դա պարզաբանել: Մենք չենք կարող փրկել անգամ մեկ հայի կյանք, եթե այս տարածքում չիներ բրիտանացիների սրտացավ, հավատարիմ և մեծահոգի համագործակցությունը: Նրանք մեզ համար հնարավոր դարձրին այսուրի մատակարարումը: Նրանք տրամադրեցին մեզ գնացքներ, պաշտպանեցին մեզ և այսպես շարունակ:

Սենատոր ՈՒԽԵՍԱՍՏ. Մենք ապրանքներ ենք տրամա-

դում, իսկ նրանք բա՞ց էին պահում ուղին:

Պրես ԹՈՒԼԻՆ. Նրանք բաց էին պահել ձանապարհը: Դա յատ կարուոք էր:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ի՞նչ զիտեք այն մասին, որ բրիտանացիների դուրս բերումն արագացվել է, որպեսզի ստիպեն մեզ անցնել գործողությունների:

Պրես ԹՈՒԼԻՆ. Ես ոչինչ չգիտեմ դրա մասին, սենատոր: Ես պիտք է ասեմ, որ դա փաստ չէ, եթե իմ կարծիքն եք ուզում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Բհարկե, դա ամենն է, ինչ դուք կարող եք ասել:

Պրես ԹՈՒԼԻՆ. Դա ես ասում եմ այն պատճառով, որ բավական ուշադիր դիտարկել եմ այնտեղ տիրող բրիտանական՝ սպիտակ գորքերի վիճակն ու զիտակցված վերաբերմունքը և տրամադրությունները: Ես մանրամասնորեն զրուցել եմ իրավիճակի մասին ու խորհրդակցել բազմաթիվ բրիտանացի բարձրաստիճան սպաների, նրանց բոլոր զիսավոր իրամանատարների հետ, և հանդիպել եմ նաև բազմաթիվ ցածրաստիճան զինվորականների և այլ մարդկանց հետ: Այդ գորքերը շատ հոգնած էին: Նրանք ցանկանում էին տուն գնալ: Այնտեղ մնալը հյուծում էր նրանց: Նրանցից շատերը կովել էին Միջագետքում շուրջ շորս տարի և չեն եղել իրենց տանը: Նրանք չեն տեսել իրենց տները շորս տարի: Դրանք նման չեն արևմտյան ճակատի գորքերին, որոնք մեկնում էին Անգլիա վեց ամիսը մեկ անգամ: Նրանք անապատում և ամայության մեջ են եղել այս ամբողջ ժամանակ, նրանք տուն գնալ էին ցանկանում: Պատերազմն ավարտվել էր: Բրիտանացի բարձրաստիճան զինվորականներից մեծ շանք էր պահանջվում պահելու համար այդ գորքերն այնտեղ և խուսափել անկարգություններից: Ես կարծում եմ՝ սա է բրիտանացիների հեռանալու իրական պատճառը, քանի որ նրանք այլևս չեն կարողանում իրենց

զորքերը պահել այնտեղ: Նրանք չեն ցանկանում մնալ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Դա է պատճառը, որ ամերիկյան մեկ կամ երկու ընկերություն Սպիտակ ծովի երկայնքով շատ մոտ էին ապստամբության:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Ես կարծում եմ դա բավարար պատճառ է:

Ավարտելոց առաջ ցանկանում եմ մի քան ասել հաղորդակցման գծի պահպանման վերաբերյալ, սենատորներ: Հաղորդակցման այդ գիծն անցնում է Վրաստանի տարածքով: Այժմ, իմ կարծիքով, հայերը նույնքան վտանգված են վրացիների, որքան թաթարների կողմից: Երկու ազգերն ատում են միմյանց այնպիսի ատելությամբ, որն այստեղ ընդհանրապես չի եղել: Դուք ոչ մի պատկերացում չունեք այն ատելության մասին, որ կա աշխարհի այդ մասում: Դա ոչ միայն ազգային ատելություն է, այլև անձնական՝ այս և այն ազգի յուրաքանչյուր անհատի միջև:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Դա ժառանգված ազգային և կրոնական ատելությո՞ւն է:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Այո, սը՝ թ, և իին քեները վերականգնվում են: Եվ եթե այնտեղ չինեն երկաթուղին և այդ երկաթուղով Բարումից Ալեքսանդրապոլ ուղարկվող սնունդը պահպանող գորքեր, այդ սնունդը, որ մենք ուղարկում ենք այնտեղ հայերի կյանքը փրկելու համար, երբեք տեղ չի հասնի: Ես իրոք կարծում եմ, որ դա շատ ավելի կարևոր է, քան կոտորածերը կանխարգելելը, թեաւտ դա ևս բավականաշափ կարևոր է: Բայց դա շատ ավելի պարզ խնդիր է, քան կոտորածներ կանխարգելելը: Օրինակ, Բարումում ամերիկյան գորքի մի գումարտակի ու տեղտեղ կիսակայարաններում մեկական դասակների և Թիֆլիսում հավանաբար մի քանի գումարտակների գուտ ներկայությունը կերաշխավորի այդ երկաթուղու աշխատանքը և խնդրները կշրջանցվեն:

Սենատոր ՆՅՈՒ. Դուք բնիկ ամերիկացի՞ եք:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Ո՞՛չ:

Սենատոր ՆՅՈՒ. Ո՞՞ն է ձեր ազգությունը:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Ես ծնվել եմ Ռուսաստանում:

Սենատոր ՆՅՈՒ. Այսինքն, դուք ո՞՞ւ եք:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Այո՛, սը՝ թ:

Սենատոր ՆՅՈՒ. Ռուսաստանի ո՞՞ հաստվածից:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Ես ծնվել եմ Գրոդոնյի շրջանում: Ինձ բերել են այստեղ, երբ ես երեխա եի:

Սենատոր ՆՅՈՒ. Ես պարզապես հարցրի, քանի որ ձեր անունը և մնացած ամեն ինչը մատնանշում էին օտար ծազում:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Ես հայ չեմ:

Սենատոր ՆՅՈՒ. Ո՞՛չ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Դուք ցանկան՞ւմ եք կապիտանին որեւէ այլ հարց տալ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ո՞՛չ:

Սենատոր ՆՅՈՒ. Ո՞՛չ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Սա շատ հետաքրքիր է, բայց մենք պետք է շտապենք մեր սահմանափակ ժամանակի պատճառով: Ունե՞ք առաջարկելու որեւէ այլ քան, կապիտան ն:

Պրե ԹՈՒԼԻԻՆ. Ո՞չ սը՝ թ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Մենք շատ պարտական ենք ձեզ՝ ձեր վկայության համար:

ԳԵՆԵՐԱԼ ԱՐՄԵՆ ԹՈՂԳՈՍԻ⁷² ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ առնչությամբ եք դուք հանդես գալիս, գեներալ:

ԳԵՆ. ԹՈՂԳՈՍ. Ես պետք է խոսեմ թարգմանչի միջոցով, քանի որ ես բավարար լավ չեմ խոսում անգլերեն ուղղակիորեն վկայելու համար:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Նրա անգլերենն այնքան էլ բավարար չէ: Նա ազատ խոսում է ֆրանսերեն, քանի որ դաստիարակվել է Ֆրանսիայում: Եթե դուք ցանկանաք, որ ես թարգմանեմ նրա ֆրանսերենն անգլերենի, ես ուրախ կլինեմ:

(Այս պահից սկսած պըն Սվազլին բանավոր թարգմանում է վկայի՝ ֆրանսերենով տրված պատասխաններն անգլերեն):

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ո՞րն է ձեր բաղարացիությունը և զինվորական աստիճանը:

ԳԵՆ. ԹՈՂԳՈՍ. Ես ծնվել եմ Կեսարիայում՝ Կապաղովկիայում: Կեսարիան համարվում է մասն այն տարածքի, որը կոչվում է ավելի փոքր Հայաստան⁷³:

Մենատոր ՆՅՈՒ. Փոքր Հայ՝ թ⁷⁴:

ԳԵՆ. ԹՈՂԳՈՍ. Փոքր Հայք: Ես հայ ազգի ներկայացուցիչն եմ, ծնված՝ որպես հայ և կայսցած որպես հայ:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Նրա՝ վկայություն տալը պահանջում է, որ հանձնաժողովը խախտի կարգը, այնպես չէ: Ըստ կարգի՝ ոչ ոք, քաջի Միացյալ Նահանգների բաղարացիներից, չի կարող վկայություն տալ հանձնաժողովի առաջ: Ես գտնում եմ,

որ մենք պետք է խախտենք կարգը և լսենք նրան:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այս:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք ենթադրում ենք դուրս գալ այսուեղ ծավալվող գործընթացից: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ընդհանուր կանոնն է շսել նրանց, ով Միացյալ Նահանգների բաղարացի չէ:

Մենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ո՞չ դա կանոն չէ, բայց մենք՝ շատ հաջաղեա շեղվել ենք այդ գաղափարից: Ես միջնորդում եմ, որ մենք ընդունենք նրա վկայությունը:

Մենատոր ՆՅՈՒ. Դուք ամերիկյան բաղարացի եք, պըն Սվազլի:

Դրեն ՍՎԱԶԼԻ. Այս՝ սը թ:

Մենատոր ՆՅՈՒ. Մենք կարող ենք խուս տալ դրանից՝ թույլ տալով պըն Սվազլիին հաստատել այն, ինչ գեներալ Թորգոնն է ասում:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Հաշվի առնելով մեր կողմից այս ուսումնասիրության շրջանակի ընդլայնումը, կարծում եմ՝ կարող ենք խախտել կարգը:

Մենատոր ՆՅՈՒ. Կարծում եմ՝ կարող ենք այդպես անել:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք կխախտենք կարգը, եթե ոչ մի առարկություն չկա, և թույլ կտանք գեներալին շարունակել պատմել մեզ այն, ինչ նա ունի ասելու:

ԳԵՆ. ԹՈՂԳՈՍ. Եթե 12 տարեկան էի, Վրիլիկիայում սպանվեց հայրս, և մենք մեկնեցինք Բուլղարիա: Այդ ժամանակ թուղարացիները համակրում էին հայերին, քանի որ իրենք ևս կուտրածների էին ենթարկվել թուրքերի կողմից: Իմ պատանեկության շրջանում ես տարրական կրթություն ստացած Շվեյցարիայում և Ֆրանսիայում: Այնուհետև՝ լինելով Բուլղարիայի բաղարացի այդ ժամանակ, ես գնացի Բուլղարիա՝ անցնելու զինվորական ծառայության: 1903 թ. Բուլղարիայում ես

⁷² Բնագրում՝ Gen. Archayne Torcom: Նրա մասին տես՝ «Ծանոթագրություններ» բաժնում:

⁷³ Բնագրում՝ Smaller Armenia:

⁷⁴ Բնագրում՝ Little Armenia:

ավարտեցի ուզմական դպրոց՝ որպես կրտսեր լեյտենանտ:

1907 թ. ես բուլղարիայի կառավարության կողմից ուղարկվեցի Ֆրանսիա՝ Սուլք-Միքի⁷⁵ ուզմական դպրոցում դասընթաց անցնելու համար։ Այնուհետև ես ծառայեցի շվեյցարական բանակում, դասընթաց անցա շվեյցարական բանակում՝ հեծելազորում։ Լեռնային հրետանիում և հետևակազորում։ Իմ ծառայությունը Շվեյցարիայում նպատակ ուներ ծանոթանալու լեռնային իրադրություններին և դրանց հաղթահարման եղանակներին, քանի որ մենք Բալկաններում այն ժամանակ պատրաստվում էինք բուրքերի դեմ պատերազմի։ Մակեդոնիան փրկելու նպատակով։

1912 թ. հոկտեմբերին պատերազմ հայտարարվեց Թուրքիայի և Բալկանյան երկրների միջև՝ ներառյալ Հունաստանը, Սերբիան և Բուլղարիան։ Ես բուլղարական բանակի կազմում մասնակցեցի բուրքերի դեմ առաջին արշավանքին։ Ես վիրավորվեցի երեք անգամ և արժանացա երկու բուլղարական շքանշանների՝ ներառյալ բարձրագույնը։

Սերբ-բուլղարական պատերազմի նախօրեին ես խորհուրդ էի տալիս բուլղարացիներին դուրս չգալ սերբերի դեմ, քանի որ ես կողմ էի բալկանյան բոլոր քրիստոնյա երկրների համախմբմանը՝ և կոնֆեղերացիա կազմելուն, ինչի կապակցությամբ ժամանակին զիրք եմ գրել ֆրանսերեն լեզվով։ Այդ գրքի մեկ օրինակ ես տվել եմ պրն Սվագիին կարդալու։

1914 թ. ես արեցի հնարավորը հետ պահելու բուլղարացիներին կենտրոնական երկրներին միանալոց Անտանտի դաշնակիցների դեմ, բայց քաղաքական պատճառներով, որոնք այստեղ ներկայացնելու կարիքը չկա, քանի դա շատ ժամանակ կխիլ հանձնաժողովից, բուլղարացիները չհետեւցին իմ խորհրդին։ Այդ ժամանակ ես պաշտոնաթող եղա

րուլղարական բանակից, իսկ այնուհետև՝ միանալով բուլղարացի գեներալ Դեմետրիեֆի⁷⁶, լրեցի Բուլղարիան և միացա ուսական ստորաբաժանումներին ու կովեցի Կենտրոնական երկրների դեմ գեներալ Բրուսիլովի հրամանատարության ներք։

1914 թ. օգոստոսին ես վիրավորվեցի Գալիցիայում։

1915 թ., երբ սկսվեց բուլղարական պատերազմը⁷⁷, ես ետ ուղարկեցի իմ բոլոր բուլղարական շքանշանները Ֆերդինանդ թագավորին և եռանդուն կերպով բողոքեցի նրանց զորդողությունների դեմ և իմ բողոքը հրատարակվեց Եվրոպական թերթերի սյունակներում։

1915 թ. և 1916 թ. ուսական բանակի շարքում, մասնակցելով դաժան մարտերի, ես վիրավորվեցի երկրորդ և երրորդ անգամ՝ Գալիցիայում և Կարպատյան լեռներում։ Ես ծառայեցի ուսական բանակում մինչև 1917 թ. և ստացա ուսական շքանշան։

Մենատոռ ՈՒԽԻԹԱՍՍ. Այժմ, ներկայացրեք մեզ հայկական իրադրության վերաբերյալ ձեր տեսակետը։

ԳԵՆ. ԹՈՐԳՈՄ. 1917 թ. ես գնացի Հայաստան ուզմական ուժ ձևավորելու նպատակով, սակայն ուսական բոլշևիզմի ստեղծած իրավիճակի պատճառով մեզ համար դժվար էր մեր ծրագիրն իրագործել։ Մենք չունեինք փող, չունեինք զինանոց, չունեինք սարքավորումներ, և ոչ մի դաշնակից երկիր չհասավ հանուն օգնության, քանզի մենք բոլոր կողմերից շրջապատված եինք թաթարներով և բրդերով, բուրքերով և վրացիներով։ Այս նպատակով ես կհանձնեմ Սենատին գեկուցում, որը ես ներկայացրել եմ բրիտանական կառավարությանը 1919 թ.

⁷⁵ Սուլք-Միք (բնագրում՝ St. Cyr)՝ ան ս «Ծանոթագրություններ» բաժնում։

⁷⁶ Բնագրում՝ Gen. Demetrieff. Խոսքը Խայլու Դիմիտրիսի մասին է։ Տե՛ս «Սանկույթություններ» բաժնում։

⁷⁷ Գեներալ Թորգոմը նկատի է ունեցել 1915 թ. հոկտեմբերի 14-ին Բուլղարիայի կողմից Առաջին աշխարհամարտի մեջ մտնելն ընդունակ Սերբիայի որպես Գերմանական դաշինքի անդամ։

հունվարին [հանձնեռում է տպագիր փաստաթուղթը...].⁷⁸

Մենասոր ՈՒԽԱՍՍՍ. Սա տպագրված է ֆրանսերեն և վերնագրված է «Հայկական գրառումներ և փաստաթղթեր՝ ուղարկված գեներալ Թորգոնի՝ հայերի առաջնորդի⁷⁹ կողմից: Նոյն գրառումները և փաստաթղթերն ուղարկվել են գեներալ Թորգոնի կողմից Միացյալ Նախանձների, Ֆրանսիայի և Բուլղարի դեսպաններին՝ համապատասխանաբար իրենց կառավարությունների արտաքին գործերի նախարարներին փոխանցելու նպատակով»:

Հանձնաժողովը կցանկանա՞ սոյնի անզերեն թարգմանությունը մտցնել արձանագրության մեջ:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՆ. Խնդրում եմ, պրն նախագահ, թույլ տալ ինձ ներկայացնել անզերենը: Ես պատրաստել եմ նաև թարգմանությունը:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Այդ փաստաթուղթն այստե՞ղ է:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՆ. Այո:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Դա կարող է ընդունել արձանագրության մեջ:

(Քննարկվող փաստաթուղթը չի ներկայացվել՝ արձանագրության մեջ ներառվելու համար)⁸⁰:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՆ. Հաշվի առնելով այն փաստը, որ մենք բոլոր կողմերից շրջապատված էինք տարբեր թշնամիներով, ում ես հիշատակեցի, և որ Ռուսաստանը լրել էր ուղմաճակատը, հայերին տրված պատասխանը սարսափելի էր: Ռիգայից մինչև Սև ծով հայերը տվել էին գրեթե 80 000 մարդ ոռուական բանակին, բայց բոլենիզմը խանգարեց մեզ այդ գորամասերը Հայաստան

տանել, քանի որ տարածությունը շատ հսկայական էր, անհրաժեշտ էին գումար և փոխադրամիջոցներ: Հետևաբար դա աղետ էր:

Ես խնդրեցի Թիֆլիսից ուղարկել ֆրանսիական և անգլիական փրկարար գորքեր, բայց և ֆրանսիացիները, և անգլիացիները բազմաթիվ անելիքներ ունեին ոռուական ճակատում և նրանք չեն կարող մեզ որևէ համարում ուղարկել: Քանի որ ոչ մի երկիր չէր գալիս մեզ օգնության, 1918 թ. հունվարին մենք ընդունեցինք, որ այդ ժամանակ մեր թերևս միակ դաշնակիցը ձյունն էր, որը ծածկում էր Հայկական բարձրավանդակը:

Թույլ տալ ինձ մի փոքր գրասենյակ ունենալ և մի մարդ, ով կարող է թարգմանել իմ նախազիծը, մենք կարող ենք կազմավորել այսուեղ մեկ դիվիզիա՝ կազմված երեք զնդից⁸¹:

Այս պայմաններում էր, որ մենք միացանք՝ հավաքվեցինք Երգրումում, այնքան, որքան կայինք՝ բոլոր հայերով և առկա ամբողջ զորքով ու հոչակեցինք Հայաստանի անկախությունը: Մենք դա արեցինք՝ շնայած այն փաստին, որ գտնվում էինք նման անբարենպատ վիճակում, մենք ստիպված էինք դա անել հանուն վերջինիս բարոյական ազգեցության: Մենք պետք է դա անենք ապագա սերունդների համար և հանուն պատմության, և մենք արեցինք դա՝ զենքը ձեռներիս: Մենք արեցինք դա, քանի որ շնայած խիստ զիջում էինք թշնամուն, մենք չենք ցանկանում որևէ

⁷⁸ Պոլդանկյուն փակագծերը համաձայն բնագրի:

⁷⁹ Բնագրում՝ chief of the Armenian men:

⁸⁰ Փակագծերում տեղ գտած տեղեկությունը ներկայացված բնագրի տեքստում:

⁸¹ Պորբատառվ սկսվող մեկ նախադասությունից բաղկացած սոյն պարբերությունը, որը բնագրում (էջ 57) տեղ է գտել գեներալ Թորգոնի վկայության հենց այդ հաստվածում, շեղատառվ ներկայացվել է մեր կողմից ընդգծելու նպատակով, քանի որ նշված նախադասությունն ամենին տեղին չէ՝ համատեսատից դուրս է: Կարծում ենք, որ վերջինիս ձիշտ տերում ընդունված չինելը տեխնիկական՝ սղագրական վրիպում է (հավանաբար, արձանագրությունների սղագրության մաքրագրման ընթացքում թույլ տրված):

հարաբերություն ունենալ այդ թշնամու հետ, քանի որ զիտեինք, որ այստեղ՝ Ամերիկայում, մենք մի օր կգտնենք ընկերներ, ովքեր կհասկանան, որ այդ անկախությունը գնահատված էր քսա արժանվույն:

Ամենը, ինչ ես ցանկանում էի ասել այժմ, այն է, որ հայերն արել են այս ամենը, ինչն ի վիճակի էին՝ կովկել խիստ քաջարար հաշվի առնելով ամբողջ միջավայրը:

Սենատոր ՆՅՈՒ. Թույլ տվեք մի առաջարկ անել: Մենք դեռևս գրեթե 12 րոպե ունենք այս առավոտ: Սա շատ, խիստ հետաքրքիր է ինձ համար և ես կցանկանայի, որ մեր տրամադրության տակ եղած ժամանակում, գեներալը հանձնաժողովին պատմեր, թե իր կարծիքով ի՞նչ է այժմ անհրաժեշտ անել Հայաստանում:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Այո, այս կապակցությամբ: Ձեր գաղափարներն այդ թեմայի վերաբերյալ շարադրված են այստեղ՝ այս տպագրված փաստաթղթի այս էջում՝ տպագրված ֆրանսերեն, հասցեազրկած «Նորին Գերազանցությանը»:
(Սենատոր Ուիլյամը կարդաց փաստաթղթի քննարկվող հատվածը ֆրանսերեն):

Սա այն է, ինչ դուք նկատի ունեք, այնպես չէ?

ԳԵՆ. ԹՈՐԳՈՒ. Այո՛, ամեն ինչ ճիշտ է:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Դրա անզերեն տարբերակն այստեղ է:

ՊՐԵ. ԹՈՒԼԻՆ. Այնտեղ թարգմանված չէ, ո՛չ բայց գեներալն արդեն թարգմանել է տվել դա, որը նա ունի:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՒ. Ես միայն ձեր թույլտվության կարիքն ունեմ այն ներկայացնելու համար:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Դուք կարող եք հանձնել այս փաստաթղթերի անզերեն թարգմանությունը սղագրողին և դրանք արձանագրության մաս դարձնել:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Այստեղ մի քան կա, որի վրա ցանկանում եմ ուշադրություն հրավիրել: Այստեղ՝ ութերորդ հոդվածում նշվում է, և ես կկարդամ դա ֆրանսերեն, որ (սենատոր Ուիլյամը կարդաց քննարկվող հատվածը ֆրանսերեն):

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Դա Հայաստանի կողմից թուրքական պարտքի իր համամասնական մասն ընդունելու խոսուում է ընդգրկում:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՒ. Այո, եթե մենք ունենանք մեր անկախությունն ամբողջությամբ:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Որպես անկախության առաջարկության հիմնական մաս՝ նա (Հայաստանը – Ա. Ղ.) ցանկանում է ունենալ իր բաժինը՝ որքան որ փոխհատուցման հանձնաժողովը կվճռի՝ որպես իրեն պատկանող, և նա ցանկանում է վճարել թուրքական պարտքի իր մասը: Ես գտնում եմ, որ իրապես կարենք է:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՒ. Եթե թույլ տաք, ես այժմ կպատասխանեմ ձեր հարցին, իսկ ինչ վերաբերում է այս մյուս հարցերին, կարող ենք դրանք բոլոնել հաջորդ հանդիպմանը:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Դուք պարզապես կարող եք ներկայացնել այն գրավոր:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Զերնարկված միջոցը վերաբերվում է Միացյալ Նահանգներում Հայաստանից եկած հայերից կազմված բանակի կազմակորմանը:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՒ. Ամեն ինչ ճիշտ է:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Ես ցանկանում եմ անդրադառնալ այդ նախաձեռնության հնարավորություններին:

⁸² Ամերիկան չի կարող ուղարկել իր գորքերը միանգամից:

⁸² Մեր կարծիքով (հավանաբար աղաքարական վրիպում է) քննարկում բաց է բողնիված այս պարբերության սկիզբը՝ «ԳԵՆ. ԹՈՐԳՈՒ» բառերը: Այն է

Հետևաբար նա պետք է անի պահանջվող ամեն քանի քրիտանացիներին համոզելու համար՝ թողնել իրենց գործերն այնտեղ, և ավելացնել նրանց թիվը, մինչև մենք կկարողանանք կազմավորել այս գորամասերը, ինչի վերաբերյալ ես պատրաստվում եմ հանձնաժողովին ներկայացնել իմ նախագիծը։ Դա առաջին հարցն է, թե ի՞նչ պետք է արվի անհապաղ։

(Այս առումով՝ կորցնելու ոչ մի օր չկա։ Մենք կիսունք քաղաքական պայմանների վերաբերյալ ավելի ուշ, իսկ այս մասին՝ անհրաժեշտ է փրկել երկիրն առանց երկար քննարկումների՝ գործելով, և ես վստահ եմ, որ այս երկրում, որ այդպես լավ քննարկվում են և ընդունվում հզոր օրենքներ, այս անվեհեր որոշումը կընդունվի։ Ես վստահ եմ, որ Ամերիկան դաս կտա Հին աշխարհին՝ գործողություններ ձեռնարկելով։

(Այս կետից սկսած մինչև իր վկայության ավարտը գեներալ Թորգոմը վկայություն տվեց անզերենով՝ առանց բարգմանչի օգնության։)

Հայաստանում ամբողջ քնակչությունը ներկա չէ, քանի որ մեր երկիրը մեր սեփական ձեռքերում չէ։ Մենք Կովկասում և Բալկաններում ունենք 1 000 000 քնակչություն։ Մենք այդ քնակչությունը կկենտրոնացնենք Հայաստանում։

Խնդիրը կլուծվի, եթե այսնեղ գորքի մեկ դիվիզիա ուղարկվի կամ այնպես արվի, որ անզիացիները դադարեցնեն գորքի դուրս բերումը և պահեն քրիտանական դիվիզիան Հայաստանում, այնուհետև՝ անհապաղ կազմավորեն Միացյալ Նահանգներում, Կանադայում, Բալկաններում, Եգիպտոսում և

նշված և հաջորդող երեք պարբերությունները գեներալ Թորգոմի վկայության մասն են կազմում։ Դա ակնհայտ է ոչ միայն շարադրանքի համատերամից, այլև այն հանգամանքից, որ երկրորդ պարբերությունից հետո քնազում առկա է փակազծերում տրված հետևյալ մեջքերում. «Այս կետից սկսած մինչև իր վկայության ավարտը գեներալ Թորգոմը վկայություն տվեց անզերենով՝ առանց բարգմանչի օգնության։»

այլ վայրերում գտնվող հայերին և տանեն այնտեղ։ Կապիտան Թուլինը փաստեց, որ նրանք ունեն շուրջ 10 000 մարդ, բայց միայն 6000-ը՝ կազմակերպված, քանի որ նրանք չունեն գումար, սնունդ և սարքավորումներ։

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Ես տեսնում եմ այս գրության մեջ, որը դուք ուղարկել եք դաշնակից տարբեր երկրների նախարարներին, որ դուք հայցել եք, որպեսզի ֆրանսիական, քրիտանական, ամերիկյան և այլ բանակներում ծառայող հայերին թույլ տրվի միավորվել հայկական գորամիավորումներում։

ԳԵՆ. ԹՈՂԳՈՄ. Այս, սը՝ թ, դա մեր իրավունքն է, և ես վստահ եմ, որ եթե չինեին Հին աշխարհի բանսարկությունները, պատերազմի ընթացքում մեր տված գոհերը ճանաչված կլինեին։

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Միջազգետքում քրիտանացիների հետ ծառայող հայեր կայի՞ն։

ԳԵՆ. ԹՈՂԳՈՄ. Այս, սը՝ թ, հազարավոր։

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Իսկ Ֆրանսիայում ամերիկյան գնդերում հայեր կայի՞ն։

ԳԵՆ. ԹՈՂԳՈՄ. Հազարավոր։

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Իսկ Ֆրանսիայում ամերիկյան գնդերում հայեր կայի՞ն։

ԳԵՆ. ԹՈՂԳՈՄ. Այս, սը՝ թ, հազարավոր։

Մենասոր ՈՒԻՒՅԱՍՍ. Դուք ցանկանում եք, որ արձանագրվի՝ եթե հնարավոր է, որ այդ տարբեր դրոշների ներք ծառայող բազմազան հայ զինվորները կարողանան միավորվել մեկ հայկական կորպուսի մեջ՝ որպես հայկական բանակ։

ԳԵՆ. ԹՈՂԳՈՄ. Դա առաջին հերթին, բայց մենք չունենք գումար, մենք չենք կարող Փարիզում ստանալ 10 000 000 դոլլար մեր պրոպագանդայի համար։ Դա է ամբողջը։ Ես կարծում եմ այսուեղ՝ Միացյալ Նահանգներում՝ ազատ Ամերիկայում, հնարավոր կլինի այս դժբախտ երկրին մի փոքր օգնություն

ցուցաբերել՝ այն առանց հապաղելու փրկելու համար:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Դուք ցանկանում եք, որ մենք պարզենք ամերիկյան դրոշը և հայերին համախմբէ՞նք դրա շուրջ

ԳԵՆ. ԹՈՐԳՈՄ. Այդպիս շատ լավ կլինի: Այժմ, երկրորդ հարցի վերաբերյալ, ես մի փոքր հայտարարություն ունեմ ձեզ համար: Ես խնդրում եմ ձեզ թույլ տալ ինձ՝ համագործակցել ձեր հանձնաժողովի հետ: Ես այստեղ եմ համագործակցելու համար, եթե դուք ցանկանաք⁸³

ԳԵՆ. ԹՈՐԳՈՄ. Ինչ վերաբերում է առաջին և անհապայ անելիքին, ես նույն կարծիքին եմ, ինչ կապիտան Թուլինը, այն է առանց հետաձգելու բավարար գորքեր ուղարկել Հայաստան զիջը (Երկարութին – Ա. Ղ.) պահելու համար, քանի որ առանց հաղորդակցման այս միջոցների պահպանման օգնությունը չի կարող հասնել հայերին: Եթե այն հայերը, ով այստեղ են... Մենք ունենք 120 000 հոգի Ամերիկայում, որոնցից գրեթե 40 000-ի ամուրի տղամարդիկ են՝ 20-45 տարեկան, և Կանադայում և այլ վայրերում իմ ճամփորդությունների ժամանակ ես տեսել եմ հայերի, բազմաթիվ հայերի, ովքեր պատրաստ են զեալ Հայաստան: Միակ խնդիրը կազմավորման հարցն է և գումարի հարցը:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Ես ասում եմ ձեզ՝ ինչ անել: Դուք կարող եք գրավոր կատարել ձեր ցանկացած հայտարարությունը, և դուք, պրն Սվազի թարգմանեք այն անզերեն նրա համար,

⁸³ Մեր կողմից շեղատառով առանձնացրած այս նախադասությանը բնագրում շունի վերջակետ: Մեր կարծիքով՝ այն անավարտ է: Այստեղ հավանաբար, որպես շարունակություն պետք է տեղ գտներ՝ մեր կողմից արդեն ընդգծված, սույն աշխատության էջ 149-ում փորբառով սկսվող և տվյալ տեղում բովանդակությանը չհամապատասխանող հետևյալ պարբերությունը, թույլ տալ իհեծ մի փոքր գրասենյակ ունենալ և մի մարդ ով կարող է թարգմանել իմ նախագիծը, մենք կարող ենք կազմավորել այստեղ մեկ դիվիզիա կազմված երեք զեղից:

որպեսզի նա հանձնի դա սղագրողին: Դա բավարար է, այնպես չէ՝ պրն նախազահ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԶ. Այո:

Սենատոր ՆՅՈՒ. Այստեղ նաև գեներալի կողմից հանձնաժողովի իրազեկության համար արված զաղանի գեկուցումն է: Ես առաջարկում եմ, որ այն հանձնաժողովի արձանագրության մաս դարձվի, բայց, այնուամենայնիվ, չիրապարակվի: Ես կարծում եմ, այն պետք է զաղանի պահիվ:

Եվ հետո, այստեղ նաև զաղտնի պայմանագրեր կան՝ կերպած Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև՝ Ասիական Թուրքիայում ազգեցության գոտիների վերաբերյալ, և ևս կարծում եմ, որ կոմիտեն պետք է դրանք ունենա:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՄ. Ես կարծում եմ, որ դա բացահայտվել է նախ Ռուսաստանի անկման, և երկրորդ, Ֆրանսիայի հրաժարականի միջոցով:

(Վերջին նշված փաստաթղթերը ներկայացվել են հանձնաժողովի գրագրին)⁸⁴:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՄ. Ես կավարւեմ մեկ բառով: Մենք կարող ենք գորքի մեկ դիվիզիա ստեղծել Միացյալ Նահանգներում, մեկ բրիգադ՝ Կանադայում: Եթե ես այնտևու էի, նրանք եկան ինձ մոտ և դիմեցին Հայաստան գնալու խնդրանքով: Նրանք գորացրված սպաներ են: Այժմ մենք ունենք գրեթե երեք դիվիզիա Կովկասում, Բալկաններում, Ֆրանսիայում, Անգլիայում, Սիրիայում և Եգիպտոսում: Եթե մենք ունենանք չորս դիվիզիա՝ այդ մարդկանցից կազմված, մենք կկազմավորենք 80 000 մարդ և կկարողանանք գրավել բոլոր հայկական տարածքները, և կլինենք ազատ դաշնակից՝ ազատ փոքր երկիր, և մենք դրա համար պարտական կլինենք Ամերիկայի Միացյալ Նահանգներին, և դուք

⁸⁴ Փակագծերում տեղ գտած տեղեկությունը բնագրի տեքստ է՝ մեր կողմից ներկայացված բացարձություն չէ:

այլևս ոչինչ չեր լսի կոտորածների մասին: Այլևս չեն լինի քրդեր վրացիներ, կոտորածներ: Եթե քրդերն իմանան, որ մենք դիվիզիոն ունենք, նրանք կդառնան մեր բարեկամները, և թաթարները նույնպես: Մենք բարբարոս ազգ չենք: Մենք շատ վայրերում մեծ թվով բուրք բնակչություն ունենք, բայց եթե մենք ունենանք 10 000-ոց կամ 5000-ոց գորք, այլևս կոտորածներ չեն լինի: Մենք խնդրում ենք ամերիկյան պետությանը՝ հնարավորություն տալ մեզ սեփական գործերը վերահսկելու: Անհրաժեշտ է գումար և կազմակերպում:

Մենասոր ՈՒԽԱՍՍՍ. Եվ գենք ու զինամթե՞ք:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՍ. Այո:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Ինչպես հասկանո՞ւմ եմ՝ բացի այդ բանակի կազմավորման բույլտվությունից այս երկրում, դուք ցանկանում եք, որ այն ֆինանսավորվի այստեղ:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՍ. Այո:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Ո՞ւմ կողմից:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՍ. Ես կարծում եմ՝ պետությունը, ամերիկյան կառավարությունը, կազմավորելու համար մեզ բավարար չափով գումար կտա, ինչպես հարավսլավացիներին⁸⁵, ինչպես չեխերին⁸⁶: Ինչո՞ւ ոչ, նույնը՝ հայերի դեպքում: Եթե մենք գինագրավենք մեր տարածքները, մենք կարող ենք բավարար անվտանգություն երաշխավորել գումարի համար:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Սա եենց այն կետն է, ինչին ցանկանում եմ հասնել՝ արդյո՞ք դուք ձգուում եք, որ ամերիկյան կառավարությունը ֆինանսավորի ձեր ձեռնարկումը, թե՞ ցանկանում եք բույլտվություն ստանալ՝ դրա համար ֆինանսավորում գտնելու Հայաստանի բարեկամների շրջանում:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՍ. Իմ սիրելի՝ նախագահ, կա երկու

եղանակ: Թող ամերիկյան կառավարությունն անի դա և մենք կապահովենք այն ամենը, ինչի կարիքն ունենք այս բանակի կազմավորման համար, թերևս հարյուր միլիոն դոլլար կամ երկու հարյուր միլիոն դոլլար, և մենք հայկական տարածքում լիարժեք անվտանգություն կունենանք, կամ, եթե յուրաքանչյուր ամերիկացի, յուրաքանչյուր կապիտալիստ տրամադրի անհրաժեշտ գումարը: Բայց, ամեն դեպքում, ես կարծում եմ՝ Ամերիկայում ուղի կգտնվի:

Մենասոր ՈՒԽԱՍՍՍ. Ինարկե, Հայաստանի

Հանրապետությունը չի կարողանա թողարկել կամ բաց թողնել որևէ պարտատում, մինչև չձեւավորվի և չձանաշվի աշխարհի կողմից: Ոչ մի կապիտալիստ ներդրում չի անի նորահայտ, չձանաշված երկրի պարտատումներում:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՍ. Առաջին գործը, որ պետք է արվի, բանակի կազմավորումն է:

Մենասոր ՈՒԽԱՍՍՍ. Այո, դա ակնհայտ է: Այսպիսով, սրբն նախագահ, այս ըմբռնմամբ, որ գեներալը կկարողանա պատրաստել իր զեկուցումը ֆրանսերեն կամ հայերեն, որը կիրարգմանվի անգլերեն և կիանձնվի սղագրողին ավելի ուշ, կարծում եմ՝ մենք կարող ենք ընդմիջել:

ԳԵՆ. ԹՈՐԳՈՍ. Ես այստեղ եմ, բայց ես չգիտեմ ձեր լեզուն, և իրողությունն այն է, որ ես ունեմ բոլոր փաստաթղթերը և կրեմ, ինչն անհրաժեշտ է ձեզ համար: Ես հոյս ունեմ դուք ինձ հնարավորություն կտաք աշխատելու ձեզ հետ՝ Հայաստանի համար: Ինձ պետք է մի փոքր գրասենյակ և երկու կամ երեք աշխատակից:

(12:10 կեսօրին ենթահանձնաժողովը ցրվեց մինչև 1919 թ. հոկտեմբերի 10-ը՝ ուրբաթ առավոտյան 10:30):

(Նշանակած զեկուցումը չի ներկայացվել գեներալ Թորգոսի

⁸⁵ Բնագրում՝ Jugo-Slavs:

⁸⁶ Բնագրում՝ Czecho-Slavs:

կողմից)⁸⁷:

(Հայաստանի անկախության հոչակման մասին փաստաթորի անգլերեն թարգմանությունը՝ ներկայացված գեներալ Թորգոնի կողմից արձանագրության համար, ամբողջությամբ տպագրվել է արձանագրության մեջ՝ ինչպես ներկայացված է ստորև):⁸⁸

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՄԱԳԻՐ
ԿԱՐԻՆ (ԷՐԶՐՈՒՄ), 31 ՀՈՒՆՎԱՐԻ (13 ՓԵՏՐՎԱՐԻ), 1918 թ.,
ԶՈՐՔԻ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ⁸⁹**

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայկական ժողովրդական առասպելը, որն այնքան թանկ է մեր սրտերին, ներկայացնում է Բարելոնյան աշտարակաշինության ժամանակաշրջանը՝ որպես մեր ազգի առաջացման և առաջին անկախության ժամանակաշրջան:

Հայկը, ում անունը մենք կրում ենք, չկամեցավ ենթարկվել գոռող Բելին և հեռացավ Բարելոնից: Ու երբ այս բռնակալ

⁸⁷ Փակագծերում տեղ գտած տեղեկությունը բնագրի տեքստ է՝ մեր կողմից ներկայացված բացատրություն չէ:

⁸⁸ Փակագծերում տեղ գտած տեղեկությունը բնագրի տեքստի հատված է՝ մեր կողմից ներկայացված բացատրություն չէ:

⁸⁹ Ա. Թորգոնի և Հայաստանի անկախության երգումի հոչակագրի մասին տես՝ Ղամբարյան Ա., Հայաստանի անկախության երգումի հոչակագրը // «Պատմաբանական հանդես», 2018, թիվ 3, էջ 258-263; Ghambaryan A., The Erzrum Proclamation of Independence of Armenia (February, 1918) in the US Senate (October, 1919) // «Բաերեն հայագիտության», 2019, թիվ 1, էջ 5-17:

տիրակալը հետապնդեց «Նահապետին», Հայկը խիզախորեն նրան ընդառաջ գնաց և սպանեց նրան Վանա լճի մերձակայրում՝ Հայերի հովիտ (Հայոց Զոր)՝ կոչվող շրջանում:

Այսպիսով, ազատության և արդարության գաղափարն է ուղղորդել մեր ժողովրդի ծագումը, և այս գաղափարը հարթանակեց:

Բայց պայքարի միջոցով էր, որ իին հայերը ձեռք բերեցին իրենց անկախությունը: Եվ կրկին պայքարի միջոցով է, որ ավելի քան քառերի ընթացքում Մեծ Հայքը և Փոքր Հայքը, իսկ քան դարերի ընթացքում այնքան փառական է օքտոբերի կամաց առաջնային ազգային հայությունը, որն այնքան փառական է առաջնային ազգային հայությունը, ինչնակազմակերպվել և զարգացել են:

Հայ ազգի գոյությունն ամփոփված է մեկ բառում՝ Գյումարտ⁹⁰: Մշտական շրադարող պայքար, հաճախ հայրական, ավելի հաճախ անհավասար և վշտակի, քանի որ բոլոր թշնամիները Հայաստանի շուրջ բազմաթիվ են: Սակայն հաջողության փուլերի ընթացքում, ինչպես նաև ամենասարսափելի անհաջողությունների շրջաններում, երբ ամեն ինչ թվում է կրօած, հավատը չի լրում հայերին, և հայերը չեն հրաժարվում պայքարից:

Այսպես է դարերի վայրիվերումները ձեղքելով աշխարհի ամենահնագույն ազգերից մեկը վերապրել շատ այլ հզոր ազգերի, որոնք պայքարել էին նրա դեմ:

1375 թ. ապրիլի 16-ին Կիլիկիան՝ Հայկական տիրապետությունների զարդը և մեր անկախության ապաստանը, ընկալ թշնամու հարվածներից:

Ենթարկվելով կոպիտ ուժին, բայց երբեք չենազանդվելով՝

⁹⁰ Փուկագծերը՝ համապատասխան բնագրի (Haiotsz Tzor):

⁹¹ Շեղատառը տեքստում որպես ընդգծում մեր կողմից չէ՝ այն համապատասխանում է բնագրին:

հայ ժողովուրդը երբեք չպատվազրկեց իրեն:

Հպարտ իրենց բարոյական անկախությամբ և վստահ իրենց ապագայի հանդեպ՝ հայերը հինգուկես դարերի ընթացքում շարունակել են իրենց պայքարը հանուն ազատության:

Այս պայքարի վերջին փուլն ստիպեց ամբողջ աշխարհին ցնցվել սարսափից և հուզվել հիացմունքից:

Ոչ մի գրիչ, ոչ մի բառ չէր կարող նկարագրել հայերի սահմուեցնող նահատակությունն այս վերջին քառասուն տարիների ընթացքում։ Որպես անմեղ զոհ, հայ ժողովուրդը հառաջել և տառապել է կառավարման այդ ամենաբարբարու ձևի թուրքական վարչակարգի տակ։

Մի իրեշավոր կառավարություն, որը ստանձնել էր պարբերական կոտորածների և զանգվածային տեղահանությունների միջոցով մեր ազգի ոչնչացումը։

Բոսֆորի ափերից մինչև Կովկասի սահմանագիծ և Սև ծովից մինչև Միջերկրական՝ հայ արյունը թափվել է հեղեղի պես։

Չորս տարի է, ինչ Գերմանիան հրահրեց համընդհանուր պատերազմ՝ աշխարհի գերյաշխանությունը որոշելու համար, և ինչպես Բելզիան, Լեհաստանը, Սերբիան, Մոնտենեգրոն իրենց կամքից անկախ նետվել էին արյունալից ասպարեզ, նոյն կերպ Հայաստանն արժանացավ դաժան վերաբերմունքի։

Մեր եղբայրներից և բոլյերից հարյուր հազարավորները ստորաբար կոտորվել են, այլք դանդաղ մահ են գտել Սիրիայի և Միջազգետքի անապատներում։

Հայաստան երկիրը՝ ժամանակին այնպիս ծաղկուն, այժմ վերածվել է ավերակների և ավերածությունների երկրի։

Ինչպես ծաղկուն անտառ, որը վանդալները երազում էին հատել, հայ ազգն անխղճորեն ոչնչացվել է։

Այս ազգը տեսել է իր շուրջն ընկնող զավակների սարսափելի քանակը։ Բայց անտառի կոճղերից նոր շիվեր են ծլել.

որոնք արդեն բարձրացրել են դեպի երկինք իրենց դալար ճյուղերը՝ լի կյանքով։

Հայ ազգը, չնայած իր կրած ամրող անարդարությանը, չնայած բոլոր կոտորածներին, բոլոր դաւաձանություններին, կատարյալ լրվածությանը, չէր ցանկանում մահանալ։

Այդ ազգը կապրի։

Չնայած մեր սրտերը կծկվեցին Ռուսաստանի հսկայական ողբերգությունից, ինչը կարվածահար արեց մեր ուժը, մենք՝ հայերս, այսուամենայնիվ, նետվեցինք առաջ, թեկուզ և քիչ բոլոր կողմերից, դեպի մեր հին հայրենիքը՝ պաշտպանելու մեր ժողովրդի խղճահար մնացորդները, այն ժողովրդի, որը չի հուսահատվի, և սպասել է հինգուկես դարերի ընթացքում տառապելով և արյան մեջ լողալով, իր վերջնական ազատազրման ժամին։

Այսօր այդ ժամը, ի վերջո, եկել է։

Հայ ժողովրդի անունից, բոլոր նահատակների անունից, ովքեր տառապել են մեր երկրում, արդարության, իրավունքի և ազատության ամենասուրբ սկզբունքների անունից են՝ զնդապես Թորոզնու, հայկական կորպուսի հրամանատարս և Կարինի (Երզրումի)⁹² կայազորի պետս, այսօր ձեր առաջնորդը, վաղը՝ ձեզ հավասարը, հոչակում եմ Հայաստանի անկախությունը։

Կեցցե՛, ազատ Հայաստանը։

Կեցցե՛, հայկական բանակը։

Կեցցե՛ հայ ազգը։

Կեցցե՛ մեր մեծ և ազնիվ Դաշնակիցները։

Կեցցե՛ նրանց փառավոր զինուժը։

Վա՛ նրանց, ովքեր կհամարձակվեն ձեռք բարձրացնել մեր ծնվող ազատության վրա։

⁹² Փակազգերը՝ համապատասխան բնագրին։

Կարին (Երզրում), 31 հունվարի (13 փետրվարի), 1918 թ.
Գնդապետ Թորգոն

Այս փաստաթղթի ընթերցման արարողությունից հետո իմ
հայկական կորպուսի սիրելի զինվորներն ինձ ողջունեցին որպես
«Հայաստանի առաջին գեներալ»:

Ես ընդունեցի այս կոչումն ուրախությամբ և
հպատությամբ:

ԳԵՆԵՐԱԼ ԹՈՐԳՈՆ

Այսուղի հաջորդում են ստորագրությունները⁹³:

Ա. Արշակոնի

Կարնո համայնքի հայ քահանա

Ս. Անանյան

Կարինում Հայաստանի պաշտպանության խորհրդի նախագահ

Օ. Արիստագեսյան

Ս. Քերիլյան

Կ. Թուրիքյան

Ս. Աբդալյան

Բ. Ախիլյան

Ն. Մելիքյան

Հայաստանի պաշտպանության խորհրդի և նահանգային

պատվիրակությունների անդամներ

Ն. Բուլույյան

Ռ. Նիքահյան

Դ. Աղասի

Ն. Փիրումյան

Հայկական տարբեր կոմիտեների և նահանգային
պատվիրակությունների անդամներ
Հարքի Փաշա

Քաղաքային խորհրդի փոխնախագահ

Համոյի Էֆենոյի

Քաղաքային խորհրդի անդամ

Թուրք բնակչության ամենավեհ անդամներ
Հայերեն օրիգինալի վավերացված իսկական պատճենը

Փոխգնդապետ Դ. Դավիթյան

Հայկական ուսումնական առաքելության գրասենյակի պետ

⁹³ Ստորագրություններն ամրապնդող ազգանուններն ընդգրկված են
գեներալ Թորգոնի ներկայացրած հոչակագրի տեքստում: Շարադրանքի
շեղագիր հատվածները համապատասխանում են բնագրին:

ԽԱՂԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՈՒՐԳԱԹ, ՀՈԿՏԵՍՔԵՐԻ 10, 1919

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԵԽԱՏ,
ԱՐՏԱԶԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԹԱԾԱՆԱԺՈՂՈՎ
Վաշինգտոն Կ. Ը.

Ենթահանձնաժողովը՝ համաձայն հետաձգմանը հանդիպեց 10:30-ին, Կապիտոլիումում՝ Ֆիլիպինների հարցերով հանձնաժողովի սենյակում, սենատոր Ռուրեն Գ. Հարդինզի նախագահությամբ:

Ներկաներ. սենատորներ Հարդինզ (նախագահ) և Ռիվյամս:

ՆԱԽԱԳԱՀ. Այժմ մենք կլսենք պրն Սմիթին:

ՊՐՆ ՌԻՌԼԹԵՐ ԶՈՐՉ ՍՍԻԹԻ⁹⁴ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մենատոր ՀԱՐԴԻՆԶ, Խնդրում եմ սղագրողին ասեք ձեր անունն ու առնչությունը և այլ տվյալներ:

ՊՐՆ ՍՍԻԹ, Իմ անունն Ռուլքեր Զորջ Սմիթ է: Ես Ֆիլադելֆիայի փաստարանների կոլեգիայի անդամ եմ և Մերձավոր Արևելքում օգնության հանձնակատարներից:

⁹⁴ Բնագրում՝ Walter George Smith:

Մենատոր ՀԱՐԴԻՆԶ. Դուք Ամերիկայի Փաստաբանների ասոցիացիայի նախկին նախագահն եք, կարող եք դա ևս ավելացնել:

ՊՐՆ ՍՍԻԹ. Լավ, դուք կարող եք դա փակազճերի մեջ առնել, դա նախագահն ասաց, ոչ թե ես:

Մենատոր ՀԱՐԴԻՆԶ. Ո՞րն է ձեր պաշտոնական առնչությունը:

ՊՐՆ ՍՍԻԹ. Ես Մերձավոր Արևելքում օգնության հանձնակատարներից եմ: Վերջերս, Մերձավոր Արևելքում օգնության կոմիտեն⁹⁵ Կոնգրեսի ակտով վերակազմավորվել է՝ «Մերձավոր Արևելքի նպաստամատույց»⁹⁶ անվան տակ:

Նրա պաշտոնական կազմավորումը կնշվի Նյու Յորքում, հաջորդ չորեքշաբթի կայանալիք ժողովում, որը, միևնույն ժամանակ, Մերձավոր Արևելքում նպաստամատույցի հանձնակատարները, ովքեր ներկայացնում են Մերձավոր Արևելքում օգնության կոմիտեն, կկատարեն իրենց գործունեությունը:

Մերձավոր Արևելքի նպաստամատույցի հանձնաժողովը կազմված է հետևյալ անդամներից՝ դոկտոր Ջեյմս Ս. Բարեն, Բուստոնից, դոկտոր Ջ. Ս. Մեյն, Գրինելի քոլեջի նախագահ, Այովայից, պրն Հարոլդ Հարթ՝ Նյու Յորքից, պրոֆ. Էդվարդ Բ. Սուր, Բեմբրիջից, Մաս., դոկտոր Ու. Ու. Փիթ, Կոնստանտինուպոլսից, Պատվելի, դոկտոր Աթենլի Ռայար, Նյու Յորքից, պրն Արթուր Բարտիզ Ջեյմս՝ Նյու Յորքից⁹⁷ և ես: Բոլորին նշեցի, պրն Ջերոմիք:

ՊՐՆ ՋԵՐՈՄԻՔ. Այո, պարուն:

⁹⁵ Բնագրում՝ The Committee for the Relief of the Near East: Տե՛ս «Օանոքագություններ» բաժնում:

⁹⁶ Բնագրում՝ Near East Relief: Տե՛ս «Օանոքագություններ» բաժնում:

⁹⁷ Հայոց բնագրի՝ Dr. James M. Barton, of Boston; Dr. J.H.T. Main, president of Grinnell College, Iowa; Mr. Harold Hatch, of New York; Prof. Edward C. Moore, of Cambridge, Mass.; Dr. W.W. Peet of Constantinople; Rev. Dr. Stanley White, of New York; Mr. Arthur Curtis James, of New York:

ԴՐԱՆ ՍՄԻԹ. Այս հանձնակատարներն ուղարկվել են որպեսզի դեկափարեն ամերիկյան ժողովրդի ներկայացրության հանգանակության բաշխումը նրանց, ովքեր կրել էին թուրքական հալածանքները՝ անկախ ազգությունից և դավանակից Հանձնակատարներից հինգը, այն է՝ բոլորը բացի ինձնից և դոկտոր Ստենլի Ռուայթից, ճանապարհվեցին հունվարին, և Կոստանդնուպոլիս հասնելուն պես դոկտոր Մեյնը ուղարկվեց Թիֆլիս՝ Վրաստան, որպեսզի ստանձնի օգնության իրականացման պարտականությունը Կովկաս կոչված տարածաշրջանում: Պրոֆեսոր Մուրը գնաց Դերինջէ⁹⁸, որտեղ նախկինում եղել էր սարքավորումների գերմանական պահեստ, և գունվում է Իզմիրի ծոցում⁹⁹: Կոստանդնուպոլիսից 40 մղոն հեռավորության վրա: Այնտեղ, Միացյալ Նահանգներից օգնության պարագաներ բերող նավերը բերնարափում էին, և դրանց պարունակությունը տեղափոխվում էր պահեստուներ: Պրն Հարժը ֆինանսական մասով պատասխանատուն է: Դոկտոր Փիթը հասուկ ուշադրություն էր դարձնում Կոստանդնուպոլսի և հարակից մասերի գործերին: Պրն Ջեյմսը մնացել էր Փարիզում, որպես հանձնախմբի ներկայացուցիչ:

Սարսի կեսերին դոկտոր Մթենլի Ռուայթն ու նրա կինը և նա՝ իմ քրոջ ուղեկցությամբ, հասանք Կոստանդնուպոլիս: Մենք իմացանք, որ դոկտոր Բարթոնը մեկնել էր ներքին շրջաններ: Դոկտոր Փիթը և դոկտոր Մուրը, ովքեր պատահաբար եկել էին Դերինջեյից, և ես շարունակեցինք օգնության աշխատանքների կազմակերպումը:

Դոկտոր Մեյնը ջանում էր՝ բացարձակ անհամա-

պատասխան ուժով, իրականացնել հանձնաժողովի աշխատանքները Կովկասում: Կովկասն առանցքային կետ էր օգնության տեսանկյունից, չնայած թուրքական կայսրությունում, մասնաւորապես Անատոլիայում և Սիրիայում, օգնության կարիք ավելի շատ կար:

Ես պետք է շեղվեմ այս պահին ու ասեմ, որ 100 տարի շարունակ Միացյալ Նահանգների կարողիկ եկեղեցու միավոնները, և ավելի ուշ, արեսքիթերական միսիոնները, թուրքական կայսրության տարբեր մասերում կայաներ էին հիմնել: Մրանք աստիճանաբար զարգացել էին ու ներկայացնում էին ընդհուպ մինչև միլիոնավոր դոլարների ներդրումներ: Մեծ քույզներ կան Բեյրութում, Մարզվանում և այլ կետերում՝ թուրքական կայսրության ամբողջ տարածքում:

Երբ ամերիկյան ժողովուրդը իմացավ թուրքական կոտորածների հասցրած ավերածությունների և տանջանքների մասին, այս ցենքլմենները, ովքեր հատկապես հետաքրքրված էին, կազմավորեցին Հայ-սիրիական նպաստամատուց ամերիկյան կոմիտեն: Նրանք կոչ արեցին հանրությանը, և մոտավորապես \$ 10 000 000 հանգանակություն հավաքեցին, որը բաժանեցին տուժածներին:

Հետազոտում՝ հիմնականում խուսափելու համար հնարավոր ցանկացած ենթադրությունից այն մասին, որ այս օգնությունն օգտագործվում էր կամ կարող էր օգտագործվել հոգեբորսության նպատակներով. Սերձավոր Արեելքում ձևավորվել է Օգնության կոմիտեն և նրա տնօրենների խորհուրդն ընդգրկել է ներկայացուցիչներ բոլոր կրոնական կազմակերպություններից՝ կաթոլիկներ, բողոքականներ, հրեաներ և գործադրվել էին բոլոր հնարավոր ջանքերը, որպեսզի ցույց տրվեր, որ կոմիտեի նպատակը եղել է գուստ մարդասիրական, այլ ոչ թե կրոնական կամ քաղաքական:

⁹⁸ Դերինջէ (թազգում՝ Derindje)՝ քաղաք-նավահանգիստ Քոջանի իլում (Վիլայեթ), Թուրքիայի կյուսիս-արևմտություն:

⁹⁹ Իզմիրի ծոց (The Gulf of Ismet) գտնվում է Թուրքիայի հյուսիսարևմտություն: Մարմարա ծովի մաս կազմող ծոցի խորքում Իզմիր (İsmet) քաղաքն է՝ Քոջանի իլի (Վիլայեթ) կենտրոնը:

Երկու հարյուր հիսուն տղամարդիկ և կանայք՝ բժիշխարհությունը, ինժեներներ, և այլք, ում ծառայությունների կարիք կլիներ, մենքնեցին Կոստանդնուպոլիս և Ժամանեցին այսուղ մարտ ամսին: Նրանք բաժանվեցին խմբերի և նշանակվեցին տարբեր կայաններ, և որքան հնարավոր է շտապ, երկրի խաթարված և տեղափողման հնարավորությունների պահանջ պայմաններում, նրանք ուղարկվեցին ներքին շրջաններ: Այդ ընթացքում, այնուամենայնիվ, նրանք Դերինջեյում գրադարձ են մատակարարման հարցերով և խանութների վերանորոգմամբ:

Օգնության բոլոր պարագաները բերվում էին նավերով, որոնք հատկացվում էին Միացյալ Նահանգների կառավարության կողմից անվճար՝ ռազմական և ռազմածովային դեպարտամենտների միջոցով:

Միևնույն ժամանակ, ամբողջ երկիրը լավ կազմակերպված էր՝ Նյու Յորքի գլխամասերից սկսած ամբողջ Միությունով¹⁰⁰ մեկ, նահանգներից յուրաքանչյուրում հանգանակության կոչեր էին արվում: Վստահորեն կասեմ, որ \$ 30 000 000-ից ոչ պակասը հավաքվեց այս ջանքերի շնորհիվ, ներառյալ կիրակնօրյա դպրոցի սաների տասցենտանոց հանգանակությունները և Նյու Յորքի հարուստ «Հայաստանի բարեկամներ» 100 000 դոլար հանգանակությունը:

Այս ֆոնդին որպես հավելում, պրն Հերբերտ Հուվերի վարչությունը՝ Կոնգրեսի բոլոր վկայությամբ, իր տրամադրության տակ գտնվող ֆոնդից բաժին էր հանել տուժածներին որպես օգնություն և այս տարվա մարտ ամսից սկսած, ամեն ամիս հինգ տոննա այսուր է դուրս գրել և փոխադրել Կովկաս: Նրա գործող օգնականներից մեկը, պրն Հոռուարդ Հեյնզը, հունվարին ուղարկվեց Կոստանդնուպոլիս, որտեղ՝ նա՝ Ամերիկայի

դեսպանատանը հիմնեց շտաբեր՝ ծովակալ Մարկ Լ. Բրիստոլի սրտացավ աջակցությամբ, ով հիմա Ամերիկայի գլխավոր հանձնակատարն է այնտեղ: Պրն Գ. Բ. Ռավնդալը¹⁰¹, գլխավոր եյուպատուր, ով այդ ժամանակ հանձնակատար էր, իր ուժերի ներածին չափով աջակցություն ցույց տվեց հանձնախմբին: Հենց որ հնարավոր եղավ ապահովել փոխադրումը, որը կազմակերպվեց ծովակալ Բրիստոլի կողմից, դոկտոր Սթենլի Ռայթը մի խումբ աշխատակիցների հետ մեկնեց Սիրիա:

Ես հիմա կցանկանամ ենթահանձնաժողովի ուշադրությունը բնեուել մասնավորապես Կովկասում տիրող իրավիճակի վրա: «Կովկաս» տերմինն ընդգրկում է այն բարձրավանդակը, որն ընկած է հարավից Տավրոսյան լեռների և հյուսիսից Կովկասյան լեռնաշղթայի միջն, ձգվում է Սև ծովից դեպի Կասպից ծով, և իր՝ Սև ծովից դեպի Կասպից ծով սահմաններում ընդգրկում է անկանոն զուգահեռաշաբի տեսրով Վրաստանի՝ նոր Հանրապետությունը, որի մայրաքաղաքը Թիֆլիսն է: Հայաստանի ժամանակավոր կառավարությունը¹⁰², որոնց ներկայացուցիչներն այսուեղ են, անվանապես վերահսկում է Վրաստանից հարավ ընկած երկրի մի մասը, որն արևելքից սահմանից է Պարսկաստանին, Աղրեցանի թաթարական հանրապետությանը և արևմուտքից Տրապիզոնի նահանգին ու թաթարների մեկ այլ կազմավորմանը, որի անոնք ներկա պահին մոռացել եմ: Ներկայիս դիրքով այս ոչ մի ելք չունի դեպի ինչպես Միջերկրական ծով, այնպես էլ Սև ծով:

Երկիրը լեռնային է և արոտավայրային: Սակայն բերրի դաշտեր ևս կան: Շուտների կողմից կառուցված միակ երկարությին ձգվում է Բարթումից, որը Սև ծովի նավահանգիստն է, դեպի Բաքու՝ Կասպից ծով և անցնում է Վրաստանի մայրաքաղաք

¹⁰⁰ Պրն Ամիթն ասելով «ամբողջ Միությունը մեկ» (բնագրում՝ «throughout Union») նկատի է ունեցել ԱՄՆ-ը:

¹⁰¹ Բնագրում՝ G.B. Ravndal, տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹⁰² Բնագրում՝ The provisional government of Armenia:

Թիֆլսի միջով: Թիֆլսից մի ճյուղը հարավ-արևելքում՝ Երիվանի և Ալեքսանդրապոլի միջով հասնում է Կարս:

Տավրոսյան լեռների մուս կողմում վեց վիլայեթներու 11 սա թուրքական անվանումն է՝ տրված առանձին նահանգոյին քաղաքական իշխանություններին՝ թուրք կառավարիչներով: 1916 թ. այս վեց վիլայեթներում բնակչություն կար՝ տարբեր հաշվարկներով 1 000 000 հայեր: Պատերազմի սկզբին այս հայերին ասվեց, որ թուրքերի հետ մեկ միավորում կազմեն ընդդեմ դաշնակիցների: Նրանց պատասխանը եղավ այն, որ նրանք օսմանյան հպատակներ են, և պատրաստ են որպես այդպիսին կատարել իրենց պարտականությունները, սակայն հավանություն չեն տալիս որպես կազմակերպություն միավորվելու առաջարկին¹⁰³: Անմիջապես սկսվեցին կոտորածները և նրանցից 700 000-ը սպանվեց: Հաշվում է, որ 200 000 մարդ փրկվեց այս վեց վիլայեթներում, որոնք պատմականորեն և աշխարհագրորեն Հայաստանի մասն էին կազմում: Այս վեց վիլայեթներին արևելքից¹⁰⁴ հարակից գտնվում է նաև հինավոր Կիլիկիան, որը ձգվում է Մինչև Միջերկրական ծով և որտեղ են նշանակալի քանակությամբ հայ բնակչություն կար:

Շուսահայաստանը, որի մայրաքաղաքն այժմ Երիվանն է, որը ժամանակոր կառավարություն է գործում, սարսափելի հյուծված է պատերազմից՝ 1915 թվականից ընթացող գործողությունների արդյունքում: Գյուղերն ավերված են, պահեստները պայթեցվել են ու պահեստավորված ամրույթները, որ կարող էր ծառայել հետագայում ժամանող մարդկանց

¹⁰³ Դրև Սմիթի ներկայացրած տեղեկությունը լիովին համապատասխանում է 1914 թ. հուլիսին տեղի ունեցած պատմական իրադարձություններին:

¹⁰⁴ Բնագրում eastward: Հայտնի է, որ Կիլիկիան աշխարհագրական իր դիրքով գտնվում է հայկական վեց վիլայեթներից դեպի արևմուտք և ոչ դեպի արևելք: Ուստի, բնագրում տեղ գտած eastward՝ արևելք բարը վրիպակ է՝ կամ այն Սմիթի խորում, կամ աղագրողի կողմից:

ուրության համար կամ ոչնչացված է, կամ թալանված թուրքերի կողմից: 1915 թ. հետո՝ տարբեր ժամանակա- հաստիածներում, այդ դատարկ տարածքը լցվեց թուրքական հարածաներից և կոտորածներից փրկվածների խմբերով: Նրանց վերակրելու համար ուղղակի ոչինչ չկար: Զմուն եղանակ էր: Եթափ ձգվեցին երկարուղիների երկայնքով և տարբեր կոտորածներում՝ ընդհուպ մինչև Թիֆլիս, և հատկապես կոտուակիվել էին Երիվանում, Եջմիածնում՝ գրեթե 15 մրգն հետավորությամբ Երիվանից: Հայաստանի հինավորց մայրաքաղաքում, որտեղ ազգային կրոնի առաջնորդի՝ կաթողիկոսի, հոռափայրն է, և որտեղ հինավորց մայրտաճարն է, և դեպի ավելի արևմուտք՝ Խզդիրում՝ Արարատ լեռան հարքավայրում: Այնտեղ էին կուտակվել այս փախստականները՝ ցնցոտիապատ և բառացիորեն գրեթե առանց որևէ սեւայի:

Դոկտոր Մեյնը կապատմի իր սեփական պատմությունը, երբ ես վերջացնեմ իմ վկայությունը և կնկարազրի այն պայմանները, որոնցում նա գտել է նրանց այս տարվա մարտին:

Կոնստանդնուպոլսում կազմակերպության աշխատակին պատշաճ ուշադրություն հատկացնելուց հետո, արև չլվարդ Հեյնիցի երավերով՝ ծովակալ Բրիստոլի սիրայիրության շնորհիվ, Զատկի կիրակի օրը ես Կոնստանդնուպոլսից Փերանորոգած «Նոմա» գրոսանավով, մեկնեցի Բարում, իսկ այսուհետև՝ Թիֆլիս, Երիվան, Ալեքսանդրապոլ, Էջմիածնի և Խզդիր: Մինչ այդ գարնանային եղանակը մեղմացրել էր ցրտի խստությունները, խոտը կանաչել էր դաշտերում և այդ թշվար մարդկանց համար որոշ հնարավորություն էր ստեղծվել սնունդ հայրայթելու՝ արմատներից և խոտաբույսերից, որոնք ինչպես են տեսա, նրանք հավաքում էին դաշտերից: Այնուամենայնիվ, նոյնիսկ այդ ժամանակ ես տեսնում էի Երիվանի և Ալեքսանդրապոլի փողոցներում մահացող մարդկանց: Խզդիրում

ես տեսա հաղթահարելու համար չափազանց ցնցող՝ իրավու հաննիքալիզմի փաստեր, և այդ ժամանակ որևէ մասնավոր կո նույնիսկ հասարակական կազմակերպություն բացարձակագլո ի վիճակի չէր փրկել այս մարդկանցից՝ առավել թույլերից շատերին:

Թիֆլիսում պըն Ուիլուգիբի Սմիթը¹⁰⁵՝ Միացյալ Նահանգների հյուպատոսը նախքան պատերազմը, և երկու երիտասարդ ամերիկացիներ՝ կապիտան Արրոլը և կապիտան Էլյերը, ովքեր մնացել էին Պարսկաստանում պատերազմի ընթացքում, իրենց իրավասության տակ էին առել որոշ դրամական միջոցներ, որոնք առատորեն տրամադրվում էին տարբեր աղբյուրներից՝ Թիֆլիսում օգնության աշխատանքների համար: Ես զարմացած և անշափ գոհ էի տեսնելով, թե ինչքան արդյունավետ էր այդ աշխատանքը: Կային բրյոյա և բարեւլյա ապրանքների գործարաններ կանանց և երիտասարդներին աշխատանքի վերցնելու համար: Կային որբանցներ երեխանների համար, որտեղ ես հարյուրավորների տեսա՝ լավ կերակրված և խնամված: Կային հիվանդանոցներ փարակիչ և ոչ փարակիչ հիվանդությունների համար, լավ կազմակերպված, շտաբներ դոկտոր Մեյնի դեկավարության ներքո, և ամեն ինչ զորակցություն և ապահովելու համար:

Ալեքսանդրապոլում մեր կայանը դեռ նոր էր ձևավորվում և իրավիճակը դեռևս ողբախ էր:

Երիվանում հայկական կառավարությունը քառսից կարգ էր հաստատել: Նրանք ունեին լավ մարզված և լավ կազմակերպված զինվորների ուժ, ում հանդերձանքը արտադրված էր Մերձավոր Արևելյի կողմից կազմակերպված

բարեգործական աշխատանքի արդյունքում: Կազմավորվել էին դպրոցներ և այլ օգնության հաստատություններ, բացի ճաշարաններից: Այժմ ես խոսում եմ Երիվանի, այլ ոչ Ալեքսանդրապոլի մասին:

Իգիրում հայկական կառավարությունը հիմնել էր որբերի օրեաններ, բայց դրանց աղքատությունն ու ծանր իրավիճակն այնպիսին էր, որ նրանք չէին կարողանում դրանք պահել, և հետագայում դրանք անցան մեր նպաստամատուցի ինամակալության ներքո:

Այս աշխատանքների խիստ մանրամասն զննումից հետո, հաշվի առնելով ժամանակի սղությունը և Երիվանի ժամանակավոր կառավարության հետ ժամեր տևած խորհրդակցությունից հետո, ես և պըն Հեյնցը ետ վերադարձանք՝ համոզված, որ նպաստամատուցի աշխատանքների շատ լավ սկիզբ է դրված, բայց այդ բեռն ապշեցուցիչ էր ցանկացած մասնավոր կազմակերպության համար: Պըն Հեյնցի գիշավոր նպատակը հայկական կառավարությունից հավաստիացումներ ապահովելն էր, որ՝ եթե և եթե նրանք ճանաչվեն, նրանք ետ կիմարեն Միացյալ Նահանգների կառավարության կողմից օգնության համար ծախսված ամրող գումարը, և որ մթերքը կարող էր փոխադրվել և բաշխվել:

Վերադառնալով Կոնստանդնուպոլիս այս գործուղումից և Դերինջեյում մեր պահեստների այցելությունից ու Կոնստանդնուպոլսում տեղական օգնություն կազմակերպելու համար զգալի ջանքերից հետո, ես համոզվեցի, որ պետք է զնամ Միրիա և Փոքր Ասիա՝ այնտեղ կոմիտեի շահերին հետևելու համար, Լիբանան լեռան¹⁰⁶ կաթոլիկ բնակչությանն ուղղված հաստուկ հանձնարարականով:

Ես պետք է ասեմ, որ լավագույն վիճակագրությունը, որն ի

¹⁰⁵ Ուիլուգիբի Սմիթի (Willoughby Smith) մասին տես «Ծանոթագրություններ» բաժնում:

¹⁰⁶ Բլաքպոլ՝ Mount Lebanon.

վիճակի եմ եղել ապահովել ներկայում ապրող հայերի մասին հանգում է շուրջ 1 500 000 մարդու Կովկասի տարածաշրջանուն և 2 500 000 մարդու, որը թերևս առավելագույն թիվն է ամբոյթ թուրքական կայսրության տարբեր մասերում, մասնավորապես Անգորայում, Հալեպում, Բեյրութում և Դամասկոսում: 1896 թ. սկսված կանխամտածված և կազմակերպված կոտորածները և սովոր նվազեցրել են թուրքական կայսրության հայ բնակչությունը շուրջ 2 000 000-ով: Նրանք, ում կոտորել էին Արդուլ Համիդի օրոր Ուրֆայում, Աղանայում և այլ վայրերում, շուրջ 1 000 000 էին¹⁰⁷: Նրանք, ովքեր մահացել են կամ կանխամտածված սպանության արդյունքում, կամ նրանք, ովքեր ընկել են ճանապարհին և մահացել ուժասպառումից, կամ սովոր՝ տարհանումների ժամանակ, տարբեր կերպ ներկայացվում են 800 000-ից - 1 000 000-ի սահմանում:

Բրիտանական ռազմական իշխանությունները հաշվարկում են, որ Թուրքիայի վեց վիլայեթներից շուրջ 500.000 փախստականներ Կովկասում են:

Պրն ՍՎԱԶԼԻ. Որքա՞ն:

Պրն ՍՄԻԹ. Հինգ հարյուր հազար: Վերջին վիճակագրությունը, որը ես ի վիճակի էի ապահովել, նշում էր, որ այս մարդկանցից շուրջ 200 000-ը ստվամահության եզրին էր, չնայած այն բոլոր ջանքերին, որ արվել էին նրանց կերակրելու համար:

Եթե Միջազգետքում սկսեց բրիտանական արշավանքը և նրանց զորամասերն սկսեցին առաջանալ դեպի Բաքու, նրանք տեղակայեցին զինվորներին, որոնցից շատերը հնդիկ զինվորներ էին, Բաքումից Բաքու երկարագի երկայնքով և ենթասպանների հրամանատարության ներքո գտնվող փոքր ջոկատներ տեղակայեցին երկարուղու մոտ գտնվող յուրաքանչյուր կետում՝

¹⁰⁷ Բնագրում տեղ գտած այս 1 000 000 թիվը չի համապատասխանում իրականությանը:

Երկարագի երկայնքով:

Վրաց բնակչությունը խիստ փոփոխամիտ է և խիստ ներծծված բոլշևիզմով: Միայն բրիտանական զորամասերի ներկայությունն էր, որ հնարավոր դարձրեց օգնության գիւղըների՝ Բաքվից երիվան հասնելը և նույնիսկ այդ դեպքում հաճախ լուրջ բախտումներ էին լինում:

Մեկ հայացքը քարտեզին հսկանաժողովին ցույց կտա, որ ներկայում երկարուղով Հայաստանի ժամանակավոր հանրապետություն հասնելու ոչ մի ճանապարհ չկա, բացի թարումից: Ես տեղեկացրի, որ ներողություն եմ խնդրում հանձնաժողովից, եթե թեմայից շեղվողից տպագորություն գործեմ, - պլանավորել էի իջնել Փոքր Ասիա: Ես ուղարկեցի հունիսի սկզբին, եթե բժիշկ Ք. Դ. Աշերը¹⁰⁸ երիվանում մեր աշխատանքների համար պատասխանատու բժշկական միսիոները, ժամանել էր Կոնստանդնուպոլիս՝ փախստական հայերի հայրենադարձման ծրագրով: Նա խորհրդակցել էր բուրդ առաջնորդների հետ: Ես պես է ասեմ, որ թուրքերից հարավ՝ դեպի արևելք և հարավ-արևելք, քրդերն ու թաթարներն են, և Հայաստանի Հանրապետությունից դեպի արևմուտք՝ այլ թաթարներ են, և դեպի հյուսիս՝ Վրացիները: Քրդերը, թուրքերն ու թաթարները հայերի կատաղի թշնամիներն են: Վրացիները պարզապես նախանձ, եսասեր և չարական են, բայց իրականում ոչ կանխամտածված կերպով թշնամական:

Բժիշկ Աշերը կարծում էր, որ որոշ բուրդ առաջնորդների և թուրք քաղաքական հեղինակությունների հետ համաձայնեցման դեպքում այդ մարդկանց համար հայրենադարձման խաղաղ մերող կարելի էր գտնել: Նա մի պլան էր մշակել, որը շատ մեծ արժեք ուներ և Կոնստանդնուպոլիսում բրիտանական դիվանագիտական հեղինակությունների կողմից, ում նա դա

¹⁰⁸ Ք. Դ. Աշերի (C. D. Ussher) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

ներկայացրել էր՝ համարվել էր նշանակալից:

Այդ ծրագրի շուրջ խորհելով և իմ գործընկերներ դոկտոր Բարթոնի, ով մինչ այդ վերադարձել էր ներքին շրջաններից և ծանր հիվանդ պառկած էր Կոնստանդնուպոլսի մի հիվանդանոցում, և դոկտոր Փիթի խորհրդով, եզրակացրի, որ իրավիճակի հրատապությունն այսքան մեծ էր, որ ես քժիշկ Աշերի հետ պետք է գնայի Փարփակ՝ տեսնելու, թե արյոյ ք հնարավոր չէր ինչ-որ բան անել ինքնահոսի քաղաքականությունն արգելելու համար, որն արագորեն կամ աստիճանաբար և հաստատուն կերպով խնդիրը լուծում էր այնպես, ինչպես թուրքերն էին ցանկանում այն լուծել, և դա հայերի սովորականության միջոցով էր:

Շունչիսի 15-ին լրելով Կոնստանդնուպոլիսը՝ ես հնարավորինս արագ ճանապարհորդեցի իմ քրոջ և քժիշկ Աշերի հետ։ Ծովակալի սիրալիքության շնորհիվ և կապիտանի թույլտվությամբ մենք մեկնեցինք «Բարնի» ականակիր նավով, որը դեկավարում էր «Արիզոնա» զրահանավը, Կոստանդնուպոլսի նավահանգստից ընդիուպ մինչև Մալթա, այնուհետև գնացինք Նեապոլ, ուր նատեցինք զնացք դեպի Փարփակ, և ժամանեցինք Փարփակ հունչիսի 22-ին։ Այնտեղ՝ իրավիճակի վերաբերյալ խորհրդակցության ժամանակ ես հանդիպեցի այն Հենրի Սորգենբաուին, այն Հերբերթ Հուվերին, այն Ք. Լ. Վիքրիին՝ նպաստամատույց հանձնաժողովի քարտուղարին, այն Հ. Ք. Ջերոմիին՝ քարտուղարի օգնականին և այն Հեմֆիլին՝ կոմիտեի գանձապահին¹⁰⁹։ Իմ գործընկեր՝ դոկտոր Մուրը վատ առողջության պատճառով պաշտոնաթող էր եղել Կոնստանդնուպոլսում ու անցել Փարփուկ համեմատաբար վերջերս և շահագլուխ պարոններին ներկայացրել էր իրավիճակին առնչվող իր անհանգստությունները։

¹⁰⁹ Բնագրում անձնանունները համապատասխանաբար՝ Henry Morgenthau, Herbert Hoover, C.L.Vickery, M.C. Jaquith, Mr. Hemphill.

Դոկտոր Մեյնը ստիպված էր եղել, իր քոլեջի գործերի կապակցությամբ Գրինել՝ Այովա, մեկնել Կովկասից։ Դուք ո՞ր օքք մեկնեցիք, քժիշկ։

Պրեն ՄԵՅՆ. Մայիսի 17-ին։

Պրեն ՍՍԻԹ. (Չարունակելով)¹¹⁰։ Նա արդեն գնացել էր Ամերիկա, երբ ես ժամանեցի Փարփակ։ Նրան փոխարինեց այն էրնեսթ Յարրուն¹¹¹, հանձնաժողովի անձնակազմի շատ ընդունակ անդամ՝ Կովկասի գործերի պատասխանատուն։

Դրև Մորգենբաուն և մյուսներն ու ես խորհրդակցություն ունեցանք այն Հերբերթ Հուվերի հետ, և արդյունքում զնդապետ Ուիլյամ Ս. Հասկելը՝ Միացյալ Նահանգների բանակից, ով աշխ ընկնող հեղինակություն է շահել Ռումինիայում և այլուր Բալկաններում, իր արյունավետ ծառայությունների համար այն Հուվերի անձնակազմում, նշանակվեց Կովկաս։ Նրան տրվեց Մերձավոր Արևելքում նպաստամատույց կոմիտեի ամբողջ իշխանությունը և, ի հավելում դրա, դաշնակից կառավարությունների ներկայացուցիչները Փարփում նստաշրջանի ժամանակ տվեցին նրան լրիվ գիշանագիտական իշխանություն, որքան նրանք կարող էին դա անել, և այս կերպ զինված նա մեկնեց Կովկաս այնքան շտապ, որքան հնարավոր էր ու այժմ հաստատվել է այնտեղ օգնության աշխատանքների լիակատար վերահսկողությամբ՝ թե՛ սննդի վարչության, և թե՛ Մերձավոր Արևելքում նպաստամատույց կոմիտեի, ինչպես նաև անձնակազմի լիակատար վերահսկողությամբ։

Միևնույն ժամանակ, գեներալ Ջոն Գ. Հարբորդին, ով ամենանախանձելի հեղինակություն էր ձեռք բերել պատերազմի ընթացքում՝ որպես գեներալ Պերչինզի անձնակազմի հրամանատար, առաջարկ արվեց, որ ցանկալի կլիներ, եթե նա գնար

¹¹⁰ Փակագծերը համապատասխանում են բնագրին։

¹¹¹ Բնագրում՝ Mr. Ernest Yarrow, ուն «Ծանոթագրություններ» բաժնում։

Կովկաս և ներառված բոլոր հարցերի մանրամասների վերաբերյալ ուսումնասիրություն կատարել: Ես պատիվ ունեցած խորհրդակցելու գեներալ Հարբորդի հետ, և նա ինձ ցույց տվեց այն ծրագիրը, որին նա մտադիր էր հետևել և այն հարցերի գրաֆիկը, որոնք նա մտադիր էր հետազոտել: Դրանք ընդգրկում էին ամենը, ինչ կցանկանար իմանալ հարցով հետաքրքրված ցանկացած որ և մարդասիրական, և՝ կոմերցիոն, և՝ քաղաքական տեսանկյունից:

Գեներալ Հարբորդը, ինչպես ես հետո իմացա, ձևավորեց բանակի սպաներից հմտորեն ընտրված անձնակազմ, ընդհանուր թվով՝ հավանաբար քառասունից ավելի, և նրանց հետ շարժվեց դեպի Կովկաս ու այժմ այնտեղ է: Առավոտյան թերթերը նշում են, որ նրա վրա կրակել են՝ հավանաբար ավագակները, Կարսի մոտակայքում, որը հեռազրի գեկուցման մեջ նշվում է «Խարսոն»¹¹²: Նա այս պատահարի ժամանակ Հայաստանի հարավարևմտյան մասում էր:

Այժմ՝ պետք է մոտ հուլիսի 15-ը լիներ, և իրավիճակը շատ բարենպաստ էր թվում: Բրիտանական զորամասերը կարգ էին պահպանում Կովկասում: Ամենաարդյունավետ կազմակերպվածությունը դրսենորվեց նպաստամատույցի աշխատանքների նկատմամբ: Սենք Շերինչեյում ունեինք անհրաժեշտ դեղամիջոցների, հազուսի և փախստականների համար այլ

¹¹² Խարսոն (բնագրում՝ Kharson)՝ հայկական զուղ Խարս: Արևմտյան Հայաստանում երկու Խարս կար: Մեկը՝ Խարս (Խարծ, Խարծը) զուղը Քիրլիսի վիլայեթի Մշո գավառում էր և գտնվում էր Մուշ քաղաքից 30 կմ արևելք, Առուշ-Քիրլիս ճանապարհի ձախ կողմում: Մյուսը՝ Խարս (Կարս, Հարս, Ղարս) զուղը էրզրումի վիլայեթի Թորքումի գավառակում էր և գտնվում էր Օլթ քաղաքից 34 կմ հյուսիս-արևմուտք, Թորքում լիճը թափվող մի գետակի վրա: Ենթայի այն հանգամանքից, որ բնագրում նշվում է Կարսը և միևնույն ժամանակ անդրադարձ է կատարվում Հայաստանի հարավարևմտյան մասին, դժվար է եղահանելու թե բնագրում որ Խարսի մասին է խոսը:

անհրաժեշտ պարագաների մեծ պաշար: Նյու Յորքում բարեգործական աղյուրներից ոգևորիչ կերպով աճում էին մեր եկամուտները: Մենք մանրամասնորեն վերակազմավորեցինք մեր վերահսկողական աշխատանքները Կոնստանդնուպոլիսում՝ այն Արքուր Քարտիս Զեյմսի գործակալության միջոցով ներզավելով Միացյալ Նահանգների բանակի մայոր Դևիլս Գ. Արնոլդին, որը մեծ պատվով ծառայել էր պատերազմի ընթացքում՝ որպես «Ծիածան»¹¹³ դիվիզիայի անդամ, և անձամբ ևս չնայած շատ անհանգիստ էի, բայց խիստ ոգևորված, որոշեցի իննու ամսվա հաստատուն ու շարունակական, պրատող աշխատանքից հետո, արձակուրդ վերցնել և այցելել որոշ ընկերների Ֆրանսիայի հարավում՝ սպասելով իմ շոգենավին՝ կամ դեպի Ամերիկա մեկնելու, եթե դեպքերն այդպես պահանջեին, կամ ավարտելու իմ հետազոտությունները՝ ես վերադառնալով Միքայիլ:

Ես Փարիզ վերադարձա մուտավորապես օգոստոսի 1-ին: Ես սպազեցի, որ այն Հենրի Մորգենթաուն գնացել էր Լեհաստան՝ որպես հատուկ հանձնակատար, հետազոտելու այնտեղի պայմանները, որ այն Վիբրուին՝ Մերձավոր Արևելքի օգնության բարտուղարը, այն Զեքուիթը Փարիզում էին, և որ օրեօր, և զրեե ժամ առ ժամ հեռազրեր էին ստացվում Թիֆլիսում Միացյալ Նահանգների դեսպանից, բանակի հետախուզության սպաներից, ովքեր ուղարկվել էին կառավարության համապատասխան վարչությանը զեկուցներ հաղորդելու համար, և մեր աշխատակիցներից, այն մասին, որ շնորհիվ այն փաստի, որ բիտանական կարինետը պաշտոնական հայտարարություն էր արել, թե իր զորամասերը դուրս են բերվելու Կովկասից օգոստոսի 15-ին, թուրքերի, քրդերի, թաթարների կազմակերպված

¹¹³ «Ծիածան» դիվիզիա (բնագրում՝ Rainbow Division) տես «Ամսնորդություններ» բաժնում:

ուազմական միավորումներ հավաքվում են Հայաստանի սահմանի ուազմավարական կետերում, որ կոտրածներն արդեն սկսվել են, և հենց որ բրիտանական գորամասերը դուրս բերվեն, խեղճ քնակշուրյունը կշախչախվի և օգնության աշխատողներն անհրաժեշտաբար ետ կկանչվեն: Դուք կարող եք պատկերացնել դրության անհանգույթյունը, պարոնայք: Այն ամենի հիման վրա ինչ ես ձեզ ասացի և զիտեի իմ սեփական դիտարկումների միջոցով՝ վտանգն է, և ես զիտեի նաև, առանց որևէ մեկին կամ որևէ կազմակերպության քննադատելու, որ խաղաղության վեհաժողովը զիտեր մարտի 15-ից սկսած, որ սա անխուսափելի է, քանի որ բրիտանական կառավարությունն իր գործընկերներին նախազգուշացրել էր, որ իրենք դուրս են բերելու գորքերը հունիսի 15-ին:

Սեհասոք ՀԱՄԿԻՆԳ. Հենց այդ մասին, դուք այդ վաղ նահանջի դրդասատձառի մասին որևէ տեղեկություն ունե՞ք:

Պրեն ՍՍԻՒԹ. Ես կանդրադառնամ դրան, սքը, բայց կարող եմ միայն կարծիք հայտնել: Բրիտանացիները շարունակեցին իրենց զորամասերը պահել, այնուամենայնիվ, մինչև օգոստոսի 1-ը, քանի որ հնարավոր է, խաղաղության վեհաժողովն էր առաջարկել և խոալական կառավարությունը բարյացակամորեն էր. վերաբերվում խոալական զորամասեր ուղարկելուն՝ բրիտանացիների տեղը երկարուղու այս գծերի երկայնքով գրավելու համար: Այդ ժամանակ Փարիզում Միացյալ Նահանգների պատվիրակներն էին պրն Փոլքը¹¹⁴, գեներալ Բլիսսը¹¹⁵ և պրն Հենրի Ուայթը¹¹⁶: Նրանք բոլորը՝ իրենց

¹¹⁴ Փոլքի (F. L. Polk) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹¹⁵ Գեներալ Բլիսսի (Gen. T. Bliss) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹¹⁶ Հենրի Ուայթի (Henry White) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

անձնակազմի հետ միասին մնում էին «Քրիլոն»¹¹⁷ հյուրանոցում: Ես շատ անձնական զրոյցներ եմ ունեցել պրն Ուայթի և գեներալ Բլիսսի և մյուս պարոնների հետ, ովքեր ծանոթ էին Մերձավոր Արևելքի գործերին, սակայն ինձ չհաջողվեց տեսնել պրն Փոլքին: Ես սպասեցի Նորքար Փաշային, ով հայերի դիվանագիտական ներկայացուցիչն է¹¹⁸՝ որպես գործընկեր ունենալով պրն Զ. Հ. Մալքոմին¹¹⁹ և պրոֆ. Հակոբյանին¹²⁰: Ռոբերթս բոլեցից:

Այդ ժամանակ Լուցերնում ընթանում էր լեյբրիտանների լիոնֆերանը: Ենթադրություն կար, որ լեյբրիտանական առաջնորդների կողմից բրիտանական կարինետի վրա ճնշում էր գործադրվում՝ ետ քաշելու բրիտանական գորքերը բոլոր օտար կետերից: Ուսումնասիրելով ես պարզեցի, որ դա այդպես չէ՝ այրանով, որքանով վերաբերում էր Հայաստանին, քանի որ լեյբրիտանների կոնֆերանսն ընդունեց խիստ բանաձև՝ պահանջով, որպեսզի բրիտանական կարինետը բողնի իր գորքերն այնտեղ:

Սեհասոք ՈՒԽԼՅԱՍՍ. Այսինքն, նրանց Կովկասում պահելով համար:

Պրեն ՍՍԻՒԹ. Նրանց Կովկասում պահելու համար առայժմ: Ես տարբեր պարուների հանդիպեցի, ում հետ քննարկեցի իրավիճակը, ում անուններն անհրաժեշտություն չկա հնչեցնելու, բայց ես պարզեցի, որ անհնար է որևէ քան ձեռք բերել պաշտոնապես, և որոշեցի դիմել աշխարհի խղճին այս հարցով:

¹¹⁷ Բնագրում՝ Hotel Crillon:

¹¹⁸ Նորքար Փաշայի (Nubar Pasha) գործունեության մասին սույն ձևակերպումը համապատասխանում է Բնագրին: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹¹⁹ Զ. Հ. Մալքոմի (J. H. Malecom) անունը սույն արձանագրության մեջ հանդիպում է նաև՝ Զ. Ա. Մալքոմ (J.A. Malcom) տարբերակով: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹²⁰ Բնագրում՝ Prof. Agopian: Խորը պրիվետը Արքահամ Տէր-Հակոբյանի մասին է: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

Իրավիճակը չսփազանց ահավոր էր ինձ համար՝ դադար տպալու և փարվելակարգի որևէ հարցի շուրջ մտածելու համար։ Ես տեսնում էի մարդկանց փողոցներում և զյուղերում մահանալիս, խոս հավաքելիս և այն նատած եվելիս, և զիտեի, որ Հայկական հարցը մոտենում էր ավարտին, եթե ոչ մի բան չարվեր, և չարվեր արագորեն։

Ենվեր բեյի, Թալեաթ փաշայի և Զեմալ փաշայի կողմից առաջնորդվող երիտրուրքերը, ովքեր վերահսկում էին քուրքական քաղաքական մեքենան նախքան Կոնստանտինուպոլսի անկումը, և գործում էին ավստրիական և գերմանական կառավարությունների բացարձակ իմացությամբ, վստահութամբ և հավանությամբ պլանավորել էին Թուրքիայում հայ տազի լիակատար բնաջնջումը, և եթե բրիտանական զորամասերը դուրս բերվեին, նրանց պլաններն ամրողությամբ կիրականանային, չնայած նրանք թարնվում էին արդարադատությունից։

Այս եզրակացության արդյունքում ես գրեցի հանրութանի ուղղված՝ բողոքի բնույթի դիմում, որը «Նյու Յորք Հերալդ»-ը տպագրեց օգոստոսի 13-ին և «Ըստշիետիդ Փրես»-ը հեռագրով համառոտակի ուղարկեց Միացյալ Նահանգներ։ Այնուհետև ես գնացի Լոնդոն ու հանդիպեցի բրիտանական և խորհրդարանի, և կարինետի տարբեր անդամների, ինչպես նաև «Լոնդոն Թայմս»-ի խմբագրին։ «Թայմս»-ի, «Մանչեսթեր Գարդիան»-ի և Անգլիայի այլ լրագրությունների կողմից իրադրության արժնորման և կարեկցանքի հետևանքով ես վերջապես ոչ պաշտոնական հավաստիացում ստացա, որ ներկայումս զորքերը դուրս չեն բերվի։

Այժմ, պրն նախազահ, արձագանքելով ձեր առաջին հարցին, ես կասեմ, որ փորձեցի պարզել, թե որն էր բրիտանական զորամասերի դուրս բերման ակնհայտ շտապողականության շարժադրքը։ Ես, իհարկե, բացարձակապես պաշտոնական անձ չեմ։ Հանձնաժողովը, ինչպես ես փորձեցի պարզել, ոչ մի

բաղարական նպատակ չուներ, և որպես հանձնաժողով՝ այս մարդկանց օգնելու որևէ բաղարական ծրագիր չուներ, սակայն իրանց պաշտպանելու համար ուղղակի անհրաժեշտ էր ընդգրկվել բաղարականության մեջ։ այնպես որ, ես փորձեցի, ինչպես ասացի, պարզել, թե որն էր զորամասերի դուրս բերման ակնհայտ շտապողականության պատճառը։ Կարծես թե բրիտանացիները, ինչպես մենք բոլորս զիտենք՝ այժմ դա համատարած տեղեկություն է, շատ բարդ ֆինանսական որության մեջ են։ Նրանք ֆրանսիացիների հետ միասին կրել են այս պատերազմի ծանրությունը։ Նրանց զինվորների մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազարը սպանվել են։ Նրանց նավատորմը փրկել է աշխարհի քաղաքակրթությունը գերմանացիներից։ Նրանք հոգնած են և պատերազմից հյուծված ու պարտերի մեջ խրված։ Օրական նրանք ծախսում են իրենց եկամուտները գերազանցող երկու միլիոն ֆունտ։

Հետևաբար, բնական է, որ նրանք կիմիտն աշխարհի մյուս հասվածներին և կասեն։ «Ահա մի զուտ բարեգործական ձևուարկում։ Մենք Հայաստանի կարիքը չունենք, մենք Միջագետքն ունենք, անհրաժեշտ չեն պաշտպանել մեր ձևուապարհը դեպի Հնդկաստան։ Եվ ինչո՞ւ այն բանից հետո, եթե մենք պաշտպանում էինք այդ երկիրը մարտ ամսից ի վեր, պետք է մեսեր այնտեղ՝ զիտեմ նույնիսկ թե ամսական բանի հազար ֆունտի դիմաց։ Ի՞նչ է անելու Ամերիկան։»

Իմ պատասխանն այդ զենքլմեններին հետևյալն էր. «Դուք զիտեք Միացյալ Նահանգներում կառավարման մեր սահմանադրական կարգը։ Դուք զիտեք, որ Ամերիկան՝ այլ կերպ քան Կոնգրեսի միջոցով, որևէ բան անել չի կարող, և դուք զիտեք, որ Կոնգրեսն արձագանքում է մարդկանց կարծիքին։ Ամերիկյան ժողովուրդը տեղյակ չեն այս իրադրությանը։ Նրանց հետարքը վածությունը Հայաստանի նկատմամբ ակնհայտ է

իրենց 100-ամյա առաքելական նախաձեռնությունից և վերջին մի քանի տարիների ընթացքում նրանց ցուցաբերած հսկայական առատաձեռնությունից»: Ես ասացի. «Ես չեմ մեղադրում որևէ մեկին, ես չգիտեմ դրա բաքնված պատճառները, բայց փաստն այն է, որ Փարիզի վեհաժողովը, որը ճշգրտում էր աշխարհի պատերազմին մասնակցած պետությունների սահմանները, արդեն գրեթե մեկ տարի է բարձրացրել է այս թուրքական հարցը¹²¹: Թուրքերը ծնկի էին բերվել և պատրաստ էին ընդունելու ամեն ինչ պատերազմի ավարտին: Նրանք չգիտապահվեցին: Նրանք ամբողջությամբ տիրապետում են երկրի ներքին շրջաններին, բացառությամբ Միջազգետքի, Պաղեստինի, Զմյուռնիայի՝ որտեղ հովներն են, և Կոնստանդնուպոլսի, որն այստեղ և այնտեղ առանձին վայրերում, գրավված է բրիտանական, իտալական և ֆրանսիական զորամիավորումների կողմից:

Այս հարցը որոշելու համար՝ առ այն թե ի՞նչ է կարող Ամերիկան անել, ժամանակ է պետք, որպեսզի ամերիկյան ժողովուրդը ծանոթանա իրավիճակին: Ես պետք է ասեմ, առանց եսախրության, այժմ խոսում եմ բրիտանական կարինետի անդամի կամ խորիրդարանի անդամի հետ, «որ՝ մինչ իմ կողմից այս հաղորդագրումների հասնելը, ամերիկացիները ոչինչ չգիտեին իրավիճակի իրատասպության մասին: Նրանք գիտեին, որ հայերը սովորապ են լինում, բայց նրանք չգիտեին, որ բրիտանացիները դուրս են բերում իրենց զորքերը»: «Բայց, – արձագանքեց ինձ բրիտանական կարինետի անդամը, – մենք ծանուցել ենք գարնանը, և դու հայտարարվել է խորիրդարանում»: «Այո՛, բայց դուք չեք բացատրել՝ դա չի հասկացել ամեն դեպքում, ամերիկյան ժողովուրդը, ոչ էլ բրիտանական ժողովոյի խոհմտանքին է դա ներկայացվել: Այժմ, մենք առաջին անգամ ենք

դա իմանում»: « – Որքա՞ն դա կտեի»: Ես ասացի. «Առնվազն երեք ամիս, իսկ դա կարծ ժամանակ է Կոնգրեսի գործելու համար, եթե Կոնգրեսը գործի: Ես ոչ մի իրավունք չունեմ ասելու, որ Կոնգրեսը կգործի: Ես գիտեմ պահպանողականության խանդու զգացումը մեր միջազգային հարաբերությունների կամ աշխարհի հեռավոր հատվածներում մեր կարգավորումների տարածման նկատմամբ»:

Այս հանգամանքներում պարզելով, որ զորամիավորումները միանգամից դուրս չեն բերվելու և զգալով, որ իմ առաքելությունն այդ առումով ավարտված է, նաև ենելով նրանից, որ աշխատաշրջանի վերջն էր և որոշ չափով անորոշության մեջ էի, ես եղրակացրի, որ ինձ համար ավելի լավ է վերադառնալ Սիացյալ Նահանգներ, քան Սիրիա, և ես ժամանեցի Նյու Յորք սեպտեմբերի 13-ին:

Այժմ, այրն նախագահ, դուք ձեր առջև ունեք սենատոր Ուիլյամսի կողմից ներկայացված մի բանաձև, և համարձակվելով խոսել ձեզ շափազանց ծանոթ թեմայի մասին, ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն բանին, թե ի՞նչ է այն նախատեսում:

Դրեն ՆԱԽԱԳԱՀ. Դուք ունե՞ք վերանայված կրկնօրինակը:

Դրեն ՍՍԻՒԹ. Ես ունեմ սեպտեմբերի 9-ով թվագրված կրկնօրինակը:

Դրեն ՆԱԽԱԳԱՀ. Այո՛:

Դրեն ՍՍԻՒԹ. Եվ այն ցույց է տալիս, թե ինչ նկատի ուներ սենատոր Ուիլյամսը, եթե հանձնարարեց այրն Հիշրոբին¹²² ներկայացնել բանաձևը: Ես կցանկանայի կարդալ այն՝ արձանագրության մեջ ընդգրկելու համար, եթե թույլ կտաք:

Ենասոր ՈՒԽԱՑԱՍՍ. Թույլ տվեք նայել մի պահ: Ենթահանձնաժողովի ըննարկմանը փոփոխված բանաձևն է

¹²¹ Բնագրում՝ this Turkish question:

¹²² Հիշրոբ (G. M. Hitchcock) մասին տե՛ս «Շանոթագրություններ» բաժնում:

ներկայացված: Այո, սա փոփոխված բանաձևն է:

Պրն ՍՄԻԹ. Այո, սը՝ Այժմ, ես ընդունում եմ, որ այն տմնեն, ինչ ձեզ ասացի այդքան հոգնեցուցիչ տեսականությամբ, իրականում մքնոլորտը ձեզ ներկայացնելու համար էի, և ներողություն եմ խնդրում այսքան ժամանակ խլելու և չարաշահելու համար, բայց դուք պետք է ներողամիտ լինեք: Ձեր առջև երբեք չի եղել և ոչ էլ կլինի որևէ հարց, պարոնայք, նոյնքան նշանակալի, որքան այս հարցն է: Ես դա ասում եմ ամենայն անկեղծությամբ, և երանի ես կարողանայի դա ասել Միացյալ Նահանգների ամբողջ ժողովրդին:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք դա ասում եք այնպիսի շեշտադրմամբ և այնպիսի տպավորիչ բառերով, դուք խոսում եք բաղարակա՞ն, թե՝ մարդասիրական տեսանկյունից:

Պրն ՍՄԻԹ. Ես մասնավորապես նկատի ունեմ մարդասիրական տեսանկյունը, և, ի վերջո, սենատո՞ր, չնայած դուք պարոնայք, անշուշտ՝ և ես խոսում եմ տարրական բաների մասին, կապված եք Միացյալ Նահանգների Սահմանադրությանն աջակցելու և ամեն ինչ ձեր երդումներով սահմանադրական եղանակով անելու հետ, մնացած ամեն ինչը պարզապես բյուրոկրատական բաշրջուկներ են՝ որ պետք է պոլկեն և դեն նետվեն, այնպիսի մի հարցի կողքին, ինչպիսին դուք հիմա ունեք ձեր առջև, և երբ ամերիկյան ժողովրդի խիլճն արթնանա այս հարցի հանդեպ, դրան ընդունացող ցանկացած որ կմերժվի:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք նկատի ունեք ամեն ինչ, բայց մեր սահմանադրական պարտականություններից:

Պրն ՍՄԻԹ. Այո, ամեն ինչ, բացի ձեր սահմանադրական պարտականություններից: Դուք կհասկանաք դա: Ես կկարդամ սենատոր Ռիխամսի բանաձևը: [Կարդում է.]¹²³

Նկատի ունենալով, որ բրիտանական գորքերի դրւութեալում Կովկասից և Հայաստանից հայ ժողովրդին անօգնական կրողնի քրդերի և թուրքերի հարձակումների դեպքում —

Սա կատարյալ ճշմարտություն է, ինչպես իմ գործընկերը դոկտոր Մեյնը կվկայի բռակեներ անց —

և քանի որ ամերիկյան ժողովուրդը խորապես և անվերջորեն համակրում է հայ ժողովրդի ազատության, խաղաղության և առաջադիմության ձգուումները —

Սա բացարձակ ճշմարտություն է, Սենատո՞ր, բացարձակ ճշմարտություն, ինչպես ցուց է տախի 35 000 000 \$-ի շոշափելի նվերը՝ միանգամայն անկախ ամեն ինչից —

Ուստի՝

Կոնգրեսում հավաքված Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատի և Ներկայացուցիչների Պալատի կողմից որոշվեց, որ¹²⁴ Սենատի կարծիքով Հայաստանը (ներառյալ Թուրքահայաստանի վեց վիլայեթները և Կիլիկիան), Ռուսահայաստանը, Աղրբեջան նահանգի հյուսիսային հատվածն ու Տրապիզոնը —¹²⁵

կայանում էին խնդրու առարկա խումները Սենատի ենթահանձնաժողովի կողմից: Լուսների արձանագրությունները սկսվում են հենց այդ բանաձևի տերևոով (բնագրում էջ 3): Մեր կողմից ներկայացրած սույն աշխատության շարադրանքում բանաձևը տեղ է գտել 29-30 էջերում, ուր նաև տրվում է բանաձևի կարուցվածքի՝ ենթահանձնումների վերաբերյալ բացատրական տողական թիվ 3):

¹²³ Պրն Սմիթը ստորև ընթերցում է սենատոր Ռիխամսի ներկայացրած բանաձևի բովանդակությունը, որի՝ բնարկման և ընդունման հարցի շուրջ

¹²⁴ Շեղագիրը համապատասխանում է բնագրին:

¹²⁵ Սենատոր Ռիխամսի կողմից ընդառնվելուց հետո պրն Սմիթը շարունակում է ընթերցել բանաձևի տեքստը և կրկնում է արդեն ընթերցած

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Հենց այդտեղ, դա չպե՞տք է շնչիլի
Պրև ՍՄԻԹ. Դրա վերաբերյալ կարծիքները տարրեր են
արդյո՞ք այդ նահանգը, որտեղ 300 000 հայեր են բնակվում, պետք
է ազատազրվի հայերի կողմից և չկազմի Հայաստանի
Հանրապետության մաս: Կարծիք պետք է հայտնեն այս հայ
պարոնները, ովքեր տեղյակ են դրանից:

Սենատոր ՎԻՃԱՍՍՈՒ. Շատ լավ:

Պրև ՍՄԻԹ. (շարունակելով կարդայ.)

Կոնգրեսում հավաքված Ամերիկայի Սիացյալ Նահանգների
Սենատի և Ներկայացուցիչների Պալատի կողմից որոշվեց¹²⁶, որ
Սենատի կարծիքով Հայաստանը (Ներառյալ Թուրքահայաստանի
վեց վիլայեթները և Կիլիկիան), Ռուսահայաստանը, Աղրճան
նահանգի հյուսիսային հատվածն ու Տրապիզոնը պետք է լինի
անկախ, և որ Սենատը լիահույս է, որ Խաղաղության վեհաժողովը
միջոցներ կձեռնարկի՝ օգնելու Հայաստանին անկախ
հանրապետություն հիմնադրելու:

Մաս 2. Սիացյալ Նահանգների նախագահն այսու
իրավասու է օգուագործել Սիացյալ Նահանգների ռազմական և
ծովային այնքան ուժ, որքան իր կարծիքով նպատակահարմաք
կլինի Հայաստանում խաղաղության և հանդարտության
պահպանման համար, մինչև այդ երկրի գործերի կարգավորումն
ավարտվի պետությունների միջև պայմանագրով:

Այժմ, նկատեք, Ենթահանձնաժողովի պարոնայք, որ այս
կետի ընդունումը Սիացյալ Նահանգներին չի պարտավորեցնում

սույն պարբերությունը: Կրկնությունը տեղ է գտնել նաև արձանագրություններում:

¹²⁶ Շեղագիքը համապատասխանում է բնագրին:

որին, այլ բանի, բացի առժամանակ խաղաղության և կայունության
ձեռք բերման: Ես կվերադառնամ դրան: [Շարունակելով կարդայ].

Մաս 3. Նախագահն այսու իրավասու է առկախելու
օտարերկրյա զինվորազրման օրենքն այնքան ժամանակ, որքան
այն անհրաժեշտ է Միացյալ Նահանգների հայերին՝ դրամ և գենք
ու զինամթերք հայթայթելու և իբրև զինված ուժեր Փոքր Ասիայի
իրենց հայրենակիցներին օգնության հասնելու համար:

Ես կվերադառնամ դրան մեկ րոպեից: [Շարունակելով
կարդայ]:

Մաս 4. Սույնով հատկացվում է զանձապետարանի
յունիացած պաշարներից, և ոչ այլ կերպ, § —ի¹²⁷ չափով
գումար՝ նախագահին թույլ տալու իրազործել վերոհիշյալ
բանաձեռնությունը:

Այժմ, պարոնայք, ինչպես միշտ հաշվի առնելով մեր
Սահմանադրության սահմանափակումները, ձեզանից և ձեր
գործընկերներից և Ներկայացուցիչների պալատից է այս պահին
կախված այն հարցը, թե արդյո՞ք աշխարհի ամենախիզախի,
առևելանախաձեռնող, ամենախելացի ազգից 1 500 000-ը պետք է
ոչխանա, թե ոչ: Թույլ տվեք ներկայացնել այդ առաջարկը: Տայի
մասին միջին ամերիկացու սովորական կարծիքը՝ խելացի,
գերիսելացի, առևտրական մարդն է: Ենթադրվում է, և
բոլոր բրամետ թշնամիների կողմից նրանց մեղադրանք է
ներկայացվում առ այն, որ նրանք ձրիակերներ են և
առիսախումներ ու պատճառը, որ նյանց ասում և հալածում են
բարերը, իրենց կրոնն է և այն, որ ուր կ նրանք գնում են, այնքան

¹²⁷ Շապրում որևէ թիվ նշված չէ:

Են հալածում խեղճ թուրքերին, մինչև մարդասպանությունն ու սպանությունը անհրաժեշտություն է դառնում: Այժմ, հայերի գրեթե 85 տոկոսը զյուղատնտեսությամբ զբաղվող մարդիկ են: Այս մարդկանց ընդամենը 15 տոկոսն է, որ արհեստավորներ և մասնագետներ են: Ճիշտ է այն, որ թուրքերը՝ մեծ հետևողականությամբ և անկողմնակալությամբ, չեն խնայել նրանցից ոչ մեկին: Ամենանուրբ, կատարյալ և քնքուշ տիկինայր ուղարկվել են անապատ և թաղանթել ու թաղանթել¹²⁸ այն աստիճանի, որ մասգործի դանակը բարեգութ կլիներ այն մասիվան դիմաց, որին նրանք բախվեցին:

Ես գիտեմ մի դեպք՝ կապված 34 կաթոլիկ միանձնուիկիների հետ, ում հետ այնպես էին վարվել, որ նրանցից մնացել էին միայն երկուաը: Ես պատմություն եմ լսել շուրջերից մի հայ աղջկա, ում դեմքը կտրատած և խոր վերքերով պատված էր, ով կանգնած էր շարքում և ում առաջարկվեց կյանք՝ երեւ նա մուտքման դառնար, և երբ նա մերժեց, հարվածն իջալ՝ սխալ ուղղությամբ: Նա ընկապ սպանվածների կույտի մեջ և նրան ուղեկցող քույրը, փնտրելով նրան, նկատեց նրա ոտքերի ցնցվելը և նրան դուրս քաշեց: Հավասար, միատոն, անզգացմունքային ձայնով նա պատմում է պատմությունը: Նա 17 տարեկան է: Նա զնում է իր աշխատանքին¹²⁹:

Ես լսել եմ մի ամերիկացի միսիոներ տիկնոց պատմությունը, ով տարիներ շարունակ եղել է այնտեղ: Այդ փախատականներին ուղեկցելու նրա պատմությունը տեղեկացնում էր, որ իրեն նույնպես՝ հյուծված, ցեխու և վերջին աստիճանի ուժասպատ եղած, թուրքերն արգելել են դուրս գալ կայսրու-

¹²⁸ Սույն նախադասության մեր կողմից շեղատառով առանձնացված հատկանիւթեան մեջ ներկայացված է հետևյալ վերպ... ladies have been sent out into the desert and plundered and plundered...;

¹²⁹ Տվյալ պարբերության վերջին նախադասությունները ներկայացվում են համապատասխան բնագրի ներկա անորոշ ժամանակով:

թուրքությունը:

Մենասոր ՈՒԽԱՅԱՍՍ. Ինչո՞ւ:

Պրն ՍՍԻԹ. Քանի որ նա գիտի ճշմարտությունը:

Չնայած այդ ամենին, այժմ Ամերիկայում, և՝ Լոնդոնում, և՝ Կոնստանդնուպոլսում, և՝ ամենուր ազդեցիկ ուժեր են գործի դրվել՝ Թուրքիային մեկ այլ հնարավորություն ընձեռելու համար:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ցանկանում եմ հարցնել սա: Դուք շատ զարմացնող հայտարարություն արեցիք մի փոքր առաջ Թուրքիայի իշխող իշխանությունների և այն երկրների կառավարությունների մասին, որոնք հավանություն են կին տվել Թուրքիայի կողմից կատարվող կոտորածներին:

Պրն ՍՍԻԹ. Այս:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Դրա վրա հրավիրվել է խաղաղության հանձնաժողովի ուշադրությունը:

Պրն ՍՍԻԹ. Խաղաղության կոմիտեն, պարունակած գիտի այն ամենը, ինչ դրկանը ՍԵյնը և մեր գործընկերները գիտեն, և անհամեմատ ավելին: Միացյալ Նախանգների խելացի, ընդունակ երիտասարդ սպաները՝ եռանդուն, հիանալի երիտասարդներ, ում ես հանդիպել եմ ամենուր, անցել են ամբողջ այդ երկրով և զեկուցումներ գրել դրա մասին: Բրիտանացի սպաներն արել են նույնը:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Այդ դեպքում, ինչպես ու է հնարավոր, որ խաղաղության հանձնաժողովը չի նկատել այդ իրադրությունը:

Պրն ՍՍԻԹ. Դա առեղծված է, այն նախազահ, որը ես չեմ փորձի բացահայտել:

Մենասոր ՈՒԽԱՅԱՍՍ. Դուք չե՞ք կարծում, որ դա զիսւրվորապես այն բանի պատճառով է, որ նրանք անելու այնքան շատ բան ունեին, որ ինչ-որ մի բան պետք է թողնվեր վերջում:

Պրն ՍՍԻԹ. Դա այն է, ինչ ես ասել եմ իմ հրատարակած հոդվածներում և ինչը, ես կարծում եմ, ի վերջում —

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Մարդկանց կոտորածի հարցը վերջում չի թողնվում սովորաբար:

Պրև ՍՄԻԹԸ. Դա մի հարց է, որի վերաբերյալ ես ունեմ իմ սեփական տեսակետը, բայց կարծիք չեմ հայտնի: Սակայն ցանկանում եմ սա հասցնել յուրաքանչյուրի գիտակցությանը, ով հետաքրքրված է այս պատմությամբ: Պատճառը, թե ինչո՞ւ են հայ քրիստոնյաները հալածված թուրքիայում, երկակի է: Առաջին, նրանք զուսպ են, նրանք աշխատասեր են, նրանք տնտեսող են, և ուր որ հենարավոր է, նրանք բարգավաճում են:

Երկրորդ, 1000-1300 տարի նրանք չեն հրաժարվել իրենց կրօնից: Միակ բանը, որ նրանք պետք է անենին, դա թուրք մուսուլման դառնալի էր, և այս ամենը հեռու կլիներ նրանցից:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Դա թաթարների հարձակումների պատճառն էր:

Պրև ՍՄԻԹԸ. Թաթարները թալանել են նրանց:

Սենատոր ՀԱՄԿԻՆԳ. Իսկ քրդերի հարձակումները:

Պրև ՍՄԻԹԸ. Քրդերը նույն կերպ: Ո՞չ թաթարները, ո՞չ քրդերը, դուք հասկանում եք, որ ճիշտ չեր լինի իմ դոգմատիկ լինելն այնտեղ կարծատե այցելությունից հետո, սակայն ֆանատիզմը թուրքերի կողմից է, ոչ քրդերի կամ թաթարների: Բայց հասկանալու նախնական բանն այն է, որ թուրքի դեպքում մուսուլմանական կրոնն այնքան անբաժանելի է միահյուսված իր քաղաքական համակարգի հետ, որ այն չի կարող առանձնացվել: Ինչպես մի հայ ինձ հայտնեց՝ ասացվացքը հետևյալն է. «Սուլթանն Աստծոն ստվերն է Երկրի վրա» և երբ նա կամ երեքը, ում անունները են տվեցի¹³⁰, նրա անունից հրաման են տալիս, թուրքը կսպանի իր ամենամտերիմ և սիրելի ընկերոջը և կիրկի իր հոգին դա անելով: Արևմուտքի մարդկանց համար դժվար է դա հասկանալը, սակայն

դա է փաստը: Ինչպես նաև փաստ է այն, ինչ ինձ բացատրեց իմ արեւելյան ընկերը, ում բացարձակ անաշառության վրա ես չնշին կասկած անզամ չունեմ, որ որևէ մեկի հրաժարվելը մուսուլմանական կրոնից դա թուրքական պետության դեմ գլխավոր հանցագործությունն է: Նրան կարող են կախաղան բարձրացնել դրա համար, և մարդկանց կախում են դրա համար: Այդ պայմաններում, ունենալ չափազանց խելացի մարդկանց միասնություն Բաղդադի տարածաշրջանում՝ իսկ ծրագիրը մշակվել էր Բեղլինում, Վիեննայում և Կոնստանտինուպոլսում, բարձրական վտանգ էր, որը նրանք մտադիր չեին հանդուրժել: Ես ասեցի, որ այդ պետությունների կատարյալ իմացությամբ և թողտվությամբ են այս կոտորածները տեղի ունեցել: Սա շատ լուրջ հայտարարություն է անելու համար, սակայն թույլ տվեր ձեզ ուղղորդել դեպի պրն Հենրի Սորգենթաուի պատմությունը, որտեղ նա դա ցույց է տալիս՝ քայլ առ քայլ: Եթե նա դեսպան էր Կոնստանդինուպոլսում՝ արել է այն ամենը, ինչ կարող էր՝ դիմերով թուրքական կառավարությանը դադարեցնելու համար այդ բանները: Եվ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի¹³¹՝ գերմանական կարիքների թույլտվությամբ հրատարակված վերջին հրապարակումները ցույց են տալիս, որ գերմանացի սպաններից ումանք բողոքել են, նախքան այս ամենի սկսվելը:

Այժմ, ես ասում եմ, որ գործը՝ խնդիրը, որ դուք, պարոնն յք, պետք է լուծեք՝ ելնելով այն հենքից, որ ես փորձեցի շատ համառոտ, ուրվագծային և ոչ համապատասխան ձևով ձեզ ներկայացնել, հետևյալն է. հնարավո՞ր է արդյոք ձեր կողմից՝ սահմանադրության շրջանակներում և հաշվի առնելով այն փաստը, որ դուք ներկայացնում եք ամերիկյան ժողովրդի զգացմունքները՝ Հայաստանում խաղաղություն և հանգստություն

¹³⁰ Պրև Ամիրը, հավանաբար, նկատի է ունեցել իր կողմից վերոնշյալ Սեծ տերությունները:

¹³¹ Յոհաննես Լեփսիուսի (բնագրում՝ Johann Lepsius) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

պահպանելու հարցի վերաբերյալ, ինչպես նաև նպատակահարմար է արդյոք ձեզ համար՝ Միացյալ Նահանգների կողմից պայմանագրով երկրի այս հարցերի կարգավորումից հետո, զորամիավորումներ ուղարկել բրիտանական զորքերի տեղը զրադեշնելու համար կամ որևէ բան անել՝ ամերիկյան շահերը փրկելու համար։ Այնպես որ, սա տարրական օրենք է —

Սենատոր ՈՒԻԼԵԱՍՍ. Ի միջի այլոց, հենց առավոտյան ես մի նամակ էի կարդում, որտեղ առաջարկվում էր, որ թերեւ մենք այս բանաձևում՝ այն ընդունելու դեպքում, պետք է ներառներ. «Սեր վերջին դաշնակիցների կամ զործակիցների զորամասերի հետ համագործակցությամբ», այլ խոսքերով, փորձել ապահովել միջազգային զորք զուտ ամերիկյան զորքի փոխարեն։ Ես կարծում եմ, որ կարիք չկա այդ մասին նշել բանաձևում։

Պրեն ՍՍԻԹ. Իհարկե ո՛չ։

Սենատոր ՈՒԻԼԵԱՍՍ. Քանի որ բանակցությունների միջոցով, եթե մենք ցանկանանք այստեղ ուղարկել մեկ դիվիզիա կամ ինչ էլ որ ուղարկենք, մենք կարող ենք անել այնպես, որ ֆրանսիացիները կամ իտալացիները, կամ բրիտանացիները որոշ զորք ուղարկեն մեզ հետ մեկտեղ։

Պրեն ՍՍԻԹ. Միանշանակ։

Սենատոր ՈՒԻԼԵԱՍՍ. Ես բավականին լավ եմ հասկանում, թե այս պահին ժողովուրդն ինչ է մտածում Բրիտանիայում։ Նրանք մտածում են, որ Մեծ Բրիտանիան պարտադրված է ֆինանսապես և այլ առումներով, ու ստիպված է պահպանել աշխարհի կարգուկանոնը, և նրանք մտածում են, որ այդ հսկողությունը պետք է համատեղ լինի՝ բացի որոշ տեղերից, ուր որևէ մեկը ևս բացառություն կկազմի։ Սակայն ես չեմ ընդգրկել դա բանաձևում, քանի որ ինձ թվաց ձեզ այդպես չի թվում, սենատորնե՞ր, որ դա անօգուտ կլիներ։

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դա կարող է արվել դեպարտամենտի¹³² կողմից։

Պրեն ՍՍԻԹ. Դա ավելորդություն է։

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Պրեն Սմիթի վկայությունը շատ հետաքրքիր է, սակայն մեր ժամանակը սահմանափակ է, ենելով մյուս վկաների նկատմամբ ունեցած հարգանքից, որոնք սպասում են, թե եթե ենք նրանց ունկնդրելու պետք է խնդրենք ձեզ լինել որքան հնարավոր է հակիրճ։

Պրեն ՍՍԻԹ. Ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը իրավիրել այս բանաձևի երրորդ հոդվածի կիրառելիության վրա մասնավորապես այս երկրում հայկական բանակ հավաքագրելուն, զինելուն և ֆինանսավորելուն՝ կամավոր իհարկե։ Դա ես պետք է բողնեմ այն հայ զենթելմենների հայեցողությանը, ովքեր այստեղ են։ Ես հարցուի ժամանակավոր հանրապետության¹³³ ռազմական նախարարին¹³⁴, ում անունն այս պահին չեմ հիշում, թե որքան էր Ռուսահայաստանի աշխատումն այն ժամանակ, եթե ես այնտեղ էի։ Նա ասաց, որ դա մոտավորապես 30 000 էր։ Ես ցանկանում եմ ասել, որ առաջին հարցերից մեկը, որ կարող է հեշել խիզախ ամերիկացու շուրջերից, ում այս ամենը պատմում են՝ հետևյալն է. «Ի՞նչ տեսակի մարդիկ են դրանք, որ կանգնում և թույլ են տալիս իրենց, ոչնչացնել, ինչպես հորթեր՝ առանց դիմադրելու։ Նրանք պետք է որ ինեղա, վախկու ազգ լինեն»։ Փաստն այն է, որ թուրքերը շատ զգույշ են եղել նրանց զինաքանիքի հարցում։ Նրանք (հայերը – Ա.Դ.) հնարավորություն չեն ունեցել, բացառությամբ Ռուսահայաստանում։ Նրանք այժմ միավորված են մի գեներալի

¹³² Խորքն ԱՍՆ-ի արտաքի գործերի վարչության (նախարարության) պետական դեպարտամենտի մասին է։

¹³³ Պարուն Սմիթը նկատի ու ունեցել Հայաստանի Առաջին Հակապետությունը։

¹³⁴ Բնագրում՝ secretary of the war.

հրամանատարության ներքո, որն այժմ Լոնդոնում է և լինելու է Միացյալ Նահանգներում: Նրանք ունեն 18 000-ից մինչև 20 000-անոց բանակ՝ երկրի այդ շրջանի լավագույն երիտասարդ տղամարդկանցից: Նրանք հրաշալի մարտիկներ են՝ երբ պատշաճ զինված են:

Անհանոր ՀԱՐԴԻՆԳ. Ոչ միայն դա, այլև գեներալ Ալենբին է բարձր գնահատել նրանց այն բանի համար, ինչ նրանք արեցին Հայաստանում և Պաղեստինում՝ հետ պահելով քուրքական ուժերին, որոնք կարող էին կանգնեցնել բրիտանացիներին Եփրատի մոտ:

Դրև ՍՍԻԹ. Այս ժողովուրդը տառապել է ավելի, քան որևէ այլ ժողովուրդ աշխարհում: Եվ նրանք կրավորական դիրքում չեն եղել, նրանք պարզապես չեն նստել ու սպասել հալածվելուն: Նրանց բնակչության հավանաբար 30 տոկոսը թուրքայինում սպանվել է պատերազմի պատճառով, բայց չնայած դրան, նրանք հսկայական նշանակություն են ունեցել ուսումնական գործողությունների համար, ինչպես նշեց գեներալ Ալենբին:

Մեկ քան ևս՝ ևս, ցավոք, ավարտում եմ: Եվ պատճառը, որ ես «ցավոք» պես է ավարտեմ, այն է, որ հենց որ ես վերջացնեմ ու գնամ այսուղից, ես անմիջապես կոկում հիշել քաներ, որոնք պարտավոր էի ասել, բայց ես մեկ այլ հնարավորություն չեմ ունենա:

Ես մի քան: Որքա՞ն գանձ պես է ծախսվի, որքա՞ն է Միացյալ Նահանգները կամենում կորցնել կամ ներդնել այս երկրում: Ես ցանկանում եմ խուսափել բոլոր այն բարդություններից, որոնցից կարող եմ: Ես չգիտեմ, թե խաղաղության վեհաժողովն ինչ կորոշի, իմ կարծիքը հետևյալն է, եթե Հայաստանի Հանրապետությունը հիմնադրվի Աև ծով ելքով և Կիլիկիայի գավառ ելքով, այս երկու գավառները կվճարեն 250 000 000 դոլար վարկի տոկոսները: Դա հնարավորություն կտա

Ժամանակավոր կառավարությանը մինչև վերջ մարելու այնտեղ ներդրված յուրաքանչյուր դոլարը: Դա ոչ թե բարեգործական նվեր է, որն անհրաժեշտ է կատարել, այլ պարզապես օգնություն է մարդկանց՝ դուրս գալու այդ վիճակից:

Այժմ՝ մյուս կողմից, ինչ վերաբերում է սահմանադրական հարցին, ես չեմ ասում, որ դա նախատելի, ծաղրելի կամ հեզնելի է, բայց՝ փաստ է, որ մենք դժվարություն չենք ստեղծում մեր գործերը տեղակայելու Կոստա Ռիկայում և Հարավային Ամերիկայի այլ կետերում՝ պահպանելու շաբարի պլանտացիաները: Մենք հիմա գործեր ունենք Հայրիում: 200 մարդ բարեգործական առարելությամբ աշխատում է Հայաստանում և միլիոնավոր ամերիկյան գումարներ են ներդրվել այստեղ, պարզապես այդ հիմքի վրա: Հայաստանի հեռավոր սարերում ես տեսել եմ պատանի բրիտանացի ենթասպայի՝ երկու կամ երեք հնդիկ զինվորների ուղեկցությամբ, բարոյական ազդեցությունը: Այս մարդիկ նահանջում են: Նրանք բավական վայրագ են, բայց վախիենում են արևմտյան զինվորից: Ուստի ամենափոքր ուժն ունի հսկայական ազդեցություն: Եթե մի ուսումնավ կարողանար զալ Կոնստանդնուպոլիսից և երևար այս ավերի մոտ և ուղարկեին օդանավեր երկինքն ի վեր, այնպես որ դրանք տեսանելի լինեն այդ ցեղերին՝ բարոյական ազդեցությունը հսկայական կլինի:

Թույլ տվեք ընթերցել, թե ինչպիսին է իրավիճակն այսօր և ես կավարտեմ: Սա գնդապետ Հասկելից է: Սա հեռազիր է Թիֆլիսից՝ Մերձավոր Արևելքի նապատամատույցի գրասենյակ Նյու Յորքում: Այն ստացվել է հոկտեմբերի 5-ին: [Կարդում է.]

ԹԻՖԼԻՍ, հոկտեմբերի 5, 1919 թ.

ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, Նյու Յորք

Թիվ 182. Ստորև ներկայացվում է մինչ օրս կատարված աշխա-

տանքների ամփոփ նկարագիրը: Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի գործառույթները ստանձնվում է սեպտեմբերի 5-ին: Բանակի անձնակազմը ժամանել է 15-ին: Գույքազրվում են գույքային ֆոնդները: Վերակազմակերպումը ներառում է կենտրոնական գրասենյակի բաժանումը հետևյալ հինգ սեղիանների: (1) վարչություն, (2) փաստացի պայմանների, կարիքների հետաքննություն, (3) որբանոցների, հիվանդանոցների և արտադրական աշխատանքների կազմակերպում, (4) գնումներ, պահեստավորում, բեռնափոխադրում, բաշխում, (5) բյուջեի, հատկացումների, առողջտի և դրամափոխանակության կազմակերպում: Ըստ շրջանների և ենթաշրջանների՝ նշանակված ոլորտները գործելու էին Թիվլիսից, Բաթումից, Կարսից, Երիվանից, Ալեքսանդրապոլից և Ղարաբղիսայից: Ուր հարյուր հազար շրավորների, 250 000 անտունների տրամադրվել է հեարավոր ամեն օգնություն՝ բաշխելով հաց, ալյուր, ցորեն և անվաճար ճաշարան: Այժմ կա 2510 (?)¹³⁵ տոննան ցորեն, Կիբափու Դիմիտրի¹³⁶ նախկին բեռնափոխադրումները կարող են շուտափոյթ ապահովվել Կուրանից, կասկածելի է, եթե ընդհանուր 8100 տոննայի մասցործն այս թիվն է, ներտեղով կամավոր բանակի կարիքները: Բեռնափոխադրումը մեծապես բարդացել է ինքնին Հայաստանի, Վրաստանի և Աղրեջանի փաստով: Ամբողջ շարժակազմը լավագույն դեպքում անհամապատասխան է: Վրաստանի արտակարգ կարևորությունը դարձեց նրան իրականում գործակալ, որը, փաստորեն, այսուելից բոլոր արտահանումների արգելքն է, հետաձգելով Հայաստանին մարդասիրական օգնության առարկում: Հայաստանը նաև մերժում է կերակրել հայ զաղթականներին, որոնք հիմա գտնվում են Ախալքալաքում, Բորժոմում¹³⁷ և Ռուսահայաստանի պայմանական սահմաններից դրու այլ շրջաններում՝ խաղաղության վեհաժողովի որոշումներով այս տարածերը հավանաբար զիջվում են այլ պետությունների: Դենիկինի կողմից Հուսիսային Կովկասից դեպի հարավ սենյամթերքի բռնազրավումներն ու առարկումների արգելքները, բարձրացնում են տեղական գները, մեծապես սահմանափակում հասանելի մատակարարումները: Բեռնափո-

խադրումներից ամենաապահովը գնացքներն են: Կողոպուտները հաճախակիացել են՝ բոլոր բրիտանացիների՝ բացառությամբ Բաթումի, դուրսքրման ավարտից ի վեր, գնացքների հակիչների պակասությունը, տարածված ընդհանուր անօրինականորյունը մշտապես վտանգում են հումանիտար օգնության մեր մատակարարումների առարկումը հեռավոր շրջաններ և ստիպում մեզ կազմակերպել գնացքների հսկողություն և այլ¹³⁸ ծառայությունները: Բարումի կայարանի անհարմարությունները լրացուցիչ խօչընդուն են: Այս դժվարություններն արագորեն հաղթահարվում են: Արդեն տեղաբաշխված սենյամթերքի խիստ հսկողությունը հնարավոր դարձեց ապահովել վերջինիս տրամադրվելիք բաժնի ավելացում: Կազմակերպումը հիմա ավարտված է, գործողություններն օրոք ընդլայնվում են, բեռնաթափումների կենտրոնական բաշխումը կատարում է Ալեքսանդրապոլը, որտեղ հույս կա ապահովել որոշ պահեստավորում անկանխատեսելիությունների նպատակով, նաև Հայաստանի կառավարությունից ձեռք են բերվել զինվորական մեծ բարաքներ, որ կիննարունացվելն ենթունից վաթսուն հազար զաղթականներ, ովքեր կաշխատեն ճանապարհների վրա, կկատարեն հանրային աշխատանքներ, նվազեցնելով ապահովման ծախսերը: Տեսահայաստանի ամբողջ տարածքում գործող 49 որբանոցների տանիներեք հազար երկու հարյուր բանակինց որբեր կանանց հետ միասին ներկայում գրադադար են թերեւ արդյունաբերական աշխատանքներում, որը՝ հույս ունեմ շուտով կդատնա ինքնաֆինանսավորվող քանի որ մեկնարկում է արտադրանքի արտահանումը Անդրկովկասից: Տասնչորս հիվանդանոց 1800 գրադադար մահճականներով արդեն գործում են, մյուսները նախատեսվում են: Մեր աշխատանքի նպատակը՝ հարյուր տոկոս օգնությունն է: Զերքբերումների հավանականությունը ներկա կազմակերպության ընդլայնումն է:

ՀԱՍԿԵԼ

Սա է իրավիճակը, պարունակածական: Ահա մեկ այլ

¹³⁵ Փակագետն ու հարցական եշտեր՝ համապատասխանում է բնագրին:

¹³⁶ Բնագրում՝ ex-cargoes Kickapoo Dimitri.

¹³⁷ Բնագրում՝ Borgom.

հեռագիր՝ գնդապետ Լոգանից¹³⁹, հենց նոր ստացված [կարդում է]:

ՓԱՐԻԶ, 1919 թ., հոկտեմբերի 1, երեկոյան ժամը 10:47,
հետևյալ հաղորդագրությունը ստացվել է Հասկելից

ԹԻՖԼԻՍ, սէպտեմբերի 27

«Հենց նոր ավարտել եմ ստուգումները Հայաստանում։ Նպաստամատուցի իրավիճակը բարդացել է այս փաստի հետևանքով, որ Հայաստանի կառավարությունը համակրում է Շենիկինին, մինչդեռ Վրաստանը և Ադրբեյջանը միավորվել են ըստքեմ Շենիկին։ Թուրքերի կողմից օգնություն և աջակցություն ստացած թարարները ստիպել են հայ բնակչությանը լրել Բգդիրը և ճնշում են գործադրում Կարսի և Էրիվանի վրա։ Այս իրավիճակը մեծապես ավելացնում է փախստականների թիվը և Կուրանից փոխադրումը դարձնում անորոշ։ Կուրանում ձեռք բերված Կիրափու կարգոյով փոխադրված ցորենի մի մասը դեռ տեղ չի հասել։ Նախիջևանից Պարսկաստան երկարուղին որոշ ժամանակով ընդհատվել է և կմաս արդարես մինչև պայմանները շարելավվեն, այս պայմաններում միակ վստահելի մատակարարման աղբյուրներ են Միացյալ Նահանգները կամ այլ արտաքին աղբյուրներ։ Չեզոք տակ եղած պաշարները բավարար են մինչև դեկտեմբերի 1-ը։ Շուրջ 800 000 հայ չքավոր են, որոնցից շատերն օգնության կարիք կունենան մինչև հաջորդ տարվա աշնան բերքահավաքը։ Մենք ամսական մոտ 7000 տոննա ցորենի այսուրի կարիք ունենք սկսած դեկտեմբերի 1-ից։ Ի հավելումն, մանկական սննդի մեկ բեռնատար կժամանի դեկտեմբերի 1-ին, հաջորդ երեք ամիսների ընթացքում 150 000 երեխաների սննդակարգն ապահովելու համար։ Կովկասն ունի խառը բերնափոխադրումների՝ հասարակ գործիքների, գյուղատնտեսական սարքավորումների, կոշիկների, ամանեղենի, խոհանոցային սպասիք, ապակե սպասիք, օճառի, պատոհանի ապակու, շինարարական մեխերի, կեկտրական լամպերի, բրդյա և բամբակյա հագուստի, ներքնաշորերի և խինինի ու այլ հասարակ դեղամիջոցների շատապ

կարիք։ Գոյություն ունեցող պայմաններում այս ապրանքները կարող են փոխանակվել ծխախոտով և գորգերով, բայց ոչ սննդամթերով։ Դեկտեմբերի 1-ից Կովկասը՝ ի հավելումն թվարկված ապրանքների կունենա ամսական 500 000 դոլարի կարիք՝ օգնության ծրագրի ընդարձակման և երկարուղու վերահսկման ու ընդլայնված անձնակազմի համար։ Ուղարկեք 100 ամերիկացի՝ անձնակազմի համար, իիմնական ապրանքների պաշարներ երեք ամսվա համար՝ սկսած դեկտեմբերի 1-ից։ Նովոռուսիակում¹⁴⁰ պահպանված Կիրափու կարգոյով փոխադրելիք ընդեղենի մոտ կեսն արդեն առարվել է Բայում և մնացորդը կարծես թե ճանապարհին է։

ԼՈԳԱՆ

Ահեա պարոն Ջեյմս Ա. Մալորլի¹⁴¹ հեռագիրը, ով Հայաստանի կառավարության ներկայացուցիչն է Լոնդոնում [կարդում է]:

Լոնդոն, հոկտեմբերի 5, 1919 թ.

ՍՎԱ.ԶԼ.Ի,

751 Օլդ Սաութ Քիլինգ, Բուքին, Մասս.

Փոխանցել եմ ձեր հեռագիրը Նուրարին։ Գեներալ Անդրանիկն այսուղի հայերի շրջանում միջոցներ է հավաքում և հազուստ գնում ու ուղարկում Անդրկովկաս՝ հոյս ունենալով, որ հնարավորինս շատ հայեր՝ տղամարդկան, կանայք և երեխաներ, կկարողանան փրկվել։ Նրանք այժմ ակնհայտորեն լրված են իրենց քրիստոնյա բարեկամների կողմից և շունեն գենք ու զինամթերք իրենց պաշտպանելու համար։ Հալածվում և հետապնդվում են՝ մտահոգիչ, վտանգավոր վիճակներում են հայտնվել երանք, ովքեր փրկվել են մուտքման, թուրք և թարար թշնամիների վայրագությունից, ովքեր այժմ կրկին սպառնում են նրանց բոլոր

¹³⁹ Գնդապետ Լոգանի (Col. James Logan) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում։

¹⁴⁰ Բարգրում՝ Navorissisk։
¹⁴¹ Ջեյմս Ա. Մալորլի (James A. Malcolm) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում։

կողմերից: Մոտավոր ձմեռվա խատություններն ավելացնում են փոանգը: Անդրանիկը կարծում է, որ շատ չափավոր օտար ուժը կրավարարի գրավելու և Հայաստանում խաղաղություն հաստատելու համար և երկու տարվա գրավումը բավարար կլինի հայերին շուկա քաշելու ժամանակ տալու համար՝ վերաբնակվելու և ինքնապաշտպնդելու ու իրենց երկիրք պաշտպանելու բավականաշահի ուժեղ ուղմական ուժ ատեղելու համար: Գրավումից վեց ամիս անց այդ օտար ուժի մեջ երրորդը կարող է դուրս բերվել, մեկ տարի անց ևս մեկ երրորդը և երկու տարի անց մյուս երրորդ մասը: Եթե շատ ուշ շլինի և բախումները թույլ տան, Անդրանիկը՝ Նուրարի խորհրդավ կնավարկի Ամերիկա և հանդես կցա Սենատի հանձնաժողովի առջև:

ԶԵՅՍՍ Ա. ՄԱԼՔՈՂՄ

Ինկ այժմ, հայցելով ձեր ներողամտությունն այսքան շատախոս լինելու համար և ամենայն անկեղծությամբ կոչ անելով ձեզ, պարոնայք, շինտաձգել այն, ինչ դուք անում եք, քանզի, եթե ինչ-որ բան չձեռնարկվի, այս ամենը կիրականցվի նույնքան հաստատ, ինչպես այն, որ մենք հիմա նստած ենք այստեղ, միջոցներ ձեռք առնելը ես թողնում եմ ձեր ողջամտությանն ու կարեկցանքին:

Մենատոր ՀԱՐԿԻՆԳ. Շատ հետաքրքիր բացահայտում էք: Այժմ մենք կլսենք դոկտոր Սեյնին:

ԳՐԻՆԵԼ ՔՈԼԵԶԻ ՏԽՕՐԵՆ ՊՐՆ Զ. Թ. ՄԵՑՍԻ¹⁴² ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մենատոր ՀԱՐԿԻՆԳ. Դոկտոր, ասացեք մեզ ձեր անունը, ձեր գրադապությունը, իսկ ձեր գեկուցումը ներկայացրեք այնպես, ինչպես կամենում եք:

ՊՐՆ ՄԵՑԸ. Զ. Ն. Թ. ՄԵՅՆ, Գրինել Քոլեզի տնօրեն, Մերձավոր Արևելքում Ամերիկյան նպաստամատույցի կոմիտեի կողմից ուղարկված հանձնաժողովի անդամ, Փետրվարին նշանակվել եմ հանձնաժողովի հատուկ անդամ Կովկաս գնալու համար:

1919 թ. փետրվարի վերջին ես մեկնեցի Կոնստնադնուպոլիսից և ժամանեցի Բաքում մարտի 1-ին, և այդ ժամանակաշրջանից մինչև մայիսի 17-ը Կովկասում էի հետազոտելով իրավիճակը և փորձելով ապահովել այլ՝ հատկապես Հուվերի կազմակերպության հետ համագործակցությունը՝ մեր օգնությունը Ռուսահայաստան կոչվող շրջանում ընդլայնելու նպատակով: Նախապես ես կցանկանայի ասել, որ ցանկանում եմ վերահաստատել հեարավոր բոլոր շեշտադրումներով, բոլոր մանրամասներով, ինչ-որ ասաց պին Ռուլֆեր Զորջ Սմիթը: Ես Կովկասում էի երկուսուկես ամսից մի քիչ ավելի: Ես շատ մանրակրկիտ հետազոտել եմ այնտեղ տիրող իրավիճակի յուրաքանչյուր փուլը: Ես գնացել եի այնտեղ այդ իրավիճակը հետազոտելու նպատակով: Ես չեմ գնացել այնտեղ իրավիճակը կազմակերպելու և կառավարելու համար: Ես գնացել եի այն հետազոտելու նպատակով և անելու ինչ կարող էի աշխարհի ուշադրությունը իրավիրելու այս իրավիճակի վրա, ինչպես որ այն փաստացի գրյություն ուներ:

Այժմ, կարծում եմ, ինձ հեմար կարենք է նշել, որ ես

¹⁴² Զ. Ն. Թ. ՄԵՅՆ (John Hanson Thomas Main) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

Բարում էի գնացել երկու ամերիկացի երիտասարդների՝ որպես օգնականների հետ: Երբ ես հասա Թիֆլիս, իմացա, որ այնտեղ և երիվանում աշխատանքի համար պատասխանատու էին երեք ամերիկացի: Վեց կամ յոթ շաբաթ, ես և այդ մի քանի ամերիկացիներն առերեսվում էինք այնտեղ տիրող սարսաւելի իրավիճակին, մասնավորապես, մոտավորապես 500 000 սովահար մարդկանց՝ առանց որևէ համազործակցության, առանց որևէ օգնության, առանց՝ Կոստանդնուպոլսի իշխանությունների կողմից կամ որևէ այլ տեղից ինձ օգնելու, իրավիճակի մասին հոգ տանելու կամ զորք հավաքելու փորձի նշույի, ինչը համապատասխանաբար կրավարարեր իրավիճակի կարգավորմանը: Ինձ քվում է, որ առնվազն այդ վեց շաբաթների ընթացքում, երբ ես այնտեղ էի, հայտնվել էի անհնարին մի իրավիճակում, քանզի՝ առնվազն վեց շաբաթվա ընթացքում, երբ ես այնտեղ էի, կոչված էի կարգավորել մի իրավիճակ, որը վեր էր մարդկային ներուժից:

Սենատոր ՌԻՒՑԱՍՍ. Նկատի ունեք ձեր տնօրինության տակ գտնվող միջոցները:

Դրեն ՄԵՅՆ. Իմ տնօրինության տակ գտնվող միջոցները և ինձ հետ ուղարկված անձնակազմը: Ինձ հետ անձնակազմ չի ուղարկվել: Երկու ամերիկացի երիտասարդներ էին ինձ հետ եկել այնտեղ: Նրանք քոյեցի ուսանողներ էին՝ ընդունակ, առույգ, ոգևորված, քայլ առանց փորձի, և, իհարկե, մենք այնպիսի հանգամանքներում էինք գտնվում, որ չէինք կարող զբաղվել իրավիճակով:

Ես ժամանեցի Թիֆլիս մարտի 9-ին և փորձեցի կազմակերպել օգնության աշխատանքներն այնքան, որքան ես ի վիճակի էի անել ինձ հետ եկած երկու տղաների և արդեն այնտեղ եղած երեք տղամարդկանց հետ: Այդ մարդկանցից մեկը, անմիջապես իմ ժամանումից հետո, հիվանդացավ տիֆով՝

արյունքում մենք ունեինք չորս մարդ, որոնք կարող էին զբաղվել՝ լինելով առողջ: Այնուամենայնիվ, ես որոշեցի փորձել և գեկուցել Փարիզի և Կոստանդնուպոլսի դեկավարությանը իրավիճակի մասին:

Կարծում եմ, մարտի 10-ին էր, որ ես ուղարկեցի երկու հեռագիր՝ Արքուր Քուրտիս Ջեյմսին և պրն Հեյնցին: Ես չունեմ այդ հեռագրերի պատճենները: Ես ցավով եմ այստեղ ասում, որ ես ուղարկեցի հեռագրերը Փարիզի և Կոստանդնուպոլսի իշխանություններին՝ հորդորելով կրանց մասնակցել համապատասխան աջակցության դրսորմանը Թիֆլիսում և Կովկասում:

Դրանից քիչ ժամանակ անց, ամսի 19-ին, ես գնացի երիվան, Ալեքսանդրապոլ, Ղարաբիլսա և սովոր տարածաշրջանի այլ քաղաքներ: Ես ժամանեցի Ալեքսանդրապոլ մարտի 20-ին: Ի՞նչ տեսա ես այնտեղ: Ես գտա այնտեղ 60 000 հայ զաղթականներ՝ հիմնականում կանայք, երեխաներ և ծերեր: Երբ մարտի 20-ի առավոտյան ես դուրս եկա և փողոցվ քայլեցի մեկ թաղամաս, իմ տեսադաշտում սովոր մահացած չորս մարդ էր ընկած: Նրանք ընկած էին փողոցներում և տեղացի աշխատողներից կազմված պատստխանատու կոմիտեն ինձ գեկուցեց, որ այն առավոտ՝ մինչ մեր ժամանելը փողոցներից հավաքվել էր 190 դիակ: Դա ցույց էր տալիս այն իրավիճակը, որը տիրում էր ամբողջ Ռուսահայաստանում: Դա, պարզաբեն, այն էր, ինչ առկա էր ամենուրեք՝ մյուս քաղաքներում: Ալեքսանդրապոլը՝ հավանաբար 35 000 բնակչություն ունեցող քաղաք է: Այդ առավոտյան, երբ ես ժամանեցի այնտեղ, հավանաբար 100 000 մարդ կար՝ թուրքահայաստանից փախստականների մեծ թվի պատճառով, որոնք սպասում էին իրենց երկիր հայրենադարձվելուն:

Ես կցանկանաի իրավիրել ձեր ուշադրությունը ևս մեկ

բանի վրա, և դա այս քաղաքների ավերումն է թուրքերի կողմից: Թուրքերը գրավել էին Ալեքսանդրապոլը և չեխն հեռացել երբ կնքվել է զինադադարը, չեխն հեռացել նաև երբ Թուրքիայի կառավարությունը պատերազմը շարունակել չկարողանալու պատճառվ կազմալուծվել էր: Երբ 1918 թ. դեկտեմբերի 26-ին նրանք հեռացան Ալեքսանդրապոլից, ականապատճենն քաղաքի կարեռը կետերը: Երկարութային տերմինալները և տրանսպորտային միջոցներն ամբողջությամբ ականապատճած էին, և երբ 1918 թ. դեկտեմբերի 26-ին նրանք հեռացան քաղաքից, ժամային պայքարուղեր տեղադրեցին ականների վրա և շոլոր կարևոր պետական կառույցները, հատկապես քաղաքի տրանսպորտային միջոցներն ավերվեցին: Հիշեք, որ դա զինադադարից հետո էր, և թուրքերն արդեն դուրս էին եկել պատերազմից: Դա իրականցվել է Գերմանիայի իշխանությունների թողովությամբ, ովքեր նրանց հետ էին, ու նաև շատ այլ գերմանացիներ այդ ժամանակ Թիֆլիսում էին և տեղյակ էին այդ իրավիճակին:

Ալեքսանդրապոլից ես գնացի Էրիվան, որը Հայաստանի կառավարության նստավայրն է, և որպես հատուկ հանձնարարական ինձ համար, որքան կարողացա, ուսումնասիրեցի Հայաստանի կառավարությունը, և պետք է ասեմ, որ՝ Վրաստանի կառավարությունն արդեն իսկ մի փոքր ուսումնասիրելուց հետո և որքան կարողացել էի նաև ծանրթանալ թաթարների դեկավարության ներքո գտնվող Բաքվի իրավիճակին, կովկասյան տարածաշրջանում հաստատված կառավարություններից միակը, որ հաջողության որևէ աստիճան ուներ, Հայաստանի կառավարությունն էր: Հայաստանի կառավարությունը հստակ պատկերացումներ ուներ այն ամենի մասին, թե ինչ էր ցանկանում անել: Նրանք որոշակի նպատակ ունեին, նրանք արդարամիտ նպատակ ունեին ձեսպորել կազմակերպված

հասւարակություն՝ իրականացնելով բնականոն կառավարական գործառույթներ: Ես հատկապես ձգուում էի ուսումնասիրել իրավիճակը կառավարման տեսանկյունից, որովհետև համոզված էի, որ Հայաստանի Հանրապետությունն ընդամենը թղթե հանրապետություն էր, որ այն իրավասու չէր, որ այն դեկավարող մարդիկ կաշառակեր էին, ովքեր մտածում էին միայն իրենց դիրքերի մասին և անում էին ամեն ինչ սեփական շահերից ենելով ու որոնց չէր հետաքրքրում ժողովուրդը:

Որքանով ես կարողացա եզրահանգել նման բան այնտեղ չկար: Նրանք բավական եռանդուն աշխատանք էին կատարում, մշտապես աշխատանքի մեջ էին, մշտապես փորձում էին պաշտպանել իրենց շահերը և օգնել հայ փախստականներին, ովքեր փախսելով թուրքերից հայտնվել էին իրենց սահմաններում: Դուք պետք է հիշեք, որ Էրիվանի կառավարությունը հսկայական հանձնարարական ուներ: Նրանք ոչ միայն ստիպած էին կերակրել իրենց՝ իսկ նրանք ոչինչ չունեին իրենց կերակրելու համար, բայց և այսոր է ինչ-որ կերպ ապահովեին փախստականներին թուրքահայաստանից: Ես բոլոր հնարավոր շեշտադրումներով ցանկանում եմ ասել, որ երբ այնտեղ էի, Էրիվանի կառավարությունը, եթե ես կարող եմ նրան դատել ըստ արժանվույնի, անում էր Փոքր Ասիայում իրականացվող աշխատանքի լավագույն մասը:

Էրիվանից ես գնացի Էջմիածին և ուսումնասիրեցի տեղի իրավիճակը. այն Ալեքսանդրապոլում տիրող իրավիճակի փոքրածավալ կրկնությունն էր: Երբ մենք գնացինք Էջմիածին, ես կարծում եմ մարտի 21-ը կամ 22-ն էր, քաղաքի մոտ մենք անցանք փախստականների գերեզմանատան կողքով, գնացինք դեպի այն վայրը, ուր նրանք թաղում էին հանգույցաներին, որոնք հավաքվել էին գյուղում: Էջմիածինը փոքր քաղաք է, գրեթե 7000 կամ 8000 բնակչությամբ: Նրանք թաղում էին հանգույցաներին,

որոնց հավաքել էին փողոցներից անցած գիշեր՝ դրանք 35-ն էին, և նրանք փորում էին 10 ոտնաշափ խորությամբ քառակուսի փոսւր և յուրաքանչյուր փոսում յոթ դիմակ էին թաղում: Նրանք նետում էին դիմակներն առանց տարբերակելու՝ տղամարդկանց, կանանց և երեխաների, և հետո հող էին լցում նրանց վրա, և եթե մենք մոտեցանք այդ փոսերից մեջին, նրանք նոր սկսում էին ծածկել յոթ դիմակները, որ նետել էին այնտեղ, և նրանց ձեռքերը և ոտքերը դուրս էին մնում, կարծես աղերսելով մարդկանց, ովքեր կտեսնեին իրենց, խղճալ Հայաստանը: Դա ամենահուզիչ տեսարաններից մեկն էր, որը ես երբեմ տեսել էի իմ ճամփորդությունների ժամանակ: Վերջին տեսարանը, որ ես տեսա մի կուզ ձեռքն էր, որը դուրս էր ցցվել հողի տակից՝ կարծես խղճանք աղերսելով աշխարհի մարդկությունից:

Իրավիճակն ամենուր նույնն էր: Ավելի ուշ ես գնացի Իգդիր: Իգդիրում առկա էր մարդակերություն կամ ոչ մարդակերություն, որովհետև մարդակերությունը նշանակում է սպանել մարդկանց և ուստել նրանց: Այս մարդիկ քանդում էին զերեզմանները և հանում դիմակները ու կտրելով փափուկ մասերի օգտագործում էին որպես սննունդ: Այդ իրողությունն անհամեմատ ավելի ահավոր է, քան մարդակերությունը, որը մենք կարող ենք որպակել քաղցր հագեցնելու սովորական, բնական, մարդկային մեթոդ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Որտե՞՞ էր դա:

Պրեն ՄԵՅՆ. Իգդիրում:

Սենատոր ՌԻՒԹԱՍՍՈ. Գիշակեր մարդակերություն¹⁴³:

Պրեն ՄԵՅՆ. Դա ավելի վատ էր, քան մարդակերությունը:

Պրեն ՍՍԻԹ. Եթե ես կարող եմ դիտարկում անել արև Մեյն, վերջին տեղեկությունները ցույց տվեցին, որ մեր մարդիկ դուրս են բերվել Իգդիրից, նախքան թաթարների ներխուժումը:

¹⁴³ Բնագում՝ Carrion cannibalism:

Այս էրիվանից ընդամենք 30 մղոն հեռավորության վրա է:

Պրեն ՄԵՅՆ. Այս: Այս ամրող ժամանակ ես հեռազերե և համակներ էի ուղարկում, փորձելով սևեռել աշխարհի ուշահրությունը Շուսահայաստանի վրա: Իմ առջև տառացիորեն անիրական խնդիր էր: Ես գործ ունեի կամ փորձում էի գործ ունենալ անհնարին իրավիճակի հետ: Վերջապես, ապրիլի 4-ին թե 6-ին, այդ հեռազերեից մեկի արյունքում պրև Հեյնզը եկավ և պրև Շերութիր հետ իրականացրեց իր հետաքննությունը: Պրև Սմիթ, դուք եկել եք, այսպէս չե՞:

Պրեն ՍՍԻԹ. Այս, պարո՞ւ:

Պրեն ՄԵՅՆ. Դուք այսու ՞ ո՞ էիք ապրիլի առաջին շաբաթվա թիրացրում:

Պրեն ՍՍԻԹ. Այս: Մենք մեկնեցինք Կոստանդնուպոլիս Զատիկի կիրակի օրը:

Պրեն ՄԵՅՆ. Խնչպես տեսնում եք, ես եղել եմ Կովկասում մեկ ամրող ամիս նախքան այս մարդկանց ժամանումը: Այս մարդկանց հետ Ամերիկայից եկան երեսուն օգնական: Նրանցից բանը կանայք էին և տասը՝ տղամարդ: Կարծ ժամանակում մենք ցրեցինք այս օգնականներին ամրող երկրով՝ փորձելով օգտագործել նրանց ամենահրատապ իրավիճակների համար: Նրանց ուղարկեցինք մասնավորապես Էրիվան, որովհետև դա սովոր կենտրոնն էր և բժշկական աշխատանքի համար ուղարկվեց թիշկ Աշերը, որին անդրադարձալ պրև Սմիթը:

Ապրիլի 10-ին՝ որպես պրև Հուվերի անմիջական ներկայացուցիչ, եկավ կապիտան Թուլինը: Կապիտան Թուլինը եկել էր ուղիղ Փարփացի: Ժամանելով Կոստանդնուպոլիս, Թուլինն անհաձեռնությամբ՝ պրև Հուվերի ուղղորդմամբ պատրաստվում էր գնալ Միրիա, բայց պատահմամբ նրա ձեռքն ընկավ այն նամակը, որը ես գրել էի հանձնակատար Փիթին¹⁴⁴, և այդ նամակն

¹⁴⁴ Ու. Ու. Փիթի (William Wheelock Peet) մասին տե՛ս «Ծանոթագրություններ»

այնպես էր ներկայացնում Ռուսահայաստանի իրավիճակը, որ նա՝ հակառակ նախնական հրահանգների, փոխեց իր ծրագիրն ու եկավ Թիֆլիս՝ Սիրիա զնալու փոխարեն: Նա ժամանեց Թիֆլիս ապրիլի 10-ին, իսկ 16-ին ես Թուլինի հետ զնացի Կարս Ալեքսանդրապոլ, իգդիր և սովոր մատնված շրջանների այլ քաղաքներ և դրա հիման վրա՝ օգտագործելով այդ ուղևորությունը որպես հիմք, նա պատրաստեց իր զեկույցը պրն Հովկերին և նաև պրն Հեյնցին: Մայիսի 15-ին նրա զեկույցն ու հայտարարությունն իրավիճակի մասին, սկսեցին տալ պսուղներ, քանի որ մայիսի 15-ին՝ որպես կապիտան Թուլինի կազմած զեկույցի հետևանք, պրն Հովկերից հասան առաջին բեռները և այդ ժամանակից մինչև հիմա բեռները գալիս են Միացյալ Նահանգների օգնության վարչությունից: Ես չգիտեմ, թե ինչպիսին է իրավիճակը ներկայում:

Պրն ՍՄԻԹ. Դրանք դեռ առաքվո՞ւմ են, ըստ զեկույցների:

Պրն ՄԵՅՆ. Դրանք դեռևս զնում են և համապատասխան անձնակազմ է ուղարկվել:

Անհատոր ՈՒԽՂՅԱՍՍՍ. Ո՞ր ամսաթվին էր դա:

Պրն ՄԵՅՆ. Մայիսի 15-ին: Ինչպես տեսնում եք՝ ես Կովկաս էի հասել մարտի 1-ին: Մայիսի 15-ն էր, որ սովոր մատնված շրջանների վիճակի մասին քննարկումներին ուշադրություն դարձվեց: Ինչպես ասացի, ես մնացի Կովկասում մինչև 15-ը և ամսի 15-ին էր, որ զնացի Բաթում, իսկ ամսի 1-ին Բաթումից մեկնեցի Կոստանդնուպոլիս: Այժմ, ես պետք է արագ անցնեմ այս իրադարձությունների վրայով, որովհետև չեմ կարծում, որ անհրաժեշտ է թափանցել մանրամասնությունների մեջ, քանի որ պրն Սմիթը դա արեց, բայց ես կցանկանայի, որ դուք ինձ հարցեք տայիր՝ այդպիսով ես կկարողանայի ժամանակ խնայել:

Անհատոր ՈՒԽՂՅԱՍՍՍ. Ձեզ մոտ կա՞ն այն զեկույցներից,

որոնց դուք անդրադարձաք:

Պրն ՄԵՅՆ. Դրանք բոլորը Նյու Յորքում Մերձավոր Արևելյան օգնության կոմիտեի գրասենյակում են՝ գործերի մեջ: Կարծում եմ պրն Սմիթի մոտ կան դրանցից մի քանիսը:

Պրն ՍՄԻԹ. Եթե դուք կցանկանաք կարդալ դրանք արձանագրության մեջ, սրանք այստեղ ինձ մոտ են: [Ցուցադրում է փաստաթղթերը:]

Պրն ՄԵՅՆ. Ձեմ կարծում, որ դա անհրաժեշտ է:

Պրն ՍՄԻԹ. Սա ինձ ուղղված ձեր նամակն է: [Ցոյց է տալիս:]

Պրն ՄԵՅՆ. Այս հեռագիրը ես ուղարկել եմ մարտի 10-ին Թիֆլիսից: Սա ուղղված է պրն Հեյնցին Կոստանդնուպոլիս: Սա հեռագիր է ուղղված պրն Սմիթին: Ես ասացի. «Հեռագիր եմ ուղարկում Հեյնցին և Զեյմսին»: Հեյնցը Կոստանդնուպոլիսում էր այդ ժամանակ, Զեյմսը՝ Փարիզում: Այն վերաբերում էր այնտեղի իրավիճակին, որը պահանջում էր շտապ լուծում:

Անհատոր ՀԱՐՄԻՆԳ. Եթե դուք ցանկանում եք, որ դրանք ընդունեն արձանագրության մեջ, պարզապես նշեք, թե որն եք ցանկանում և սղագրող կներառի դրանք՝ բացի այն, որը ցանկանում եք կարդալ և մեկնաբանել:

Պրն ՄԵՅՆ. Ես կարծում եմ, ես պետք է կարդամ այս հեռագիրը:

Անհատոր ՀԱՐՄԻՆԳ. Շատ լավ:

Պրն ՄԵՅՆ. [Կարդում է].

Ես հեռագրեք եմ ուղարկում Հարժին և Զեյմսին այստեղի վիճակի հետ կապված, որը պահանջում է շտապ լուծում: Վստահ եմ՝ դուք կգործադրեք հնարավոր բոլոր շանթերն ապահովելու մեծ գումար կոնցեսական հատկացումներից: Այսուրը վաճառվում է տասներկու-սուկեսով՝ Բաթումում սննդի հարցերով բրիտանական հանձնակառարին:

Հետո, նոյն օրը, ես մի երկար հեռագիր ուղարկեցի Նյո Յորք՝ Քլիվլենդ Դողջին ու ևս մի հեռագիր մարտի 29-ին պետական քարտուղարին:

Պրե ՍՄԹԹ. Դա պետք է մտնի արձանագրության մեջ:

Պրե ՄԵՅՆ. Ես կինդրեմ սղագրողին ընդգրկել դա արձանագրության մեջ: Դա երկար հեռագիր է:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՍ. Ամեն ինչ ճիշտ է: Թող այդ բոլորը լինեն արձանագրության մեջ: Փոխանցեք դա սղագրողին:

Պրե ՄԵՅՆ. Այս բոլորը կարող է ներառվել, այս:

(Զեկուցումը և հեռագիրը, որին հեռում էր կատարվել, ամբողջությամբ տպվել է արձանագրության մեջ հետևյալ կերպ):

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՄԵՐԻԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՏԵ

Թիֆլիս, 30 ապրիլի 1919 թ.

Իմ հարգելի պրեն Սմիթ, ցանկանում եմ ձեր քննարկմանը ներկայացնել հետևյալ հուշագիրը՝ Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի կովկասյան մասնաճյուղի աշխատանքերի առնչությամբ:

1. Ես ժամանել եմ Բաթում մարտի 1-ին և անմիջապես սկսել եմ Կովկասում պայմանների հետազոտությունը: Հինգ օր անց ես ժամանեցի Թիֆլիս և սկսեցի ամրող Կովկասի իրավիճակի համակարգված ուսումնական թիւարկելով այն Թիֆլիսից:

Ես պարզեցի, որ գրասենյակային հարմարություններն անհամապատասխան են: Կոմիտեն գրադեցնում է մի քանի սենյակ Ամերիկայի հյուպատոս պրեն Ֆ. Ռիլոգի Սմիթի տանը: Խառնաշփորն ու անկարգությունները, որոնք հարմարությունների անհամապատասխանության հետևանք են, ընդհանուր առմամբ լրջորեն ազդում են աշխատանքի արդյունավետության վրա ինչպես գրասենյակում, այնպես էլ տեղերում: Ես անմիջապես որոշեցի, որ գրասենյակի պայմանների փոփոխությունը պետք է կատարվի որքան հնարավոր է շուտ:

Փատրուտումներն արդյունք չտվեցին մինչև ապրիլի 1-ը, երբ հնարավոր եղավ գրադեցնել ներկայիս գրասենյակը: Այժմ՝ ապրիլի 30-ին, Կոմիտեն ակնկալում է, որ մոտ ապագայում համապատասխան գրասենյակային պայմաններ կոննենա:

2. Վարչական կարգավորումների հակիրճ ուսումնասիրությունից հետո ես որոշեցի, որ պրեն Արրող խառնվածքով չեր համապատասխանում կովկասյան աշխատանքների գլխավոր տնօրեն լինելուն: Ես այնքան խստ էի համոզված դրանում, որ ապրիլի 13-ին Կոնստանդնուպոլիսում մեր հանձնակատարներից մեկին՝ պրեն Հ. Ա. Հարչին, նամակ գրեցի, որից մեջքերում եմ հետևյալը:

«Պրեն Արրողը դեկավարում է գրասենյակը և եռանդրով ու կարողություններով մարդ է: Իմ առաջին տպագրությունն այն է, որ նա այս տեղի համար չէ: Ես համոզված եմ, որ Նյու Յորքի գործադիր կոմիտեն նրան չի հաստատի այս պաշտոնում: Ես հույս ունեմ, որ մի քանի շաբաթվա ընթացքում լրացուցիչ աշխատակիցներ կհասնեն Թիֆլիս, ոյնպես որ ևս հերարակություն կունենամ լավ ուսումնասիրել նրանց, որպեսզի նրանցից մեկը նշանակվի Թիֆլիսում և Կովկասում աշխատանքի լիարժեք պատասխանատու կամ դառնա այդ գործում Արրողի գործընկերը»:

Դժբախտաբար ապրիլի 4-ին ժամանած աշխատողների թվում ոչ մեկը չուներ այն որակավորումը, որը պահանջվում է վարչական դեկավարի համար:

3. Ես գրեթե անմիջապես պարզեցի, որ անբարեհած պաշտոնական հարաբերություններ գոյություն ունեն Ամերիկայի հյուպատոսի՝ պրեն Սմիթի և կոմիտեի միջև, և մարտի 19-ի թվակիր մի նամակ գրեցի այդ բեմայով պրեն Քլիվլենդ Հ. Դողջին: Մեջքերում եմ այդ նամակից:

«Իրավիճակի մասին իմ կարծիքն ինձ հանգեցնում է այն մտքին, որ հյուպատոսի և օգնության կոմիտեի միջև սերտ հարաբերություններ չեն կայացել: Ես կցանկանայի մանրամասն խոսել ձեզ հետ այս հարցի շուրջ, երբ վերադառնամ Նյու Յորք: Մինչ այդ վաստակ եմ, որ դուք թույլ չեք տա Նյու Յորքի կոմիտեին պահպանել ներկայիս գոյություն ունեցող հարաբերությունները հյուպատոսի և կոմիտեի միջև, երբ նոր հյուպատոսը ժամանի: Ես հասկանում եմ՝ դա կիսի շուտով»:

Այս նամակից անմիջապես հետո, ես սկսեցի քաղաքականության ընդհանուր ձևափխուսմբ գրասենյակում՝ ձգուելով ամրողությամբ հեռացնել հյուպատոսին պաշտոնական գերակայությունից, որը նա ուներ կոմիտեի նկատմամբ։ Քաղաքականության այս փոփոխությունն ընթացավ հաջողությամբ և հանգիստ կերպով առաց տիհած մեկնարանության։ Մի քանի օր առաջ նոր հյուպատոս պրի Վուդի¹⁴⁵ ժամանումը դյուրին ձևով կապահովի լրացուցիչ փոփոխությունները քաղաքականության ասպարեզում։

4. Ես անմիջապես փորձեցի ապահովել կոմիտեի գործարքների ամրողական ֆինանսական բաղվածք, բայց հասկացա, որ դա անմնար է։ Ես հասկացա, որ այսուեղ չկա միասնական հաշվապահական համակարգ։ Ես որոշեցի շտկել այս լուրջ սխալը կոմիտեի աշխատանքի մեջ՝ զանձապահ նշանակելով պրի Հ. Ա. Մեյնարդին¹⁴⁶ և հանձնարարեցի նրան հավաքել հնարավոր ամրող տեղեկությունը՝ կապված ստացված և ծախսված գումարների հետ և հնարավոր ամենակարճ ժամկետում պատրաստել կոմիտեի ֆինանսական վիճակի ամբողջական հաշվետվություն։ Նա անմիջապես սկսեց աշխատել այս խնդրի վրա։ Իր հետազոտությունն սկսելուց կարծ ժամանակ անց նա հիվանդացավ տիֆով։ Սա, իհարկե, խոչընդոտեց իմ նախատեսած ծրագրին։ Աշխատակազմում որից ոչ ոք որակավորում չուներ կատարելու պրն Մեյնարդին հանձնարարված աշխատանքը։ Պրի Մեյնարդին այժմ ապաքինվում է, սակայն միայն որոշ ժամանակ անց նա ի վիճակի կլինի վերադառնալ ակտիվ ծառայության որպես կոմիտեի անդամ։ Մինեույն ժամանակ, ես խնդրել եի պրն Ուիլյամ Ա. Յոդերին¹⁴⁷ ստանձնել կոմիտեի հաշվապահությունը և որքան ենարավոր է կատարել մեր ֆինանսական գործունեության հետազոտությունը։ Սա փոքր առաջադրանք չէ և զգալի ժամանակ է պահանջում ավարտելու համար։ Հույս ունեմ, որ հենց պրն Մեյնարդը վերադառնա ակտիվ աշխատանքի, կունենանք հաշվետվություն, որը որոշակիորեն կրավարարի գործի պահանջները։

5. Բնձ համար անմիջապես ակնհայտ դարձավ Կովկասում

կատարվելիք աշխատանքի ծավալը և, որպես հետևություն, կոստանդնուպոլսում մեր հանձնակատարների կազմած օգնության ծրագրի ոչ բավարար լինելը։

Ես համոզված եի, որ Ամերիկյան կոմիտեն անկարող կզտնվեր տառաջ տանելու իր համեստ ծրագիրը, որն ամերիկյան հասարակության կողմից կատարվող կամավոր նվիրաբերությունների հաշվին էր։ Ես վստահ եի, որ այս հիմքով նշմարվում էր նպատամատուցի գործնքացի վերջը։ Ուստի ես գեկուցեցի Թիֆլիսում կոմիտեի անդամներին՝ ուսուրաները պահպանելու և հարաբերությունները զարգացնելու մասին և՝ Կովկասում, ինչն օգնության ծրագրին կտու մշտական ընույթ մինչ այն ժամանակ, երբ կկարողանանք վերջինս հանձնել ձևավորված կառավարությանը։ Այս նպատակով ես հետազորեր ուղարկեցի պրն Դոդջին Նյու Յորքից, Կոստանդնուպոլիսի պրն Զարչին և Փարիզ՝ պրն Ջեյմսին՝ ուշադրություն հրավիրելով «Կովկասում սարսափելի ու սպառնալից վիճակի վրա»։ Ես նաև խնդրեցի, որ քայլեր ձեռնարկեն պահպանելու «կոնզեսական հատկացումների մեծ մասը»։ Ես նաև մանրամասն գրեցի Կովկասում իրավիճակի մասին պրն Զարչին, հորդորելով անհետաձեկի և ակտիվ ուշադրություն դարձնել Կովկասի կարիքներին։ Այս կոչերը վերջապես ընթարկվեցին։ Պրն Զարչին ներկայացնող մայոր Սթոնիվըը¹⁴⁸ եկավ Թիֆլիս ապրիլի 4-ին նպատամատուցի դրությունը հետաքննելու նպատակով։ Ապրիլի 10-ին Փարիզից ժամանեց պրն Հովերին ներկայացնող կապիտան Շուլինը։ Շուլեքարքի օրը, 23-ին դրու եկար ներկայացնող կապիտան Շուլինը։ Այս պրն Հովերի ներկայացուցից պրն Հովարդ Հեյնզի¹⁴⁹ հետ։ Այս մարդկանցից բոլորը, ներառյալ դրու, կատարել են անհատական հետաքննություն, և բոլորը համաձայն են, որ Կովկասում սովոր համարները պահպանությունը պահպանություն է։ Նրանք արդեն հետազորել են իրավիճակի արտակարգ լրջություն է։ Նրանք արդեն հետազորել են համասուր գեկույցները և ճիշտ ժամանակին կպատրաստեն իրենց անձնական հաշվետվությունները։

6. Թիֆլիսում գրասենյակի ուժի անհամապատասխանությունը

¹⁴⁵ Բնագրում՝ Mr. Wood:

¹⁴⁶ Բնագրում՝ H. M. Maynard:

¹⁴⁷ Բնագրում՝ William A. Yoder:

¹⁴⁸ Բնագրում՝ Maj. Stoever:

¹⁴⁹ Հովարդ Հեյնզի (Howard Heinz) մասին տես «Ծանոթագրություններ» քածտում։

լուրջ խոշընդոտ էր օգնության աշխատանքի աղյունավետության համար Թիֆլիսը կովկասյան տարածաշրջանի «Այարդային» կենտրոնն և Հարավային Կովկասի բոլոր երկաթգծերը կենտրոնանաւում են այսուղ Երկաթգծի վարչությունը խոշընդոտուվել է այն իրողությամբ, որ երկաթգծերը՝ շարունակվող ուղիներ լինելով հասում են երեր կառավարությունների սահմանները, մասնավորապես Վրաստանի կառավարության սահմանները՝ Բարումի և Թիֆլիսի միջև, և Կրիկին. Վրաստանի կառավարության սահմանները՝ Վրաստանի Հանրապետության և Աղրբեջանի Հանրապետության՝ Թիֆլիսի և Բարվի միջև, և նորից՝ Թիֆլիսի հարավում նրանք անցնում են Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության սահմանը: Միշտ ել՝ սահմանային հարցերում կառավարությունների միջև բարդություններ են եղել: Բերնափոխադրման խնդիրները, որպես արդյունք, չափազանց նյարդայնացնող են և որոշ դեպքերում զբերե անլուծելի: Ներկայումս իրավիճակը բարելավվում է և ես ուրախ եմ ասել, որ մեր մատակարարումները վերջին մեկ շարաթվա կամ 10 օրվա ընթացքում առանց նյութական ընդհատումների հասնում են իրենց նպատակակետին: Նման ձեռքբերումներն ապահովվել են բազմաթիվ հարցագրույցների և փաստարկների ներկայացման արդյունքում: Վրաստանի կառավարությունը գտնում է, որ պատշաճ ուշադրության չի արժանացել Ամերիկյան օգնության կոմիտեի կողմից: Նրանք պնդում են կապ չունի արդարացներն թե ոչ, որ իրենց տեղակայության պատճառով, իրենք պատասխանատվություն են կրու բեռնափոխադրումների համար, և որպես հետևողություն, պետք է պատշաճ ուշադրության արժանանան, ինչը՝ մինչև վերջերս, Ամերիկյան կոմիտեն չի ապահովել:

7. Ապրիլի 4-ին Ամերիկայից ժամանող աշխատակիցները՝ 10 տղամարդ և 20 կին հասան Թիֆլիս: Մի քանի օր անց նրանք նշանակվեցին իրենց համապատասխան տեղերում: Անմիջապես պարզվեց, որ նրանց մեջ չեար՝ թե՝ խառնվածքով, թե՝ փորձով համապատասխան որակափորումով անձ, որն այսուղ Թիֆլիսու կդառնար վարչական դեկանար: Բժիշկ Աշերի թեկնածությունը դիտարկվում էր այս պաշտոնի համար, սակայն ուսումնասիրության արդյունքում բոլոր նրանց, ովքեր առնչվել էին Աշերի հետ,

համընդհանուր կարծիքն այնպիսին էր, որ նա հարմար չէ այդ հատուկ հանձնարարության համար: Նրա հատուկ որակավորումն ապահովում էր նրա՝ Կովկասի համար որպես բժշկական հարցերի գծով տնօրենի¹⁵⁰ նշանակման իրավունքը՝ Երկանում տեղակայված շտարով: Սա այն նշանակումն է, որը ընարկվեց և հաստատվեց Կոստանդնուպոլսում՝ նախրան բժիշկ Աշերի ժամանումն ու, նաև, նախրան իմ մեկնումը Թիֆլիս: Հետևաբար, նրա նշանակումը վերահաստատվեց իմ կողմից մի քանի օր անց՝ Թիֆլիս նրա ժամանումից հետո: Որպես օգնական բժիշկ Աշերին իր հետ վերցրեց տիկին Ռիլսոնին, ով նոր խմբի երկու սղագրուիիններից մեկն էր:

Նոր խմբի մյուս անդամները նշանակվեցին որքան հնարավոր էր արագ: Ես կատարեցի այս նշանակումներն ի պատասխան դիմումների, որոնք այլև չեին կարող անտեսվել, և նրանք անձնակազմով՝ ինչպես և նախկինում անհամապատասխան թվաքանակով, մեկնեցին Թիֆլիսից՝ բավարարելու Կովկասյան իրավիճակի պահանջները:

8. Ի հավելում առօրյա երկրորդական խնդիրների, որոնք արծածվեցին այս հուշագրերի շրջանակներում, իմ առջև ուրվագծվեցին երեք հիմնական խնդիրներ իրենց շեշտադրումներով:

Առաջինը՝ սննդի մատակարարում, կես միլիոն փախստականների կյանքերը փրկելու համար, որոնցից 200 000-ը սովամահ լինելու եղրին են առ այսօր:

Ավելացնեմ, որ այս թվերը որակավորված դիտորդների գնահատականն են, ովքեր ամրսներ շարունակ Կովկասում են եղել ներառյալ Թիֆլիսի բրիտանական դիվիզիայի հետախուզական կազմի սպանները:

Երկրորդ՝ զաղթական մանկատների կազմակերպում և զարգացում: Ես եկա Թիֆլիս հստակ ձևավորված նախապաշտումներով ընդում մանկատների աշխատանքի, որովհետև զգում եի, ինչպես արդեն հաճախ ատել էի, որ դա զրավադնում էր ապագան և այնպիսի պարտականություններ էր զնում Ամերիկյան կոմիտեի վրա, որոնք այն գործը ի վիճակի չեր կատարել: Ամբողջ որորտն ուսումնասիրելուց հետո, ևս սրաց հանգեցի այն եղակացության, որ հանձնաժողովի պարտը է,

¹⁵⁰ Բնագրում՝ medical director for Caucasus:

հոգ տանել զաղթական որբերի համար, հաշվի չառնելով ապագա պարտականություններն ու դժվարությունները: Գաղթական խնդիրը ինձ համար դուն առջև թողած երեխայի խնդիրն էր, ով լացում է հարմարավետության և օգնության համար: Ուստի իմ առաջարկությամբ, ամերիկյան հանձնաժողովն ստանձնեց բոլոր այն զաղթական մանկատների հսկողությունը, որոնք մինչ այդ ժամը դեռևս մեր հսկողության տակ չէին: Հանձնաժողովը ստանձնում է այսպիսի պատասխանատվություն, զգալով, որ մարդկության սիրու կարձագանքի մանկատների արած կոչին: Իհարկե, մեզնից յուրաքանչյուրը ենթադրում է, որ Կովկասում կստեղծվի լիիրակ իշխանությամբ օժտված ունակ կառավարություն, որը կաջակցի զաղթական երեխաների մանկատների ծառայությանը, այնքան երկար, որքան դրա կարիքը կլինի:

Երրորդ՝ հացահատկի սերմի գնում և տեղափոխում այն տարածքների համար, որտեղ բարենպատ պայմաններ են և հայրենադարձությունը հնարավոր է: Այս կապակցությամբ հանձնաժողովը հնարավորինս անում է այն ամենն ինչ կարող է որքանով դա թույլ է տալիս նրա սահմանափակ անձնակազմը:

9. Կովկասյան իրավիճակի համառոտ նկարագիրն այս հուշագրում ցույց է տալիս, որ կովկասյան իրավիճակը իրատապություն պահանջողներից է: Ես հապաղում էի այդ թեմայով գրել՝ թեպետև ցանկանում էի, որովհետև համոզված էի, որ այդ թեմայով գրելն անօգուտ կլինի (ինչը նախորդ տարի բազմից նկարագրվել էր այդ դաշտում առկա աշխատողների կողմից): Ձեր ներկայությունն այստեղ ինձ համար ավելորդ է դարձնում կովկասյան իրավիճակի մանրամասն նկարագրությունը: Ես պարզապես ընդհանուր նկարագիր եմ տալիս, որի հիման վրա դուք ինքներդ գեկույց կապատրաստե՞ք՝ երբ վերադառնար Կոստանդնուպոլիս և Միացյալ Նահանգներ: Կովկասյան իրավիճակի տեխնիկական գեկույցը, ինչպես ես այն դիտարկել եմ, զգալի ծավալ կպահանջի և ավելի շատ ժամանակ կպահանջի, որին ես տիրապետում եմ:

10. Անկասկած դուք տեղյակ եք, որ այն Հեյնցը՝ Կոստանդնուպոլսում Հումերի հանձնաժողովի ներկայացուցիչը, Կովկաս եր կանչել իինզ մարդ իր անձնակազմից և ուր մարդ, ովքեր

ծառայում էին Բելգիայի նպաստամատուցելերում: Ես վստահ եմ՝ դուք համաձայն եք ինձ հետ, որ այդ մարդկանց զարք չի նվազեցնի մեր հանձնաժողովի պարտականությունները: Դրն Հեյնցի և պրն Հումերի մարդիկ կակնկալն իրենց ուշադրությունը բնեղու այսուրի բաշխման և բաշխման ամբողջ գործընթացում ընդգրկված ֆինանսական կարգավորումների վրա: Մեր հանձնաժողովի համար դեռևս կան արդյունաբերական աշխատանքների մեծ հետավորություններ, մանկատների ծրագրի գարգաւում՝ մանկատների հսկողությունն այժմ մեր գերակայության տակ է, դրանց ավելանալու են շուտով մուտքները: Մեր հանձնաժողովի համար է նախատեսվելու նպաստամատուցի աշխատանքների զլանավոր հիմնական ծրագիրը, իր անհամար մանրությներով և հետեանքներով: Շատ տեղացի մենեցերներ և օգնականներ պետք է փոխարինվեն ամերիկացիներով: Ամերիկյան անձնակազմի ընդլայնումը՝ համեմատած տեղացիների անձնակազմի հետ, նպաստամատուցի աշխատանքների առենախմնական պահանջներից է: Ամերիկացի օգնականների բանակը, որը կարող է օգտագործել, շատ մեծ է և, հավանաբար, անմիջական ծառայության համար հասանելի չէ: Ես ձեզ խնդրում եմ հաշվի առնել և հնարավորություն ընձեռել, որքան հնարավոր է շտապ, քան տղամարդ և որոշ թվով կանայք ուղարկելու համար: Կանանց մեջ, մասնավորապես, պետք է լինեն որակավորված գրասենյակային աշխատողներ: Ոչ մի տևելեկություն չունենալով արդեն կատարված նշանակումների մասին, ես չգիտեմ թե որքանով է հնարավոր ապահովել այս բանակը: Ես վստահ եմ, որ Փոքր Ասիայում և Եվրոպայում չկա այսպիսի մի տեղ, որն այժմ ավելի շատ օգնության կարիք ունի քան Կովկասը:

11. Այս հուշագրում ես արդեն նշել եմ Թիֆլիսի գրասենյակում համապատասխան հաշվապահական կազմակերպության կարևորության մասին, մի կազմակերպություն, որն իր գործունեության շրջանակում կընդգրկի ամբողջ Կովկասը: Հաշվապահության անձնակազմն իր կազմում պետք է ունենա մշտական տարրեր և գրասենյակի աշխատանքների արդյունավետության նպատակով ընտրվի, որքան հնարավոր է, ապացուցված ծառայողական ունակությունների հիման վրա: Նախկինում չի եղել բավարար հաշվապահություն - դա անհնար էր: Փողերն ստացվել և դուրս են տրվել, այսուել չի եղել ոչ մի տեխնիկական

հաշվետարություն, օգնության աշխատանքն ուղղակի պարզ ու մաքուր բարեգործություն է եղել, փաստացի առանց որեւէ գործնական հսկողության: Մեթոդների այս սակավությունը կարելի է ներել այն պատճառով, որ մեր օգնության գործունեության սկզբնական շրջանը համընկել է հասարակության և կառավարության ընդհանուր անկազմակերպ իրավունքակի հետ: Այսօր, սակայն, ոչինչ չի կարելի ասել հօգուս մեթոդների այս անբավարար շարունակելիության: Չնայած դրան, հասած արդյունքները արժանի են ամենացերմ գովասանքի: Այժմ մենք մեր օգնության աշխատանքում մտնում ենք մի նոր փուլ և պետք է որդիգրենք մեթոդներ, որոնք կներդաշնակվեն գործարարության տեխնիկական չափանիշների հետ:

12. Ես գրեցի դոկտոր Փիթին Կոստանդնուպոլիս՝ մեր օգնության աշխատանքների կարիքների կազմակերպման վերաբերյալ: Այս կարիքների կանխատեսումն ընդգրկում էր որոշ բարդության խնդիրներ՝ այնպես, ինչպես դա կարող է լինել ցանկացած զարգացող կազմակերպությունում: Բայց բույլ տվեք ձեր և կոմիտեի այն անդամների, ովքեր կարող են լինել Կոստանդնուպոլսում, ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ կոմիտեի փոխադրման ծառայությունների հրատապ կարիք կա: Այդպիսի ծառայության կորից արդեն ձևավորվել է պար Արքով՝ ոլորտի տնօրենի նշանակումով: Նա ժամանակի մեծ մասը լինելու է ճանապարհներին՝ այցելելով օգնության տարբեր կենտրոններ: Նա պետք է ունենա առնվազն երկու կամ երեր օգնական, այնպես, որ Թիֆլիսի աշխատակազմից ինչ-որ մեկի կողմից ամիսը մեկ անգամ կամ ավելի հաճախ, եթե անհրաժեշտ է, հնարյակոր լինի այցելությունն օգնության յուրաքանչյուր կենտրոն: Կոմիտասում չկարանքային համակարգ, որը կտրամբեր փոխանակման համապատասխան մեթոդ: Փողը հաճախ պետք է տեղափոխվի տեղից տեղ Այս ծառայությունը պետք է հանձնարարել մեր սեփական փոխադրություններին և ոչ երանց, ովքեր վարձվել են ծառայության համար բրիտանական ուժերի կողմից կամ մարդկանց, ովքեր կկամենան պարուսավորեցնել Ամերիկան կոմիտեին: Բավականին կարենք է ինչպես հաղորդագրությունը Թիֆլիսի գրասենյակի և ոլորտում աշխատանքների միջև:

13. Պետք է լինի բժշկական աշխատակազմ և հիմնական հիվանդանոց Թիֆլիսում կոմիտեի հսկողության ներքո: Ըստ առկա պայմանների՝ հնարավոր է կազմակերպել միայն մեկ բժշկական միավոր՝ մասնավորապես Էրիվանում՝ թիշկ Աշերի խնամքի տակ: Մեկը բավական չէ՝ պետք է լինեն երեք կամ չորս: Ներկա պահին՝ լրացուցիչ միավորի ապահովման հույսի բացակայության պայմաններում, կոմիտեն պետք է անի ամենը, որպեսզի մեր աշխատակիցների տրամադրության տակ լինեն ախտահանիչների, օճախի, բենեզի առատություն և հասարակ դեղորայք, ինչպիսիք են խինինը, ասպիրինը և գլուխակի յուղը: Ներկա իրավիճակում զաղցականների հիվանդությունների բուժման հիմնական միջոցը մաքրությունն է: Վիրահատական պարագաների ապահովումը կարող է տեսել մինչև ապագա գործընթացները:

14. Բերնափոխադրման խնդիրն ամենաբարդ խնդիրներից է եղել, որի հետ մեր կոմիտեն գործ է ունեցել: Այժմ մեր լավ արդյունքները կապված են զնացքների մտահոգիչ ծառայության հետ:

Ի լրում զնացքների ծառայությանը՝ մեր ավտոմոբիլային ծառայությունը իրազեկ դեկավարության կարիք ունի: Ավտոբունափոխադրումը պահանջում է դեկավար՝ գրազետ մեխանիկների խմբով:

15. Պետք է անմիջապես ստեղծվի որբանոցի աշխատակազմ: Քսան հազար զաղցական որբեր (զույգ թիվը հասնի 25 000-ի) մեր կոմիտեի խնամքի տակ են լինելու մայիսի 1-ին: Թիֆլիսից մինչև Էրիվան և Կավկասում՝ կարող նշանակություն ունեցող բոլոր բաղաքներում, պետք է լինեն մեծ և փոքր որբանոցներ: Միայն Թիֆլիսում պետք է լինի 26 որբանոց:

Որբանոցների պատշաճ դեկավարումը պահանջում է բարձրագույն կարգի վարչական և գործադիր կարողություն: Կանաց թիվը, որոնք անհրաժեշտ կլինեն որպես բուժքուրեր, հրահանգիչներ և օգնականներ, մեծ է լինելու: Բազմաթիվ ամերիկացի կանայք արդեն եվրոպայում են և ուրախ կլինեն իրենց նվիրել այս ծառայությանը, նրանք միայն կարիք ունեն տեղեկատվության՝ կապված մեր նպատակների ու կարիքների հետ, որը կառաջնորդի նրանց ընդունել կոչը և արագ անցնել պարտականությունների կատարմանը: Որբանոցների հետ կապված

կառուցողական ծրագրի հնարավորություն կա, ինչը մյուս ոլորտները չեն տրամադրում: Ճիշտ դեկավարման դեպքում որբանցները կհավերժացնեն իդեալները, որոնց վրա հիմնվում է մեր օգնության կոմիտեն և կովկասյան տարածաշրջանի ապագա կյանքում մշտական կդարձնեն այն սկզբունքները, որոնք ընկած են ամերիկյան հրահանգների հիմքում: Ամերիկյան կոմիտեն չի կարող իրեն թույլ տալ անտեսել այս հնարավորությունը:

16. Որբանցների հետ սերտ կապերի մեջ զարգանում է արդյունաբերական ծրագիրը: «Որբերի տան» ավագ տղաներն ու աղջիկները հնարավորություն են ստանում արհեստներ սովորել մեր ֆարբիկաներում՝ ի սկզբանե այս նպատակով հիմնված: Նրանք սովորում են գործել մանել, ներկարարություն, ատահմագործություն և այլ հիմանարար արհեստներ: Արդյունաբերական գործի զարգացման հնարավորությունը շատ մեծ է: Մենք դեռ նոր ենք սկսել: Այն հաջողությամբ առաջ է ընթանում և հաստատում զարգացման կարևորությունն ու ցանկալիությունն ավելի համակարգված ձևով: Այս նպատակով պետք է ունենալ արդյունաբերության տնօրեն: Կարելի է հավատալ, որ այս գործը կարելի է գործնականում կատարել ինքնասպասարկմամբ: Դրանից առավել կարևոր է այն փաստը, որ այս մատակարարում է բազմաթիվ պարագաներ օգնության կարիքները հոգալու համար:

17. Ես կապվել եմ դոկտոր Փիթի հետ չորս անգամ, նրան խնդրելով, ուղարկել պրն Յարրուիին Թիֆլիս: Նրա հետ կապված ինձ հասնող տեղեկատվություննից ելնելով, կարծում եմ, որ նա ոնի Կովկասի Նպաստամատույցի աշխատակինների տնօրեն դառնալու որակավորումը: Հարմար տնօրեն գտնելը գերկարենք խնդիր է: Միակ մարդը, ով այս պահին ընդունակ է դրան՝ պրն Յարրուն է, ուստի ես վստահ եմ, որ դուք կզործադրեք ձեր ազդեցությունն ամեն կերպ ապահովելու նրա նշանակումը՝ մասնավորապես այս ծառայությանը: Սա կարողություններով և վարչական փորձ ունեցող ցանկացած մարդու համար մարտահրավեր է և կվերադարձնի ներդրված էներգիայի և նվիրումի հարյուրապատիկը:

18. Ընդհանուր առմամբ ծայրահեղ կարենք է, որ Մերձավոր Արևելքում Ամերիկյան նախատամատույց կոմիտեի հստակ

աշխատանքը չթուլանա Հուվերի կազմակերպության ներկայացուցչի զայլով՝ իրականում, այս փորձառու աշխատողների զայն ավելի է պարտավորեցնում մեր կոմիտեին շարունակելու սեփական ծառայությունները թարմացված եռանդով ու նվիրումով: Եթե մեր կոմիտեն ձախողի սրա իրականացումը՝ նա կվարկարեկվի ամերիկյան ժողովրդի գնահատականի կողմից և կտապալի ամենամեծ մարդասիրական հնարավորության իրողությունը, որ մարդը երբսից կոչված է հանդիպել և ընդունել:

Ներկայացված է հարգանքներով:

Զ. Շ. Թ. ՄԵՅՆ

Դրես ՄԵՅՆ. Որպես հավելում այս նամակին ես կցում եմ մի բանի հեռագրերի պատճեններ, որոնք ուղարկվել են իմ Թիֆլիս Ժամանելուց կարծ ժամանակ անց:

[Հեռագիր Հեյնցին, Կոստանդնուպոլիս, մարտի 10, 1919 թ.]¹⁵¹

Ես հեռագրեք եմ ուղարկում Հայրձին և Զեյմսին այստեղի վիճակի հետ կապված, որը պահանջում է շտապ լուծում: Վստահ եմ՝ դուք կզործադրեք հնարավոր բոլոր ջանրերն ապահովելու մեծ գումար կոնքեսական հատկացումներից: Այսուրը վաճառվում է տասներկուսուկնով՝ Բաթումում սննդի հարցերով բրիտանական հանձնակատարին:

[Հեռագիր Քիվլենի Շողջին, Նյու Յորք, մարտի 10, 1919 թ.]

Կովկասի պայմանները սարսափելի են ու սպառնալի:

¹⁵¹ Այս հեռագիրը պրն Մեյնի կողմից արդեն ընթերցված հեռագրի տեքստն է: Տե՛ս սույն աշխատության էջ 211-212:

Արագորեն վատանում են: Դա տարբեր շրջանների գաղթականներո համար կետնրուացման վայր է: Մարդիկ սովոր են մատմալած, մեռնում են Մարդակերությունը հաստատվեց բրիտանացի պաշտոնյանների կողմից Կանխիկ գումարի հրատապ կարիք կա: Մենք պետք է շոայլ բաժին ունենանք կոնզրեսական հատկացումներից: Որպեսզի օստակար լինի դա պետք է շոայլ հասնի: Հեռազրել եմ Ձեյսին՝ խորել համագործակցություն: Դա մեծապես մեզ կօգնի խմանալ Կովկասի և Փոքր Ասիայի հավանական քաղաքական ապագան:

[Հեռագիր պետքարտուղարին, Վաշինգտոն, Վիլլիամ համար, մայիս 29.
1919 թ.]

Ես ուսումնասիրել եմ գաղթականության կենտրոնացման վայրեր՝ Ռուսահայաստանի և Թուրքահայաստանի միջև նախկին սահմանային գծի երկայնքով: Տիպիկ կենտրոններ են խաչոր Ալեքսանդրապոլ և փոքր Էջմիածնը: Մեկում 68 000 գաղթականներ կան ըստ փաստացի հաշվառման մեր հացի ու ապուրի կայաններում¹⁵²: Սյուսում՝ 7000: Գաղթականները հեղեղել են այս վայրերը՝ հուսալոյ հնարավորություն գտնել հատելու սահմանը դեպի իրենց նախկին տները Թուրքահայաստանում՝ Կարսի մոտակայքում: Կենտրոնացումն այդ երկու վայրում և բազմաթիվ այլ տեղերում առանց սննդի ու հագուստի և Կովկասում ու նրա սահմաններից դուրս ձևուան արարից հետո ստեղծել էր անկրկնելի սարսափի վիճակ՝ նշանը չունեցող մեծ պատերազմի վայրագությունների շարքում: Ալեքսանդրապոլի փողոցներում իմ ժամանման օրը 190 դիմակ է հավաքվել: Սա շատ քիչ էր օրական միջինից: Յուրաքանչյուր ամիս մահանում էր գաղթականների մեկ երրորդը: Էջմիածնում ես ժամանակ գտա ներկա գտնվելու գաղթականների քաղմանը: Յոթ մարմին առանց տարբերակման, լեշի նման նետվել էին քառակուսի փոսր և ծածկվել հողով առանց որի: հոգատարության և խղճահարության: Մինչ նայում էի աշխատող բանվորներին և տևա հողի տակից դուրս ցցված մի ձեռք: Դա կնոց ձեռք էր և թվում էր, թե ձգվել էր ի նշան համը բողոքի: Ինձ համը այս

սարսափելի փոսից դուրս ձգվող այդ ձեռքը խորհրդանշում էր սովահար Հայուստանը: Բանվորներն ինձ պատմեցին, որ այդ փոսի յոթ դիմակն առաջիններն էին 35 քեռնվածից, որոնք բերվել էին գյուղից այդ առավոտ: Տրակտորը զնացել էր հետ՝ մեկ այլ բեռնավորման:

Գաղթականները չեն համարձակվում զնալ առաջ: Նրանք մնացել են իրենց տներին մոտ սահմանագծին: Թուրքերը, քրդերը և թարարները տիրացել են իրենց հողերին և պահելու են դրանք զենքի ուժով: Գիծը, որը նամա էր սեծովյան տարածաշրջանի ռազմաճակատի գծին՝ Հարավ-արևմտյան հանրապետությունից, իր մայրաքաղաք Կարսով¹⁵³, մինչև Կասպից ծով, որտեղ Աղրեջանական հանրապետության մայրաքաղաքը Բարուն էր թուրքերի, քրդերի և թարարների հետ միասին, պահում էր գաղթականներին այս երկու ծայրահեղությունների արանքում՝ այստեղ, որտեղ նրանք գտնվում էին: Ընդհանուր քանակը ավելին է քան 330 000-ը: Դրան պետք է ավելացնել նաև տեղի բնակչությունը, ովքեր նույնպես տառապում էին աննկարագրելի դժվարություններից: Թուրքիայի կողմում դաշնակից ուժերը բավարար չեն իրավիճակին տիրապետելու համար: Միակ լուծումը մանդատը ստանձնած տերության նշանակալի բվով զորքերի օգուազործում էր որպես հսկող ուժ: Շատ հայ գինվորներ ի վիճակի կինեն այդպիսի ծառայության: Դժբախտաբար, այս ընթացքը պետք է սպասի Խաղաղության վեհաժնորվի արդյունքներին և կառավարական մարմիններին որոշումներին: Հետաձգման յուրաքանչյուր պահ նշանակում էր սարսափի ընդլայնում:

Ռուսական կողմում Հայաստանի Հանրապետությունը և մեր նպաստամատույց հանձնաժողովը միասին աշխատելով ի վիճակի չեն պատշաճ կերպով կերակրել գաղթականներին: Մինչդեռ սերմանցանի ժամանակն արդեն անցնում է: Սովոր ես մեկ սեղոնն անխուսափելի է, եթե անհապաղ քայլեր ձգենարկվեն որևէ պարտադրող իշխանության կողմից: Ակնհայտ է, որ աշխարհը չի գիտակցում մարդկային անսահման աղետը, որը տեղի է ունենում Կովկասում: Թուրքերը և նրանց դաշնակիցները մեծ հաջողությամբ առաջ են մղում պատերազմի ժամանակ սովոր եղանակով բնաջնջելու քաղաքականության արդյունա-

¹⁵² Բնագրում՝ bread and soup stations:

¹⁵³ Բնագրում՝ the Southwestern Republic with Kars as its capital:

վետությունը: Սովոր գումարվում է տիֆն ու շոգ եղանակի պայմաններում վերածվում խոլերայի:

Կարո՞ դ է քրիստոնյա քաղաքակրթությունը, այս վերջին պահին, վերականգնելու և ապարինելու համար որևէ բան անել: Նման ծայրահետ իրավիճակում ես սասցի հայկական հանրապետության պաշտոնյաներին, որ մեր հանձնաժողովը կիոզա մանկատների մասին, մինչև որևէ տերություն՝ մանդատի իրավասությամբ, կաշակցի կարգուկանոն հաստատելուն և նշված ժողովարդների ֆինանսական կայունության ապահովմանը: Ես կարծում եմ, այս բայլն իմ կողմից պայմանավորված էր իրավիճակով և մարդասիրական տարրական սկզբունքներով: Արդյո՞ք մեր կառավարությունը կիետաձգի այդ տառապող ժողովրդին օգնության ձեռք մեկնելը: Քաղաքական նպատակահարմարության հարցը պետք է մոռացվի այս համաշխարհային աղետի դեպքում: Այս մարդիկ նայում են Ամերիկային: Մեր կառավարությանը բարոյապես պարտավոր են արձագանքել: Լայն արձագանք տալ սրան: Հաղորդել Դոդջին և Շոուլին:

ՄԵՅ.

Պրեն ՄԱԼՔՈՒ. Քանի՞ հայ կա Հայաստանի Հանրապետությունում, որ ստեղծել է այն տարածաշրջանում, որը հայտնի է որպես Ռուսական Հայաստան:

Պրեն ՄԵՅՆ. Ըսդհանուր հաշվարկով նրանք մոտ մեկ միլիոն են:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Եվ դուք կարծում եք, որ այդ մեկ միլիոնը սովամահ լինելու և իրեն շրջապատող թշնամու կողմից կործանվելու եղի՞ն է:

Պրեն ՄԵՅՆ. Եթե ես հեռացա այնտեղից, ուղղակի պարզ եք, որ Ռուսական Հայաստանում մոտ 500 000 զաղթական կա, որոնք սովամահ են լինում: Դա Բրիտանիայի հետախուզության գրասենյակի գեներալ Բիչի հաշվարկն էր, և նա իր տեղեկությունը ստացել էր Ռուսական Հայաստանի տարրեր տեղերում գտնվող իր անձնակազմի անդամներից: Ես, որպես

ամերիկյան հանձնաժողովի ներկայացուցիչ, ընդունեցի նրա թվերը և որևէ փորձ չարեցի դրանք հաստատելու: Ինձ համար դա, փաստացի, անհնար կիխներ անել:

Ես ցանկանում եմ, մասնավորապես, ընդգծել իմ համոզմունքը, որ Փոքր Ասիայում իրավիճակը կայունացնելու միակ ճանապարհը՝ լավագույն ճանապարհը, հայկական հանրապետությանը որոշակի աջակցություն տրամադրելն է: Ես վստահ եմ դրանում: Ես բացարձակապես համոզված եմ, որ այդ դժբախտ երկիրը կայունացնելու համար հնարավոր է որևէ բան անել, եթե որոշվի, որ հայկական հանրապետությունը՝ այն վերաբերմունքի հետ, որ նա իրավունք ունի ստանալու, ստանա ևս Սիացյալ Նահանգների կամ դաշնակից երկրների աջակցությունը:

Անհատոր ՀԱՐՄԻՆԳ. Թոյլ լովեք ինձ ընդհատել ձեզ հենց այստեղ, դոկտոր: Ինձ դուք է զալիս Հայաստանի Հանրապետության զաղափարը: Մենք ինչպէս ենք պատրաստվում հասնել դրա հաստատմանը Ռուսաստանի կողմից:

Պրեն ՄԱԼՔՈՒ. Դա անհրաժեշտ չէ: Ռուսաստանի հաստատումն ապահովվել էր Լեհաստանի դեպքում:

Պրեն ՄԵՅՆ. Իհարկե, դա միջազգային հարց է և դուքս է իմ կարողություններից և ցանկացած մեկի, քանի որ, ինձ թվում է Ռուսաստան այլսն չկա:

Անհատոր ՀԱՐՄԻՆԳ. Ռուսաստանը ներկայացված չէ խաղաղության վեհաժողովին:

Անհատոր ՈՒԽՑԱՍՍ. Ներկա պահին չկա կառավարություն ամբողջ Ռուսաստանի համար ինչ-որ մեկի կողմից: Գործնական հարցն այնտեղ պետք է լիներ արյոց դուք ստացել եք Վրաստանի համաձայնությունը: Դա Ռուսաստանը չի լինելու: Որոշ հարցեր կծագեն Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության սահմանների միջև:

Պրն ՍԵՅՆ. Ես ենթադրում եմ որ խաղաղության վեհաժողովը ի վիճակի է կարգավորել այս հարցերը, և որևէ միջազգային կազմակերպություն կեախաձեռնի դա:

ԱԵՆԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՍ. Այո:

Պրն ՍԵՅՆ. Իհարկե, Երիվանի մասին կան նման բնույթի այլ հարցեր, և այն:

ԱԵՆԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՍ. Իհարկե, այն մարդիկ, ովքեր բանակցում են պայմանագրի շուրջ, արդեն վերցրել են Ռուսաստանի մի հատվածը՝ Ռուսական Լեհաստանն օրինակի համար, և դարձնում են դա Լեհաստանի մաս ու նրանք չեն սպասում Ռուսաստանի համաձայնությանը պարզապես այն պատճառվ, որ այլևս չկար Ռուսաստան, որը կհամաձայներ: Են դյուժին Ռուսաստաններ կային, Ռուկաֆինան ու լետուրը¹⁵⁴, և այսպես շարունակ՝ բոլորը բաժանված և տրոհված մինչ բոլշևիկները և վյուսները պայքարում են:

ԱԵՆԱՍՈՐ ՀԱՐՄԻՆԳ. Դոկտոր, ի՞նչ կարծիքի եք Հայաստանի Հանրապետության տարածքում ուազմական իրավիճակը կայունացնելու համար, այս երկրում հավաքագրված Ամերիկայի կառավարության կողմից զինված կամավոր բանակի հավանական արդյունավետության մասին:

Պրն ՍԵՅՆ. Ես կարծում եմ դա շատ արդյունավետ կլինի:

ԱԵՆԱՍՈՐ ՀԱՐՄԻՆԳ. Կարծում եք դա բավարար կլինի:

Պրն ՍԱԼՔՈՍ. Դուք ասում եք հալաքագրված ուազմական ուժ: Դուք թիվ չեք առաջարկում:

ԱԵՆԱՍՈՐ ՀԱՐՄԻՆԳ. Լավ, իհարկե, մի զորամասն այն է, ինչ անհրաժեշտ է: Այն, ինչ ես նկատի ունեմ՝ եք կարող եմ դա պարզաբանել, դա խոշընդուն է, որ մենք ունենք ամերիկյան զինված ուժերի ուկավարման և կազմակերպման առումով: Ես չեմ հավատում, որ մենք կարող ենք անել դա զորակոչային բանակով

¹⁵⁴ Բնագրում՝ The Letts: Խոսքը լատվիացիների մասին է:

Պրն ՍԵՅՆ. Ոչ, ես այդպես չեմ կարծում:

ԱԵՆԱՍՈՐ ՀԱՐՄԻՆԳ. Բայց ենթադրենք, որ մենք հավաքագրել ենք հայերին դաշնակիցներից կամ որտեղ է որ նրանք լինեն, և թույլ ենք տալիս Ամերիկայում կամավորական բանակի հավաքագրումը, որը գործնականում կազմված է հայկական ծագում ունեցողներից, դա կլուծի՝ այս Հայաստանի Հանրապետության խնդիրը:

Պրն ՍԵՅՆ. Ես կարծում եմ, որ այս՝ Ամերիկյան ուժերի սույն ներկայությունն այնտեղ ամերիկյան իշխանությունների ներքո միանգամբ կնպաստի —

ԱԵՆԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՍ. Դա ամերիկյան ուժ չի լինելու: Դա կամավորական բանակ է լինելու: Դա չի լինելու ուժ Ամերիկայի դրոշի ներքո:

Պրն ՍԵՅՆ. Դուք նկատի ունեք, դա չի լինելու մեր դրոշի ներքո ընդհանրապես ։

ԱԵՆԱՍՈՐ ՈՒԽԼՅԱՍՍՍ. Դա լինելու է ոչ թե մեր դրոշի ներքո, այլ հայկական դրոշի, բայց կազմված կլինի ամերիկյան բաղադրացիություն ունեցողներից՝ մեծ մասամբ հայկական ծագումով:

ԱԵՆԱՍՈՐ ՀԱՐՄԻՆԳ. Եվս մեկ հարց: Պրն Սմիթ, ես այսպես եմ կարծում: Նա խոսում էր ծովային հետեակայիններ և ուզմանավեր Հայիթի ուղարկելու մասին և այն: Ամերիկյան ուզմանավեր ծովայիններով Սև ծովի՝ Բաթումի նավահանգիստ ուղարկելը կհանգեցնի՝ այն արդյունքին, որի մասին դուք խոսում եք:

Պրն ՍԵՅՆ. Դա անմիջապես կնպաստի, այս, իրավիճակը կայունացնելուն:

ԱԵՆԱՍՈՐ ՀԱՐՄԻՆԳ. Պատճառը, որ ես հարցնում եմ ձեզ, այն է, որ՝ ըստ երևոյթին, դա չի պահանջելու Կոնգրեսի որևէ ակտ՝ նմանատիպ օգտակար գործություն կատարելու համար,

այնպես չէ:

Պրն ՄԵՅՆ. Լավ, բայց դա չի արվել:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ես հիմնականում համաձայն եմ ձեզ հետ:

Պրն ՄԵՅՆ. Ինձ թվում է Հայաստանը բնաջնջման եզրին և ես նաև զգում եմ, որ եթե մենք ցանկանում ենք փրկել Հայաստանն ընդհանրապես, պետք է շատ արագ ինչ-որ բան արվի, և ես այստեղ նրա համար չեմ, որ Սենատին ասեմ թե ինչպես պետք է դա արվի, բայց ինձ թվում է հաջորդ վեց ամիսների ընթացքում եթե բրիտանական զորքերը դուրս բերվեն նախքան ինչ-որ բան արվի, շատ հայ մնացած չի լինի և, եթե թույլ տրվի, որ այդ բանը շարունակվի՝ դա մարդկության հանդեպ մեղք կլինի: Ես համոզված եմ դրանում:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Շատ ողջունելի են Սենատին արվող առաջարկները, որոնք օգտակար են, և ձեր կողմից վարկած չկար առաջարկության մեջ:

Պրն ՄԵՅՆ. Ոչ, որևէ նման բան իմ խոսքում չկա, ևս համոզված եմ, ինչ էլ որ արվի, պետք է արվի շատ արագ, այլապես Հայաստանը կվախճանվի:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ամենաշտապ արվող բաներից մեկը կլինի ծովայիններով ուազմանավ ուղարկելն ուղիղ այս նավահանգիստ:

Պրն ՄԵՅՆ. Ես դրան կողմ կլինեմ, վատահարար: Ես խոսեցի ծովակալ Բրիտանիի և այնտեղ եղած մեկ այլ մարդու հետ, և ընդհանուր տպավորությունն այն է՝ ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուր որ հեշտությամբ խոսում է սոցիալական հարաբերությունների մասին, որ Ամերիկայի ուազմական նավերը և ամերիկյան ծովայիններն ու ամերիկյան զորքերը համապատասխան թվով մեծապես կնպաստեն խաղաղության և կարգութանոնի վերականգնմանը՝ ուստի՝

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Մենք կարող ենք ուղարկել նրանց բարում նույն հիմունքներով, ինչ մենք հատկացրել ենք ուղարկելով նրանց Դալմացիայի ափ, կարելի՞ է չել:

Պրն ՄԵՅՆ. Այո:

Պրն ՍՍԻԹ. Նրանք իսկապես՝ Դալմացիայի ափին են:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ես խոսում եմ հեգնանքով: Ես ներադրություն թույլ տվեցի:

Պրն ՍՍԻԹ. Մենք շահեր չունենք Դալմացիայի ափին:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Պարզաբանումներ ունե՞ք բժշկից, սենատոր Ուիլյամս:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Ոչ, միայն այս առաջարկությունը: Եթե նախքան ձեր հեռանալը դուք ինչ-որ բան, որ ունեք փաստաթղթային տարբերակով, անհրաժեշտ համարեք հայտնելու հանրությանը և սենատորներին, ես կցանկանայի, որ դուք փոխանցեիք այն սղագրողին՝ լսումների նյութում տպարգրելու համար:

Պրն ՄԵՅՆ. Ահա այն փաստաթուղթը, որը հրապարակել է՝ այն կարող է օգտակար լինել:

Սենատոր ՈՒԻԼՅԱՄՍ. Շատ լավ, թող դա ներառվի արձանագրության մեջ:

(Փաստաթուղթը, որին հղում էր կատարվել, տպվում է արձանագրության մեջ ամբողջությամբ՝ հետևյալ կերպ)¹⁵⁵:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՐՏՅԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

[Դոկտոր Մեյնի այս փաստաթուղթի անառարկելի տրամաբանությամբ ցույց է տալիս, որ Ամերիկան պետք է

¹⁵⁵ Փակագծերն ու տեղեկությունները բառ բնագրի:

իրականացնի Հայաստանի ազատազրման
սրբազն առաքելությունը (Ձեյս Ու. Զերարդ)

(Ստորև հղված քարտեզն այստեղ ներկայացված չէ)¹⁵⁶

Ամբողջական Հայաստանը, ինչպես այն կվերահայտնվուի քարտեզի վրա՝ ըստ 1919 թ. փետրվարի 26-ին Հայաստանի պատվիրակության կողմից պաշտոնապես Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացված հուշագրի, պայմանների տարածք է. մակերեսը 125 000-135 000 քառակուսի կիլոմետրի միջև է, բնակչությունը՝ 4 300 000 է, բաժանված մոտավորապես հետևյալ կերպ. հայեր՝ 2 500 000 (աշխարհի այլ մասերում կա մոտ 1 000.000 հայ), այլ քրիստոնյաներ՝ 500 000, թուրքեր, չերքեզներ, արաբներ, պարսիկներ՝ 500 000, թաթարներ՝ 300 000, քրդեր՝ 200 000, այլ կրոններ՝ 300 000:

Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե¹⁵⁷ Գործադիր կոմիտե. Ձեյս Ու. Զերարդ՝ նախագահ, Զարլ Էվանս Հազիս, Էլիհու Ռութ, Հենրի Քերոր Լոյջ, Չոն Շարֆ Ուիլյամ, Ալֆրեդ Է. Ամիթ, Ֆրեդերիք Քոուրթլենդ Փենֆիլդ, Զարլ Ու. Էլիոր, Քլիվլենդ Հ. Դոջ¹⁵⁸:

Գերագույն կոմիտե. Զարլ Էվանս Հազիս՝ պատվավոր նախագահ, Ձեյս Ու. Զերարդ՝ նախագահ, Վիլյամ Ջեննինս Քրայան, Ալբոն Բ. Փարքեր, Էլիհու Ռութ, Հենրի Քերոր Լոյջ, Չոն Շարֆ Ուիլյամ, Զարլ Ո. Թոմաս, Լիման Աքրոր, նահանգապետ Բարթեր, Նյու Հեմփշիր, Ձեյս Լ. Քարթոն, նահանգապետ

Քիրմեն, Ռոդ Այլենդ, Ալիս Սթոն Բլեքվելլ, Զարլ Զ. Բնապարտ, նահանգապետ Բոյլ, Նևադա, Նիբոլաս Սյուրբեյ Բաթլեր, նահանգապետ Քեմփրել, Արիզոնա, նահանգապետ Քերի, Վայումինգ, նահանգապետ Քեթրոս, Ֆլորիդա, նահանգապետ Սորու Օհայո, Զարլ Սթյուարթ Դևիտն, պատվելի Զ. Հ. Դարլինգթոն, Քլիվլենդ Հ. Դոյջ, նահանգապետ Շորսի, Չորջիա, Զարլ Ու. Էլիոր, պատվելի Ուիլիամ Ֆ. Ֆեյքը, ծովակալ Բրեդլի Ա. Ֆիսք, Լինդի Մ. Գարիսն, կարդինալ Ջեյմս Գիբբոնս, Մարթին Հ. Գլին, Սամուել Գոմիկերս, Մելիտոն Գրանթ, Լոյդ Ք. Գրիսում, նահանգապետ Հարդինգ, Այովա, նահանգապետ Հարթինգթոն, Մերիլենդ, Ալբերտ Բուշնել Զարք, Սարա Դուրիս Շեյզըն, Մայրուն Թ. Հերիիր, Չոն Գրայը Հիբբեն, նահանգապետ Հոլումբ, Ռուներտիքութ, Համիլթոն Հոլթ, Չորջ Ա. Զարդ, Ռիչարդ Ս. Զարդ, Հենրի Ու. Զեսասփ, Ռոբերտ Էլիս Չոնս, նահանգապետ Լարրագուլ, Նյու Մերսիկո, նահանգապետ Լիսթը, Վաշինգտոն, Էլվարդ Ք. Լիթ, Չուլիան Ու. Մեր, Նորման Է. Մեր, Ուիլյամ Թ. Մեննինգ, Էլիզաբեթ Մարբլը, պատվելի Ուիլյամ Հ. Սորելենդ, նահանգապետ Նորեր, Հարավային Դաքորա, Ֆրեդերիք Ք. Փենֆիլդ, Չորջ Հեյվուն Փաթնամ, պատվելի Փ. Ն. Ռիախանըրը, Էլիսես Ու. Ռոբերտ, նահանգապետ Ռոբերտսոն, Օրլահումա, Ջեյկոբ Գ. Շուրման, նահանգապետ Ռոբերտսոն, Օրլահումա, Ջեյկոբ Գ. Շուրման, նահանգապետ Սիմոն, Փենսիլվանիա, Օսքար Ա. Սթրաուզ, պատվելի Ա. Ք. Թոմասն, նահանգապետ Թաունսենդ Կրտսերը, Նելավեր, պատվելի Բ. Դ. Թաքը, պատվելի Ուիլյամ Ու. Ուեր, Բևնշամին Այդ Վիլլը, Եվիրեթ Փ. Վիլլը, պատվելի Ռ. Զ. Ուինչեսթը, Ստեֆան Ս. Ուայզ, նահանգապետ Ուիթիքում, Օրեգոն, նահանգապետ Յազը, Պորտ Ուիկը¹⁵⁹:

¹⁵⁶ Փակագծերն ու տեղեկությունը՝ ըստ բնագրի:

¹⁵⁷ Շեղագիր հատվածը՝ համապատասխան բնագրի:

¹⁵⁸ Գործադիր կոմիտեի տնօմաների ազգանուններն անզերէն համապատասխան բնագրի. Executive Committee: James W. Gerard, chairman; Charles Evans Hughes; Elihu Root; Henry Cabot Lodge; John Sharp Williams; Alfred E. Smith; Frederic Courtland Penfield; Charles W. Eliot; Cleveland H. Dodge:

¹⁵⁹ Ըսդհանուր կոմիտեի անդամների ազգանուններն անզերէն՝ համապատասխան բնագրի.

[Չոն Հանսոն Թումաս Մեյնից¹⁶⁰, Գրինել քոլեջի տնօրեն]

Այս առավու ես տրամադրություն չունեմ պաշտոնական դիմումների համար: Այն վայրի մթնոլորտը, որտեղից ես եկել եմ դեռ ինձ հետ է: Ես դուրս եմ եկել մարդկային թշվառության խառնաշփոթից, որի նմանը, գուցե այն չունի իրեն գուշակության մարդկության պատմության մեջ Կյանքը Աստծո կողմից մարդուն տրված ամենաքանի նվերն է, այսուհե-

General Committee: Charles Evans Hughes, honorary chairman; James W. Gerard, chairman; William Jennings Bryan; Alton B. Parker; Elihu Root; Henry Cabot Lodge; John Sharp Williams; Charles S. Thomas; Lyman Abbott; Gov. Bartlett, New Hampshire; James L. Barton; Gov. Beeckman, Rhode Island; Alice Stone Blackwell; Charles J. Bonaparte; Gov. Boyle, Nevada; Nicholas Murray Butler; Gov. Campbell, Arizona; Gov. Carey, Wyoming; Gov. Catts, Florida; Gov. Cooper, South Carolina; Gov. Cox, Ohio; Charles Stewart Davison; Right Rev. J. H. Darlington; Cleveland H. Dodge; Gov. Dorsey, Georgia; Charles W. Eliot; Right Rev. William F. Faber; Admiral Bradley A. Fiske; Lindley M. Garrison; James Cardinal Gibbons; Martin H. Glynn; Samuel Gompers; Madison Grant; Lloyd C. Griscom; Gov. Harding, Iowa; Gov. Harrington, Maryland; Albert Bushnell Hart; Sara Duryea Hazen; Myron T. Herrick; John Grier Hibben; Gov. Holcomb, Connecticut; Hamilton Holt; George A. Hurd; Richard M. Hurd; Henry W. Jessup; Robert Ellis Jones; Gov. Larrazolo, New Mexico; Gov. Lister, Washington; Edward C. Little; Julian W. Mack; Norman E. Mack; William T. Manning; Elizabeth Marbury; Right Rev. William H. Moreland; Gov. Norbeck, South Dakota; Frederic C. Penfield; George Haven Putnam; Right Rev. P. N. Rhinelander; Earnest W. Riggs; William Henry Roberts; Gov. Robertson, Oklahoma; Jacob G. Schurman; Gov. Smith, New York; Gov. Sproul, Pennsylvania; Oscar S. Straus; Right Rev. A. C. Thompson; Gov. Townsend, Jr., Delaware; Right Rev. B. D. Tucker; Right Rev. William W. Webb; Benjamin Ide Wheeler; Everett P. Wheeler; Right Rev. J. R. Winchester; Stephen S. Wise; Gov. Withycombe, Oregon; Gov. Yager, Porto Rico.

¹⁶⁰ Սույն տողատակը՝ աշխատության տողատակերի շարքում համարակալված է որպես թիվ 160 Ա. Ղամբարյանի կողմից բացատրված տեղեկությունն ապրունակող տողատակ չէ: Այն համապատասխանում է թիվի՝ էջ 91-ում տեղ գտած թիվ 1 համարակալված տողատակին Վերջինիս բոլանդակությունը հետևյալն է:

Դոկումու Մեյնը որպես Մերձավոր Արևելյան օգլության կոմիտեի հասուն կանոնականացնար եղել է Ռուսահայաստանում մարտի 1-ից մինչև մայիսի 17-ը: Վերը բերված քաղվածքները բակալավրի՝ 1919 թ. հունիսի 22-ի ելույթից են: Դրանք պարունակում են արժեքավոր տեղեկություններ այն վիճակի մասին, որն այժմ տիրում է Հյուսիսային Հայաստանում, ինչպես նաև մեծարանում են, ինչպես մենք կարծում ենք, Ամերիկայի բանականությունն ու խիդաքանակաված համաշխարհային խնդիրների հետ: (Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտե):

որուել ես եղել եմ, թվում եր, թե դա ամենաէժան բանն է: Հինգ հարյուր հազար (ումանք հաշվում են 750 000) մարդ սովոր մեռնում, եր աքսորում: Այսուեղ աքսորում ազգն ունեցրկվեց: Առաջ ազգը սովահարության մեջ է եղել բայց ոչ ունեցրկված և աքսորում: Հայերը սովամահ էին լինում տնից հետու: Սա ներկայացնում է աշխարհի պատմության մեջ մի նոր տառապանք: Կես միլիոն մարդ կամ ավելի մեռնում են, հայրենակարու են, անպաշտպան, մեռնում են փողոցներում և նրբանցքներում, օտար զուրկերում, օտար քաղաքներում և օտար վայրերում: Կարո՞ղ եք պատկերացնել այս վիճակի սարսափելիությունը:

Մարտի վերջին ես Ալեքսանդրապոլ քաղաքում եի, որն ունի գրեթե 35 000 բնակիչ: Ես փողոցներով վեր ու վար գնացի ուսումնասիրելու վիճակը: Բլուրների վրա դեռ ձյուն էր, քանի որ քաղաքը 4000 ունեաչափ բարձրության վրա էր, շրջապատված բուրներով ու սարերով, փողոցներում սառուց ու կեղտու կիսահալ ձյուն էր: Վարսուն հազար գաղթականներ թուրքահայաստանից փողոցներում էին, անցումներում, շենքերի մոտքերում՝ կծկված պառկած: Երեսաներ կային, նրանցից շատերը մեկ տարեկանից ավելի փոքր էին, ծերունիներ կային, շատ թիջ երիտասարդ տղամարդիկից գրված քաղաքի ամայության մեջ՝ անհույս, բայց և կարձելով այն հույսից, որ մի օր կարող են վերադառնալ տուն՝ նրանց համար տունն ամայացած թուրքահայուստանն էր: Բազմապատկեր այս թիվը հինգ, կամ տաս, կամ ավելի անգամ և պատկերացրեք այս վիճակն այլ վայրերում: Նայեք այս մարդկանց, նրբանցակ կանանց, նրանցից շատերը հավաքում էին կանաչ բուսականության արմատներն ուտելու համար: Ուշադրություն դարձրեք սանկտուարիան պայմաններին, ուշադրություն դարձրեք ինվանդուություններին և մահվան մարգարեությանը, ուշադրություն դարձրեք ձեր ներկայությամբ մեռնող մարդկանց: Ալեքսանդրապոլի երկու թաղամասում քայլելով ականատես եղան մահվան՝ չորս մարդ թիվուն մահացած իմ աշքի առաջ: Առավոտյան դուրս արի ու տես՝ նրանք հավաքեցին են եախորդ գիշերվա դիակները, նրանցից 190-ը հավաքեցին առաջին առավոտյան, երբ ես այս քաղաքում էի: Գնա գաղթականների գերեզմանոց ու տես՝ պղծված գերեզմաններ ու մարմինները լրած կմայսեներ՝ դուրս ելած հոդից, ընկած գետնին:

Այս ամբողջ սարսափը, որը նշեցի, դեռևս իմ առջև է, ի՞նչ կարող

ևս ես ասել այս առավոտ այս երջանիկ վայրից: Չնայած այս ամենին, որ ես ուրվագծեցի ձեզ համար այս համառոտ խոսքերով, հեռվից գեղեցիկ լեռների տեսարանով, պարզած ձեռքի հեռավորության վրա զսնիոր բլուրների տեսարանով, և այսուեղ, այս լեռների և բլուրների վերսուո երկնքի փառքն էր, և օդում եկող բացվող գարնան խոստումն էր, և ծառերի վրա երգում էին թշունները: Ամբողջ բնուրյունը՝ եթե մենք նայենք վերև ու ներքև, գեղեցկանում էր: Աշխարհում սրանից ավելի գեղեցիկ երկիր չկա, եթե մենք նայում ենք դրան որպես բնուրյան, ինչպես Աստված է ստեղծել այն և տվել այս մարդկանց ու աշխարհին: Սա, այս ամենը սարսափելին ու գեղեցիկն այս աշխարհում էր, որ մերն էի: Այս աշխարհում, որտեղ Ամերիկան է, որտեղ բերքի հարթավայրերն ու գետերն են, որտեղ «արտսավայրերը հազնված են հոտերով», որտեղ «դաշտերը պատված են եղանակացրենով», որտեղ նաև մեր պարծենկուտ կառավարությունն է:

Այս Ռուսահայաստանն իր արտորյալներով Թուրքա հայաստանից, մարդկային խեղճուրյան իր համակենտրոնացումով և մեր Ամերիկան, որով մենք ուրախանում ենք այսօր, երկուսն էլ նույն փոքրիկ աշխարհում են, ոչ այնպես առանձին, ինչպես փաստացի այսօր Մասաչուսեթսն ու Այովան էին առանձին, եթե ես հիմնադրեցի այս բոլեջը: Ես Կովկասից եկա Նյու Յորք տասն օրվա փաստացի ճամփորդությամբ: Սա ամենն է, որ անհրաժեշտ է Թիֆլիսից գալ Նյու Յորք, և սա կարող է դառնալ ստվարական բան, եթե Նյու Յորքի և Բաթումի՝ Սև ծովի վրա գտնվող նավահանգստի միջև, փոխադրության պահովվի:

Ես երբեք չեմ մտածում հայ ժողովրդի մասին՝ նրա մի մասը պայքարում է Ռուսահայաստանում կառավարություն հիմնադրելու համար, մի մասը՝ արտորյալ, ձգում է վերադարձնալ տուն Թուրքահայաստան, առանց Ամերիկայի մասին մտածելու: Այս ժողովուրդը պահանջ ունի Ամերիկայի նկատմամբ: Աստված արգելում է, որ մենք հանգիստ նստենք այսուեղ և անստենք այն: Եթե մենք դա անենք, մենք մեղք ենք գործում երկնքի առաջ: Ամեն պայքարող ժողովուրդ պահանջ ունի Ամերիկայից: Եթե ես կարողանամ ստիպել այս լսարանին հասկանալ այս մի բանը՝ ես հասած կլինեմ իմ նպատակին այս առավոտ:

Ամերիկան իրավունք չունի հոշակել իր կառավարությունը որպես իդեալական կառավարություն կամ խոսել իդեալական կառավարության մասին, եթե՝ եթե կանչը ենչի, չկամենա դրսուորել դա գործնականում նրանց նկատմամբ, ովքեր դրա կարիքն ունեն և ովքեր ցանկանում են դա: Մեր կոնգրեսականները երբեմն տպավորություն են ստեղծում, թե ուշադրություն են դարձնում հայրարք, քանի որ այսուեղ ինչ-որ բան անելով՝ ծովի այս ափից փոխաստուցելով ինչ-որ աննշան մի բան, 3000 մղն ենու և առանձնացված են մեացած աշխարհից մի անհնարին խոչընդոտով: Նրանք համարձակվում են ասել, որ մենք հետարքրքած չենք այսուեղի խնդիրներով և չենք ապականվել նրանց ինտ հաղորդակցությամբ, կամ նրանց խնդիրների, կամ նրանց տարակուսակի, կամ նրանց տարածքային անկարգությունների հետ: Ամերիկան բավականին լավն է մեզ համար, իհարկե, այս բավականին լավն է, և եթե մենք հասկանանք, թե ինչ ենք ասում՝ մենք պետք է կրկնենք կարգախոսը, որն այդքան հաճախ լսում ենք այս օրերին: «Եկեք լինենք ամերիկացիներ»: Բայց մենք չենք կարող ամերիկացի լինել քանի դեռ չենք ուղղել մարդկուրյան գիտակցությունը դեպի հավերժ նպատակը, հասնել ազատության, նպատակ, որը մարդկության մեջ դրվել է հավերժ Աստծո կողմից:

* 161 *

Այս կառավարությունն արտահայտում է մարդու ինքնակառավարման հնարավորությունները, բայց դրանից առավել, այն մարզաքուրյուն է, որը շարունակվում է ինքնակառավարման ձևու և պիտոք է ստեղծի ինչ-որ ավելի լավ բան ապագայում, բան այն, ինչ նա ստեղծել էր անցյալում: Աստված թույլ չի տալիս, որ մենք մտածենք, թե հասել ենք ինքնակառավարման գործառույթների վերջին: Կառավարությունն այսօրվա եվոլյուցիան է այս սերնդի համար, Եվոլյուցիան մեջ և մեր միջոցով աստվածային նպատակով, որ մարդը պետք է ազատ լիաւրի հնարավորություն ունենա: Այն ներկայացնում է մի բանի հազար տարիների ամք, այն չի ստեղծվել 1875 թվականին: Ինչո՞ւ այս

¹⁶¹ Աստղանիշերը բատ բնազրի:

կառավարությունն ավելի շատ փորձ չէ, քան այս երկրագունդը փորձ և աշխարհաշինության մեջ:

Դա արտահայտություն է, այս երկրագունդի ընդամենք մի փորբիկ արտահայտություն է մյուս երաշրների շարքում՝ ընդմիշտ շարունակվող ստեղծագործական ընթացքի: Այս աշխարհն իրերի բնության մը մասն է, որոնք իրենց դրանորում են այս լայն տիեզերքում, ենու այսպես այս կառավարությունն իրերի բնության արտացոլումն է, մարդկանց հոգում, ստեղծագործական էներգիայի արտահայտությունը՝ մարդկային հոգուց աստիճանաբար դուրս ծավալվող: Մենք մեծանում ենք միասին: Մենք մի անվերջ ծրագրի գործընկերներ ենք: Ես չփառեմ, գուցե մեր կառավարությունն այս ձևով կշարունակի գոյություն ունենալ: Դուք չզիտեք: Ես հույս ունեմ կզոյատեի:

* * *¹⁶² Ես համարձակվում եմ հիշեցնել, որ սոցիալական սկզբունքները, կառավարական սկզբունքները՝ հավերժական սոցիալական սկզբունքները, հավերժական կառավարական սկզբունքների ցուցադրությունը առկա է Բարի Սամարացու առակում: Առակը միայն Գալիային չի պատկանում, այն պարզապես մեր քրիստոնեական դարաշրջանի առաջին դարին չի պատկանում: Այն պատկանում է բոլոր ժամանակներին: Այն ընդորկում է սոցիալական և քաղաքական հարաբերությունների ամբողջ ասպարեզը՝ գործունյա մարդկանց, քաղաքական գործիքների, պետական այլերի՝ բայց մարդկանց, ովքեր միջնորդներ են՝ աշխարհը գեայի ավելի լավ բաներ տանելու համար: Եթե մեր հասարակական գործիքները և մեր կոնզըստականները կարողանային այդ հիմնարար փաստը հացնել իրենց գիտակցությանը և նման կերպ մոտենալ այս կրիտիկական ժամանակի խնդիրներին, այս աշխարհը մը փորձ ավելի լավը կդառնա:

Այս առակի սկզբունքները կիրառելի են այն աղքատ, ծեծված և վիրավոր երկրի նկատմամբ, որի մասին ես խոսել եմ, և այսուղ մեզ վտանգ է սպառնում նմանվել քահանայի և դեստացու, ովքեր անցել են

¹⁶² Աստղանիշերը՝ ըստ քնագրի:

այն կողմը: Նրանք պարփակվել են իրենց մեջ ու բավարարվել իրենց սեփական գործով: Դրանք դարձել են նախատինք մարդկային ցեղի համար, ասելիք և զարշահոտություն այդ ժամանակներից եկած մարդկանց սերունդների քրանցքներում: Ինչո՞ւ: Պարզապես այն պատճառով, որ նրանք անցան կողքով: Անկասկած, նրանք կարող են լավ մարդիկ լինել՝ այս քահանան ու դեստացին: Նրանք պարզապես անցան կողքով: Եվ այս աշխարհը, մեր այս կառավարությունը, այսպէս թե այնպէս, նույն բանն է անընդհատ անում: Այնուամենայնիվ, մենք հավերժական դատապարտման ենք ենթարկում քահանային և դեստացուն այն բանի համար, ինչ իրենք արել են՝ նույն այն բանի, որն անելու վտանգի մեջ ենք մենք այսօր:

Կանցի՞ մյուս կողմ մեր այս կառավարությունը: Եթե այս՝ նա պետք է պատրաստ լինի աշխարհի դատապարտմանը:

Եթե այս կառավարությանը խնդրում են մանդատ վերցնել Փոքր Ասիայի ինչ-որ մասի համար, այն պետք է ասի՝ «Այո»: Ինչո՞ւ: Այո, շատ պատճառներ կան, բայց դրանցից մեկն այն է, որ հայերն այդպես են ցանկանում: Յուրաքանչյուր հայ, ում ենտ ես խոսել եմ այս մասին, անկախ այն բանից Շուսահայաստանից է, թե Թուրքահայաստանից, բարձր, թե ցածր, հարուստ, թե աղքատ, ասել է՝ «Մենք ցանկանում ենք Ամերիկային: Ամերիկան մեր միակ հույսն ե»: Ես լսել եմ դա հարյուր անգամ, ենու այս խոսքերը: Մենք պատրաստվում ենք լսել այդ կանչը, թե ոչ:

Մյուսն այն է, որ Ամերիկան օգնել է հաղթելու այս պատերազմում: Նա ամեն ինչ չի արել, բայց օգնել է այս պատերազմի հետ կապած և, հավանաբար, այն չեին կարող հաղթել, եթե մենք շմանակցեինք: Ավելին՝ Ամերիկան, զյսավորապես իր նախազահի միջոցով, ձևակերպեց այն զաղափարները, որոնց համար մենք կովել ենք այս պատերազմում: Նա արեց սա այնպես, ինչպես ոչ մի այլ մարդ: Այդպես կորվի աշխարհի պատմության մեջ: Նա ձևակերպեց ժողովրդափարության զաղափարները, կիրառեց դրանք համաշխարհային վատերազմում և հայտարարեց երկիր մոլորակի մարդկանց, որ մենք պայքարում ենք այս զաղափարների համար:

Եվ երրորդ տեղում՝ մենք շատ բան ունենք ասելու խաղաղության պայմանների մասին:

Այժմ, վերցնելով այս երեքը միասին, թույլ տվեք հաստիություրը շեշտադրումներով։ Ես կարող եմ պնդել, որ Ամերիկան անվերապահորեն հավատարիմ ինքն իրեն, աշակեցելու է խաղաղության պայմանագրի բարեհաջող ստորագրմանը։ Քաղաքական, միջազգային պարտավորությունների տեսանկյունից Ամերիկայի համար այս ամենից փախուստ չի կարող լինել։ Եթե նա դուրս գա, դա պարզություն դասալցություն կլինի։

Բայց ենթադրեք՝ մեզ չեն խնդրել մանդատ վերցնել։ Ուստի ևս ասում եմ Ամերիկան իրավունք ունի պահանջելու դա։ Ամերիկան ընդորկվել է այս պատերազմում առանց եսասիրական նպատակների։ առանց տարածքային հավակնությունների, առանց սահմանային խնդիրների։ Շատ անգամ է նշվել, թե ինչո՞ւ է նա ընդունվել պատերազմում՝ որպեսզի պարզապես աշխարհին ապահովի ժողովրդությունը և այն դարձնի ապրելու համար ամենալավ տեղը՝ ի տարբերություն հակամարտող ազգերի պահանջների, դա կարող է ի ճիշտ լինել։

Բայց սա պարտականության հարց է Ամերիկան պես և արտնություն պահանջի օգնելու համար կարիք ունեցող ունեցրելով մարդկանց, պես է օգնի այս մարդկանց զալ այն ինքնազմությունը, որ իրենք կառավարող ուժ են։ Ամերիկան չպետք է սպասի, որ իրեն խնդրեն։ Նրա պարտականությունը պարզ է։ Տասնյակ տարիների պայմանները կոչ են անում՝ եթե մենք չենք հասկանում՝ մենք պարզուցնեի հիմար ենք։

Մենք լսում ենք, որ մեզ համար թանկ կարծենա այս գործունեության մեջ ընդդրկումը։ Նման հայտարարությունը ստորագրուելու է։ Մենք հազարավոր միլիոններ ենք ծախսել մղելու այս պատերազմը և կովել ճակատամարտերում, որքան շատ միլիոններ են փառելու (1) ոչ չգիտի ամբողջ արյունավի պատմությունը։ Եվ եիմա ասե՞նք դու մերից գումար կտանի, եթե ինչ-որ բան անելու անհայտությունը կուպահան աշխարհում այն սկզբունքը, որի համար մենք պայքարեցինք Ռուս արհամարեկի է սա։ Ինչո՞ւ են այս պատերազմի խնդիրները պարբռության մեջ անմատությունը և անհամար պատերազմը։ Մենք հադրել ենք ճակատամարտը, մենք խաղաղությունը հայտարարման շեմին ենք, բայց կարևոր խնդիրները, որոնք ենթադրում ենք այս պատերազմի հետևանքը, այդ խնդիրները մենք նոր ենք սկսում բացահայտել, նոր ենք սկսում ձևակերպել դրանք։ Եվ ինչ դրենք մենք այս պատերազմը, թե ոչ, կախված կլինի այն բանից, թե ինչպես մենք կլուծենք այդ խնդիրները։ Մենք ամրոց գործի մի մասն ենք անձ այդպես ենք կարծում, թե ոչ Ամերիկան կապված է վերականգնման ու վերակառուցման բոլոր խնդիրների հետ։ Սա առավելություն և պարտականություն է, որից չենք կարող փախչել։

* * * * *

աշխարհին որպես այս պատերազմի հետևանք, այդ խնդիրները մենք նոր ենք սկսում բացահայտել, նոր ենք սկսում ձևակերպել դրանք։ Եվ ինչ դրենք մենք այս պատերազմը, թե ոչ, կախված կլինի այն բանից, թե ինչպես մենք կլուծենք այդ խնդիրները։ Մենք ամրոց գործի մի մասն ենք անձ այդպես մենք կարծում, թե ոչ Ամերիկան կապված է վերականգնման ու վերակառուցման բոլոր խնդիրների հետ։ Սա առավելություն և պարտականություն է, որից չենք կարող փախչել։

Մեզ ասում են, որ մանդատը դժվար բան է լինելու։ Այո, իհարկե։ Դա բազմաթիվ դժվար բաներ, որոնք մենք պարտավոր ենք անել, մենք պես է դա անենք՝ անկախ այն բանից, թե ուզո՞ւմ ենք մենք դա անել, թե ոչ Բայց հայերն արժանի են ցանկացած՝ ժամանակի, աշխատանքի և զումարի ծախսի, որ կարող է ներառվել։ Հայերը միակ կայունացնող գործնն են կովկասյան լեռների և Կոստանդնովպոլսի միջև ընկած տարածաշրջանում բնակվող ազգերի խմբում։ Ես ցանկանում եմ դա նորից ասել, նրանք միակ կայունացնող գործնն են։ Նրանք ունեն սոցիալական արժանիքներ։ Նրանք հավատարիմ են համընդհանուր թերությամբ չափանիշներին առօրյա կյանքում։ Նրանք հավատում են մարդու իրավունքներին։ Նրանք կամենում են աշխատել։ Նրանք շանում են սովորել։ Որպես կայունացնող գործն՝ պատշաճ առաջնորդության ներք, ազգային միասնություն ապահովելու պայմանով, հայերը կլինեն խոխական ուժ են բաղարակրթության, Մեծավոր Արևելքում նոր բաղարակրթության կերտման համար։ Խնդիր։ Այո, խնդիրը կլինի, առևանի փորք՝ համեմատ ակնկալվող արդյունքների։ Ավելին, մեր այս կուռավորությունը ստեղծվել է դժվարությունների և սարսափելի առևտակի իրավիճակում։ այն ստեղծվել է օգնելու աշխարհին դուրս գալու դժվարություններից և անհամեշտառության դեպքում ստեղծելու խնդիրներ։ Դժվարություններից, որ մարդիկ կրում են և ծառայություններ։ որ մարդիկ կատարում են՝ կախված է մարդկության փրկությունը։

Խողանիշները՝ բառ բնագրի։

241

Դարերով հայ ժողովուրդը պահպանել է իրեն որպես ազգային միավոր, որպես ազգային խոսք: Նրանք պահել են իրենց իդեալները և իրենց կրոնը: Նրանք պահպանել են իրենց մինչև այժմ: Այս պահին նրանք ձեռքները մենքնել են Ամերիկային և ասում են. «Օգնեք մեզ, մեր միակ հույսը ձեր վրա է: Տվեք մեզ արդարության օրենք, իրավահա- վասարություն օրենքի առաջ: Սովորեցրեք մեզ ժողովրդավարության անդամակցելու ուղիները»: Առ զիտավոր պատճառն է, թե ինչո՞ւ Ամերիկան պետք է մանդատային հարաբերություններ խնդրի Հայաստանի հետ:

Մեր այս ազգը մեծ վստահության պահպանն է՝ այս է կազմակերպված ժողովրդավարության վերջին արտահայտությունը, աստվածային հաստատակամության վերջին արտահայտությունն ազատ կյանքում, և ես ասում եմ՝ համաշխարհային շահերն ու հարաբերությունները կրող իրական կառավարության վերջին արտա- հայտությունը: Պատե՞նք այդ վստահությունը անձեռոցով ու թարցնելով: Մեկուսանա՞նք մեր մեջ:

Չտա՞նք այս հարցը, թե «Ո՞վ է մեր հարեւանը»: Չլսե՞նք Աստծո պատվիրանը և մարդկության պատվիրանը՝ «Օգնեք մեզը մյուսին»:

Դրեն ՍԱԼՔՈՍ: Դոկտոր Մեյն, դուք կարծում եք, որոշ զորք Բաքումում տեղակայելը բաց կպահի՝ երկաթուղու գիծը:

Դրեն ՍԵՅՆ. Դա կնպաստի, անկասկած:

Դրեն ՍԱԼՔՈՍ: Կարծում եք շա՞տ զորքի կարիք կա դեպի Էրիվան գիծը բաց պահելու համար, քանի որ էական է այնտեղ սնունդ տանելը:

Դրեն ՍԵՅՆ. Զեմ կարծում, որ շատ զորք կպահանջվի: Ես կարծում եմ Վրաստանի Հանրապետությունը կենթարկվի Միացյալ Նահանգների ազդեցությանը և այս դեպքում առարկու- թյուն չի դրսերի ու պատրաստ կլինի դիվանագիտական ընսարկումներին ցանկացած դեպքում: Իմ տպավորությունն այնպիսին էր, որ Ամերիկայի կողմից տրամադրված 15 000-անց կամ 20 000-անց զորքն այս կամ այլ ձևով՝ ես չեմ ասում ինչ ձևով,

կկայունացնի այդ ամբողջ երկիրը:

Դրեն ՍԱԼՔՈՍ: Դուք նկատի ունեք 15 000 կամ 20 000-անց Ամերիկայի դրոշի ներքո:

Դրեն ՍԵՅՆ. Այո, ես դրա մասին չեմ մտածել: Դա նոր փուլ է: Ես ենթադրել եմ, որ, անշուշտ, եթե ամերիկյան զորքը գնա այնտեղ՝ կզար Ամերիկայի դրոշի ներքո:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ: Ես չեմ կարծում, որ նրանք կարող են գնալ այլ կերպ:

Դրեն ՍԵՅՆ. Օտարերկրյա զինվորագրման օրենքի առկախման մասին ձեր ասածից ես եզրակացրեցի, որ հնարավոր է —¹⁶⁴

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ: Ծովայինների տեղակայումը մի առաջարկ է, բայց մյուս առաջարկը, որի մասին ես հարցրի ձեզ այս երկրում ամերիկահայերի բանակի հավաքագրումն էր, որի զինումը մենք կստանձնենք:

Դրեն ՍԵՅՆ. Եվ դա չի ուղարկվի Ամերիկայի դրոշի տակ:

Մենասոր ՀԱՐՄԻՆԳ. Ոչ:

Դրեն ՍԵՅՆ. Ես կասեի 15 000-անց զորքը կարող էր կայունացնել երկիրը:

Մենասոր ՈՒԽԱՅԱՍՍ: Դուք գիտե՞ք որքան զորք ունեն բրիտանացիները Բաքումից Բաքու:

Դրեն ՍԵՅՆ. Որոշակի հաշվետվություն չեն տվել մեզ:

Մենասոր ՈՒԽԱՅԱՍՍ: Որևէ այլ աղբյուրից գիտե՞ք:

Դրեն ՍԵՅՆ. Բրիտանացիներն իրենք չեն զեկուցում, բայց ընդհանուր համոզմունք կա, որ 20 000 են:

Դրեն ԶԵՂՈՒԻԹ: Հունիսի 1-ին Կովկասում եղել է 16 000- անց զորք, ներառյալ հնդկական զորքի լայն կոնտինգենտը: Փաստացի, Բրիտանիայի ներքո Կովկասի զորքերի մեծ մասը

¹⁶⁴ Բնազգրում պարուն Մեյնի խոսքն ավարտված չէ՝ երկար զիծ է «հնարավոր է» բառից հետո:

հնդիկ պահակախմբեր էին:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՍ. Ես հասկանում եմ դա, բայց դուք նկատի՞ ունեք բրիտանական ամբողջ զորքն էր 16 000:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Ամբողջ զորքը —

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՍ. Ամբողջ զորքը Կովկասո՞ւմ:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Կովկասում 16 000 էր:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՍ. Բարոն և Բարումն ու բոլոր երկարութուն գծերը նշված կետերում պաշտպանված էին:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Այո, սրբ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՍ. Դուք ընդհանրապես կապի մեջ մտե՞լ եք հայկական զինվորական կառույցի հետ:

Դրն ՄԵՅՆ. Այո, ես տեսել եմ նրանց տարրեր ժամանակ:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այստեղ արձանագրված է, որ նրանց թիվը մոտավորապես 30 000 է, բայց որոնցից միայն 6000-ն է պատրաստված ծառայության:

Դրն ՄԵՅՆ. Դա այն է, ինչ ես հասկացել եմ:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ կլինի այդ բանակին սարքավորումներով օժանդակելու արդյունքը:

Դրն ՄԵՅՆ. Ես կարծում եմ դա շատ ողջունելի և օգտակար կլինի:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ եք կարծում, եթե հայկական բանակը զինված լինի հրացաններով, զնդացիրներով և թերե հրետանիով, նրանք կարո՞ղ են կայունացնել իրավիճակը:

Դրն ՄԵՅՆ. Այո:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՍ. Եվ շատ զինամքերով, իհարկե:

Դրն ՄԵՅՆ. Այո: Ես համոզված եմ եղել, որ պեսք և համագործակցություն ապահովվի մյուս ազգերի կողմից՝ որոշ ազգերի կողմից, բիտանացիների կամ եթե ոչ՝ Միացյալ Նահանգների կողմից, պետք է քաջալերել և հույս տալ հայ ժողովրդին: Մենք միշտ պետք է հիշենք, որ հայ ժողովուրդը եղել է

րոնապետական կառավարության ներքո 500 կամ 600 տարի, և նրանք չգիտեն թե ինչպէ՞ս շատ լավ իրականացնեն կառավարության գործառույթները: Նրանք պետք է պաշտպանվեն նրանց պետք է օգնել և առաջ մղել այնպէս, որ նրանք աստիճանաբար ի վիճակի լինեն իրականացնելու կառավարության գործառույթները որևէ ընդունելի ձևով: Ես կիամարեի դա դժբախտություն, եթե մենք ես նկատի ունեմ աշխարհը, թողնենք, որ Հայաստանն ինքը հոգա իր մասին: Ես չեմ փորձում պարտավորություն դնել Միացյալ Նահանգների վրա, բացառությամբ, որ կարծում եմ՝ Միացյալ Նահանգները ունի բարոյական պարտավորություն տալու ավելի՝ ի տարրերություն մյուս երկրների:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես բավականին համակրում եմ այդ տեսակետը: Ես ցանկանում եմ հասնել դրան: Ես ձեզ հարց կտամ, դուք կարող եք պատասխանել դրան կամ ոչ՝ ինչպէս ցանկանաք: Դուք հանդիպե՞լ եք ակնհայտ մտադրությունների ապացույցների մեջ պարտադրելու այդ երկրի հովանավորչության նուանձնումը:

Դրն ՄԵՅՆ. Հիմնական տպավորությունը, որ ես ստացել եմ բրիտանացիներից, այն էր, որ նրանք ակնկալում եին Ամերիկայի գալը, և գեներալ Բիչը և այլը, ովքեր խոսում եին այդ մասին, պարզապես ասում եին. «Մենք հույս ունենք, որ Ամերիկան կզա և կվերցնի Հայաստանի ինամակալությունը»: Սա այն մասին, թե ինչպէս եին նրանք առաջարկում: Այժմ դուք չեք կարող դա մեկնաբանել որպես նախագիծ իրենց կողմից, սակայն հնարավոր եք, որ դա հենց նախագիծ է եղել:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ինչ-որ մեկը ձեզ ասե՞լ է, որ դա առաջարկվել է Խաղաղության վեհաժողովում մեր ներկայացուցիչների կողմից՝ որ մենք դա կանենք:

Դրն ՄԵՅՆ. Այո, ես դա լսել եմ շարունակաբար և հույս ունեի, որ դա ճիշտ է, որպես փաստ: Իմ անձնական կարծիքն այդ

հարցի մասին այն է, որ Ամերիկան՝ ես խոսում եմ ամերիկացիների մասին մարդասիրական տեսանկյունից. բարոյապես պարտավորված է տեսնելու, որ հարկ է Հայաստանին հնարավորություն ընձեռել: Սա է ամենը: Ես բավականաշատի վստահ եմ, ինչպես պրն Սմիթն ասաց, որ Փոքր Ասիայի միակ ազգը, որն ընդունակ է զարգանալու կրթության և մշակույթի տեսակետից՝ ինչպես որ մենք ենք հասկանում այդ բառը, և բնավորության հավասարակշռության տեսանկյունից, սովորական սոցիալական կյանքի չափանիշներին հավատարիմ մնալու տեսանկյունից, ներկայումս հայերն են, և եթե դուք հնարավորություն տաք այս մարդկանց Փոքր Ասիայի մի շրջանում, ապա նրանք աստիճանաբար կնպաստեն կայունացմանն ամբողջ երկրում: Թուրքերը, թաթարներն ու քրդերն ի վիճակի չեն դա անելու:

Պրն ՍԱԼՔՈՇ. Դուք նկատի ունեք ամբողջ Հայաստանը՝ միասնական Հայաստանը:

Պրն ՄԵՅՆ. Այո:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Թույլ տվեք ձեզ տալ հիմնական հարցը. իրավաբանն ի՞նչը կընդունի որպես հիմնական հարց: Դա ձե՞ր կարծիքը չէ, որ եթե մենք սատարենք այս կառավարությանը մինչև այն հնարավորություն ունենա կազմակերպել ինքն իրեն, ապա հայերը կարող են հոգալ իրենք իրենց մասին:

Պրն ՄԵՅՆ. Ես այդպես եմ զգում, սըր:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այլ կերպ ասած, սկզբում վտանգը՝ շրջապատող քառսային վիճակի պատճառով, նրանց անկազմակերպվածության և կազմակերպվելու անկարողության մեջ է:

Պրն ՄԵՅՆ. Անշուշտ: Հայաստանի կառավարությունը ներկա պահին՝ մինչ դրսից որեւէ օգնություն ստանալը, չունի հնարավորության անգամ նշույլ: Իմ պատկերացումն այս մասին այն է, որ եթե նա հնարավորություն չստանա, ապա Հայաստանի

հանրապետությունը հազիվ թէ գոյատևի վեց ամիս:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Նա չի կարող պահել իր ոտքերը մեկ տեղ բավականաշատ երկար՝ ուրիշ ելնելու համար:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես պատրաստվում եմ ձեզ տալ այն հարցը, որ բարձրացնում է յուրաքանչյուր առարկող:

Պրն ՄԵՅՆ. Այո, սըր:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ինչո՞ւ եք դուք կարծում, որ այս 6000 մղոն հեռավորության վրա գտնվող հանրապետությունը՝ կստանանի այդ պատասխանատվությունը, եթե Եվրոպայում՝ հենց ձեռքի տակ կան ազգակցական քաղաքակրթություններ:

Պրն ՄԵՅՆ. Այս հարցին կարելի է պատասխանել տարրեր կերպ: Առաջին հերթին, Միացյալ Նահանգները, այն է՝ Միացյալ Նահանգների ժողովուրդը հետաքրքրված է Հայաստանով 100 տարի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես դա հասկաց:

Պրն ՄԵՅՆ. Նրանք այնտեղ դպրոցներ են հիմնել, քոլեջներ և առաքելության դպրոցներ, և արդեն 100 տարի է նրանք եղբայրական զգացմունքներ ունեն Հայաստանի նկատմամբ, իսկ հայ ժողովուրդը փոխատուցել է դա, և հայերը միասնական համաձայնությամբ հույսը դրել են Ամերիկայի վրա, որպես իրենց փրկություն: Նրանք հույսերը չեն զնում Անգլիայի¹⁶⁵ վրա այդ կերպ, հույսերը չեն զնում Ֆրանսիայի վրա այդ կերպ և կամ Իտալիայի վրա այդ կերպ: Հայաստանի և Միացյալ Նահանգների միջև հոգնոր ներքին փոխարաբերություններ կան, ինչը, իմ կարծիքով, Միացյալ Նահանգների ժողովուրդի վրա՝ ես ասում եմ Միացյալ Նահանգների ժողովուրդ, բարոյական պարտավորություն է դնում: Անգլիան այսպես հետաքրքրված չէ Հայաստանով: Անգլիան Միջազգետրով իր սեփական ճանապարհն ունի դեպի Հնդկաստան, նա մեկ այլ ճանապարհ ունի

¹⁶⁵ Բնագրում՝ England:

Պաղեստինի վրայով, և ինչպես պրե Ամիթն ասաց՝ Անզիհան գերծանքեռնվել է այս պատերազմով և չի հասկանում, թե ինչո՞ւ պետք է ինքը կոչվի Հայաստանը պաշտպանելու: Ես խորապես համոզված եմ, որ Անզիհան ճիշտ այդ տեսակետին է:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Նա չի էլ պատրաստվում ծանրաբեռնել իրեն ինչ-որ բանով, որն ինքը չի ցանկանում:

Պրե ՄԵՅՆ. Ես կարծում եմ, Անզիհան ինչ-որ բան պետք է անի վերականգնվելու և կարգավորելու համար իր ֆինանսական վիճակը: Միջազգետում դա անելու հնարավորություն չկա: Դրա միջոցը կա, եթե նա բաց պահի իր ձանապարհները դեպի Հնդկաստան:

Բայց Ամերիկան հետաքրքրված է եղել Հայաստանով բարոյական տեսանկյունից, կրթական տեսանկյունից, քրիստոնեական քաղաքակրթության տեսանկյունից, և ինձ թվում է՝ Ամերիկայի կողմից այդ ամենից հրաժարվելն այժմ պատերազմի մեջ մտնելուց հետո և պատերազմի հետ կապված խաղաղության պայմանների իրականացմանն աջակցելու պարտավորությունների ստանձնումից հետո, կինդի բարոյական պարտավորությունների արհամարհում, բարոյական պարտավորությունների ժխտում:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ես միանգամայն համաձայն եմ դրա հետ և չեմ ցանկանում վիճարկողների կարգավիճակում երեալ: Ես փորձում եմ հստակություն մտցնել:

Պրե ՄԵՅՆ. Ամեն ինչ լավ է, շարունակեք:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Բրիտանիայի վարչապետը պնդում էր ճիշտ նույն միտքը: Լոյդ-Ջորջը և նախագահը համաձայնության մեջ են այդ մտքի հետ: Բայց երբ պատերազմն ավարտվեց, Մեծ Բրիտանիան եկավ և վերցրեց ամեն ինչ, ինչ-որ կարող էր ծառայեցնել իր շահերին, իսկ հետո ակնհայտորեն դուրս եկավ այն ամենի ծանրաբեռնվածությունից, ինչը նա

եսասիրաբար անհրաժեշտ չի համարում:

Պրե ՄԵՅՆ. Կարող է լինել: Այնուամենայնիվ, հանելով Անզիհային այս վիճակից՝ անկախ այն բանից, թե որոնք են այս հարցում Անզիհայի եսասիրական ցանկությունները, Ամերիկան այնուղեք ունի արտոնություններ և պարտավորություններ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Նոյն փաստարկը մեզ տան մը է Կորեա:

Պրե ՄԵՅՆ. Մենք երբեք որևէ հոգնոր հարաբերություն չենք ունեցել Կորեայի հետ: Հայաստանի հետ մենք դա ունեցել ենք:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Մենք ունենք նոյն՝ միսիոններական հետաքրքրությունը:

Պրե ՄԵՅՆ. Միայն շատ փոքր շափով:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Բացառությամբ, որ Հայաստանն ամրողությամբ քրիստոնյա է, իսկ Կորեան՝ ոչ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Օհ, պարոն նախագահ, Կորեան իսկապես ձապոնիայի տարածքի մի մասն է, իսկ այս մարդիկ փորձում են ոտքի կանգնել միայն և օգնություն են փնտրում՝ մինչև որ կարողանան կանգնել սեփական ոտքերի վրա:

Պրե ՄԵՅՆ. Նրանք անկախություն են որոնում:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Ես ցանկանում եմ հարցնել ձեր կարծիքը, ցանկացած դեպքում, ինչպիսին սա է՝ եթե մենք ցուցաբերենք հայերի հետ համագործակցելու մտադրություն և նրանց տրամադրենք որոշ օգնություն՝ ռազմական և ռազմածովային, արդյոք հետո չի լինի համագործակցություն ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլև Ֆրանսիայի և Իտալիայի հետ: Մեծ Բրիտանիան, թերևացած լինելով ընդհանուր ծանրաբեռնվածությունից, գուցե կկամենա անել իր մասը, իսկ Ֆրանսիան և Իտալիան կկամենան անել իրենցը: Ինարկե այս ամենը վարկած է, բայց դուք ի՞նչ եք կարծում այդ մասին:

Պրե ՄԵՅՆ. Ես կարծում եմ, որ այս սարսափելի

իրավիճակում ներգրավված կառավարությունների կողմից իրականացվող ցանկացած քայլ կնպաստի խաղաղության և կարգի հաստատմանն այնուն: Բայց այդպիսի քայլ հիմա չկա Անգլիան սպառնում է դուրս գալ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Հիմա ես ցանկանում եմ ձեզ ասել, որ մեծ կարեկցանք եմ տածում այս ամբողջ իրադրության հանդեպ: Չեմ ուզում բյուր տսպավորություն թողնել:

Դրն ՄԵՅՆ. Դուք չեք բողնում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Բայց դուք չարտահայտեցիք ձեր կարծիքը սենատոր Ռիվլամսի հարցի հետ կապված: Սա պետք է որ Փարիզի խաղաղության վեհաժողովից սկիզբ առներ և ոչ թե Միացյալ Նահանգների ժողովրդից:

Դրն ՄԵՅՆ. Տպավորությունը այնպիսին է, որ խաղաղության վեհաժողովը ոչինչ չի անում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այդ դեպքում մեղքի՝ համենայն դեպս մի մասը մենք կդնենք նրա վրա:

Դրն ՄԵՅՆ. Այդ նույն ժամանակ հայերը եղենի են ենթարկվում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես գիտեմ: Ցավալի է:

Դրն ՄԵՅՆ. Եթե Միացյալ Նահանգների Սենատը կարող է անել որևէ բան, ապա ես աղերսում եմ Միացյալ Նահանգների Սենատին անել դա:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Իհարկե, մենք չենք կարող ոչինչ անել առանց Ներկայացուցիչների պալատի հետ համագործակցության:

Դրն ՄԵՅՆ. Այո, իհարկե —

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Դրն նախազահ, ինչ վերաբերում է նրան, որ խաղաղ խորհրդաժողովը ինչ-որ բան ձեռնարկի, ապա, իհարկե, խաղաղ խորհրդաժողովը դեռ չի գրադարձ թուրքիայում տիրող իրավիճակով: Ես նկատի ունեմ, որ այն դեռ չի ավարտել

աշխատանքն այս խնդրի շուրջ: Այդ ամենը կիարգավորվի որպես թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի մի հատված:

Դրն ՄԵՅՆ. Հարցը, որին ես փորձում եմ անդրադառնալ, այն է, թե ի՞նչ իշխանություն կա ժամանակակից Եվրոպայի սահմանները հաստատելու համար: Որտե՞ղ է այդ իշխանությունը հանգրվանել: Խաղաղության վեհաժողովը ում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Խսկապես: Եկա այլ իշխանություն:

Դրն ՄԵՅՆ. Ի՞նչ կարող ենք մենք անել խաղաղության վեհաժողովի ուշադրությունը պահելու համար այս սարսափելի իրադրության վրա:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այն ամենը, ինչ մենք կարող ենք անել սահմանների հարցում՝ Հայաստանի Հանրապետությունը ձանաչելն է որոշակի սահմաններով: Մենք կարող ենք դա անել պարզապես, այնպես, ինչպես մենք կարող ենք, եթե ցանկանայինք, ձանաչել Միջազգետքի անկախությունը վաղը:

Դրն ՄԱԼՔՈՎ. Նոյն կերպ մենք կարող ենք ձանաչել ամրող Հայաստանի անկախությունը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք կարող ենք անել ճիշտ այն, ինչ այս բանաձեր նախատեսում է: Մենք կարող ենք խնդրել խաղաղության վեհաժողովին անել դա: Մենք միայն արտահայտում ենք օրենսդրական Ամերիկայի կարծիքը:

Դրն ՄԵՅՆ. Իհարկե, ես իմ ձայնը տալիս եմ բանաձերին: Ես հաստատում եմ ամենը, ինչ պրև Սմիթն ասաց այդ կետի վերաբերյալ:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Մենք կարող ենք անել ոչ միայն այն, ինչն այս բանաձեր ուղղակիորեն առաջարկում է, այլ եթե Ամերիկան ընտրեր, ապա կարող եք ձանաչել Հայաստանի անկախությունն այդ տարածաշրջանում: Բայց, իհարկե, մենք չենք ուզում անել դա, քանի որ մեզ վրա կլրպեն հանձնակատարների և համաժողովի մասնակիցների գործառույթները, ովքեր

ապահովում են աշխարհի խաղաղությունը, այնպէս որ սենատոր Լոջը կարծում էր, որ իմաստուն կլիներ չգնալ այդքան հեռու:

Պրեն ՄԵՅՆ. Իմ հետաքրքրությունն այս իրավիճակում այս պահին, հայերին փրկելն է: Հիմա, ինչ հնարավոր է անել Սենատի և Խաղաղության վեհաժողովի կողմից, պետք է արվի, և, ես չեմ կարծում, որ մենք այստեղ պետք է քննարկենք Մեծ Բրիտանիայի պարտավորությունների հարցը, կամ նրա եսասիրական շահերը, կամ նման մի բան: Հայերը դիմել են մեզ, և դա արել են առաջինը: Մինչ իմ Թիֆլսի հասնելը՝ 15 րոպե դրանից առաջ, արդեն լսել եի հայերից: «Ամերիկան մեր միակ հույսն է»:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Բայց դուք այնտեղ բաց եք թողել մի մեծ հարց, որը պետք է քննարկվի Սենատի և Կոնգրեսի կողմից: Այն, ինչ մենք անում ենք այստեղ՝ բացի պարզապես մարդասիրական աշխատանքից, ըստ եռթյան, պատերազմական գործողության հրահրում է:

Պրեն ՄԵՅՆ. Այն, ես հասկանում եմ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Պրեն Սմիթը մեզ հանձնել է միջնորդություն, անկախ այն բանից թե ինքն արդյո՞ք ցանկանում է թե ոչ, ինչ-որ մեկը¹⁶⁶ պնդում էր, որ թուրքական կայսրությունը պետք է պահպանվի:

Պրեն ՍՍԻԹ. Ես կրկնում եմ դա, և պատասխանատվություն եմ կրում դրա համար:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այժմ, եթե դա ճիշտ է, ինչ-որ մեկը դաշնակից ուժերում նպաստում է թուրքական հավակնություններին: Դա ազնիվ դատողություն է, այնպես չէ:

Պրեն ՍՍԻԹ. Այն, որ ի՞:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այսպէս, դուք սկսում եք մի ուղի, որը մեզ ի վերջո տանելու է հակամարտության որոշ

դաշնակիցների հետ: Այնպէս, որ դուք չեք կարող անտեսել Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքորոշումներն այս հարցում: Դուք չցիտեք նրանց ցանկություններն այս հարցում:

Պրեն ՍՍԻԹ. Մի բայց: Ես չեմ ուզում վիճել, բայց եթե բրիտանական գորքերը, առնվազը նրանցից որեւէ մեկը, այժմ Կովկասում են և նրանք չեն կատարել որեւէ ուզմատենչություն կամ չեն կատարել որեւէ թշնամուկան գործողություն իրենց դաշնակիցների դեմ, ինչպէս ու կարող ենք մենք անել թշնամուկան գործողություն, եթե մենք դուրս ենք հանում նրանց պատերազմից տանջված, գործերն անավարտ թողած:

Սենատոր ՈՒԻԼՅԱՍՍ. Այն, ինչ ես մտադիր եմ անել այս բանաձեռված՝ casus belli¹⁶⁷ է՝ եթե Թուրքիան ցանկանա դա ընկալել այդ կերպ, սակայն ես կարծում եմ, որ Թուրքիան ոչ մի կերպ չի նախընտրի այդպիս ընկալել:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այն, ես համաձայն եմ դրա հետ: Բայց՝ ես վերադառնալով, ո՞վ է սատարում Թուրքիային:

Պրեն ՍՍԻԹ. Կարո՞ղ եմ հարցնել ձեզ սենատոր Ուիլյամս, արդյո՞ք դա պատերազմող կողմից գործողություն էր, եթե մենք գորքեր ուղարկեցինք Հարավային Ամերիկա և Հայիթի: Հիմա Հայաստանում՝ վտանգի մեջ մենք ունենք 200 ամերիկացի աշխատողներ: Մենք պատրաստվում ենք դուրս գալ և չուղարկել ծովայինների պաշտպանելու նրանց Մենք կուղարկեինք, եթե այդ մարդիկ լինեն Կուրայում: Սա պարզապես հեռավորության հարց է այս դեպքում: Բայց «Արիգոնա» ուզմանավն այնտեղ է, այն կարող է շրջվել ու հիանալի կերպով շարժվել վեր Սև ծովով:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Չեմ կարծում, որ դա ամեն դեպքում ուզմատենչ գործողություն էր, և միակ բանը, որ պետք է հաշվի առնվի այս պարագայում, այն է, որ ինչ-որ մեկն առանձնակի

¹⁶⁶ Բնագրում՝ somebody: Անշուշտ խոսքն անձի մասին չէ, այլ պետության Մեծ տերություններից մեկի:

¹⁶⁷ Համապատասխան բնագրի՝ casus belli (տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում):

հետաքրքրված է Թուրքիայի ապազայով՝ այնպէս որ նրանք դուք են ունենալու մեզ հետ:

Սենատոր ՌԻՒՅԱՍՍՈ. Կա տարբերություն պատերազմական գործողության և պատերազմի առիթի միջի ընձեռված մեկ այլ երկրի, որը ցանկության դեպքում կարող է այդ առիթը համարել պատերազմական գործողություն։ Անկատկած, սա պատերազմական գործողություն է, որը կարդարացնի Թուրքիային, բայց ես ապավիճում եմ այն հանգամանքին, որ նու այն վիճակում չէ, որպեսզի մտածի արդարացված լինելու մասին այնպէս, ինչպէս արդեն համարել էր, եթե մենք վերցրինք Կոստանդնուպոլիսն ու այստեղ գորքեր տեղակայեցինք և գերակայություն հաստատեցինք։

Պրեն ՄԱԼՔՈՆ. Բայց դուք խոսում եք Հայաստանի Հանրապետության մասին՝ Շուստաստանում։ Շուստի հիմն ներկայումս, այն ազդեցություն չունի Թուրքիայի իրավիճակի վրա։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դա և՛ ճիշտ է, և՛ ոչ Անձր առաջարկում ենք մեր բանաձեռում ստեղծել Հայաստանի Հանրապետություն՝ ընդգրկելով նաև Թուրքիայի նշանակալի մասեր։

Պրեն ՄԱԼՔՈՆ. Ես հատկապես հետաքրքրված եմ, և խնդրում եմ այս կոմիտեին անել դա և ուղարկել անմիջական օգնություն պաշտպանելու և պահպանելու հյուսիսում Հայաստանի Հանրապետությունում կենտրոնացված մեկ, թե երկու միլիոն հայերի կյանքերը։ Եթե այս բնակչությունը մահանա եկող ձմռանը, էլ չեն լինի հայեր ապազա հայկական պետություն հաստատելու համար։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մենք շատ հեռուն գնացինք այս քննարկմամբ։ Ես առաջարկում եմ ընդմիջում վերցնել մինչև ժամը 2:30։ Եկեք վերջացնենք այս լսումներն այսօր։ Իրավունք եմ ինձ վերապահում ասելու, որ մենք կլսենք այն ջենթլմեններից

յուրաքանչյուրին, ովքեր Հայաստանի քաղաքացիներ են։

Սենատոր ՌԻՒՅԱՍՍՈ. Շատ լավ։ Ես կարծում եմ, որ մենք որոշակի իրավասություն ենք ստանձնել լսելով ամերիկացի քաղաքացիներին այս հարցի առնչությամբ, և, իհարկե, պատճառ չկա լսելու նույն հարցի առնչությամբ այդ մարդկանց։

(Կեսօրից հետո՝ ժամը 12:30 ենթահանձնաժողովն ընդմիջում վերցրեց մինչև կեսօրից հետո ժամը 2-ը):

ԿԵՍՈՐՎԱ ՆԻՍ

Ենթահանձնաժողովը հավաքվեց՝ համաձայն վերցրած ընդմիջմանը, կեսօրին ժամը 2-ին։

ՊՐԵՆ Զ. Շ. Թ. ՄԵՅՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՎԵՐԱԿԱՎԱԾ

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դոկտոր Մեյն, կա՞ էի ինչ-որ բան, որ կցանկանայիք ասել։

Պրեն ՄԵՅՆ. Ես կցանկանայի վերաշեշտադրել հնարավոր ամրոց եռանդով, ես կարող եմ հաստատել այն, ինչ ասացի այս առավոտ՝ կապված սենատոր Ռիխյամսի բանաձեռի հետ։ Ես կարծում եմ, որ այն պետք է անցնի։ Ես կարծում եմ՝ իմ գործընկերներն այստեղ պրն Սմիթը և այն Զերուիթը կհամաձայնեն ինձ հետ դրա շուրջ, որ դա կնպաստի Հայաստանի փրկության միջոցների ձևափորմանը։ Ես չեմ պատկերացնում, թե ինչպես կարող է Հայաստանը փրկվել մինչև ձեր բանաձեռն անցնի ու գրձի։ Շատ լավ է, իհարկե, քննարկել կամավորական բանակ կավարելու հնարավորությունը, որը բաղկացած է լինելու

ամերիկացիներից և հայերից, ովքեր կարող են այնտեղ գնալ բայց վեց ամիս կտնի դա անելը, իսկ այդ նույն ժամանակ Հայաստանի Հանրապետությունը կշնչվի և հայ ժողովուրդը կոչնչացվի Իրավիճակն այնպիսին է ներկա պահին, որ մենք համարձակվում ենք ոչ մի բան չանել՝ ձգձել այս վիճակը: Ես խորապես համոզված եմ դրանում, այնպես ուժգին, որ հազիվ թե կարողանամ խոսել դրա մասին առանց հուզմունքի: Այս իրավիճակն ինքնին այնպես է ազդել իմ մտածողության վրա, որ օր ու գիշեր դրա մասին եմ մտածում, և մտածում եմ, թե արդյո՞ք Հայաստանը և հայ ժողովուրդը կփրկվի, և կարծում եմ, որ նրանք կարեն նշանակություն ունեն Փոքր Ասիայի կայունության և քաղաքակրթության համար՝ նրանք պետք է փրկվեն առանց հետաձգման, և կարծում եմ Միացյալ Նահանգները պետք է այս հարցին ընթացք տան: Կարծում եմ, որ մենք պետք է ինչ-որ բան անենք, որպեսզի արդարացնենք ինքներս մեզ որպես քրիստոնեական քաղաքակրթության և կարգուկանոնի հովանավորներ աշխարհի այն մասում, որտեղ մարդիկ դա ակնկալում են մեզանից: Մարդիկ ասելով նկատի ունեմ հայ ժողովրդին: Ինձ չի հետաքրքրում շահերի բախումը, որ հնարավոր է ներառված լինի կողմ կամ դեմ կարծիքներում: Վստահ եմ, որ Ամերիկայի պարտը է տեսնել, որ մարդկության շահերի տեսանկունից ինչ-որ բան և արվել այնտեղ: Ինձ թվում է մենք պետք է դա անենք, որպեսզի արդարացնենք քրիստոնյա ազգ կոչվելու մեր իրավունքը: Ես այնպես համոզված եմ սրանում, ինչպես րոպէ առաջ ասացի, որ չեմ կարող սրա մասին խոսել առանց հուզմունքի: Համոզված եմ, որ մարդկությունը կդատապարտի մեզ, եթե մենք թույլ տանք դրությունը շարունակի մենալ այնպես, ինչպես այժմ է, առանց ինչ որ բան անելու՝ հայ ժողովրդին օգնելու համար:

Կարծում եմ, սա ամենն էր, ինչ-որոշ չափով ուզում էի ասել դրա մասին: Բայց չափազանց մտահոգված եմ սրանով և հազիվ

թե կարող եմ խոսել այդ մասին առանց ընկճվելու:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք սղագրողին տրամադրեցիք այն նյութը, որը կցանկանայիք, որ ներառվեր արձանագրության մեջ, այդպես չէ*:

Պրե ՄԵՅՆ. Այն, պարոն: Կարծում եմ, դա իմ կողմից բավարար է:

Պրե ՍԱԼՔՈՒ. Հաջորդ վկան պրն Հ. Ք. Զերուիթն է՝ Մերձավոր Արևելյում Օգնության կոմիտեի քարտուղարի օգնականը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Կշարունակե՞ք, պրն Զերուիթ:

ՄԵՐՂԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՍԻՏԵՒ¹⁶⁸
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ
ԴՐՆ Հ. Ք. ԶԵՔՈՒԻԹԻ¹⁶⁹ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դրն ԶԵՔՈՒԻԹ. Իմ անունը Հ. Ք. Զեքուիթ է, բնակության վայրը՝ Նյու Յորք, թիվ 1 Մայիսոն պողոտա:

Միակ ներդրումը, որ կարող էմ անել որպես լրացում պրն Սմիթի և պրն Մեյնի ասածին, դա մի քանի նկարների տրամադրումն է՝ որոնք արել եմ հունիսի առաջին շաբաթվան և մայիսի վերջին շաբաթվան ընթացքում, քարտեզի հետ միասին, որը կապիտան Սուրբ Խազել էր ինձ համար՝ երբ Թիֆլիսում էի և ձեզ կներկայացնեմ այն փաստերը, որոնք վերաբերում են գումարի չափին և Կովկասում գործող անձնակազմին, նաև այդ անձնակազմի և մեր կոմիտեի միջև հարաբերություններին:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք նկատի ունեք ձեր նպաստամատույց կազմակերպության ներկայացուցիչներին:

Դրն ԶԵՔՈՒԻԹ. Գնդապետ Հասկելի ենթակայությամբ:

(Պարոն Զեքուիթը կոմիտեին ցուցադրում է մի շարք նկարներ):

Փարիզում, պրն Սմիթի, պրն Հուվերի, և պրն Սորգենբաուի հետ քննարկումների ընթացքում խաղաղության խորհուրդը որոշել է ապահովել քաղաքական որոշ իշխանություն Կովկաս գործողվող ներկայացուցիչների համար: Սա իրականացվել է խաղաղության վեհաժողովից դուրս և կազմակերպվել որոշ անձնավորությունների մասնավոր հնարավորություններից ելնելով, և այդ գործողությունների արդյունքում

գնդապետ Հասկելը՝ պրն Հուվերի առաջարկով առաջադրվեց և խաղաղության խորհրդի կողմից ստացավ գլխավոր հանձնակատարի իրավասությունները:¹⁷⁰ Այդ ժամանակ կառավարական աղյուրներից ոչ մի ֆինանսավորում հանանելի չէր, և երբ Ամերիկայի նպաստամատույց վարչության ֆոնդը՝ կոնգրեսի հունիսի 30-ի օրենսդիր ակտով փակվել էր, Մերձավոր Արևելքում Օգնության կոմիտեին հարց էր ուղղվել, թե արդյո՞ք մենք կցանականանք նվիրաբերել գումարի որոշակի քանակ՝ ֆինանսավորելու համար գնդապետ Հասկելի լրացուցիչ անձնակազմին, որը պետք է ուղարկվեր Կովկաս, և երկարուղյան փոխադրումների ծառայողներին, որոնք պետք է փոխարինեն բրիտանացիներին, ովքեր դուրս էին քերպում Կովկասից: Կոմիտեն քվեարկությամբ որոշեց յուրաքանչյուր ամիս՝ օգոստոսին, սեպտեմբերին, հոկտեմբերին և նոյեմբերին ծախսել 500 000 դոլար:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. 2 000 000 դոլար ընդիանո՞ւրը:

Դրն ԶԵՔՈՒԻԹ. Այո, պարոն: Առաջին տարվանից մենք Կովկասում ծախսել ենք 4 750 000 դոլար: Սա ի համարում Ամերիկյան նպաստամատույց վարչության կողմից ծախսված 8 000 000 դոլարի, և նրանք Կովկասում տեղացիների տրամադրության տակ են թողել 31 000 տոննա այսուր: Այժմ՝ ամեն ամիս 5000 տոննա այսուր է բաշխվում, որը պահեստավորվել էր մինչև հունիսի 1-ը, և այդ այսուրի մատակարարումը կշարունակվի մինչև 1919 դեկտեմբերի 1-ը: Այսուրի արժեքը շուրջ 600 000 դոլար է, ինչը ներկա դրությամբ Ամերիկայի դրամային ծախսը Կովկասում ամեն ամիս դարձնում է 1 100 000 դոլար, որից 600 000 դոլար ստացվում է կառավարական աղյուրներից և 500 000 դոլար՝ մասնավոր մարդասիրական բարեգործությունից:

Հստ գնդապետ Հասկելի հեռագրի՝ այսուրի պաշարը կսպառվի դեկտեմբերի 1-ին: Մերձավոր Արևելքի կոմիտեն

¹⁶⁸ Բնագրում՝ The Near East Relief Committee (տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում):

¹⁶⁹ Հ. Ք. Զեքուիթի (H.C. Jaquith) մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

պարտավորվեց՝ այս չորս ամիսների ընթացքում ծախութ ամսական ընդամենը 500 000 դրամ: Այսպիսով, ուսումնական համագործակցության անհետաձգելի կարիքներից զատ, մեր կոմիտեն անցած երկուշաբթի քննարկեց օգնության շարունակմանը վերաբերող այլ անհետաձգելի հարցեր, և ըստ գնդապետ Հասկելի հեռագրի՝ օգնությունը պետք է շարունակվի մինչև 1920 թ. բերքահավաքը և 7000 տոննա այսուր ամսական ուղարկելը: Դժվար է պատկերացնել, բայց դա փաստ է, որ այն օրը, երբ ես մեկնում էի Էրիվանից, քաղաքում մնացել էր այնքան այսուր, որ Էրիվանում հացով կապահովվեր միայն երեխաների կեսը՝ չխոսելով մեծահասակների մասին: Բարեբախտաբար Թիֆլիսից Էրիվան այսուրի քարավան էր գալիս՝ որին հանդիպեցի ճանապարհիս: Բայց պահուստներում ոչինչ չկար, փողը արժեք չուներ, և ապրանքների փոխանակումը միակ միջոցն էր, որով կյանքը Կովկասում շարունակվում էր: Այսպիսով, սրանք են փաստերը, որոնցով կոմիտեն շատ մտահոգված է:

Այստեղ 55 ամերիկացի ծառայողներ կային, ովքեր գնացել են գնդապետ Հասկելի հետ: Նրանցից ումանք նրա հետ եղել են Ռումինիայում: Նրանցից շատերը Փարիզից են գնացել: Այս մարդիկ տարածվել են այն ներքին տարածքում, որը կոչվում է Հայաստան¹⁷⁰ և կառավարիչներ են նշանակվել Հայաստանի Հանրապետության տարբեր համայնքներում: Բացի այդ, այս պաշտոնյաներին՝ Աղրբեջանի և Վրաստանի միջև փոխադարձ համաձայնությամբ, տրվել էր կյանքի և մահվան հարցերը կարգավորելու հշխանություն և այս երկու հանրապետությունների միջև վիճելի տարածքների կառավարումը: Իհարկե, սա գրեթե ձեական համաձայնություն էր բարոյական հավատի վրա հիմնված, որովհետև այս համայնքներից յուրաքանչյուրում մեկ կամ երկու մարդուց բացի մյուսները չեն ցանկանում կարգ

պահպանել և ուզում են ետ վերադարձնել իրենց իշխանությունը:

Ըստ գնդապետ Հասկելի՝ բրիտանական զորքերը դուրս են բերվել՝ բացի Բաթումի մոտակայքից:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Արդյո՞ք ձեր ունեցած քարտեզը, նշում է առաջադրված հանրապետության սահմանները:

Պրն ԶԵՔՈՒԻԻԹ. Այս պարոն: Սա գծել է կապիտան Մուրի՝ Ամերիկյան առաքելության դեկավարի կողմից, Թիֆլիսում: Այս տարածքն այսուեղ [քարտեզի վրա ցույց է տալիս Հայաստանի Հանրապետությունը] հաստատապես հայկական է: Նա նշել է սա [ցույց է տալիս], որովհետև սա այն է, ինչը նա կոչում է «ոչ մեկի հող»՝ վիճելի տարածք:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ինչպես է այն կոչվում: Ո՞ր մարզում է:

Պրն ԶԵՔՈՒԻԻԹ. Դա մարզ չէ: Դա պարզապես գետահովիտ է, որը ձգվում է Ղարաբիլսայից հյուսիս և երկարուղուց ամենահեռու գտնվող վրացական քաղաքից հարավ: Սա այն տարածքն է, որը վիճարկվում է Աղրբեջանի թաթարական կառավարության կողմից [ցույց է տալիս քարտեզի վրա]:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ինչո՞ք ձե կա՞ տարանջատելու երկրի հայկական մասն ու քարարական մասը, թե՞ նրանք պարզապես խառնված են վիլայեթներում:

Պրն ԶԵՔՈՒԻԻԹ. Այս մասում խառն են [ցույց է տալիս]: Այս հատվածը այդ գծից դեպի հյուսիս, Հայաստանն է:

Պրն ՄԱԼՔՈՍ. Այսպես՝ Նախիջևանի հյուսիսը հայկական է, իսկ Նախիջևանի հարավը՝ ոչ ամբողջությամբ:

Պրն ԶԵՔՈՒԻԻԹ. Դժվար է բաժանում կատարել քարարների և հայերի միջև: Էրիվանի և Շուշան կոչվող կենտրոնի միջև աշխարհագրական տեղանքը շրջապատված է լեռնաշղթայով, որտեղ կոտորվել են բրիտանական սպաները:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Այս:

¹⁷⁰ Բնագրում՝ through the interior of what is called Armenia:

Դրև ԶԵՔՈՒԻԹ. Ես այստեղ էի¹⁷¹ մայիսի վերջին: Թուրքերը Կարսը թողել էին դրանից ընդամենը երեք շաբաթ առաջ: Միջոցները, որ Կարսում էին թողնվել թուրքերի կողմից պետք է հասնեին հայկական բանակին, սակայն բրիտանացիների կողմից հանձնվել էին Կովկասի հյուսիսում գտնվող գեներալ Դենիկինին: Այս միջոցները հասանելի կլինեին հայկական 10 000-անոց բանակին՝ ինչպիսին այն կար, եթե դրանք մնային Հայաստանի Հանրապետության տարածքում:

Եթե անցյալ տարվա մայիսին տեղի ունեցավ այդ հատվածի բաժանումը կովկասյան երեք հանրապետությունների միջև, երկարուղային կազմը հիմնականում գտնվում էր Բարումում, Թիֆլիսում և Բաքվում: Հետեաբար, այդ գծից հարակ թից թե շատ աշխատունակ վիճակում են գտնվում միայն 24 շոգերարշ, որոնք Հայաստանի կառավարության սեփականությունն են համարվում [ցույց է տալիս քարտեզի վրա]: Հետեաբար, փոխադրման խնդիրը տարածված խնդիր էր օգնության պայմաններում, և դա էր պատճառը, որ կենտրոնական գրասենյակը մնում էր Թիֆլիսում, որպեսզի վրացական կառավարության հետ համագործակցություն հաստատի մատակարարման հարցի շուրջ, ինչն անպայմանորեն այնտեղով էր հասցվում Հայաստան:

Այստեղից հարավ [ցույց է տալիս քարտեզի վրա] բացարձակապես հաղորդակցում չկար Ռուսաստանի և Թուրքիայի նախկին սահմանագծից հարավ: Ամենահեռուն, որ որևէ ամերիկացի գնացել էր հունիսի 1-ին, Կարսն էր Թուրքահայաստանի հետ կապը ամբողջությամբ կտրված էր, և փախատականները, ովքեր տարհանվել էին այս մասով

(հյուսիս)՝¹⁷² պաշտպանություն գտնելու համար, չունեին բացարձակապես ոչ մի հնարավորություն վերադառնալու իրենց նախկին տները:

Մենատոր ՀԱՐԿԻՆԳ. Այս սահմաններում նշված տարածքը [ցույց է տալիս քարտեզի վրա] Ռուսաստանում առաջարկված Հայաստան՝¹⁷³

Դրև ԶԵՔՈՒԻԹ. Այս, այստեղ այս սահմաններում ընդգրկված տարածքը՝ Ռուսաստանում մյուս երկու հանրապետությունների կողմից ճանաչված¹⁷³, Հայաստանի Հանրապետությունն է [ցույց է տալիս քարտեզի վրա]: Խաղաղության վեհաժողովի կամ արտաքին այլ խմբակցության կողմից որևէ որոշում չի կայացվել, և սա պարզապես Կովկասում՝ Վրաստանի Հանրապետության, Աղրբեջանի¹⁷⁴ և Հայաստանի Հանրապետության միջև փոխադարձ համաձայնության հարց է:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Բայց բանաձևի մեջ տարածքը ներառված չէ՝ բայց այսպիսի:

Դրև ԶԵՔՈՒԻԹ. Ո՞չ, պարո՞ւ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այսպիսով՝ սա Թուրքահայաստան՝¹⁷⁵ էր, իսկ սա Ռուսահայաստան՝¹⁷⁶ որ [ցույց է տալիս քարտեզի վրա]:

Դրև ԶԵՔՈՒԻԹ. Եվ հստակ սահմանագատում կա այնտեղ երկարուղային գծերով: Նրանք, անհրաժեշտությունից ենելով, հաղորդակցվում են ոռուսերենով, որովհետև փորձ էր կատարել ոռուսացնել հայերին, քանի որ նրանք մասնավորապես այդ տարածքում էին բնակվում:

Հանապարհներն այնտեղ առանձնահատուկ լավն են, և

¹⁷² Փակագծերը շարադրակրում՝ համապատասխան բնագրի:

¹⁷³ Բնագրում recognized by the other two republics in Russia:

¹⁷⁴ Աղրբեջանի պարագայում բնագրում չկա «Հանրապետություն» բառ՝ ի տարբերություն Վրաստանի և Հայաստանի:

¹⁷⁵ Հայաստարար պարուն Զեքուիթը մատնանշել է քարտեզի վրա այդ աշխարհագրական կետը:

շատ հեշտությամբ կարելի է իրականացնել ռազմական մանկրումներ և ավտոմեքենաների վրա բեռնված գնդացիրների տեղափոխում այնտեղ: Եթե անհրաժեշտ էր լինում՝ և ճանապարհորդում էի ավտոմեքենայով:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ձեր օգնության աշխատանք սահմանափակված էր այս սահմանագծո՞վ:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Դա կովկասյան սահմանագիծն է: Այուս սահմանը հարավում է՝ Թուրքահայաստանի հատվածում:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ե՞րբ սկսեցիր ձեր ներկայիս օգնության աշխատանքները Կոստանդնուպոլսից հարավ Հայաստանի մյուս մասերի համար, որտե՞ղ տեղակայեցիր ձեր մատակարարումները, Միջերկրականից հարավ՝, որտե՞ղ տեղակայեցիր դրանք:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Մենք տեղակայեցինք մեր միջոցները Դերինցում:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այսինքն Սև ծովի մոտ:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Ոչ, Մարմարա ծովի մոտ:

Պրե ՄԱԼՔՈՒԾ. Դերինցը Կոստանդնուպոլսից մի քանի մղոն հեռավորության վրա է՝ Մարմարա ծովի մոտ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՄԱՆ. Դա այն տեղն է, որտեղից սկսել եք, չէ՞:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Դա այն տեղն է, որտեղ տեղակայել ենք մեր բոլոր մատակարարումները: Բոլոր միջոցները, որ ուղարկվել են, տեղակայվել են այստեղ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՄԱՆ. Այդ դեպքում ո՞ւր էիք գնում երկարութով:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Մենք երկարուղով հասնում ենք մինչև Հայեաւ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՄԱՆ. Սա այն է, ինչ փորձում էի սկզբում իմանալ: Ինչո՞ւ չէիք հենց սկզբում տեղակայել դրանք Հայեաւում:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Որովհետև՝ առաջին հերթին, այնտեղ երկու մեծ պահեստներ կան գերմանական կառավարության կողմից կառուցված, որոնք Բաղդադի երկարօգծի հսկողության տակ են: Դերինցում հինգհարկանի վերելակներ կան ջրային կասրով, որոնցով նավից դեպի պահեստ կարող ես բեռնել, իսկ հետո գնացք տեղափոխել ու շարժել Բաղդադի երկարօգծով: Հետո՝ մինչ Տավրոսյան լեռներ հասնելն Ուլուքըշլա¹⁷⁵ կոչվող մի քաղաք կա: Ներսի համար միջոցներն ավտոմոբիլներով տարվում են Կեսարիա, Սվագ և Խարպուտ: Դրա հաշվին նպաստամատույցի աշխատանքը հնարավոր եղավ, և մենք, որպես նպաստամատույցի կոմիտե, կարողացանք կազմակերպել օգնությունը Թուրքահայաստանում:

Խարպուտի և Ռուսաստանի սահմանագծերի միջև ձգվող այս տարածքում նպաստամատույցի ոչ մի աշխատանք բացարձակապես չէր կատարվել՝ մինչև մեր կոմիտեն զգաղվեց այդ հարցով: Մենք հենց տեղում ոլորտի հստակ բաժանում կատարեցինք՝ մի վարչությունն իրականացվում էր Կոստանդնուպոլսից, իսկ մյուսը՝ Կովկասից՝ Թիֆլիսի գլխամասով:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՄԱՆ. Նպաստամատույցի որոշ աշխատանքներ շարունակվում են, բայց դա Բաթումի վրայով Ռուսահայաստանի համար է:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Դա ամբողջությամբ Ռուսաստանի համար է և այն օգտագործվում է միայն որպես բաշխման կետ և միջոցների ներկրման նավահանգիստ:

Պրե ՄԱԼՔՈՒԾ. Ո՞վ է արել այս լուսանկարները:

Պրե ԶԵՔՈՒԻԻԹ. Ես՝ մի մասը, ինձ հետ եղած անձն եմ՝ մյուս մասը:

Պրե ՄԱԼՔՈՒԾ. Դրանք արվել են Հայաստանի Հանրապետությունում:

¹⁷⁵ Բնագրում՝ Oulakishla:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Հայաստանի Հանրապետությունում՝ իմ այնտեղ լինելու վերջին շաբաթում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Սենատոր Ռիխամս ցանկանո՞ւմ էր որևէ հարց տալ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այս հեռազրերից մեկում նշվում է.՝ «800 000 հայեր չքավոր են, որոնց մեծ մասն օգնության կարիք կունենա մինչև մյուս տարվա աշնան բերքը»։ Այդ մարդիկ խինի՞ն են ուզում։

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Մալարիայի դեմ։

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Ես կարծում եմ նրանք բավականաշափ հաղթահարել են մալարիայի մակարդակը։

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Ո՞՛, պարուն։

Պրե ՄԱԼՔՈՒ. Որևէ քայլեր ձեռնարկվե՞լ են դեկտեմբերի 1-ից հետո հայերին այսուր և այլ բաներ տրամադրելու համար։

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Պրե Ռիքարդը, որը մեր գործադիր հանձնաժողովի անդամն է և պրն Հովկերի ներկայացուցիչն էր այստեղ Ամերիկայում, հետազոտություն է անցկացնում։

Հուսով եմ, որ գործադիր հանձնաժողովի մյուս անդամները հարցումներ կանցկացնեն՝ պարզելու, թե որոնք կինեն նոր հանձնաժողովի պահանջները՝ դեկտեմբերի 1-ից սկսած, ամեն ամիս 7000 տոննա այսուր տրամադրելու վերաբերյալ, մնացած աշխատանքների հետ մեկտեղ, որոնք պետք է կազմեն մոտավորապես 500 000 ԱՄՆ-ի դրամար ամսական։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Քանի՞ մարդ օրաբաժին կստանա։

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Ես օրաբաժին ստացողների կոնկրետ թիվը չգիտեմ։ Դա այն թիվն է, որ պահանջել է մայոր Գրինը, որպեսզի բավարարի կարիքները, և մենք ենթադրում ենք, որ այն ծառայում է բոլոր նրանց, ովքեր ի վիճակի չեն ստանալ պաշարներ ցանկացած այլ աղբյուրից։ Փարիզում ունեցած իմ փորձից ես կարծում եմ, որ Դաշնակից կառավարությունների

համագործակցությունը կապահովվի, եթե Միացյալ Նահանգները տրամադրեն անհրաժեշտ ռազմական և ֆինանսական աջակցություն կարգուկանոնի պահպանման համար, որը ոչ մի կերպ չպետք է ներգրավի Միացյալ Նահանգներին մանդատային պարտավորակածություններում և, միևնույն ժամանակ, կնշանակի այս մարդկանց վրկությունը, որոնցից 800 000-ը կհեռացվեն Ռուսական Կովկասից մահվան կամ սովոր արդյունքում առաջիկա չորս կամ հինգ ամիսների ընթացքում, եթե ոչինչ չձեռնարկվի։

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչն է ձեզ հանգեցնում այդ եզրակացությանը։

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Պրե Հովկերի հետ գրույցները հիմնված նրա և բրիտանական իշխանությունների միջև գրույցների վրա առ այն, որ բրիտանացիները, և ես կարծում եմ նաև իտալացիները, պրն Հովկերի պատմելով, պատրաստ են համագործակցելու Հայաստանը վերահսկելու գործում։

Հստ Իտալիայի կառավարության՝ իտալական գորքերը չեն ուղարկվել աջակցելու անզիջացիներին՝ ինչպես ի սկզբանե հայտարարվել էր մայիսին, ոչ թե ռազմական, այլ ֆինանսական խնդիրների պատճառով։ Չորքերն առկա են, բայց ֆինանսական դժվարությունն այնքան մեծ էր, որ նրանք չկարողացան ստանձնել բրիտանական գորքերին փոխարինելու պարտականությունը։

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Իտալիան գրեթե սնանկ է, այնպես չէ։

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Այո, ավելի քան: Եվ ես՝ պրն Հովկերի և Փարիզից մեկ այլ անձի հետ գրույցներից կարծում եմ, որ եթե գորքերն ուղարկելիս Միացյալ Նահանգների կառավարությունը համագործակցի այլ կառավարությունների հետ, այն կատանա Եվրոպայի մյուս կառավարություններից ամբողջական աջակցություն վերահսկման համար։

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Դուք ուսումնասիրե՞լ եք այն

հարցը, թե արդյոք կա օրենքին համապատասխան որևէ մարմին, որը կարող է Հայաստանին տալ այդ 10 000 000 000 դոլարի մի մասը, որը մենք պարտքով տվել ենք մեր դաշնակիցներին:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Հոկտեմբերի 6-ին տեղի ունեցած մեր գործադիր հանձնաժողովի ժողովի ժամանակ պրն Ռիքարդն ասաց, որ խորհրդակցել է գանձապետարանի որոշ անդամների հետ և հասկացել, որ Կովկասի նպաստամատույցի միջոցառումների համար 10 000 000 000 դոլար օգտագործելը լիովին նրանց իրավասուրյունների շրջանակներում է:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍ. Ես այդ հարցը տվեցի, որովհետև եթե այդ փաստը պետք է խստորեն մեկնարանվի, ապա այն վերաբերում է միայն մեր դաշնակիցներին, և քանի որ մենք երբեք պատերազմ չենք հայտարարել Թուրքիային, Հայաստանը չի կարող լինել մեր դաշնակիցներից մեկը, և մենք իրավունք չունենք դրանից անզամ մեկ դոլար տալ նրան: Ես հարցրեցի ձեզ այդ մասին, քանի որ մտածում եմ այդ բանաձևում փոփոխություններ կատարելու մասին՝ այնպես, որ հնարավոր դառնա դրա մի մասն ուղարկել Հայաստան:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Դրն Ռիքարդի խորհուրդը, որը նա պատրաստվում էր հաստատել նախքան հոկտեմբերի 14-ի մեր ժողովը, այն էր, որ դա տրվել է Ռուսաստանին, և, որ Ռուսաստանը համարվում է դաշնակից, և այդպիսով մենք կսրող էինք այդ հիմանդրամի մի մասը տեղաբաշխել Ռուսաստանում:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այո, թեպետև դա նման է մեր նախնիների ինն բարի օրենքին՝ հանուն թագավորի թագավորին պատերազմ հայտարարել: Ամեն ինչ կարգին է, այդպիս չէ:

Մենասոր Հարցինց: Այո:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Դրն Հուվերն այդ 100 000 000¹⁷⁶ դոլարում

¹⁷⁶ Պարոն Զեքուիթի հետ սենատոր Ռիխյամի երկխոսության՝ ընթացքում ֆինանսական գումարների վերաբերյալ բերված բոլոր թվերը՝ 10 000 000 000,

ոչ մի ներդրում չունի: Այդ հաշվեհամարը վճարված է:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍ. 10 000 000 000 դոլար հիմնարամի կեսը մնացել է, չէ:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Այո:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍ. Ես կարծում եմ 500 000 000 դոլար մնացել է: Ես չփոխեմ, թե դա որքան է:

Դրեն ՍԱԼՔՈՒ. Դուք եղել եք Հայաստանի Հանրապետությունում, դուք կհաստատեք, որ եթե օգնությունն անմիջապես ուղարկվի այնտեղ, բնակչությունը կարող է պաշտպանված և ապահովված լինել սննդով այս ձմեռ և հաջորդ գարուն ու աշուն, և դրանից հետո հայերն ի վիճակի կլինեն որոշ շափով իրենք իրենց աշակցել:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Ես կարծում եմ, որ եթե հայերի համար մեկ անգամ ցորեն ցանելու և բերք հավաքելու հնարավորություն ստեղծվի, ամերիկացիներին կամ ամերիկյան կառավարությանն այլևս չեն դիմի՝ ոչ՝ ֆինանսական օգնության և ոչ՝ է նպաստամատույց միջոցառումների խնդրանքով:

Մենասոր ՈՒԽԼՅԱՍՍ. Դուք նկատի ունեք այնքան ժամանակ, մինչև սննդի հարցը լուծվի:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Այնքան ժամանակ, մինչև սննդի հարցը լուծվի:

Մենասոր ՀԱՐԴԻՆԳ. Հարցն այն էր, որ նրանք ի վիճակի լինեն նաև իրենց պաշտպանել:

Դրեն ԶԵՔՈՒԻԹ. Հարցն իհարկե վերաբերվում էր ինչպես սննդի, այնպես էլ ռազմամթերքի պակասությանը, և բույլ տվեր հիշեցնել, որ այս լուսանկարները, որ ես ձեզ ցույց տվեցի տիպիկ են, և թեև այնտեղ կարող է լինել 30 000 տղամարդ, վերջին մեկ ու կես կամ երկու տարին սպառել են հայ ժողովրդի էներգիան այն աստիճանի, որ առաջին պահանջը բավարար սնունդն էր,

100 000 000, 500 000 000 համարավատափառում են բնագրին:

որպեսզի վերականգնի նրանց ֆիզիկապես, որպեսզի նրանք կարողանան զենք բռնել: Հիմա՝ ըստ ամենահավատի տեղեկության, այսուել կա ֆիզիկապես կրվելու ունակ 10 000 զինված տղամարդ, ովքեր մասնակիորեն սպառազինված են, բայց սարքավորումների, սննդի և ռազմամթերքի պակասն այն երեք որոշիչ գործուներն են, որոնք թույլ չեն տալիս, որ զինված ուժերը գարզանան:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Թույլ տվեր սա հարցնել: Այս լուսմերից ակնհայտ է, որ Հայաստանը սննդի հետ մեկտեղ ունի սպառազինության, ռազմամթերքի, կարգուկանոնի և զինվորական պատրաստվածության կարիք: Դա ունենալու համար նա պետք է ունենա գումար կամ վարկ ինչ-որ տեղից: Դուք կարծո՞ւմ եք, թե՞ ոչ, որ նրան ապահով կերպով կարելի է տալ որոշակի շափով գումար հիմնված մեր կողմից հաստատված պարտատումների վրա, վճարման ենթակա, օրինակ 10 տարվա ընթացքում կամ՝ եթե նա նախընտրի, վերջնական սահմանափակմամբ 20 տարով: Կարծո՞ւմ եք նա կվարողանս վերցնել վարկ այս որոշամիտ պայմաններով, խնդիրներ չպատճառելով մեր կառավարությանն այդ երկար ժամկետով:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Ես կարծում եմ, որ Հայաստանի կառավարությունից ավելի շատ հավանականություն կա վերադարձնելու այն գումարի մի մասը, որը նրան կտրվի պարտուի, քան այն երկրներից, որոնց մենք արդեն շնորհել ենք գումարներ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Դա ցանկալի չէ զուտ որպես համեմատություն:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Չեի ասի թե տասը տարուց:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Կասկած չկա, որ նրանցից շատերը՝ Ռուսաստանն օրինակ, երբեք չեն վճարի անգամ մեկ ցենս:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Ես վկայակոչում եմ Լեհաստանին:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Լեհաստանը կվճարի, լավ: Բայց եթե Հայաստանը կարողանա՞մ մեր հավանությամբ բողարքել պարտատումներ, ասենք, իինդ տողոս տոկոսադրույքով, որոնք ենթակա են վճարման իրենց ընտրությամբ 10 տարի անց, բայց վերջնաժամկետ վճարման ենթակա 20 տարի անց, ապա, ի՞նչ եք կարծում դա կրավարարվի, թե կարող է բավարարվել:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Դա չի բավարարվի 10 տարում, պետք կլինի 20 տարի, որովհետև առաջին 10 տարում յուրաքանչյուր սենթը պետք է օգտագործվի կառավարության, ժողովրդի, դպրոցներ հիմնելու հարցերը կարգավորելու համար:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ինչ ես ասում եի՝ նրանց կարծիքով վճարման ենթակա են 10 տարուց, սակայն վճարման ենթակա կլինեն առնվազն 20 տարուց: Ես կարծում եի, որ հնարավոր է, որ նրանք կարողանան հարմարվել ավելի լավ և ավելի արագ, քան մենք մտածում ենք, և եթե այդպես է, ապա որքան շուտ ամեն ինչ չեղյալ հայտարարվի, այնքան լավ:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Վատահ եմ, որ հենց որ հայերը կարողանան վերադառնալ իրենց ոլորտները և հաստատեն իրենց գործունեությունները, ավելի քիչ քան երկու տարի անց նրանք կլինեն ինքնուրույն, և մոտավորապես այդ կարճ ժամանակում կշարունակեն առնտուր դրախ հետ և կուսեն կուտակել և ապրանքների, և գումարի ավելցուկ:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Նրանցից շատե՞ն ունեն հողի սեփականության փաստաթուղթ:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Այո, Ռուսահայաստանում:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Նրանք, պարզապես ուզում են նույնը, ինչ Եվրոպայի մյուս երկրները ներկայումս, այդպէ՞ս չեն: Այն ինչ նրանք ամենից շատ ուզում են՝ վա՞րկն է:

Դրն ԶԵՔՈՒԻՒԹ. Նրանք վարկի կարիք ունեն:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այո:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Բայց Եվլուպայում չկա ևս մեկ այդայիսի տեղ, որը ֆիզիկական նույն վիճակում լինի, ինչ Հայաստանն է: այս պահին: Այուս երկրներն աղքատ են, բայց խոսում ենք Ռուսահայաստանի մասին, ապա այստեղ մի ժողովուրդ է, ով չունի նույնիսկ հաց, քանի որ այն մատակարարվում է դրսից:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Մերժիայում հենց այդայիսի իրավիճակ չէ՝ գրանցվել:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Ո՞՛ սրբ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Լավ, ես չզիտեմ:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Պրն Հովկերը, ես հավատում եմ, Հայաստանի հարցը սրտին շատ մոտ է ընդունել, քան նպաստամատույցի վարչության այլ բաժիններ և գիտեմ, որ համեմատած Ամերիկյան նպաստամատույց ասոցիացիայի ներք ցանկացած հատվածի հետ, նա մեծ հուզմունքով է արտահայտվում Կովկասի իրավիճակի մասին:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք բավական մտերի՞մ եք պրե Հովկերի հետ:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Ես խորհրդակցություն եմ ունեցել նրա հետ նախրան մեր Կովկաս գնալը:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Նա ներկայացրել է այս հարցը Խաղաղության վեհաժողովում:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Նա ներկայացրել է այս հարցը Խաղաղության վեհաժողովում և որպէս այդ ներկայացման և պրե Մորգենքառուի հետ խորհրդակցությունների արդյունք՝ նշանակվել է զնդապետ Հասկելը: Այդ ժամանակ նա կարծում էր, որ բրիտանական զորամասերը կմնային Կովկասում մինչև Խաղաղության վեհաժողովի կողմից բուրքական հարցի վերաբերյալ որոշ կարգավորումներ կարվեին, որոնք հետագայում վերջնականորեն կձևակերպվեին:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Բայց բրիտանացիներն արդեն

ծանուցել են՝ դեռևս մայիսին, որ նրանք չեն մնալու:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Նրանք ծանուցեցին, ինչն ընթերցվեց մայիսի 12-ին: Ես կարդացի այն, և այնուեղ նշված էր. «Մենք ետ ենք քաշվում, և խոպացիները գալիս են մեզ փոխարինելու: Սա ոչ մի կերպ չի ազդում Խաղաղության վեհաժողովի կողմից ընդունած որոշման վրա և գուտ ուազմական միջոցառում է»:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ինչո՞ւ Խտալիան չգնաց փոխարինելու նրանց:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Ֆինանսական պատճառներով:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Պարզ է:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Խտալիան ուներ զորամիավորումներ և եթե այդ ժամանակ հարցը պատշաճ կերպով քննարկվեր և ֆինանսական համագործակցություն ցուցաբերվեր, ես կարծում եմ, և պրն Հովկերն է կարծում, որ Խտալիան կգնար Կովկաս:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Օ՛, այո, խտալացին կգնա ամենուր, եթե նրան գումար տրվի:

Պրե ԶԵՔՈՒԻԹ. Ես պրն Հովկերը եզրակացրեց՝ համենայն դեպք, Ֆրանսիայից մեկնելուց առաջ, բրիտանական կառավարույթունից նրա ստացած վերջին խոսքն այն էր, որ նրանք ցանկանում էին համագործակցել ցանկացած քաղաքականության շրջանակներում, որ կիրականացվեր գուտ մարդասիրական տեւակետից:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Դա իմ կարծիքն է: Իմ կարծիքով չնայած նրանք շափականց հոգնել են միայն իրենց սեփական ուսերին թողված բեռից, գումարած Աֆրիկայում և Ասիայում իրենց բեռին ավելացածը՝ նոյնիսկ իրենց սեփական տիրույթներից դուրս, նրանք լիովին պատրաստ են իրենց ներդրումն ունենալ ցանկացած որոշման հետ կապված, որ կարող էր կայացվել Խորհրդի կողմից կամ միջազգային բանակցությունների միջոցով:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Ամերիկա մեկնելուց առաջ պրն Հովհաննի Վերջին խոսքն այն էր՝ և ես գտնում եմ, որ դա ամենաարդյունավետ փաստարկներից մեկն է, որ կարող է արվել ցանկացած բանակցության դեմ, որ բրիտանացիները նահանջում են հասարական պատճառներով և այս կերպ նահանջելով Կովկասից ցանկանում են որոշել 800 000 հայերի ճակատագիրը:

Թույլ տվեք մի պահ բացատրել, որ ամբողջ ընթացքում, երբ բրիտանական զորքերը եղել են Կովկասում, նրանք երբեք չեն ունեցել ավելին, քան մեկ փոքր զնդացրային ջոկատ այս բոլոր կենտրոններից յուրաքանչյուրում. Երիվանում՝ երեք գրահամերենա և յուրաքանչյուր երկաթուղային հանգույցում փոխադրումներն ապահովող սպաներ: Այլ կերպ ասած, բրիտանական զորքերի մեծ մասը պահիվում էր Ռուսահայաստանում:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Բրիտանական դրոշը պահում է իր հավասարակշռությունը:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Բրիտանական դրոշը հավասարակշռություն էր պահում: Շատ ավելի փոքր թվով զորք կուտահանջվեր Կովկասում կարգ հաստատելու համար, քանի սովորաբար հաղորդվում էր մեր թղթակիցների կողմից, առնվազն Կոնստանտինուպոլիսից մինչև Թիֆլիս: 16 000 մարդ դա արել են լեց կամ ավելի ամիսների ընթացքում՝ փաստացի ոչ մի ընդդիմության շիանդիպելով:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Նրանց մեծ մասը ոչ թե անզիացիներ էին, այլ հնդիկներ՝ անզիացի սպաներին ենթակա:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Անզիացի սպաներին ենթակա:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Միայն ուսարելերը և դրոշը Միացյալ Նահանգների դրոշը մոտավորապես նույնքան բարձր չի զնահատվում այնտեղ, որքան բրիտանական դրոշը:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Ես կարծում եմ՝ այն փաստը, որ 55 ամերիկան սպաներ կարծես թե կարողանում են առերևույթ կար-

պահպանել ամերիկյան դրոշով, այն փաստի ցուցիչն է, որ առնվազն մեկ ամերիկացին նույնքան լավն է, որքան մեկ անզիացին: Ես որեւէ այլ համեմատություններ չեմ անցկացնի:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Ավարտեցի՞ք ձեր հաղորդումը:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Այո: Եթե այլ հարցեր չկան, ես վերջացրի, սենատոր ք:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Եթե կլինեն այլ բաներ, ինչը հետազգում կգտներ, որ ցանկանում եք ավելացնել ձեր հայտարարությանը, ուղղակի ներքը այն ձեր կողմից ներկայացված «Հավելյալ հայտարարություն» վերնազրի տակ և տվեք սղագրողին:

Պրն ՄԱԼՔՈՒ. Դուք ձեր վկայության սկզբի մասում ասացիք, որ Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեն Կովկասում ծախսել է 4 750 000 դրամ: Դա ճիշտ է:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Ո՞չ: Կովկասում հունվարի 1-ից մինչ օրս Ամերիկյան կոմիտեի ծախսած ընդհանուր գումարը կազմում է 6 750 000 դրամ:

Պրն ՄԱԼՔՈՒ. Մեկ այլ հարց: Դուք խոսեցիք պրն Հովհերի կողմից՝ 8 000 000 դրամ արժողությամբ սննդամթերք Հայաստան ուղարկելու մասին: Կայրո՞ն էք ասել, թե ով էր ձեռք բերել այս սպայմանավորվածությունը հայերի կողմից:

Պրն ԶԵՔՈՒԻԹ. Պրն Նուբար Փաշան՝ Հայոց ազգային պատվիրակության նախագահը Փարիզում:

Սենատոր ՀԱՐՄԻՆ. Ո՞ւ մ կլսենք հաջորդը:

Պրն ՄԱԼՔՈՒ. Մինչև հաջորդ վկային ներկայացնելը, ես ցանկանում եմ առաջարկել այս քարտեզն ընդգրկել արձանագրության համար: Այն ցույց է տալիս միասնական Հայաստանի սահմանները և դրա այն հատվածը Կովկասում, որը հոչակել է իր անկախությունը և հիմնել կառավարություն Հայաստանի Հանրապետություն անվան տակ:

Այժմ, պրև նախագահ, ես մեծ հաճույքով ներկայացնում եմ
պրև Քաջազնունուն՝ Հայաստանի Հանրապետության նախկին
վարչապետին և իր գործակիցներին, ովքեր մեծ ուրախությամբ
ժամանեցին Միացյալ Նահանգներ երեկ և այժմ այստեղ են:

Սենատոր ՈՒԽԻՑԱՍՍ. Պարզապես ենթակումիտեի
համար նշեր ձեր անունը, տարիքը, զբաղմունքը, պաշտոնային
կապը հայ ժողովրդի հետ և աղբյուրներն այն տեղեկատվության,
որ պատրաստվում եք հաղորդել:

ՊՐԵ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԶՈՒՌՈՒՆՈՒ¹⁷⁷

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՂՀՐԴԻ ՍԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

(Այս վկան վկայել է քարգմանչի միջոցով)¹⁷⁸:

**Պրե ՔԱԶԱԶՈՒՌՈՒՆ. Ես 51 տարեկան եմ: Ես եղել եմ
Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ 1918 թ. հուլիսից
մինչև 1919 թ. օգոստոս: Ես պաշտոնապես ուղարկվել եմ
Հայաստանի խորհրդարանի և կառավարության կողմից՝
ամերիկան ժողովրդին և կառավարությանը ներկայացնելու
իրավիճակը Հայաստանում և փնտրելու դաշնակիցների՝
հատկապես ամերիկացիների աջակցությունն այդ իրավիճակին
դիմակայելու համար:**

**Սենատոր ՈՒԽԻՑԱՍՍ. Պարզապես ներկայացրեք
հանձնաժողովին, թե դուք այս պահին՝ հայկական տեսանկյունից
և ամերիկան հնարավորությունների տեսանկյունից ինչն եք**

համարում ամենից կարևոր և նշանակալից:

**Պրե ՔԱԶԱԶՈՒՌՈՒՆ. Առաջին՝ ընդհանուր հայտարա-
րությունը, որ ես կանեմ, այն է, որ հայ ժողովուրդը, պատերազմի
ընթացքում սարսափելի տառապանք կրելուց հետո, այժմ ձգուու
է և մտահոգ է ունենալու Ամերիկայի համագործակցությունը՝
Հայաստանին ի վիճակի դարձնելու իր պատմական
սահմաններում ազատ և անկախ կառավարություն հիմնելու
համար:**

Առաջին բանը, ինչն ուզում եմ հայցել այն է, որ
կառավարությունը, որը գործել է Ռուսահայաստանում, այժմ՝
շուրջ մեկ տարի է արդեն, պետք է ճանաչվի որպես Հայաստանի
Հանրապետության կառավարություն: Նշված հանրապետու-
թյունն այժմ Ամերիկայի քարոյական, ֆիզիկական և նյութական
օգնության կարիքն ունի իր սահմանները պաշտպանելու և իր
սահմանների ներսում կարգ հաստատել կարողանալու համար:
Քանի որ ներկայիս հանրապետության սահմանները ներառում են
միայն Ռուսահայաստանի սահմանները, հանուն արդարության
Հայաստանի միուս հատվածները ևս, որոնք ներառված են
Թուրքահայաստանի կազմում, պետք է ներառվեն Հայաստանի
կազմում, որը մենք խնդրում ենք ճանաչել որպես անկախ
պետություն:

**Սենատոր ՈՒԽԻՑԱՍՍ. Դուք կարդացե՞լ եք այս
օրինագիծը և տեսե՞լ եք օրինագծի առաջին բաժնում Հայաստանի
Հանրապետության ամրագրված սահմանները, և այդ
սահմանները համընկնում են են ձեր պատկերացումներին¹⁷⁹:**

**Պրե ՔԱԶԱԶՈՒՌՈՒՆ. Միասնական Հայաստանի
պատվիրակությունը սահմանել է Հայաստանի սահմանները:**

¹⁷⁷ Բնագրում՝ Ohannes Kachaznouni: Հ. Քաջազնունու մասին՝ տե՛ս «Սանտրավորություններ» բաժնում:

¹⁷⁸ Փակագծերը և բացարությունը՝ համապատասխան բնագրին:

Նրանք չեն ընդգրկել Պարսկահայաստանը՝ հայտնի որպես Աղբեջան:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այսինքն, նրանց կողմից որոշված սահմանները համբնին՝ ու են դրա հետ՝ բացի Աղբեջանից:

Դրն ՔԱԶԱՋՆՈՒՆԻ. Բացի Հայաստանի պարսկական հատվածից, այս:

Դրն ՍԱԼՔՈՍ. Պատվիրակության հուշագիրն արխիվացվել է այս ունկնդրումների արձանագրություններում:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այս, ես դա գիտեմ: Շարունակե՞ք:

Դրն ՔԱԶԱՋՆՈՒՆԻ. Այժմ ես ցանկանում եմ հաղորդել յուրահատուկ օգնության մասին, որի կարիքն ունի Հայաստանը: Հայաստանը նաի՝ ունի ռազմական օգնության կարիք՝ Բարումից Էրիվան՝ Հայաստանի մայրաքաղաք, զիծը պահելու համար բավարար զորք, և, իմ կարծիքով, հավանաբար 4000-5000 մարդ կապահնչվի այդ զիծը պահելու համար: Հայաստանը ֆինանսի կարիք ունի՝ երկրում ձևավորվելիք 30 000-40 000 հոգանոց զորքը զինելու համար:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Եթե հայերը Հայաստանում ձևավորեն այնքան ռազմական ուժ, որքան ընդունակ են, որքան ել, որ դա լինի, և եթե, ինչպես դուք ասում եք, 20 000 կամսավոր հավաքագրվի Ամերիկայում՝ ոչ բաղաքացի կամ բաղաքաշիռություն ունեցող հայեր, ովքեր այսուել են, և նրանք բոլորը դրվեն հայկական դրոշի ներք, ձեր կարծիքով, քանի՞ զինվոր ամերիկյան դրոշի ներք կապահնչվի՝ երկիրը պահպանելու համար:

Դրն ՔԱԶԱՋՆՈՒՆԻ. Իմ կարծիքով, ելնելով իմ ասածից 4000-անոց ամերիկյան զորքը բավարար կլինի Բարումից Էրիվան զիծը պահպանելու, ինչպես նաև Հայաստանի ներքին կարիքների համար՝ ի հավելում Հայաստանում և նաև Ամերիկայում ձևավորվելիք զորքի:

Դրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Դրն Քաջազնունին ուզում է առանձնակի

ընդունել այն փաստը, որ այդ 4000 հոգու մեծ մասը կպահանջվի ոչքեւ Հայաստանում, այլ զիծը պահելու համար, որը Հայաստանում չէ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Այս, ես իմ հարցը կձևակերպեմ որպես «Երկիրը պահպանելու և վերահսկելու համար»: Շարունակեք:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դա ամենն ե, ինչ նա ուզում է ասել:

Դրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այս, սը թ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ենթահանձնաժողովը շնորհակալություն է հայտնում ձեզ ձեր հայտարարության համար:

Դրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Վարչապետն ասում է, որ կա մի բան, ինչը նա ցանկանում է կրկնել, եթե բույլ կտաք:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Անշուշտ:

Դրն ՔԱԶԱՋՆՈՒՆԻ. Ես ցանկանում եմ պարզել որոշ փաստեր՝ պահանջվող նյութական աջակցության բնույթի վերաբերյալ, ինչը, կարծում եմ, բաց բողեցի:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Շատ լավ:

Դրն ՔԱԶԱՋՆՈՒՆԻ. Մենք ուզում ենք ունենալ անհրաժեշտ նյութական աջակցություն Հայաստանում 30 000-անոց բանակի համար՝ սնունդ, զինամթերք և պաշար՝ մեկ տարվա համար:

Աջակցության երկրորդ մասը, որ մենք խնդրում ենք, սնունդն է՝ բաղաքացիական բնակչության համար՝ նրան ապրելու հնարավորություն տալու, ինչպես նաև՝ այդ բաղաքացիական բնակչության իր տները կառուցելու, եթե հնարավոր է, և բիզնեսում վերահսկատառության ի վիճակի դարձնելու համար: Դա ամբողջն է, որը մենք պահանջում ենք Ամերիկայից:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ նկատի ունեք՝ բիզնեսի և տների վերահսկատառ համար նյութական աջակցություն ասելով: Դուք վարկ նկատի ունեք:

Դրն ՔԱԶԱՋՆՈՒՆԻ. Մեր խնդրած ցանկացած օգնություն պետք է տրվի փոխառության տեսքով. մենք, անշուշտ, ցանկանում

ենք և վատահ ենք՝ կարող ենք փոխհասուցել փոխառությունները որոնք մենք կնքում ենք:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ձեր ձեսկերպումվ դա անորոշ էք:

Սենատոր ՈՒԽՎԱՍՄ. Ձեր կարծիքով, Հայաստանի Հանրապետությունն ի՞նչ երաշխիքներ կամ արժեթղթեր կարող են տալ՝ թե՝ իր մաքսատանը և թե՝ հանրավայրերում կամ ինչպիսի՞ն կլինի երաշխիքների բնույթը:

Դրեն ՔԱԶԱՋՈՂԻՆԻ. Մենք չենք մշակել երաշխիքի հարցի վերաբերյալ որոշակի նախազիծ, բայց մենք ցանկանում ենք և պատրաստ ենք որպես երաշխիք, տրամադրել մեր երկրի բոլոր ուսուրաները: Մենք երկու երաշխիք ունենք: Մեկն այն է, որ Հայաստանը բնական ուսուրաներով շատ հարուստ երկիր է, երկրորդն այն է, որ հայր աշխատասեր և տնտեսության անձնավորություն է ու նա միշտ վճարում է իր պարտքերը: Նախքան պատերազմը Շուսահայաստանն արտադրում էր շատ ավելին, բայց սպառում էր, և նրա վարչական ծախսերն ավելի քիչ էին, բան մի առանձին շրջանի եկամուտը:

Սենատոր ՈՒԽՎԱՍՄ. Ես համարում եմ, որ գուցե Շուսահայաստանում մասնավորապես կան նաև, ածուխ, երկար, պոլինձ և մանգա: Այժմ կարող է այնպես ստացվել, որ կառավարության կողմից այս վարկը հայ ժողովրդին տալու փոխարեն ընկերությունները կամ սինդիկատներն անեն դա, եթե կոնգրեսը ցանկանա, որ կառավարությունը վարկ տրամադրի, և այս դեպքում կարծո՞ւմ եք, իհարկե, որ Դուք չեք կարող այստեղ խոսել ձեր կառավարության անունից, բայց կարծո՞ւմ եք, որ ձեր կառավարությունը կցանկանա տրամադրել արդյունաբերության որոշ ոլորտներ՝ ընկերություններին՝ որպես երաշխիքներ, գումար տրամադրելու համար:

Դրեն ՔԱԶԱՋՈՂԻՆԻ. Ես ոչ մի կասկած չունեմ դրանում:

**ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԽԱԳԱՀ ԴՈԿՏՈՐ Գ. ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆԻ¹⁸⁰
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ**

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք Ամերիկա ուղարկված Ազգային պատվիրակության փոխնախագահն եք, այնպես չէ:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Ես Փարիզում տեղակայված Հայոց ազգային պատվիրակության փոխնախագահն եմ, բայց այժմ ես ժամանել եմ Միացյալ Նահանգներ որպես Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Սկզբնապես ձեզ ուղարկել են Խաղաղության վեհաժողովի¹⁸¹ Փարիզում:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո, ես ընտրվել եմ որպես Փարիզում Հայոց ազգային պատվիրակության փոխնախագահ և գործել այդ պաշտոնում իմ այնտեղ մնալու ընթացքում: Այժմ ես եկել եմ որպես Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ամերիկայում:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Որպես նոր կառավարության նախարար ք:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո, սը՝ բ, սակայն դեռևս չձանաչված¹⁸¹:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ցանկանում եք հայտարարություն անել, թե՝ ուզում եք, որ պարզապես ձեզ հարցեք տրվեն:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Եթե դուք բավականաշահ

¹⁸⁰ Բազրում՝ G. Pasdermadjian: Գ. Փատրմաճյանի մասին տես «Շախորագրություններ» բաժնում:

¹⁸¹ Գ. Փատրմաճյանը նկատի ուներ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որը դեռևս չեղ ճանաչվել դաշնակցից եվրոպական երկրների և ԱՄՆ-ի կողմից:

բարի կզտնվեր հարցեր տալու համար, ևս կփորձես պատասխանել:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Պարզապես ասեք,թե ի՞նչ զիտեր ինչը, ըստ ձեզ, օգտակար կլինի հանձնաժողովի համար:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՅԱՆ. Ես կբացատրեմ մեր իրավիճակը:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դա լավագույնը կլինի, ինչ կարելի է անել:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՅԱՆ. Դուք, իհարկե, զիտեր, որ Հայաստանը շատ կարենոր դեր է խաղացել Մեծ պատերազմում¹⁸²: Մենք կովեցինք ոռւսների հետ և հրաժարվեցինք բուրքերին միանալ: Մենք կովեցինք դաշնակիցների հետ շատ երկրներում և այդ ընթացքում շատ մարդիկ կորցրեցինք: Եթե մենք ընտրեինք գերմանացիներին աջակցելը, մենք որևէ լուրջ կորուստ չենք ունենա: Փաստն այն է, որ մենք հրաժարվեցինք բուրքերի և գերմանացիների հետ համագործակցելուց, և կովեցինք Հայաստանի ազատազրման համար դաշնակիցների կողմից, սակայն զինադադարից հետո իրավիճակը Փարիզում այնպիսին է, որ ոչ մի օգնություն դաշնակիցների կողմից մեզ չի ցուցաբերվի: Մենք գեթ մի հրացան կամ որևէ զինամթերք չենք ստացել մեր ժողովրդին պաշտպանելու համար, և այժմ շրջապատված ենք թշնամական համայնքներով¹⁸³, ովքեր, օգտվելով մեր ինքնապաշտպանության միջոցների հայտնի բացակայությունից, շարունակաբար անհանգստացնում են մեզ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այժմ, մինչ կհեռանար նրանից, ո՞ր բանակներում են հայերի մեծ մասը կռվել:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՅԱՆ. Ռուսական բանակներում: Բացի ավելի քան 10 000 կամավորներից, մենք ունեինք 160 000

¹⁸² Խոսք՝ Առաջին աշխարհամարտի մասին է:

¹⁸³ Բնազրում՝ communities:

մարդ ռուսական բանակում: Ես ինքս կռվել եմ որպես կամավոր: Սիրիայում ֆրանսիական բանակում մենք ունեինք ֆրանսիական դրոշի ներքո կովող 5000 հայեր: Ունեինք 1000 հայ կամավորներ ֆրանսիական օտարերկրյա լեզենում¹⁸⁴: Հայերն ամենուրեք կռվել են դաշնակիցների հետ: Մենք բնականաբար ակնկալում ենք, որ զինադադարից հետո կստանայինք անհրաժեշտ օգնություն մեր դաշնակիցներից:

Բայց, ինչպես ասացի, մենք բացարձակապես ոչինչ շստացանք նրանցից, բացի սմնոյի որոշակի օգնությունից Ամերիկայից:

Այժմ այն, ինչ մենք խնդրում ենք Ամերիկայից, ավելի բարյական և տնտեսական բնույթ ունի, քան միայն ֆիզիկական: Մենք ունենք ռազմական ուժ, որը կարիք ունի սննդի, մասակարարումների և զինամթերքի: Մեզ անհրաժեշտ են միայն մի քանի հազար ամերիկյան զինվորներ՝ իրենց բարոյական ազգեցության համար: Նրանք երբեք ստիպված չեն լինի կռվել քանի որ բուրքերը կտեսնեն, որ Ամերիկան Հայաստանի կողմում է և նրանք չեն կռվի: Մենք օգնություն ենք ցանկանում մեկ կամ երկու տարվա համար, մինչև մենք կազմակերպվենք:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք սպա՝ եք եղել:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՅԱՆ. Այո, սը ՛:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Կարծո՞ւմ եք, որ կարող եք ունենալ 300 000¹⁸⁵ արյունավետ զինված հայեր, եթե նրանց սարքավորումներ և զինամթերք տրամադրվի:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՅԱՆ. Մեծ հեշտությամբ, սը ՛: Մենք

¹⁸⁴ Բնազրում՝ French Foreign Legion: Տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹⁸⁵ Սենատոր Հարդինքի կողմից նշված թիվը՝ 300 000, ակնհայտ վրայում է՝ կամ վերջինի բանավոր խոսքի ժամանակ թույլ տրված, կամ աղաքորդի անուշադրության պատճառով: Հաջորդիվ՝ նրա վկայության ընթացքում մի քանի անգամ նշվում է հայկական զինված ուժերի ցանկալի ուալ թիվը՝ 30 000:

կարող էինք ունենալ 67 000-անոց բանակ, բայց այժմ մենք միայն 30 000-անոց բանակի կարիք ունենք:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Եթե ասում եք, որ կարող էիր ունենալ 67 000, նկատի ունեք, որ պետք է նրանց վերցնեք օրորոցից ու գերեզմանից: Դուք պետք է վերցնեք երիտասարդ տղաների և ծերերի՝:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո, սը՝ թ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ինչպես Կոնֆեղերացիա¹⁸⁶ արեց, վերցնել օրորոցից և գերեզմանից:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո, սը՝ թ:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Բայց դուք կարող եք հավաքել զինվորական տարիքի 30 000 մա՞րդ:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այն է՝ 30-ից մինչև 45 տարեկան:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Ո՛չ, 20-ից մինչև 30 կամ 32 տարեկան:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Արդյո՞ք նրանք բավականաշահ վարժված են ռազմական մարտավարությանը:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո, և մենք ունենք մեծ թվով սպաներ, ովքեր չորս տարի կովել են ռուսական բանակներում:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այսպիսով, դուք միայն զենքի կարի՞ք ունեք:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Զենքի ու զինամթերքի և որոշ պաշարի, իհարկե, և մի բանի սպաների, եթե հնարավոր է: Մենք ունենք սպաներ, բայց մենք նաև կարիք ունենք, որ ամերիկացիները համազրծակցեն մեզ հետ ամեն ինչում: Մենք ունենք հազարավոր զինվորներ, ովքեր եղել են ռուսական բանակում, բայց մենք ցանկանում ենք որոշ ամերիկյան սպաներ

օգնեն մեզ՝ վերակազմավորելու մեր բանակը, հատկապես տէխնիկական բնագավառում:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Իհարկե, հայերը իին եվրոպական ազգ են՝ միզրացիայի հետևանքով Ասիայում տեղավորված: Եթե ես այս առնչությամբ օգտագործում եմ «իին եվրոպական» բառերը, ես չեմ սովորում հայերին, բայց ի հավելումն ցանկացած զորքի, որ դուք ցանկանում եք օգտագործել, միթե չե՞ք ցանկանում նաև որևէ եվրոպական դրոշի վարկը:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Իհարկե, «եվրոպական» ասելով ես ներառում եմ նաև ամերիկացիներին, բանի որ մենք բոլոր եվրոպացի ենք:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այսպիսով դուք ուզո՞ւմ եք որևէ եվրոպական դրոշի վարկը:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Դուք գոնում եք, որ միայն շատ փոքր զորքի կարի՞ք ունեք:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Այո, մեր սեփական զորքը վերակազմավորելու համար:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ես ուզում եի ձեզ հարցնել, ոչ որպես մեր որոշման ակնարկ, այլ ես փորձում եմ հանգել նրան, ինչ հնարավոր է թվում անելու համար. դուք կարծո՞ւմ եք, որ եթե այս երկիրը կարողանար տրամադրել զենք ու զինամթերք և ռազմամթերք, և միաժամանակ զծանավ ուղարկել Բարում ծովային հետևակայիններով, դա մեծապես կթերևացներ վիճակն այնտեղ:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃԱՆ. Դա կրեթևացներ իրավիճակն ամբողջ Կովկասում, սակայն մինչև ամերիկյան դրոշը չինի երիվանում, երիվանում ապրող մարդիկ չեն իմանա, թե ինչ կա

¹⁸⁶ Համեմատությունը՝ ԱՄՆ-ի XIX դարի պատմության՝ Քաղաքացիական պատերազմի նույնանման իրադարձությունների հետ է:

Բարօւմում: Մեր հարևանները՝ արևեյանները, շատ տպավորիսուն:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Մենք կարող ենք ծովայիններին ուղարկել երկրի ներքին շրջաններ, այդ դեպքում:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Սենատոր Հարդինգն ասաց Բարօւմում ծովային հետևակին: Անշուշտ նա նկատի ուներ ուղարկել ծովայիններին երկրի ավելի խորքը՝ երկարուղային զծի երկայնք:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այո, մինչև Էրիվան: Կարծում եք դրա բարոյական ազդեցությունը մե՞ծ կլիներ:

Դոկտոր ՓԱՍՏՐՈՍԽՅԱՆ. Այո, սը ք, բարոյական ազդեցությունը:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք ցանկան՝ մ եք որեւէ այլ հարց տալ, Սենատոր ք:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Ո՛չ:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք չե՞ք ցանկանում, որ նա ծավալի այս մանրամասների շուրջ:

Դրեն ՔԱՐՏԱՉՅԱՆ. Ո՛չ:

ՊՐՆ ՎԱՀԱՆ ՔԱՐՏԱՉՅԱՆԻ¹⁸⁷ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Խնդրում ենք հայտնել ձեր անունը սղագրողին:

Դրեն ՔԱՐՏԱՉՅԱՆ. Վահան Քարտաչյան, տարիքը՝ 36: Ես ամերիկյան քաղաքացի եմ և Նյու Յորքի փաստաբանների կոլեգիայի անդամ: Այժմ ես կամավոր՝ պատվավոր աշխատանք եմ կատարում Հայաստանի համար:

¹⁸⁷ Բնագրում՝ Vahan Cardashian: Վահան Քարտաչյանի մասին տես «Ծանոթագրություններ» բաժնում:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք բնիկ Հայաստանի ց եք:

Դրեն ՔԱՐՏԱՉՅԱՆ. Այո, սը ք, եթե Հայաստանին տրված լինեն այն սահմանները, որոնք նա արդարացիորեն պահանջում են, ես կլինեմ:

Եթե թույլ կտաք, պրն նախազահ, պետք է ասեմ պրն Զերարդի կողմից, որ նա նպատակ ուներ այցելելու այս նիստը՝ կարծելով, որ այն պետք է կայանար շաբաթ օրը, սակայն երեկ ուշ կեսօրին նա հեռազիր ստացավ ձեզնից, որտեղ դուք լսման օրը նշանակել էիր այսօր, այսպիսով, նախնական կարևոր պայմանագրության պատճառով նա չկարողացավ այսուեղ լինել:

Սենատոր ՈՒԻԼԵՍՍՈՒ. Ի դեպ, նա հեռազիր է ուղարկել ինձ այս առավոտ, որը ես մտադիր էի ցույց տալ ձեզ, բայց այն թողել եմ իմ գրասենյակում, պրն նախազահ:

Դրեն ՔԱՐՏԱՉՅԱՆ. Դեսպան Զերարդը հուշազիր ունի, որը նա ցանկանում է ներկայացնել ձեզ, և որը ես այժմ հանձնում եմ ձեր հանձնաժողովին և խնդրում, որ այն արձանագրության մաս դառնա:

Սենատոր ՀԱՐԴԻՆԳ. Այն արձանագրության մաս կդառնա:

(Քննարկվող հուշազիրն այստեղ տպագրվել, և ամբողջությամբ արձանագրության մեջ՝ հետևյալ տեսքով)¹⁸⁸:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՍԻՏԵ

ՍԵՐԻՅՈՆ պող. 1, Նյու Յորք

Հարգ. ՈՒՈՐՐԵՆ Գ. ՀԱՐԴԻՆԳԻՆ,
Ենթահանձնաժողովի նախազահ, սենատի Արտաքին
հարցերությունների հանձնաժողով.

¹⁸⁸ Փակագծերն ու բացատրություններ՝ համապատասխան բնագրի:

Ես նախ պետք է առաջարկեմ եինք զլյավոր պատճառներ՝ որոնք, իմ դատողությամբ, Ամերիկայի վրա դնում են այս պահին Հայաստանին օգնելու հանդիսավոր պարտականությունը.

I. Բեղյինում դեսպան աշխատելու ժամանակ ես գիտեի, որ կայզերական Գերմանիան նույնիքան վատ վերաբերություն ունի հայերի նկատմամբ, որքան թուրքերը, քանի որ ոռուսահայերն ու թուրքահայերը մերժեցին իրենց արված՝ ինքնավարության թուրք-գերմանական առաջարկը՝ պայմանով, որ նրանք միացյալ օգնություն ցույց կտային Գերմանիային և Թուրքիային դաշնակիցների դեմ, ինչպես նաև այն պատճառով, որ, եթե չլիներ Ռուսաստանին ցուցաբերած հայկական օգնությունը, թուրքերը կգրավեին ռուսական Կովկասը և կմիավորվեին Կովկասի և Անդրկասայան 24 000 000 կամ ավելի թուրանցիների¹⁸⁹ հետ Թուրքերի այդ հաջորդությունը կստիպէր Ռուսաստանին ավտորո գերմանական ռազմաճակատներից դիվիզիաները բերել Կովկաս Գերմանիային հետափորություն տալով կենտրոնանալ Ֆրանսիայի դեմ Հայերի հավատարմությունը դաշնակիցների գործին նրանց արժեցույթ 1 000 000 մարդու կյանք:

II. Ֆոն Լուդենդորֆն¹⁹⁰ իր գրքում փաստում է, որ զիտավոր գործոնը, որը հանգեցրեց գերմանական քանակի անկրած արևմտություն, վառելիքի պաշարների բացակայությունն էր, քանի որ թուրքերը ժամանակին չէին զբավել Բարուն: Պետք է վերիիշել, որ ռուսական Կովկասայի քանակը տուն գնաց 1917 թ. դեկտեմբերի, որ թուրքերն ու թաթարները կրվում էին հայերի դեմ, ով դաշնակից և համագործակցող երկրների միակ հավատարիմ դաշնակիցն էր մասել և որ թուրքերը չհասան Բարուն մինչև 1918 թ. սեպտեմբեր՝ այս Ռուսաստանի դասալիքությունից ութ ամիս անց: Ամերիկացիների համար լավ կլիներ մի՝ պահ կանգ առնել և մտածել այն մասին, թե ինչպիսին կլիներ պատերազմի ելքը կամ ընթացքն արևմուտքում, եթե թուրքերն ութ ամիս ավելի շուտ հասնեն Բարուն ինչը նրանք կանոնի եթե հայերը չդիմադրեին նրանց:

¹⁸⁹ Բնագրում՝ Turanians:

¹⁹⁰ Բնագրում՝ Von Ludendorff: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

III. Գեներալ Ալենբին¹⁹¹ ասել է, որ հայ կամավորական զումարտակները պաղեստինյան ճակատում զլյավոր դեր են խաղացել 1918 թ. սեպտեմբերին թուրքերի նկատմամբ իր տարած հաղթանակում: Իսկ գեներալ ֆոն Սանդերսը¹⁹² Սիրիայում թուրքական քանակի գերւանացի հրամանատարը, ասել է, որ Պաղեստինում թուրքական ճակատի քայլայման պատճառն այն էր, որ թուրքերը՝ հակառակ իր հրամաններին և խորհրդներին, երկու դիվիզիաների կովկաս՝ կովելու հայերի հետ:

IV. Ամերիկայի, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բացահայտ պարտը է, օգնել ուժասպառ հայ ժողովրդին պաշտպանելու իրեն, քանի որ հայերը օգնեցին մեզ հաղթել պատերազմում:

V. Ամերիկան՝ որպես դաշնակից և համագործակցող երկրների կողմից ներկայացված համագործակցության հատուկ անդամ, պայտավոր է իր ներդրումն ունենալ այն նպատակներին հասնելու գործում, որոնց համար ստեղծվել է հիշյալ համատեղ գործընկերությունը: Հայաստանի ազատագրումն այդ համագործակցության զլյավոր նպատակներից մեկն է:

Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բարեկամների համար խոր հիասքանչության աղբյուր է, որ նրանք, ովքեր հարձակման են ենթարկվել ռազմամոլական Գերմանիայի կողմից, չկարողացան իրականացնել իրենց ծրագիրը և բազմից հայտարարած իրենց խոստումներն ու երաշխավորությունները՝ որ Հայաստանի ազատագրումը լինելու է նրանց առաջին հոգսերից մեկը, և որ ներկայումս շանեք են գործադրվում Հայաստանը որպես պատերազմի ավար բաժանելու ուղղությամբ:

Մենք չենք մտել այս պատերազմի մեջ, որպեսզի թույլ տանք մեր դաշնակիցներից կամ միավորված տերություններից որևէ մեկին բարձրանալ ենթակա ազգության հաշվին, որը մինչև վերջ նվիրված և հավատարիմ մնաց մեր գործին:

¹⁹¹ Բնագրում՝ Gen. Allenby: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

¹⁹² Բնագրում՝ Gen. Von Sanders: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ» բաժնում:

Ամերիկայի ակնհայտ պարտքն է ասել Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, հանուն ապագայում նրանց հետ մեր բարեկամական հարաբերությունների, որ Ամերիկան չի կարող և չի դառնա նրանց կողմից հայկական տարածքների բռնազրավման որևէ զործողության մասնակից: Ես կարծում եմ, որ Ամերիկայի պարտքը Հայաստանի հանդեպ ոչ թե պատասխանատվության իր բաժնից խուսափելու է կամ ուրիշի վրա բարդելը, այլ՝ հետևելը, որ Հայաստանին տրվեն իր օրինական իրավունքները և, որ նա ապահովագրված լինի այդ իրավունքներով: Մենք չենք կարող հաշվի առնել Հայաստանում Անտանահանք երկրների ենթադրյալ իրավունքները՝ իրավունքներ կամ պահանջներ, որոնք ձեռք են բերվել իին համակարգի պայմաններում, քանզի պատերազմում մեր ընդգրկմամբ, նոր միջազգային հարաբերություններ են հաստատվել, և եթե մենք պետք է երաշխավորենք որևէ չափով կամ որևէ կերպ աշխարհի խաղաղությունը, ապա պետք է պնդենք, որ Հայաստանի իրավունքները պետք է գերադասվեն զաղտնի պայմանագրերի որոշումներից, որոնցով մեծ երկրներից ումանք փորձում են կողուատել Հայաստանը: Հակասական կինի հաղթանակած երկրների կողմից անել այն, ինչն անելու փորձի համար նրանք դատապարտում են Գերմանիային:

Նախքան ես կմասնավորեցնեմ այն օգնության բնույթը, որի կարիքը Հայաստանն ունի, ցանկանում եմ ինձ թույլ տրվի փաստել, որ Հայաստանի կյանքը չի կարող ապահով և անվտանգ դառնալ, եթե մենք հոգ չտանենք, որ Հայաստանից արևոտոք թուրքերն անկարող և անվնաս դառնան: Գրեթե 3 000 000 թուրքեր, ում կարելի է գտնել թուրքական Անտոլիայում, անկասկած, պետք է կրթած քրիստոնեական կառավարման ներքո զարգանալու աւատ հենարավորություն վայելեն; Սակայն ոչ մի հանգամանքներում նրանց չպետք է ազատ թողնել՝ խարդավանքների իրենց իին խաղի մեջ ներզրավիլու՝ մի կողմից եվրոպական երկրների միջև մրցակցություն հարուցելով, և մյուս կողմից իրենց պանխալամբատական և պանթորանական արկածախնդրությունները հետապնդելով:

Ամերիկացիների համար լավ կինի իմանալ, որ աշխարհում չի կարող լինել խաղաղություն, եթե թուրքերը չտարանջատվեն Կովկասի և անդրկասայան թուրանցիներից և չփակվեն Անտոլիայի

հյուսիսարևմտյան սահմաններում: Հայերը Ոև ծովից մինչև Միջերկրական պատնեշ կառեղծեն և այսպիսով կկտրեն արևմտյան Անտառության թուրքերին Կովկասի և անդրկասայան թուրանցիներից: Այս իրողության, ինչպես նաև Պարսկաստանում ու Միջազգետքում թրիւանացիների ներկայության և մինչև Ռուսաստանի վերակազմակերպում Անտանտի երկրներից մեկի կողմից Բարձի շրջանի ժամանակավոր գրավման դեպքում, Հայաստանը չի ունենա իր խաղաղությունը խախտող հարեաններ և նրա համար համեմատաբար դյուրին կինի իրականացնել իր ներքին վերակազմակերպումը:

Առաջարկված հայկական պետությունը կազմված կինի Ռուսահայաստանից և յոթ նահանգների հատվածներից ու Կիլիկիայից Թուրքահայաստանում: 1914 թ. Հայաստանի¹⁹³ միջին քնակչությունը գեահատվել է մոտ 5 800 000, որից 3 000 000-ը եղել են հայեր, իսկ այլը թուրքեր, քրդեր և այլ մուսուլմաններ ու ոչ հայ քրիստոնյաներ: Շուրջ 1 000 000 հայեր զոհվել են պատերազմի ընթացքում, և ըստ թուրքական ու գերմանական զեկույցների՝ հավասար քովով մուսուլմաններ մահացել կամ տեղափոխվել են այլ վայրեր: Եթե Թուրքահայաստանում հայերն այժմ հազիվ քառորդ միլիոն են հաշվվում, Ռուսահայաստանում, որն այժմ հայունի է որպես Հայաստանի Հանրապետություն, կա գրեթե 2 000 000 հայ և գրեթե 1 000 000 հայ՝ Հայաստանի սահմանակից շրջաններում և այլուր, որոնց մեծ մասն ակնկալվում է, որ կվերադառնա Հայաստան: Հարկ է նշել, որ պատերազմի ընթացքում զոհված 1 000 000 հայերից ոչ բոլորն էին ապրում բուն Հայաստանում: Նրանց զգալի մասն ապրում եր նախկին թուրքական կայսրության այլ մասերում:

Վերոնշյալից հարկ է եզրակացնել, որ քնակչության տեսանկյունից հայկական տարրը մեծամասնություն կկազմի ապագա հայկական պետությունում:

Հայերը սարսափելի ցնում են տարեկ պատերազմի ամրող ընթացքում և հզոր պետության օգնող ձեռքի կարիք կունենան մի քանի ուղղակի Արմենիա:

¹⁹³ Պարսկա Զերարդի հուշագրի այս հատվածում Արևմտյան Հայաստանը ներկայացված է ոչ թե Թուրքահայաստան, այլ Հայաստան: Բնագրում ուղղակի Արմենիա:

տարիների ընթացքում: Մեկ միլիոն կամ ավելի հայեր պետք է հայրենադարձվեն, որքանոցներ պետք է հիմնվեն, ժամանակումից կառավարման համակարգ պետք է մշակվի ամբողջ երկրի համար, հայկական քանակ պետք է ստեղծվի, ինչի համար այնտեղ կա բավարար մարդկային ներուժ, տրանսպորտային միջոցներ պետք է ստեղծվեն և այլն: Կարճ ասած, սրանք են լինելու Հայաստանին աջակցող երկրի գործառույթները:

Ասում են, որ Հայաստանը հարուստ է բնական ռեսուրսներով և ի վիճակի է վերադարձնելու ամբողջ գումարը, որը նա պետք է փոխառի իր վերականգնման համար: Ես, ինարկե, չեմ մոռանում այն եւկան փաստը, որ պետք է փոխառությունը Հայաստանի կորուստները, և կասկած չունեմ, որ Խաղաղության վեհաժողովը կապահանջի անհրաժեշտ միջոցներ Հայաստանի համար՝ բուրքերից համարժեք փոխառություն ստանալու համար, և այդ դեպքում վարկերը, որոնք Հայաստանն անհապաղ պետք է ձևակերպի, կարող են մարզել կարծ ժամանակում:

Ես հարգանքով խնդրում եմ ձեր ենթահանձնաժողովին՝ միջնորդել, որ Միացյալ Նահանգների Սենատը ձեռնարկի հետևյալ քայլերը:

1. Որ Միացյալ Նահանգների Սենատն ընդունի բանաձե՝ կոչ անելով նախագահին ճանաչել Հայաստանի Հանրապետությունը որպես Հայաստանի «ող ֆակտո» կառավարություն:

2. Որ Ամերիկան անմիջապես սնունդ ուղարկի Հայաստանի քաղաքացիական բնակչության համար և սնունդ, զինամթերքը ու պաշար 30 000 հայերից ձևավորված Հայաստանի բնակի համար:

3. Որ Միացյալ Նահանգների կառավարությունը լիազորի այս երկրի հայերին հավաքագրելու կամավորներ (որոնք կարող են լինել 10 000) և նաև հնարավոր դարձնի Հայաստանի կառավարությանը համարագրելու կամագորներ Կոնստանդնուպոլսի և Բուլղարիայի շրջաններում (որտեղ, ասում են, 10 000 այստանի մարդ կա), և որ Ամերիկան օգնի այս կամավորական գորբերին զինվել և Հայաստան փոխադրվել:

4. Որ Միացյալ Նահանգների Սենատն ընդունի բանաձե՝ Հայաստանի անկախության օգտին՝ ներառելով Ռուսահայաստանը, յոթ նահանգները և Կիլիկիան Թուրքահայաստանում, և Թուրքիայից Հայաստանի համար համապատասխան փոխհատուցում ստանալու օգտին:

(Ստորագրված)

ԶԵՅՍՍ ՈՒ. ԶԵՐԱՐԴ

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Կարծում եմ, որ առանց որևէ անհամեստության կարող եմ ասել, որ Վերջին 18 կամ 19 տարիների ընթացքում ես խորն ուսումնասիրության առարկա եմ դարձրել Արևելյան հարցը և չնայած չեմ ճանապարհորդել ամբողջ երկրով մեկ, այնուամենայնիվ, այդ թեմայի մասին շատ եմ գրել և այդ թեմայով շատ դասախոսություններ եմ կարդացել, և գտնում եմ, որ միանշանակ կարող եմ որոշակիորեն խոսել ցանկացած հարցի վերաբերյալ, ինչին ինձ թույլ կտամ անդրադառնալ:

Ներկայիս՝ իրագործում պահանջող իրավիճակը վերաբերում է զուտ Ռուսահայաստանին: Բայց ես կընդգրկեմ ամբողջ թեման: 1914 թ. 2 800 000 հայ բնակչություն կար այնտեղ, ինչը ձեր բանաձեում նշված է որպես Հայաստան: Այդ բնակչության շուրջ 1 500 000-ը Թուրքահայաստանում եր, իսկ մյուսները՝ Ռուսահայաստանում:

Այնուեղ, ինչը հայտնի է որպես Թուրքահայաստան, որա այս հասվածում [ցույց է տալիս քարտեզի վրա] այժմ հազիվ քառորդ միլիոն հայ է մնացել: 350 000 բուրքահայ փախստական կա Ռուսահայաստանում [ցույց է տալիս], իսկ մյուս փախստականները՝ այլուր են, այնպես որ, եթե Թուրքահայաստանի բոլոր փախստականները հայրենադարձվեին, Թուրքահայաստանում կարող եր շուրջ երեք քառորդ միլիոն հայ լինել:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ասում եք, որ իին

Թուրքահայաստանում քառորդ միլիոն հա՞յ կա մնացած:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այժմ:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ այլ բնակչություն կա այնտեղ այժմ:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այնտեղ կան թուրքեր, քրդեր, դղյաշներ ու եզրիներ, իսկ ներքևում՝ այստեղ կան ասորիներ և ֆելլահներ, այստեղ [ցույց է տալիս քարտեզի վրա]:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ամբողջությամբ վերցրած, որքա՞ն են նրանք հաշվում:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ամբողջությամբ վերցրած՝ մոտավորապես 1 000 000-ի և 1 200 000-ի միջին:

Թուրքահայաստանի ընդհանուր բնակչությունը 1918 թ. գնահատվում էր 3 788 000: Հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը, մասնավորապես՝ 1 403 000, իսկ թուրքերն ու քրդերը միասին՝ շուրջ 1 425 000:

Ըստ թուրքական հաղորդագրությունների՝ թուրքերը և քրդերը նույնպես զգալի կորուստներ են ունեցել պատերազմի ընթացքում, ինչպես և հայերը: Ամբողջ շրջանն այստեղ, որը գրավվել էր Ռուսաստանի կողմից —

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ինչպե՞ս են կորուստներ ունեցել:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Թշնամիների կողմից ավերածությունների, սովոր ժամատախոհ և մերկ լինելու պատճառով: Այստեղ Հայաստանի այս ամբողջ տարածաշրջանը գրավվել էր Ռուսաստանի կողմից 1914 թ. և 1915 թ. գարնանը: Թուրքերը փախան դեպի արևմուտք՝ 50 000, 100 000 կամ 200 000 հոգանոց մեծ քարավաններով, իսկ նրանք, ովքեր մնացին այս շրջանում, մահացան ժամատախոհ և սովոր:

1917 թ. աշնանը Դիաբրերի քաղաքում, որն ուներ 65 000 միջին բնակչություն, որից 35 000-ը թուրքեր և քրդեր էին, հայերը ոչնչացվեցին թուրքերի կողմից: 35 000 թուրք և քուրդ

բնակչությանն ավելացավ այս շրջանից և ավելի արևելքից [ցույց է տալիս քարտեզի վրա] եկած 30 000 թուրք փախստական բնակչություն: 1917 թ. աշնանը մարդահամար անցկացվեց այս քաղաքում և միայն 6000 թուրքեր և քրդեր կային մնացած: Այլք մահացել էին սովոր և ժամատախոհ: Այնպես որ թուրքերը զրեթե նույնքան զգալի կորուստներ են ունեցել, որքան հայերը, և, որպես փաստ, Խաղաղության վեհաժողովում թուրքական պատվիրակության նախագահը նշեց, որ 3 000 000 թուրքերի և քրդերի կորուստ են ունեցել պատերազմի ընթացքում՝ նախկին թուրք կառավարության հանցավոր վարքի պատճառով: Այն է՝ նա երիտասարդ թուրքերին մեղադրում էր հանցավոր վարքի համար, որպեսզի արդարացներ իր սեփական կառավարությանը՝ պնդելով, որ միևնույն հանցավորությունը, որը կործանել է հայերին, կործանել է նաև թուրքերին և քրդերին:

Սենատոր ՈՒԿԻՑՍՍՍ. Նա փորձում էր մեղմացնել ձեռնարկված ազգային բնաջնջման մեղադրանքը:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այո:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ի՞նչ է եղել փախստական հայերի ունեցվածքը, ովքեր գնացել են այլ հատվածներ: Այն յուրացվե՞լ է որևէ մեկի կողմից:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ամբողջ անձնական ունեցվածքը զավթվել և յուրացվել է թուրքերի և քրդերի կողմից կամ վաճառվել չնշյան զներով՝ շարժական գույքի իրական արժեքի հինգ կամ 10 տոկոսով, և անշարժ գույքը նույն կերպ է տնօրինվել: Թուրքերը լրել են իրենց սեփական տները, որոնք ստվարաբար այնքան լավը չեն, որքան հայերի տները, և տեղափոխվել հայերի տներ, այնպես որ երբ հայ փախստականները վերադառնում են, նրանք պարզում են, որ իրենց տները գրադեցրել են թուրքերը և քրդերը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ռազմական ո՞ւժ է պահանջվելու նրանց վտարելու համար:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ո՞չ, ես չեմ կարծում թուրքերի կողմից որևէ լրտօ դիմադրություն ցույց կտրվի Թուրքահայաստանի գրավմանը: Թուրքերն արդեն իսկ զիտեն, որ իրենք կորցրել են Թուրքահայաստանը: Նրանք նաև զիտեն, որ կորցրել են Միջազգետքը և Պաղեստինը, և այժմ այն, ինչը նրանք փորձում են պահպանել Անսատոլիան է՝ Տավրոսի լեռնաշղթայի արևմուտքը: Նրանք խիստ ընդդիմանում են հույների կողմից Զմյուռնիայի գրավմանը և խտալացների կողմից Արալիայի գրավմանը, այնպես որ նրանք իրոք փորձում են պահպանել Անսատոլիան Տավրոսի լեռնաշղթայից արևմուտք, ինչպես նաև հսկայական շանքեր կգործադրեն Կոնստանդնուպոլիսը պահելու համար:

Սակայն Հայաստանի մասին նրանք զիտեն՝ զգում են, որ իրենք կորցրել են: Որպես փաստ՝ իրենց լրագրերում՝ ես ո՞նեմ բազմաթիվ կոնստանդնուպոլյան լրագրեր, նրանք խոսում են՝ բանակցությունների միջոցով հայկական վեց նահանգներից երեքը զիջելու մասին, որոնք, նրանց կարծիքով, Հայաստանի Հանրապետության հետ միասին պետք է կազմեն հայկական պետությունը:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ի՞նչ են այդ երեք նահանգների անունները:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Երգրում, Բիթլիս և Վան՝ դեպի Տրամադրություն ելքով:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ինչպիսի՞ն է Տրամադրությունը: Այնտեղ շա՞տ հույներ են ապրում:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. 1914 թ. բնակչությունը 682 000 մարդ էր, որից 200 000-ը հույներ էին, 180 000-ը՝ հայեր, և 302 000-ը՝ մուսուլմաններ և այլք: Որոշ ժամանակ առաջ ես կարդացի Սամսունի հույն արքեպիսկոպոսի հաղորդագրությունն այն մասին, որ ոչնչացվել է Տրամադրությունը իրեք հինգերորդ մասը: Թույլ տվեք ավելացնել, որ հույն և հայ

բնակչության միջև փոխըմբռնում է ձևավորվել, որով հույներն իրենց համաձայնությունն են տվել Տրամադրությունի՝ Հայաստանի մաս դառնալուն՝ պայմանով, որ հույներն այնտեղ մշակութային ինքնուրույնություն կունենան: Նաև այն Վենեգիլոսն¹⁹⁴ իր հուշագրում, որը նա ներկայացրել է Խաղաղության վեհաժողովում, պաշտպանել է Տրամադրությունի՝ Հայաստանի մաս կազմելը:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Վստա՞հ եք դրանում:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Դա չափազանց մեծ կարսորություն ունի:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Նրանք կնքել են այդ համաձայնագիրը, այնպես չե՞ն, թի՞ շկ:

Դոկտոր ՓԱՍՏՐՄԱՃՅԱՆ. Այո:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Դա Հայաստանին տվեց Սև ծովի այդ նավահանգիստը և, իմ կարծիքով, բավական երկար ժամանակ կար ենթադրություն, որ թերևս մեզ այնտեղ կներկայացվի հունական հարցը, որը մի փոքր նման է խտալական հարցին Ֆիումեում¹⁹⁵, ինչը բնակչության մեծամասնության հիման վրա ներկայացվող հավակնություն է հունական քաղաքի հանդեպ:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Հույները կարող են մշակութային ինքնուրույնություն ունենալ այնտեղ, եթե ցանկանային:

Ես ցանկանում եմ ձեզ մի բան ասել Հայաստանի սահմանների նախագծի վերաբերյալ: Այն, ինչ նկարագրված է այստեղ՝ որպես Հայաստանի Հանրապետություն, ճանաչված է որպես Ռուսահայաստանի մաս և սահմանները, հետևաբար, քննարկման ենթակա չեն: Այն այսպես ճանաչվել է նախկին

¹⁹⁴ Բնագրում՝ Venezilos: Նրա մասի տես՝ «Շահորդագրություններ» բաժնում:

¹⁹⁵ Բնագրում՝ Fiume:

Ռուսական կայսրության կողմից:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Այդ անունով է ռուսական նահանգը:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այս, և թույլ տվեք ասել, որ վրացիների ու թաթարների՝ հայերի հետ ունեցած սահմանային չլուծված վեճերը զուրկ են որևէ իրավական հիմքից, քանի որ Կովկասի նկատմամբ իրավաբանական իրավունքը պատկանում է Ռուսաստանին:

Ինչ վերաբերում է Թուրքահայաստանին, դա ուղղակի աշխարհագրական անվանում չէ, ինչպես ժամանակ առ ժամանակ պնդում են, այն իրավաբանական իրավունք է: Վեց նահանգները և Տրապիզոնն ու Կիլիկիան պայմանական համաձայնագրերի թեմա են եղել թուրքական կառավարության և հայերին ներկայացնող տերությունների միջև երեք անգամ: Բեղյինի պայմանագրով Հայաստանը սահմանվում էր որպես «վեց նահանգներ»: 1895 թ. դեսպանների հուշագիրը նկարագրում էր վեց նահանգները և Կիլիկիան որպես Հայաստան, և 1913 թ. դեսպանների խորհրդաժողովը Լոնդոնում սահմանեց վեց նահանգները և Տրապիզոնը՝ որպես Հայաստան:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ինչպես է Բեղյինի պայմանագրով ճանաչված Թուրքահայաստանի այդ նահանգների և այդ վիճակների նկարագրությունը համապատասխանում այս բանաձեռի սահմաններին:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այն տարբերվում է որոշ շափով: Մենք կամավոր կերպով որում ենք հանել Կան և Դիարբերի նահանգների հարավային մասերը՝ հաշվի առնելով այն փաստը, որ այնտեղ մեծ թվով քրդեր կան և նուև կրծատել ենք Սվաղի նահանգի հյուսիսարևմտյան մասը, որը հայախոս հատված է:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Որտե՞ղ եք դուք կտրում Սվաղի:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ահա այստեղ [ցույց է տալիս քարտեզի վրա]: Նրանք բնակչության մեծամասնություն են

վրա]:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ի՞նչ եք անում Ալբրեհանի հետ:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Մենք այն նույնապես դուրս ենք թողնում: Այժմ, եթե թույլ կտաք, ես կընդգծեմ Հայաստանի համար դեպի ծով ելքերի կենսական անհրաժեշտությունը: Հայաստանը պետք է ուղիղ կապի մեջ դրվի աշխարհի քաղաքակիրք ազգերի հետ: Օգնությունը, որը մտադիր եք ուղարկել Երիվան՝ հյուսիսային Հայաստան, պահանջում է նավահանգիստ՝ Սև ծովում, այսպիսով, Հայաստանը պետք է նավահանգիստ ունենա Սև ծովում, և եթե մեզ պետք լինի օգնություն ուղարկել կենտրոնական Հայաստան, մենք պետք է նավահանգիստ ունենանք Միջերկրական ծովում՝ Կիլիկիայի երկայնքավ: Այսպիսով, պարզ է, որ առանց այս ելքերի Հայաստանը գործ կլինի եական տնտեսական զարկերակներից, և հետևաբար, չի կարող գոյատևել: Եվ այս երկուսից Կիլիկիան առավել կարևորն է:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ի՞նչ նավահանգիստներ ունեք Միջերկրական ծովում:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Մենք ունենք Սերսինի և Ալեքսանդրետի նավահանգիստները:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Որտե՞ղ է Աղանան:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այն ծովափից 45 մղոն հեռավորության վրա է:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Արտնան այլև նավահանգիստ չէ: Զրերը ծանծաղել են, այնպես չէ:

Պրե ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այս, սր ք: Կիլիկիայի տարածքը շուրջ 16 000 քառակուսի մերս է: Այստեղ՝ հյուսիսարևմտյան մասում է եղել վերջին հայկական թագավորության վերջին հանգրվանը: Այստեղ է, որ 1375 թ. հայերը կորցրին իրենց անկախությունը: Թուրքահայերի մեծ մասն այժմ գտնվում է այս շրջանում [ցույց է տալիս քարտեզի վրա]: Նրանք բնակչության մեծամասնություն են

կազմում այսօր, մասնավորապես՝ 150 000 հայեր 95 000 մուտուլմանների դեմ՝ 415 000 ընդհանուր քնակչությունից:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Դուք վերցնում եք Հալեպի միայն շատ փոքր հատվածը:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Միայն շատ փոքր մասը, որը հայտնի է որպես Սարաշի տարածաշրջան: Այն շուրջ 6100 քառակուսի մերու տարածք է: Այն հայախոս հատված է:

Եվ, թույլ տվեք ասել, որ 1878 թ. թուրքերը խեղաթյուրել են հայկական սահմանները: Օրինակ, նրանք Աղանայի նահանգի մի մասը կցել են Հալեպին, ինչպես նաև միացրել են Սոսովի նահանգի մի մասը Վանին, ինչպես նաև խեղաթյուրումներ են արել այս մասում [ցույց է տալիս]:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ես չգիտեի, որ Թուրքիան բավականաշափ քաղաքակրթվել էր մերենայություններ անելու համար: Այդպէ՞ս է:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Օ, այս: Նրանք մեծ վարպետ են այդ գործում:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ես կարծում եի, որ դա Սասաշուսերի գրադմունքն է:

Պրն ՍՍԻԹ. Նրանք արագ են սովորում որոշ բաներ:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Կարենք բանը, որ մենք պետք է հիշենք, այն է, որ 2 500 000 հայերից, որ մենք կունենանք Հայաստանի սահմաններում, 2 000 000-ն այժմ Կովկասում են: Այս 2 000 000-ից 1 300 000-ը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններում, գումարած Թուրքահայաստանից՝ 300 000-ից 350 000 փախստականների, այն է՝ 1 650 000: Ավելացրեք սրան 350 000 - 400 000 այլ ազգություններ, և մենք ունենք շուրջ 2 000 000 քնակչություն Հայաստանի Հանրապետությունում: Դուք տեսնում եք, որ հայ ժողովրդի մեծամասնության կենտրոնն այնուել է, և կարենք նրանց սովոր՝ ոչնչանալուց փրկելն է, և նրանց համար

ամենակարևորը Բաթումից երիվան զծի բաց լինելն է՝ որպեսզի մենք կարողանանք ուղարկել սնունդ, զինամթերք և պաշար 30 000-անոց հայկական բանակի համար և սնունդ՝ քաղաքացիական քնակչության համար մինչև հաջորդ բերքահավաք: Եվ երբ նրանք կազմավորվեն բատ Խաղաղության վեհաժողովում հայկական սահմանների հարցի որոշման՝ նրանք աստիճանաբար կշարժվեն ցած և կգրադադար Հայաստանի մասցած մասը:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Թույլ տվեք հենց այդուել մի հարց տալ: Մենք իմացանք այս առավոտ, որ զրեթե 16 000-անոց բրիտանական զորքը գրավել է և պաշտպանել Բաթումից Բարու երկարուղային գիծը:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այս:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Ես ձեր ասածից հասկանում եմ, որ մասնավորապես այն ինչի կարիքն ունենք այս դեպքում, դա միայն Բաթումից երիվան զիծը գրավելն ու պաշտպանելն է: Որքա՞ն է այդ տարածությունը՝ համեմատած Բաթումից Բարու տարածության հետ:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Սոտավորապես մեջտեղում է՝ մոտ մեկ երկրորդը:

Մենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈ. Կեսը: Այսպիսով, եթե որևէ բան պատահի, մենք ավելի քիչ զորքի կարիք կունենանք:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այս: Բրիտանացիներն ավելի մեծ թվով զորքեր են կենսորոնացրել Բարվում, բան ունեն ավելի արևմտաբում՝ Բաթումում:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Իրական հեռավորությունն ավելին է, քան մինչև Բարու՝ հեռավորության երկու երրորդը:

Պրն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Դա ոլորտաբույտ ճանապարհ է դեպի երիվան:

Մենատոր ՀԱՐԴԻՆԳ. Ճանապարհն անցնում է մոտավորապես այստեղից [ցույց է տալիս քարտեզի վրա]:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ես հասկացա՞ւ որիուն
Փաստրմաճյանն ասում էք, որ բրիտանացիները հազիվ թէ 300
կամ 400 հոգանոց զորք ունեին Հայաստանի Հանրապետություն
սահմանների ներսում, և դա էլ որպես կապող օղակ իրենց
Բարումի և Բարվի դիրքերի միջև:

Դրեն ԶԵՂՈՒԻՒԹ. Միակ հավելյալ զորախմբերը նրանք էին,
որոնք ուղարկվեցին ներքի՝ որպես պահակախումբ գնացքներում:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Դա ամբողջն է, երեք կամ չորս հարյուր
զինվոր:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Եթէ մենք այնտեղ գնաեն,
ստիպված կլինենք պահել զիծն ավելի մեծ թվով, քան դա: Եթի
խոսում եք Հայաստանի Հանրապետության տարածքում
բրիտանական զորամասերի մասին, դա միայն երկարություն
Հայաստանի տարածքով անցնող մասն է, բայց երկարություն՝ մինչև
Բարում ընկած հատվածը և Վրաստանի միջով անցնող և ներքի
դեպի Էրիվան շեղվող հատվածը ևս պետք է պահպանվի, այնպես
որ մենք չենք կարող թույլ տալ նրանց սահմանափակվել միայն
հայկական տարածքում: Նրանք պետք է ձգվեն մինչև Էրիվան,
ամեն դեպքում, և թերևս դեպի Հայաստանի արևելյան
սահմաններ: Այնպես որ սենատորն իրավացի է, ասելով որ
բրիտանացիների պահպանած հեռավորության շուրջ երկու
երրորդ մենք ստիպված կլինենք պահպանել:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք չե՞ք սպասում որեւ,
մատակարարման Բարվից:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Բարվի՞ց:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Այո:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ոչ, մատակարարումները կզան
այստեղից [ցույց է տալիս]:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք կարող եք նավթ ստանալ
Բարվից:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Մատակարարումները կզան
Բարումից:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Դուք ակնկալում եք, որ ձեր
մատակարարումները կզան Բարումից՝ Թիֆլիսի վրայո՞վ:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Այո, սը թիվ ու մեջ ուղարկում են:

Սենատոր ՀԱՐՄԻՆԳ. Ահա, զիծը: Ձեզ ենտարքքում է
Թիֆլիսի երկարուղային զիծը:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Եթէ ինձ թույլ տրվի ևս մեկ խոր ասել
—

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Որտեղից եք ձեր քերելու նավթը
ձեր բանակի համար՝ անհրաժեշտ ձեր շարժիչների և մնացած
ամեն ինչի համար, եթէ չպահպանեք բեռնափոխադրումը դեպի
Բարու:

Դրեն ՔԱՐՏԱՇՅԱՆ. Ես այդ հարցին կպատճիսների այս
կերպ՝ այստեղ ամերիկյան դրոշի ներկայությամբ թաթարների
հետ հարաբերությունները շատ հեշտ կհարթվեն, առանց Բարու
հասնելու: Եվ նաև, եթէ թույլ կտաք, ես կավելացնեմ, որ ուսների
վերաբերմունքը հայերի նկատմամբ շատ բարեկամական է, բայց
թաթարների և վրացիների վերաբերմունքը անբարյացակամ է:
Ուսումների վերաբերմունքը, անկասկած, բարեկամական է հայերի
նկատմամբ: Գեներալ Դենիկինը որոշ զինամթերք է ուղարկել
այստեղ: Ուսւ առաջնորդներն ասել են՝ իրենք զիտեն, որ
այստեղ: Ուսւ առաջնորդներն պետք է միանա Թուրքահայաստանի հետ, և
որ իրենք ոչ մի հիմնավոր պատճառ չունեն դա հայերից
թաթցնելու, քանի որ հայերը դրսորել են ճիշտ վերաբերմունք
Ուսաստանի նկատմամբ և որ նրանք միակ ժողովուրդն եր
այստեղ, ով հավատարիմ մնաց Ուսաստանին պատերազմի
ամբողջ լնթացքում:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍ. Դա ուսական սահմանի այդ
հառվածի յուրատեսակ պաշտպանություն կլիներ:

Դրն ՔԱՐՏԱՅԻՆ. Այս: Եվ՝ ի հավելումն դրան. Ռուսահայաստանը Ռուսաստանի համար ոչ մի այլ արժեք չի ներկայացնում, բացի այդ չափ տարածքից: Քանի դեռ այն Միջերկրականին հասնելու միջոց էր, այն արժեք ուներ: Բայց քանի դեռ դուք զիծն եք գծում, այստեղ [ցույց է տալիս] դուք կարող եք այն ավելի բարձր գծել, և այժմ, եթե Դարդանելը բաց կլինի Ռուսաստանի համար, Հայաստանը ռազմավարական արժեք չի ներկայացնի Ռուսաստանի համար: Այսպիսով, Ռուսաստանի համար՝ Հայաստանին ձգուելու այլևս որևէ արդարացված տնտեսական կամ այլ պատճառ չի լինի:

Որպես եզրակացություն, պրն նախագահ, ես ցանկանում եմ ինձ թույլ տալ թվարկել այն կետերը, որոնք, իմ համեստ կարծիքով, պետք է հաշվի առնվեն:

Առաջին՝ եթե մենք ուզում ենք որևէ օգնություն ցույց տալ հայերին, պետք է հայկական պաշտոնական մարմին ունենանք՝ հետո գործ ունենալու համար, և այդ հայկական մարմինը պետք է կառավարություն լինի, և, հետևաբար, եթե հնարավոր և ներկայացնենք առաջարկություններ. (ա) որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչվի որպես «դե ֆակտո» կառավարություն: Մենք պետք է գործերը վարենք կազմավորված և պաշտոնապես ճանաչված որևէ մարմին հետ, (բ) որ մենք պետք է անմիջապես ուղարկենք սնունդ, զինամթերք և պաշար 30 000 մարդոց բաղկացած բանակի համար, (զ) որ Էրիվան հասնելու համար մենք պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկենք Բարումից Էրիվան գիծը պահելու համար, (դ) որ միջոցներ ձեռնարկվեն քաղաքացիական բնակչությանը մինչև հաջորդ բերքահավաք կերակրելու համար, (ե) և որ բայց եր պետք է ձեռնարկվեն այստեղ հայ կամավորական գորք կազմավորելու համար՝ իրուսիփ հայերին օգնություն ուղարկելու համար, որպեսի՝ ըստ Խաղաղության վեհաժողովում հայկական սահմանների հարցի

որոշման նրանք կարողանան առաջանաբար ցած իշխել և գրադադարություններ Հայաստանի ամբողջ տարածքը:

Սենատոր ՀԱՐՄԻՆԴ. Դուք կարծո՞ւմ եք, որ այստեղ հայ կամավորական բանակ կազմավորելու մեջ որևէ դժվարություն կլինի:

Դրն ՔԱՐՏԱՅԻՆ. Ոչ: Հայ երիտասարդների կողմից մեծ հետարքություն կա այս հարցի վերաբերյալ:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ի՞նչ անելու համար:

Դրն ՔԱՐՏԱՅԻՆ. Կամավորական գորք ստեղծելու համար:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Օհ, այս:

Դրն ՔԱՐՏԱՅԻՆ. Որպես փաստ, Նյու Յորքի իմ գրասենյակ ամեն օր այցելում են բազմաթիվ երիտասարդներ, ովքեր ծառայել են ամերիկյան բանակում՝ օդաչուներ և այլք, կապիտաններ, լեյտենանտներ և շարքայիններ: Օրերս մի բանանա եք եկել գրասենյակ և պատմեց, որ ինքը հասել է մինչև Զիկագը և պարզել որ բազմաթիվ հայ երիտասարդներ թողել են իրենց աշխատավայրերը և սպասում են, որ իրենց կանչեն՝ ակնկալելով, որ նման շարժում կսկսվի:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ես նկատում եմ, որ ձեր կետերը թվարկելիս դուք ընթիւնքապես ոչինչ չասացիք զորամասերի մասին, որ պետք է հանդես գան ամերիկյան դրոշի ներքո:

Դրն ՔԱՐՏԱՅԻՆ. Այս, ես ընդգրկել էի այն առաջին առաջարկում՝ որ Բաթումից Էրիվան գիծը պետք է պահպանվի:

Սենատոր ՈՒԽԼՅԱՍՍՈՒ. Ես ձեզ սխալ էի հասկացել: Չատ լավ, ես ավարտեցի:

Դրն ՍՎԱՋԻՒ. Քանի հազար զորք դուրս կա միանգամից:

Դրն ՔԱՐՏԱՅԻՆ. Շուրջ չորս կամ հինգ զումարտակ կրավարարեր Բաթումից Էրիվան գիծը պահելու համար: Դա այն է, ինչ՝ որպես փաստ, ունեին բրիտանացիները: Մենք ունենք

տեղեկագիր գորքի թվի մասին, որ բրիտանացիներն ստիպում էին պահել՝ զիծը բաց պահելու համար՝ Թիֆլիսում, Բաքումում և Բաքվում:

Մենատոր ՈՒԽԵՍՍՍ. Այժմ չորսն անց քառն է: Կարծում եմ՝ մենք վերջացրել ենք: Այլևս ունկնդրման համար մարդ չկա՞:

Պրե ՍԱԼՔՈՒ. Այլևս ոչ ոք չկա: Ես ցանկանում եմ հայերի անունից ասել, որ մենք շնորհակալ ենք ենթահանձնաժողովին մեզ հնարավորություն ընձեռելու՝ Հայկական հարցը և հայկական իրադրության փաստերը ձեզ ներկայացնելու համար:

Պրե ՍՎԱԶԼԻ. Մենք ձեզ անշափ շնորհակալ ենք և ես կարծում եմ, որ այժմ մենք ավարտեցինք մեր գործը:

Պրե ՍՄԻԹ. Դրև նախազահ, հասկանալի է, որ այժմ փակվում է հանձնաժողովի կողմից վկայությունների ընդունումը:

Մենատոր ՀԱՐՄԻՆԳ. Մինչ այն վերաբացելու որևէ կարիք չին:

Պրե ՍՄԻԹ. Այո, այն վերաբացելու:

(Սրանով, կեսօրից հետո՝ ժամը 4:22, ենթահանձնաժողովը ցրվեց՝ բայ նախազահի կոչի):

(Մի քանի փաստաթղթեր և հաղորդումներ՝ ստացված լուսների ընթացքում և ավարտից հետո, նախազահի կարգադրությամբ տպագրվել են այստեղ՝ արձանագրության մեջ, հետևյալ տեսքով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՈՍԻՏԵ

Մեդիսոն պող. 1, Նյու Յորք, սեպտեմբերի 24, 1919 թ.

Հարգարժան ՁՈՆ ՇԱՐՓ ՈՒԽԵՍՍՍԻՆ,

Մենատ, Վաշինգտոն, Կ.Ծ.

ԻՄ ՍԻՐԵԼԻ ՍԵՆՍՈՐ ՈՒԽԵՍՍՍ,

Սույն նամակին ես կցում եմ այն հեռազրի պատճենը, որն ամերիկյան կոմիտեն այսօր ստացել է Պետական քարտողարության միջոցով՝ Կոստանդնուպոլիսի Հայոց Պատրիարքից, Հայ կաթողիկե պատրիարքարանի տեղապահից և Հայ բողոքական համայնքի ներկայացուցչից:

Հարգանքներով, ձեր՝¹⁹⁶

[Հետոսկիր Ամերիկյան կոմիտեին Հայոց Պատրիարքից, Հայ կաթողիկե պատրիարքարանի տեղապահից և Հայ բողոքական համայնքի ներկայացուցչից:]

Անկախ և միասնական Հայաստանի հաստատումը կանխելու նպառակով, թուրք ազիտատորները կազմավորում են զինված ուժեր, որոնք աջակցություն են ստանում կառավարության կողմից: Այս թուրք ազիտատորների կառավարությունը զինում է Հայաստանի Հանրապետության սահմանագծի, Աղրբեջանի և Թուրքահայաստանի մուսլիման բնակչությանը՝ Կովկասում կենտրոնացած հայերի վրա հարձակումներ գործելու նպատակով և հարմար առիթի են սպասում հայերին զանգվածային կոտորածի ենթարկելու համար՝ մինչ վեհաժողովի որոշումները կկարողանան իրազործվել դաշնակիցների կողմէց: Այս մարդկի շատ շրջաններում արդեն սպանել են բազմաթիվ հայ զյուլացիների, ովքեր չունեին պաշտպանության որևէ միջոց: Հայկական վիլայեթներում արհեստական եկույթ է հրահրվում թուրք ազիտատորների կողմից, ովքեր փորձում են նպաստել թուրքական կայսրության պահպանմանն իր ներկայիս տարածքում: Այս ազիտատորները նաև սպառնում են հետազա կոտորածներով, եթե դաշնակիցների կողմից հաշվի շառնվեն թուրքական կառավարության

¹⁹⁶ Սույն նամակն ուղարկողի անունը նամակի վերջում նշված չէ:

պահանջները: Նրանք հույս ունեն այս կերպ ազդել այն եզրակացությունների վրա, որ կարող են կայացվել Անտանտի երկրների կողմից: Այս արհեստական շարժումը ներկայացվել է դաշնակիցներին, բայց իրավիճակը վտանգավոր է և անհրաժեշտ է արագ ապահովել Հայկական հարցի լուծումն ու անհապաղ ռազմական միջոցներ ձեռնարկել մեր հայրենակիցների գոյությունը փրկելու համար: Հավատացած ենք, որ դուք անհապաղ կդիմեք ձեր մեծահոգի հանձնակատարին՝ առաջարկելով նրան ներկայացնել գործերի իրական վիճակը և հասնել անհապաղ միջամտության: Մենք կրկնում ենք, որ խորապես երախտապարտ ենք:

[Պետական քարտուղարին՝ Ամերիկյան առաքելությունից,
Փարիզ, 1919 թ. հոկտեմբերի 11-ի հեռագրի պատճենը]

Մենք ոչ մի հաղորդագրություն չունենք գեներալ Հարրոդից բացի այն, որ նա հավանաբար նավարկում է Կոնստանդնուպոլսից հոկտեմբերի 15-ին: Ի պատասխան մեպստեմբերի 25-ով թվազրված մեր հեռագրին՝ զնդապետ Հասկելը Թիֆլիսից ուղարկել է երեկ ստացված հետևյալ շրջագրված հեռագիրը.

«1. Նախատեսեք շարունակել օգնության աշխատանքները ձմռան ընթացքում:

2. Ծառ բանի կարելի է հասնել քաղաքականության միջոցով՝ որպես գերազույն հանձնաժողով՝ առանց գորքերի, սակայն դաշնակիցների փոքր ռազմական ուժ է անհրաժեշտ հաղորդակցության միջոցների հսկման և պաշտպանության, կարգուկանոնի հաստատման և բնականոն պայմանների ստեղծման համար:

Պահանջվում է ընդամենը ամերիկյան հետևակային զնդի համարժեքը: Այս գորագունը կարող է դառնալ միջուկ ոստիկանության համար՝ հավաքագրված հավատարիմ բնակչությունից՝ եթե հետազոտ ավելի մեծ ուժ պահանջվի:

3. Մերձավոր Արևելյի Նպաստամատույցի անձնակազմի կազմում են՝ 11 մշտական սպաներ, 14 գորացրված սպաներ, 20

տղամարդ և 25 կին:

4. Նպաստամատույցի բոլոր աշխատողները մնացել են Կարսում և Երիվանում, բայց նպաստամատույց աշխատանքները հետաձգվել են բուրբական սահմանի երկայերով և դեպի Աղրբեշան մի քանի շրջաններում՝ Հայաստանի այս մասերի գրավման պատճառով՝ ըրդերի ու քաթարների կողմից՝ բուրքերի օգնությամբ, ովքեր, ասում են՝ գորացրված են: Որևէ անձնական վտանգ որևէ տեղ ամերիկացիների համար չկա: Բրիտանական բոլոր գորքերը ետ են քաշվել Հայաստանից մի քանի ամիս առաջ՝ բացի քարոյական ազդեցության համար բողոքված մի քանի դիտորդներից, ովքեր նախանջեցին վերջերս՝ ինչն էլ նպաստել է բրդերի և թաթարների գործողություններին, ովքեր կարծում են, թե դաշնակիցները վերջնականորեն լրում են հայերին:

5. Օգնության պաշարները վտանգի մեջ չեն, չնայած մի փոքր քանակություն անուշադրության էր մատնված նախրան իմ Ժամանումը»:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՄՈՒԹՅՈՒՆ
Վաշինգտոն, 15 հոկտեմբերի, 1919 թ.

Նարզարժան ՈՒՈՒՐԵՆ Գ. ՀԱՐԴԻՆԳԻՆ,

Միացյալ Նահանգների սենատ

Սըր. Եթք սենատոր Ուիլյամսի կողմից ներկայացված Հայաստան գորքեր ուղարկելու բանաձևը քննարկող ձեր ենթահանձնաժողովը լսեց Ուիլյամ Ֆիլիպսին՝ պետական քարտուղարի օգնականին, պրականչությունը ինդուստրիալ ենթահանձնաժողովին ուղարկել ցանկացած հեռագիր, որ Պետական քարտուղարությունը կարող էր ստանալ զեներալ Հարրոդից կամ ցանկացած այլ տեղեկություն մուսահայաստանում իրադրության վերաբերյալ:

Ձեր ենթահանձնաժողովի ցանկությանը համապատասխան՝ պատիվ ունեմ սույնին կից փոխանցելու հոկտեմբերի 11-ով թվազրված

հեռազրի պատճենը՝ ստացված Փարիզում ամերիկյան առաքելությունից:
Արք, պատիվ ունեմ լինելու

Զեր խոնարհ ծառան

ՈՂԲԵՐԹ ԼԱՆՍԻՆԳ¹⁹⁷

Ներդիր. Փարիզում Սմերիկյան առաքելությունից ստացված
հոկտեմբերի 11-ով թվազրված հեռազրի պատճենը¹⁹⁸:

այս փաստաթուղթը Պետական քարտուղարությանը 1919 թ. հոկտեմբերը
17-ին, դոկտոր Բարբոնն ասում է. «Դրանում չկա ոչ մի բան, որը ևս
կփոխեի, եթե այն կրկին գրելու լինեի այսօր»:

Արք, պատիվ ունեմ լինելու

Զեր խոնարհ ծառան

ՈՂԲԵՐԹ ԼԱՆՍԻՆԳ

Ներդիր. 1919 թ. հունիսի 14-ին ծովակալ Բրիսթոլին դոկտոր
Բարբոնի կողմից ներկայացված գեկուց:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
Վաշինգտոն, 22 հոկտեմբերի, 1919 թ.

Հարգարժան ՌԻՄՄԵՆ Գ. ՀԱՐԴԻՆԳԻՆ,

Միացյալ Նահանգների Սենատ

Արք. սենատոր Ռիջամսի ներկայացրած՝ Հայաստանին
վերաբերող բանաձիր հետազ քննարկմանն անդրադառնալով, պատիվ
ունեմ ձեզ տեղեկացնելու, որ Աստվածաբանության դոկտոր¹⁹⁹,
Մերձավոր Արևելքում Ամերիկյան Խաղաղութանական կազմով կազմակերպության
տնօրեն պատվարժան Ջեյմս Լ. Բարբոնը, ով հենց նոր է վերադարձել այս
երկիր՝ Մերձավոր Արևելքում երկար ուղևորությունից հետո, Պետական
քարտուղարություն է ուղարկել գեկուցի պատճենը, որը նա հունիսի 14-
ին Կոնստանդնուպոլսում ներկայացրել է ծովակալ Բրիսթոլին:

Սույնին կից ձեզ եմ ուղարկում գեկուցի պատճենը: Փոխանցելով

¹⁹⁷ Բնագրում՝ Robert Lansing: Նրա մասին տե՛ս «Ծանոթագրություններ»
բաժնում:

¹⁹⁸ Նշված՝ հոկտեմբերի 11-ով թվազրված հեռազրի պատճենը բնագրում՝
համապատասխանաբար նաև սույն շարադրանքի մեջ նախորդում է Ռ.
Լանինգի նամակին:

¹⁹⁹ Բնագրում՝ «D. D.» հապակուսն է, ինչը նշանակում է Doctor of Divinity
Աստվածաբանության դոկտոր:

[Պատճեն]

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՉԱԿԱՏԱՐՆԵՐԻ
ԱՄԵՐԻԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Քրնգրեշքերև Հառուց, Քիկոն փ. 14, Բուրոն, Մասսաչուսեթս,
հունիս 14, 1919թ.

Ծովակալ ՄԱՐԿ Լ. ԲՐԻՍԹՈՒԼԻՆ,
Միացյալ Նահանգների ակազ ծովային սպա,
Թուրքիայի ամերիկյան դեսպանատուն, Կոնսուանդուպոլիս

Հարգելի սըր. ես հենց նոր եմ ակարտել Փոքր Ասիայում տեղական պայմանների ստուգման նպատակով կատարվող երկար ուղևորությունը: Անտոռիա, Հայաստան, Միջագետք, Կիլիկիա, Սիրիա և Պաղեստին: Ուղևորության ընթացքում ես ճանապարհորդել եմ շուրջ 5000 մղոն, որից շուրջ 2000-ը՝ աշտումեքնայով:

Այցելած գիշավոր վայրերի շարքում էին, որտեղ մեկից չորս օր ծախսել է հանդիպումների համար բոլոր դասերի մարդկանց հետ՝ ներառյալ դաշնակից և բնիկ պաշտոնյաներին, Կոնֆան, Ադանան, Տարսուսը, Մարաշը, Այնթավը, Հալեպը, Բեյրութը, Դամասկոսը, Հայֆան, Երուսաղեմը, Ուրֆան, Մարդինը, Դիարբերրիբը, Հարպուտը, Մալաթիան, Սվագը, Կեսարիան, Թոլկատը, Ամասիան, Մարզվանը և Սամսոնը:

Բարդադի երկաթուղով Թել Աբյադի²⁰⁰ անցնելուց հետո՝ մինչև Սև ծով համեմելը, ես գուտ թուրքական տարածքում էի՝ դաշնակիցների ուղմական նվազումներով սահմանափակված և պաշտպանված տարածքից դուրս: Ուղևորության այս վերջին մասը ձեռնարկվել է՝ գեներալ Ալենբիի լիակատար համաձայնությամբ, ում թույլտվությունը ստացվել է անձնապես՝ Կահիրեում:

²⁰⁰ Tell Abyad (քնաքրում՝ Tel Abiad)՝ քաղաք Սիրիայի հյուսիսում՝ Թուրքիայի հետ սահմանին:

Զուտ թուրքական տարածքներում ես բարձրակարգ քաղաքավարի վերաբերմունքի եմ արժանացել բոլոր թուրք պաշտոնյանների կողմից, որոնցից յուրաքանչյուրը մրցակցում էր մյուսների հետ հատուկ քաղաքավարություն և պատիվներ ցույց տալու ասպարեզում: Ամեն առիթով հնարավորություն էր ստեղծվում տեղի հայ համայնքների հետ հանդիպումների համար, որոնցից մի քանիսը նշանակվել էին տեղի քաղաքացիական իշխանությունների կողմից: Մյուսներն ինքնակազմավորված էին: Պարբերական և շատ բարեհամբույր հանդիպումներ էին կազմակերպվում նաև թուրք քաղաքացիական և ռազմական պաշտոնյաների հետ բոլոր այցելած վայրերում:

Թույլ տվեք մի քանի դիտարկումներ անել որոշ եզրակացությունների վերաբերյալ, որոնցից անհնար է թվում խուսափել:

1. Հայ ազգը սարսափելի ցնցված էր իր առաջատար, կառուցողական մտածողների մեծամասնության կորստից, ովքեր թուրքիայում էին վայրագությունների պոտրկման պահին:

2. Ես ոչ մի տեղ թուրք պաշտոնյանների կողմից չեմ տեսել՝ տեղի ունեցածի համար ափսոսանքի անգամ մի ակնարկ, ուր մնաց թե զջման, և քրիստոնյաների հետ արդար վարդելու ոչ մի իրական նպատակ չկա:

3. Ես բազմիցս լսել եմ նրանց երկար արդարացումներն իրենց գործողությունների վերաբերյալ՝ այն հիմնավորմամբ, որ դա անհրաժեշտ էր նրանց ինքնապաշտպանության համար: Շատերը պնդում էին, որ թուրքերն ավելի շատ են տուժել, քան քրիստոնյաները, և ավելի շատ դրսից աջակցության կարիք ունեն:

4. Ազգային ատելության ոգին թուրքերի մոտ զերիշխում է ամենուր, դրանից զերծ չեն նաև հայերն ու հույները:

5. Թուրքերն ամենուր՝ դաշնակիցների կողմից գրավված տարածքների շրջանակներում և դրանցից դուրս, անընդհատ սպառնում են հայերին ավարտել չորս տարի առաջ անավարտ մնացած զարհութելի գործը:

6. Թուրքերը լավ գիտած են, մինչդեռ հայերը ոչ մի պաշտպանություն չունեն:

7. Դաշնակիցների գրաված տարածքներից դուրս հայերը չեն համարձակվում պահանջել որևէ իրավունք, կամ զիշումներ, կամ իրենց

ունեցվածքը ետ վերադարձնել, այլ ապրում են ծայրահեղ սարսափի մեջ ամեն օր։ Իրենց միակ խնդրանքն անվտանգության գրավականն է։

8. Տեղի բաղադրական վայիները, մութասարիֆները և այլք, թույլ մարդիկ են՝ որոնք չեն կարողանում հաղթահարել թշնամական պայմանները։ Նրանցից շատերը՝ հավանաբար բոլորը, գտնվում են աղաների և նախկին պաշտոնյաների իշխանության ներքո, ովքեր դեռևս հակված են շարունակելու քրիստոնյաների բնաշնչման նախազիծը։

9. Եթե հայերին կարողանան տալ համապատասխան անվտանգության գրավական, նրանք արագորեն կվերականգնվեն ցնումից և կդառնան ինքնակառավարվող ու ինքնուրույն։ Առանց այս գրավականի նրանք անհույս են։

10. Եթե ամբողջ Թուրքիան արագ չգրավվի համապատասխան ուղղմական ուժի կողմից, լուրջ վտանգ կա, որ բառամայ վաղեմության վայրագությունները կարող են վերսկսվել ավելի մեծ քափով։

11. Տարբերակ չկա, որ բուրքերը կարող են հայերին տալ կառավարություն, որը կարող է ընդունելի լինել՝ նրանք ոչ կարողություն ունեն, ոչ էլ մտադրություն դա անելու։

12. Հայաստանին անվտանգ կառավարություն տալով միայն մեր նպաստամատույց կոմիտեի աշխատանքը կարող է հաջողությամբ պահպել։ Թուրքիայում քրիստոնյա ազգերը բնաշնչման վտանգի մեջ են, եթե անհապաղ գործողություն չձեռնարկվի։ Այդ պատճառով եւ կոչ ևս անում մանրակրկիտ բննարկել այստեղ արծարծված կետերը։

Պատիվ ունեմ մնալու։

(ստորագրված) ԶԵՅՍՈՒ Լ. ԲԱՐԹՈՆ
Մերձավոր Արևելյան Ամերիկյան նպաստամատույցի
հանձնաժողովի տնօրին։

SUMMARY

The Armenian statehood, which was restored in May 1918, overcame numerous difficulties from the very first days. By the end of First World War I, the encouraging position of the Allies towards the Armenians became the basis for serious expectations of the young independent Republic. After the war, one of the main goals of the foreign policy of the Republic of Armenia was to obtain independence for reorganized Armenia or a mandate under the auspices of one of the Great Powers – preferably the United States. However, the aspirations of the Armenians in this period again did not coincide with the interests of the Great Powers. Neither the European allies nor the United States of America, which joined their camp, took any steps in this direction. Contrary to the expectations of the newly created Republic of Armenia, none of the Great Powers officially recognized it.

The United States, in its manifestations towards the Republic of Armenia, continued the humanitarian policy pursued since the end of the XIX century and widely implemented at the beginning of the XX century, in particular, during the World War. It was only in January 1919, with the beginning of the Paris Peace Conference, that political tendencies regarding the Armenian problems were observed in the US politics. At a meeting held in Paris on January 30, the US President W. Wilson and the Allies decided on the complete separation of Armenia from the Ottoman Empire. However, only a few months later, at the meeting of May 14, 1919, the Council of Four decided to transfer the mandate of Armenia to the United States.

After that, the process of consistently delaying of the decision on the Armenian question on the part of the American administration began, which was neither an accident nor the result of circumstances. It

was a well thoughtout, far sighted policy that gradually reduced the possibilities of Armenia's mandate. Since the end of June 1919, after the signing of the Treaty of Versailles, the question of the mandate of Armenia for the United States of America was actually closed.

At the same time, however, the American consulates, intelligence officials and the Relief Committee representatives reported from Caucasus to Washington that, due to the dire consequences of the British military retreat and the Muslim uprisings, Armenia could be saved only by the American interference. The proposals of American diplomats to send small American troops to Armenia were supplemented by Resolution N 106 on measures to provide assistance to Armenia, developed under the leadership of Senator J. Sh. Williams and presented to the Senate on September 9, 1919. The latter, under the heading "Maintenance of Peace in Armenia", was to be discussed in the Senate Committee on Foreign Relations. In the period from September 27 to October 10, 1919, hearings on this resolution were organized in the Subcommittee of the Senate Committee on Foreign Relations.

During the four sessions of the Subcommittee, chaired by Senator W. Harding, thirteen witnesses were heard, including representatives of the Armenian community of the United States, US government officials of various instances, American missionaries, as well as members of the Government of the Republic of Armenia.

As a result of the hearings, it became clear to the senators – members of the Subcommittee, that urgent, immediate actions are necessary to maintain peace in Armenia. However, the Subcommittee, in particular its chairman Senator W. Harding, did not intend to make any urgent decision and take practical steps, despite the fact that immediately after the end of the hearings he promised to take exact steps as soon as possible. For many months, W. Harding delayed submitting his findings and proposals to the Senate Committee on Foreign Relations.

Only on May 15, 1920, the resolution of J. Sh. Williams on sending troops and ammunition to the Republic of Armenia to assist the Armenians and maintain peace in Armenia was presented at a meeting of the US Senate. The resolution, which was completely changed and thereby lost its original meaning, was rejected. The refusal of military assistance to

Armenia, in turn, had an impact on the "natural" course of the adoption of the Armenian mandate by the USA. On June 1, 1920 the Senate, while recognizing the need to provide Armenia with assistance, nevertheless, following the political and economic interests of the United States, rejected the mandate of Armenia.

In conclusion, expressing deep gratitude to the American people, the US government, and the prominent figures of the Relief Committee for their assistance in saving the Armenians, we note that for the United States, which was "belatedly" – during World War I, involved in the development of "Europe-East" historical relations, ensuring one of the main political roles after World War I was much more important than the question of the existence of a small Christian nation – the Armenians, not to mention the issues of autonomy, independence or statehood of Armenia.

The US policy towards the Armenians was predetermined by a specially developed political line, according to which the American government, even after joining World War I, did not declare war on Turkey, and it was Turkey that broke off diplomatic relations with it. In the fall of 1919, the US state involvement in the defense of the Armenians did not seem realistic since its state policy agenda lacked such an issue.

РЕЗЮМЕ

Восстановленная в мае 1918 г. армянская государственность с первых же дней существования преодолевала многочисленные трудности. Уже к концу Первой мировой войны обнадеживающая позиция Союзников по отношению к армянам стала основанием для серьезных ожиданий молодой независимой Республики. Одной из основных целей внешней политики Республики Армения после войны было получение независимости для реорганизованной – единой Армении или мандата под покровительством одной из великих держав – предпочтительно США. Однако стремления армян в данный период вновь не совпадали с интересами Великих держав. Ни европейские союзники, ни пополнившие их лагерь Соединенные Штаты Америки практически не предпринимали никаких шагов в этом направлении. Вопреки ожиданиям новосозданной Республики Армения, Великие державы даже не признавали ее официально.

США в отношении к Республике Армения продолжали гуманитарную политику, проводимую еще с конца XIX века и широко проводимую в начале XX века, в частности, в годы Первой мировой войны. Только в январе 1919 г., с началом Парижской мирной конференции, в политике США начали наблюдаться политические тенденции относительно армянских проблем. На совещании, состоявшемся 30 января в Париже, президент США В. Вильсон вместе с союзниками принимает решение о полном отделении Армении от Османской империи. Тем не менее, только несколько месяцев спустя, на заседании от 14 мая 1919 г. Совет четырех решил передать США мандат Армении. Вслед за этим начался процесс последовательного откладывания принятия решения относительно

Армянского вопроса со стороны американской администрации, что не было ни случайностью, ни результатом обстоятельств. Это была хорошо разработанная дальновидная политика, которая постепенно уменьшала возможности мандата Армении.

С конца июня 1919 г., после подписания Версальского договора, вопрос опеки Армении для США был закрыт. Тем не менее, в то же время сотрудники американских консульств, разведки и Комитета помощи на Кавказе сообщали в Вашингтон, что из-за тяжелых последствий военного отступления британцев и мусульманских восстаний, Армению могло спасти лишь американское вмешательство.

Предложения американских дипломатов об отправке в Армению малочисленных американских войск дополнила резолюция N 106 о мерах по оказанию помощи Армении, разработанная под руководством сенатора Дж. Ш. Уильямса и представленная Сенату 9 сентября 1919 г. Последняя, под заголовком «Сохранение мира в Армении», должна была быть обсуждена в сенатской комиссии по внешним отношениям. Относительно отмеченной резолюции в период с 27 сентября по 10 октября 1919 г. были организованы слушания в Подкомитете Комитета Сената по международным отношениям. В ходе четырех заседаний подкомитета под председательством сенатора У. Гардинга выступили тринадцать свидетелей, среди которых были представители армянской общины США, государственные чиновники США различных инстанций, американские миссионеры, а также члены правительства Республики Армения.

В результате слушаний сенаторам – членам подкомитета стало ясно, что для сохранения мира в Армении необходимо обеспечить неотложные, незамедлительные действия. Однако подкомитет, в частности, ее председатель – сенатор У. Гардинг вовсе не собирался принимать какое-либо срочное решение и осуществить практические шаги, несмотря на то, что по окончании слушаний обещал предпринять конкретные шаги в кратчайшие сроки. На протяжении месяцев У. Гардинг откладывал представление своих выводов и предложений в Комитет Сената по международным

отношениям.

Только в следующем году, 15 мая 1920 г. резолюция Дж. Н. Уильямса об отправке войск и боеприпасов в Республику Армения для оказания помощи армянам и сохранения мира в Армении была представлена на заседании Сената США. Полностью измененная и утратившая первоначальный смысл резолюция была отклонена.

Отказ в военной помощи Армении, в свою очередь, оказал влияние на «естественный» ход принятия мандата Армении Соединенными Штатами Америки. 1 июня 1920 г. Сенат, признавая необходимость оказания помощи Армении, тем не менее, следуя политическим и экономическим интересам США, отверг мандат Армении.

В качестве заключения, выражая признательность американскому народу, правительству США, известным деятелям Комитета помощи за оказанную помощь в спасении армян и подчеркивая гуманность многих американских государственных деятелей, отметим, что для США, подключившейся в процессе развития исторических отношений «Европа-Восток» только к концу Первой мировой войны, обеспечение одного из главных мест в послевоенных международных отношениях было во много раз важнее чем вопрос существования небольшого христианского народа – армян, не говоря уже о вопросах автономии, независимости или государственности Армении.

Политика США в отношении армян была предопределена детально разработанной политической линией, согласно которой правительство США, даже присоединившись к мировой войне, не объявило войну Турции, а дипломатические отношения с ней разорвала именно Турция. Государственное вмешательство США в дело защиты армян осенью 1919 года было маловероятным, поскольку в повестке государственной политики Соединенных Штатов такой необходимости не было.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազինալդո-ի-Ֆամի Էմիլիո (Emilio Aguinaldo y Famy, 1869-1964) – ֆիլիպինցի քաղաքական գործիչ: Ֆիլիպինների առաջին նախագահը 1899-1901 թթ.: 1896 թ. Ազինալդոն զիսավորել է Խալանիայի դեմ ապստամբությունը, որը սակայն ձախողել է: Երբ սկսվեց խապանա-ամերիկյան պատերազմը (1898), նա համագործակցեց ամերիկացիների հետ և իր շուրջը ձևավորեց 20000-անոց բանակ, որն ընդգրկվեց կովում ամերիկացիների կողմից և մի քանի մարտերում զախցախեց խապանական շոկատներին: Հրավիրված ֆիլիպինյան կոնգրեսը հոչակեց Ֆիլիպինների հանրապետությունը, որի նախագահ դարձավ Ազինալդոն: Երբ ԱՄՆ-ն խապանացիներին հաղթելուց հետո որոշեց գրավել Ֆիլիպինները, Ազինալդոն նրան վճռական դիմադրություն ցույց տվեց: 1901 թ. մարտին նա պարտվեց, գերեվարվեց և ընկերների համար անսպասելիորեն հայտարարվեց, որ իրաժարվում է պայքարից ու դառնում հավատարիմ ԱՄՆ-ին: Շատերն այդ արարքը համարեցին դավաճանություն: Ֆիլիպինցիների պայքարն ամերիկացիների դեմ շարունակվեց առանց նրա: 1945 թ. նա ձերբակալվել է ամերիկյան զորքերի կողմից, մեղադրվել ճապոնական իշխանությունների հետ համագործակցության մեջ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ 1942-1944 թթ., սակայն հետագայում ազատ է արձակվել համընդհանուր համաներմամբ:

Էլլենբի Էդմունդ Հենրի Հայնման (Edmund Henry Hynman Allenby, 1861-1936) – անգլիացի ֆելդմարշալ: Գլխավորել է Առաջին համաշխարհային պատերազմի մի շարք հաղթական ճակատամարտեր՝ մասնավորապես Պաղեստինի ճակատում, իրականացրել է նաև Երուսաղեմի գրավումը: Պատերազմից հետո ստացել է ֆելդմարշալի կոչում և վիկոնտի տիտղոս: 1919-

1925 թթ. անցկացրել է Մերձավոր Արևելյում որպես Եգիպտոսի և Սուլանի գերազույն հանձնակատար՝ մինչև վերջինների անկախություն ստանալը:

Ամերիկյան նպաստամատույց վարչություն (American Relief Administration; ARA) —ամերիկյան օգնության առաքելություն, որը ստեղծվել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Եվրոպայի և Մերձավոր Արևելի տուժած բնակչությանն օգնություն ցուցաբերելու նպատակով: Կազմակերպությունը հիմնել է ԱՄՆ-ի Կոնգրեսը 1919 թ. փետրվարի 24-ին՝ 100 միլիոն դոլար բյուջեով: Վարիչ է նշանակվել Շ. Հովերը: Հատկացված գումարը օգտագործվել է օճանդակելու Եվրոպայի ժողովուրդներին, ինչպես նաև Փոքր Ասիայում գտնվող Թուրքիայի հպատակ հայերին, սիրիացիներին, հոյներին և այլ քրիստոնյա ու հրեա ազգանակչությանը: 1919 թ. ապրիլ-օգոստոս ամիսների ընթացքում օգնություն՝ ութ նաև ապրանք է ստանում նաև Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

ԱՄՆ-ի Պարենի վարչություն (The U. S. Food Administration) — ստեղծվել է 1917 թ. օգոստոսի 10-ին՝ Պարենի և վառելիքի վերահսկողության մասին օրենքին համապատասխան և լուծարվել 1920 թ. օգոստոսի 21-ին: Վարչությունը պատասխանատու էր արտասահմանում ԱՄՆ-ի բանակի կառավարման և դաշնակիցների պարենային պաշարների համար, Առաջին համաշխարհային պատերազմին Միացյալ Նահանգների մասնակցության ժամանակ: Նրա կարեոր խնդիրներից էր ամերիկյան շուկայում ցորենի գների կայունացումը: Վույրո Վիլսոնը հասկանում էր, որ իրեն անհրաժեշտ է վարչության հմուտ և դինամիկ առաջնորդ ունենալ, որպեսզի ապահովի սննդամթերքի կառավարման արդյունավետությունը: Նրա խորհրդական Էդվարդ Հաուզը առաջարկել է Հերբերտ Հովերին, որն ավելի վաղ գլխավորում էր Բելգիայում օգնության

տրամադրման հանձնաժողովը: Դեմոկրատ Վիլսոնը համաձայնվել է և Հովերը նշանակվել է, թեև նա հանրապետական էր:

Աշեր Պլեքեն Շուզաս (Clarence Douglas Ussher, 1870-1955) — ամերիկացի բժիշկ, միսիոներ և Հայոց ցեղասպանության ականատես: Ապրել և աշխատել է Հայաստանում 1898-1921 թթ.: Եղեռնի տարիներին միսիոներական աշխատանքներ է իրականացրել Վանի նահանգում, միջազգային հանրությանն է հաղորդել այնուն կատարվող ջարդերի, մասնավորապես՝ 55.000 հայերի կոտորածի մասին: Վանի կոտորածների հիման վրա 1917 թ. Աշերը հրատարակել է «Ամերիկյան բժիշկը Թուրքիայում: Պատերազմի և խաղաղության մեջ ունեցած արկածների պատում» հուչագրական աշխատությունը, որը մինչ օրս համարվում է Հայոց ցեղասպանության առավել մանրամասն վկայություններից մեկը: Աշերը բացահայտորեն մեղադրում էր թուրքական կառավարությանը՝ վերջինիս արարքները որպեսուն որպես ցեղասպանություն, հայ ժողովրդի համակարգված քաջնորդություն: 1919 թ. մայիսից մինչև 1921 թ. հունիսի կեսը նա դեկավարում էր Մերձավոր Արևելյում նպաստամատույցի բժշկական ծառայությունը Երևանում: 1919 թ. հունիսին համագործակցում է Քինգ-Քրեյնի հանձնաժողովի հետ, տրամադրում անհրաժեշտ թարմ տեղեկություններ:

Արտեն Թորգում (Երվանդյան Արշակ) — Հայ ազատագրական շարժման գործիչ, բուլղարական և ռուսական բանակների սպա: Ծնվել է 1880-ական թվականների վերջին Կեսարիայում, ընտանիքի հետ տեղափոխվել Բուլղարիա: Ծագմական կրթություն է ստացել Բուլղարիայում, Շվեյցարիայում և Ֆրանսիայում, ծառայել շվեյցարական բանակում: 1912-1913 թթ. բուլղարական բանակի կազմում մասնակցել է Բալկանյան առաջին պատերազմին, արժանացել շրանշանների: Երբ բուլղարացիները միացան Կենտրոնական Երկրներին՝ Անտանտի դաշնակիցների դեմ

Ելնելով, Թորգոմը պաշտոնաթող եղավ բուլղարական բանակից և լրեց Բուլղարիան: Անցնելով Ռուսաստան նա մասնակցեց Առաջին համաշխարհային պատերազմին ռուսական ստորաբաժանումների կազմում: Կովեց նաև գեներալ Բրուսիլովի հրամանատարության ներքո: Ավելի ուշ անցնում է Կովկաս, միանում հայկական գնդերին և մասնակցում Վանի գրավմանը: Թորգոմը ծառայեց ռուսական բանակում մինչև 1917 թ., ստացավ շրանշաններ: Նա ակտիվ մասնակցություն ունեցավ հայկամարդության ջոկատների ստեղծմանը: 1918 թ. սկզբին որպես գնդի հրամանատար նա ուղարկվում է Էրզրում, որտեղ փետրվարին ազդարարում է Հայաստանի անկախությունը և մասնակցում քաղաքի ինքնապաշտպանությանը: Քաղաքի հանձնումից հետո՝ նահանջող հայկական ուժերի շարքերում նա շարունակում է մասնակցել պաշտպանական գործողություններին: Տողորված Հայաստանի անկախության հոչակման զաղափարով, նա շարունակում է պայքարել վերջինիս համար մինչև 1918 թ. մայիսի կեսերը, երբ ի նպաստ այդ զաղափարի գործունեություն ձեռնարկելու համար մեկնում է Սոսէվա, հասնում Եվրոպա, իսկ հետագայում՝ ԱՄՆ:

Բարթոն Ջեմս Լևի (James Levi Barton, 1855-1936) – աստվածաբանության դոկտոր, հայտնի միսիոներ, Ամերիկյան օտարերկրյա ներկայացուցությունների հանձնակատարների խորհրդի ավագ քարտուղար: 1885 թվականից գործունեություն է ծավալել Օսմանյան կայսրության տարածքում, երկար տարիներ ապրել հայերի միջավայրում, եղել Խարբերդի Արմենիա (հետագայում՝ Եփրատ) քղեցի նախագահ: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նա զբաղեցրել է նաև Հայկական ու Սիրիական նպաստամատույցի, այնուհետև՝ Սերճավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի (ՄԱԱՆԿ) նախագահի պաշտոնները: Պատերազմից հետո՝ 1919 թ. սկզբին, նպաստա-

մատույցի առաջին առաքումների հետ նա վերադարձել է Կոստանդնուպոլիս, շրջագայել ոչ միայն Կիլիկիայում, Արևմտյան Հայաստանում, այլև Կովկասում: Համագործակցել է Քինդ-Քրեյնի հանձնախմբի հետ: 1919 թ. ամռան վերջին նա հեռազրում է ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաներին՝ հայերին անհրաժեշտ անհապաղ ռազմական օգնության առնչությամբ: Լինելով մանդատի կողմնակից՝ Բարթոնը հաճախ հանդես է եկել Հայաստանի անջատման և լիակատար անկախության կոչով:

Բլիս Թասքեր Հոուարդ (Tasker Howard Bliss, 1853-1930) ամերիկյան բանակի սպա, որը 1917 թ. սեպտեմբերի 22-ից մինչեւ 1918 թ. մայիսի 18-ը զբաղեցրել է այդ բանակի շտաբի պետի պաշտոնը: Նա նաև դիվանագետ էր, որը մասնակցում էր Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո խաղաղ բանակցություններին և Վերսալի պայմանագրի համահեղինակներից էր՝ ԱՄՆ-ի կողմից:

Բրիսթոլ Մարկ Լամբերտ Բրիստոլ (Mark Lambert Bristol, 1868-1939) – Առաջին աշխարհամարտի ընթացքում զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ, 1918 թ. հուլիսին նշանակվել ժամանակավոր գերծովակայ: 1919 թ. հունվարի 8-ին ռազմածովային նախարարությունը Բրիսթոլին ուղարկում է Կոստանդնուպոլիս, իբրև Արևելյան Միջերկրականում Միացյալ Նահանգների ռազմածովային ուժերի պետ: 1919 թ. մայիսին Փարիզի խաղաղության բանակցությունների ամերիկյան պատվիրակությունը նրան նշանակել է «Կոստանդնուպոլսում Միացյալ Նահանգների ժամանակավոր գլխավոր քաղաքական սպա», դրանով իսկ նրան դարձել Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի ընդհանուր հյուպատոս Գ. Բ. Ռավնդալի ավագը: 1919 թ. օգոստոսի 12-ին նա նշանակվել է Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի գլխավոր կոմիսար և այս պաշտոնը զբաղեցրել մինչև 1927 թ. հունիսի 25-ը: Բրիսթոլը հայկական բաղդանքների և Հայաստանի

ամերիկյան մանդատի բացահայտ հակառակորդն էր:

Գուլեսյան Մովսես Հ. – ամերիկահայ հասարակական գործիչ, խոշոր դրամատուրգ և գործարար: Նա նաև գրող էր, հեղինակ “England’s Hand in Turkish Massacres” և “Armenian Refugees” գրքերի: Լինելով ԱՄՆ-ի Հայ ազգային միության անդամ՝ նա ներկայացնում էր Բուստոնի հայ համայնքը: 1919 թ. Սենատում անցկացված լուսմերից հետո միությունը խօսում է կապը Գուլեսյանի հետ և նրան արժանացնում խստ քննադատության՝ միության տեսակետները ենթահանձնաժողովին չներկայացնելու համար: ԱՄՆ ներգաղթած Գուլեսյանի հաջողության պատմությունը, որը կապված էր նաև նրա կողմից առաջնորդված՝ “USS Constitution” (Old Ironides) պատմական ռազմանավը մետաղի կույտի վերածվելուց փրկելու շարժման հետ, շարադրված է Այրն Հ. Բըրնհամի (Irene H. Burnham)՝ “Not by Accident. The Story of Moses H. Gulesian’s Career” գրքում:

Գուրկիներ (the Ghurkas) – Մեծ Բրիտանիայի (սկզբնապես՝ գաղութային զորքեր) և Հնդկաստանի զորքերն էին, որոնք հավաքագրվում էին նեպայան կամավորներից: Ներկայումս գուրկիների թվաքանակը կազմում է 2500 զինվոր և սպա: Անգլիայի թագավորական զորքներ կարող են մտնել 17 տարեկանից փոքր պատանիներ: Նվազագույն ծառայության ժամկետը հինգ տարի է: Լոնդոնում Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության շենքի մոտ գուրկին հուշարձան է տեղադրված: Գուրկիներին բնորոշ է խստագույն կարգապահությունը, երդման համարձակությունն ու հավատարմությունը: Ժամանակին գուրկիների քաջությունը, անհավանական կատարի դիմադրությունը, ինքնուրույնությունը և դիմացկունությունը ասաշեցրել էին անզինացի զաղութարարներին: Շնորհիվ գուրկիների դիմադրության՝ Նեպալը փրկվեց Մեծ Բրիտանիայի զաղութքը դառնալուց: Բրիտանացիները 1815 թվականից սկսեցին գուրկիներին իրենց

զինված ուժերում ներգրավել: Վերջիններս ծառայում էին նաև Հնդկաստանի բանակում: Երկու երկրներում գուրկիները չին համարվում վարձկաններ: Բրիտանական բանակի կազմում գուրկիները մասնակցել են հակազդութային ապստամբությունների ճնշմանը Հնդկաստանում և Աֆղանստանում: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գուրկիները կովել են նաև օսմանյան զորքերի կազմում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գուրկիները բրիտանական զորքերի կազմում կովել են և Ֆրանսիայում, և Մերձավոր Արևելքում:

Դիմիտրին Ռադկո (1859-1918) – բուլղարացի գեներալ 1904-1907 թթ. բուլղարական բանակի գլխավոր շտաբի պետ: Հայտնի է դարձել 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմի ժամանակ: 1914 թվականից Բուլղարիայի դեսպանորդն էր Սանկտ Պետերբուրգում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում Բուլղարիայի՝ Գերմանիայի կողմում հանդես գալուց ի վեր, անցել է ռուսական հպատակության և կամավոր ծառայության ռուսական բանակում: Նրան շնորհվել է գեներալ-լեյտենանտի կոչում: Հետևողականորեն դեկավարել է 8-րդ բանակային կորպուսը, 3-րդ բանակը, սկիբրյան կորպուսը և 12-րդ բանակը: Համաշխարհային պատերազմի փորձություններն անցնելով՝ Ռադկո Դիմիտրիներ գնդակահարվել է բուլղարական կողմից Պյատիգորսկում 1918 թ:

Թուլ (Toul) - կոմունա Ֆրանսիայի հյուսիս-արևելքում՝ Լոթարինգիայի Մյորք և Մողել դեպարտամենտում:

Թուլին Աբրահամ (Abraham Tulin) - ազգությամբ ռուս ամերիկյան իրավաբան, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում եղել է ԱՄՆ-ի բանակի հետևակի կապիտան: 1919 թ. փետրվարից կցվել է Եվրոպայի և Մերձավոր Արևելքի պատերազմական գոտու տուժած բնակչության օգնության Ամերիկյան

նպաստամատույց վարչության գլխավոր տնօրեն Հ. Հովհերին: Նույն տարվա մարտ ամսին ուղարկվել է Հայաստան՝ վարչության աշխատանքների ապահովման համար անհրաժեշտ հետազոտություններ կատարելու նպատակով: Գործուդումը տևել է շուրջ վեց ամիս:

Լանցինգ Ռոբերտ (Robert Lansing, 1864-1928) ամերիկացի իրավաբան և պետական գործիչ, որը 1915-1920 թթ. գրադեցրել է ԱՄՆ-ի Պետական քարտուղարի պաշտոնը նախազահ Վ. Վիլսոնի վարչակազմում: Համարելով, որ Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի հաղթանակը կսպառնար ԱՄՆ-ի շահերին, նա հանդես էր գալիս Անտանտի նկատմամբ բարյացակամ չեղորության, իսկ հետո նաև Գերմանիայի դեմ պատերազմին ԱՄՆ-ի անմիջական մասնակցության օգտին: 1919 թ. գլխավորել է ամերիկյան պատվիրակությունը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում: Դեմ էր հանդես գալիս Վերսալի պայմանագրի մեծ մասին և թերահավատորեն վերաբերվում ինքնորոշման վիլսոնյան սկզբունքին:

Լեփսիոս Յոհաննես (Johannes Lepsius, 1858-1926) – գերմանացի արևելագետ, աստվածաբան, բողոքական միսիոներ, հասարակական գործիչ, հումանիստ: Հիմնարքել է “Orient mission” կազմակերպությունը՝ Արևելքում քրիստոնյաներին օգնելու նպատակով: Էր գործունեությամբ փորձում էր կանխել հայերի կոստրածներն Օսմանյան կայսրությունում և համաշխարհային հանրության ուշադրությունը՝ հրավիրել արևմտահայերի ցեղասպանության վրա: 1896 թ. հրատարակել է «Հայաստանը և Եվրոպան: Մեղադրագիր քրիստոնյա մեծ տերություններին և կոչ քրիստոնյա Գերմանիային» գիրքը՝ նվիրված 1890-ական թվականների համիլյան կոստրածներին:

Լիման ֆոն Սանդերս Օտոս Վիկտոր Կարլ (Otto Viktor Karl Liman von Sanders, 1855-1929) – գերմանացի գեներալ, որն

Առաջին աշխարհամարտի ընթացքում ծառայել է որպես Օսմանյան կայսրությունում ռազմական խորհրդատու և զորամիավորումների հրամանատար: 1918 թ. նա ստանձնել է Մինայի և Պաղեստինի ռազմաճակատում մարտնչող օսմանյան բանակների հրամանատարությունը:

Լոգան Ջեյմս Ա. Լոգան Ջր. (James A. Logan Jr.) – ամերիկյան բանակի գնդապետ: Փարիզի խաղաղության վեհաժնդուվի աշխատանքների ընթացքում եղել է ամերիկյան պատվիրակության խորհրդական, իսկ 1919 թ. ամռանից՝ Ամերիկյան նպաստամատույց վարչության անդամ: Գերագույն տնտեսական խորհրդի օգնության բաժնում նա եղել է ԱՄՆ-ի ներկայացուցիչը: Հայտնի է որպես պետական դեպարտամենտում 1919-1924 թթ. ծառայող ոչ պաշտոնական դիվանագետ: Առաջին աշխարհամարտի և հաջորդող տարիների ընթացքում կատարած բարեխիլճ աշխատանքի և բացառիկ ծառայությունների համար պարզեցրել է ԱՄՆ-ի կառավարության հատուկ մեղալով:

Լուդենդորֆ Էրիխ Ֆրիդրիխ Վիլհելմ (Erich Friedrich Wilhelm Ludendorff, 1865-1937) – գերմանական հետևակի գեներալ, «Տոտալ պատերազմի» հայեցակարգի հեղինակ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից եղել է շտաբի պետ, իսկ 1916 թ. օգոստոսից փաստացի դեկավարել գերմանական բանակի բոլոր գործողությունները: Պատերազմը վճռորոշ հարվածով ավարտելու նրա փորձը ձախողվել է և արդյունքում Լյուդենդորֆը 1918 թ. հոկտեմբերի 26-ին հրաժարական է տվել:

Խալիլ Սամի-Բեյ (Halil Sami Bey, 1866-1925) – Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան բանակի գնդապետ, արևելյան ճակատի բռնքական զորքերի հրամանատար: Գեներալ Օտոս Լիման ֆոն Սանդերսի հետ ռազմական ծրագրերին առնչվող վեճի արդյունքում 1915 թ. հուլիսին ստիպված էր հեռանալ բանակից: Հետազոտում հանդես է եկել

որպես աղբքեջանական թաթարների հրամանատար:

Ծիածան դիվիզիա (Rainbow Division) – ԱՄՆ-ի բանակի Ազգային զվարդիայի 42-րդ հետևակային ստորաբաժանումն է՝ հայտնի «Ծիածան դիվիզիա» անվան տակ: Ստեղծվել է 1917 թ., եթե ԱՄՆ-ի կողմից պատերազմ հայտարարվեց Գերմանիային և սկսվեց ամերիկյան Ազգային զվարդիայի վերաձևավորումը, եթե արագ բանակ ստեղծելու նպատակով կազմավորում էին նոր ստորաբաժանումներ: Մայոր Մար Արթուրի առաջարկով, ստեղծվում է նև մեկ դիվիզիա՝ մի բանի նահանգների ստորաբաժանումներից: Ռազմական նախարար Ն. Դ. Բեյքերը հավանություն տալով այդ առաջարկին նկատում է, որ նման միավորումը «ձգվելու է ամբողջ երկրով մեկ՝ ինչպես ծիածանը»: Դիվիզիան ստեղծվել է 26 նահանգներում և Կոլումբիայի շրջանում գտնվող ստորաբաժանումների ընդգրկմամբ: Անվանումն արմատավորվել է, իսկ Մար Արթուրը ստացել գնդապետի կոչում՝ որպես դիվիզիայի շտաբի պետ: 42-րդ հետևակային դիվիզիան մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին (1917-1918), Երկրորդ համաշխարհային պատերազմին (1943-1945) և 1947 թվականից մինչ մեր օրերը ներգրավված է Ահարեկչության դեմ գորբալ պատերազմում (GWOT- Global War on Terrorism): Դիվիզիայի կենտրոնակայանը Նյու Յորքում է:

«Կազուս բելլի» (լատ.՝ *casus belli*) – պատերազմի առիթ, տերմին, որը գործածվում է միջազգային իրավունքում XIX դարի վերջերից: Այն՝ ընդհանուր առմամբ ինչ-որ մի իրադարձություն, պատերազմ հայտարարելու անմիջական առիթ լինելով, կարող է որևէ պետության կողմից պաշտոնապես հայտարարվել պատերազմ սկսելու պատճառ:

Համա (Hama) – քաղաք Սիրիայի կենտրոնական հաստակությամբ՝ Օրոնտես գետի ափին, գտնվում է Հոմսից 47 կմ դեպի

հյուսիս և մայրաքաղաք Դամասկոսից 209 կմ հեռավորության վրա:

Ջայդ Ջորջ Բ. (George B. Hyde) – ամերիկացի բժիշկ, Ամերիկյան Կարմիր խաչի ծառայության կապիտան: Մերձավոր Արևելքում օգնության կոմիտեի աշխատանքների շրջանակ-ներում 1919 թ. ամրան ամիսներին և աշնան սկզբին եղել է Օսմանյան կայսրության տարածքում՝ Կիլիկիայում, մասնաւորապես Այնրապում:

Հայ-սիրիական ամերիկյան նպաստամատույց հանձնախումբ (The American Committee for Armenian and Syrian Relief) – 1915 թ. հոկտեմբերի 1-ից հայ կարիքավորների օգտին դրամահավաք էր իրականացնում ԱՄՆ-ում ստեղծված Հայկական նպաստամատույց հանձնախումբը (Armenian Relief Committee): Մինչ այդ Մերձավոր Արևելքում գործում էին երկու նմանօրինակ կոմիտեներ՝ Սիրիայի և Պաղեստինի նպաստույց հանձնախումբը և Պարսկական պատերազմի նպաստի հիմնադրամը: 1915 թ. նոյեմբերին այս երկու կոմիտեները, միավորվելով Հայկական նպաստամատույց հանձնախումբին, ձևավորում են Հայսիրիական ամերիկյան նպաստամատույց հանձնախումբը, որը 1918 թվականից կրում է «Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտե» անվանումը: Կոնգրեսի՝ 1919 թ. օգոստոսի 6-ի որոշմամբ, այդ կոմիտեն վերանվանվում է Մերձավոր Արևելքի նպաստամատույց (Near East Relief):

Հասկել Ուիլյամ Նաֆել (William Nafew Haskell, 1878-1952) – ամերիկյան բանակի գնդապետ, Առաջին աշխարհամարտից հետո զբաղված է եղել Օումինիայում նպաստամատույց աշխատանքների դեկավարությամբ: 1919 թ. հուլիսի 5-ին Հինգի խորհուրդը՝ որում ընդգրկված էին Փարիզի խաղաղության վեհաժողովի գլխավոր դաշնակից տերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի Արտաքին

գործերի նախարարները, ընդունեց բանաձև, ըստ որի՝ Ու. Ն. Հասկելը Հայաստանում նշանակվում էր Գերագույն Կոմիտար: Նա Հայաստանում գործում էր հանուն դաշնակից հինգ պետությունների, ուստի համագործակցում էր Հայաստանում, Վրաստանում, Աղրբեջանում և Կոստանդնուպոլսում այդ երկրների բոլոր ներկայացուցիչների հետ: Հասկելը, միաժամանակ, նշանակված էր Հայաստանում կարգավորելու այն բոլոր նպաստամատուց միջոցառումները, որոնք իրականացնում էին այնտեղ գործող տարրեր կազմակերպությունները: Որոշ ժամանակ անց նրա լիազորությունները տարածվում են նաև Վրաստանի և Աղրբեջանի վրա: Նա Հայաստան է մեկնում 1919 թ. հուլիսի 13-ին և ծառայության մեջ մնում մինչև 1920 թ. օգոստոսի 17-ը: 1921-1923 թթ. Ամերիկյան նպաստամատուց վարչության շրջանակներում՝ որպես տնօրեն Հասկելը ծառայել է նաև Խորհրդային Ռուսաստանում: 1920-ական թվականներին նա զիսավորել է Նյու Յորքի Ազգային գվարդիան: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Հասկելը Քաղաքացիական պաշտպանության վարչության դեկանարն էր, իսկ պատերազմից հետո կրկին զրադարձ է քաղաքացիական նպաստամատուց աշխատանքով:

Հարրորդ Ջեյմս Գաթրի (James Guthrie Harbord, 1866-1947) – ամերիկյան բանակի գեներալ-մայոր, 1919 թ. նշանակվել է Եվրոպայում ամերիկյան եքսպեդիցիոն ուժերի զիսավոր շտարի պետ: Նույն թվականի օգոստոսի 25-ից մինչև հոկտեմբերի 23-ը դեկանարել է ամերիկյան զինվորական առաքելությունը, որը Փարիզի խաղաղության վեհաժողովի 1919 թ. մարտի 20-ի որոշմամբ ԱՄՆ-ի կառավարությունը ուղարկել է Հայաստան և Մերձավոր Արևելք: Նրա առջև խնդիր էր դրված հետազոտել ու գեկուցագիր ներկայացնել այն տարածաշրջանների քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ

պայմանների մասին, որոնք կայող էին հետաքրրություն ներկայացնել ԱՄՆ-ի համար: Առաքելության արդյունքներն ամփոփվեցին Հարրորդի «Մերձավոր Արևելքի իրավիճակը» գեկուցագրում, որտեղ նա առաջ էր քաշել միասնական մանդատի գաղափարը՝ նպատակահարմար չգտնելով Հայաստանի առանձին մանդատի ստանձնումը ԱՄՆ-ի կողմից:

Հարդինգ Ուորեն Գամալիել (Warren Gamaliel Harding, 1865-1923) – ամերիկացի պետական գործիչ, ԱՄՆ-ի 29-րդ նախագահը (04.03.1921-02.08.1923) Հանրապետական կուսակցությունից: Երկար տարիներ իրքի թերթի հրատարակիչ աշխատել է Մերիլոնում (Օհայո): 1915-1921 թթ. ընտրվել է սենատոր Օհայոյի նահանգից: Կուսակցության կողմից նա առաջարկվել է 1920 թ. նախագահական ընտրություններում, որտեղ հանրապետական-ները համոզիչ առավելությամբ հաղթանակ են տարել: Հարդինգը հանկարծամահ է եղել 1923 թ. օգոստոսի 2-ին Սան Ֆրանցիսկոյում (Կալիֆորնիա)՝ արևմտյան նահանգներում շրջադարձական ժամանակ: 1918 թ. Հարդինգը դարձել է Սենատի միջազգային հարցերով հանձնաժողովի անդամ, 1919 թ. մարտին ստորագրել է Ազգերի լիգայի դեմ խնդրագիրը, որպեսզի առանց Կոնքրեսի համաձայնության այն չկարողանա բանակն օգտագործել արտասահմանում, իսկ արդեն սեպտեմբերին հանդես է եկել մանդատի դեմ ուղղված ելույթով: Նախ իրքի Սենատի ենթահանձնաժողովի, այնուհետև երկրի նախագահ, Հարդինգը իր հրապարակային ելույթներում երբեմն համակրանքով է արտահայտվել Հայաստանի և հայ ժողովրդի մասին: Այդուհանդերձ, նրա վարած պետական ինքնամփուման եվրոպական գործերից ԱՄՆ-ի մելուսացման քաղաքականությունը, անվճռականությամբ և պասսիվ դիրքորոշմամբ արտահայտվել է նաև Հայկական հարցում:

Հեյն Հովարդ (Howard Heinz, 1877-1941) – Ամերիկյան

պարենի վարչության աշխատակից, եղել է վերջինիս տնօրենը Կոստանդնուպոլսում: Օգնության հատկացում է կազմակերպել թե՝ Թուրքիայում և թե՝ Բաղկաններում: Համագործակցել է Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության բարեգործական կոմիտեի հետ: 1919 թ. ապրիլի վերջին Հուվերի հրամանով Կովկաս կատարած տեսչական այցի շրջանակներում եղել է Հայաստանում և դարձել այնտեղ տիրող՝ սովոր, մահացության ու թշվառության սարսափելի իրավիճակի ականատեսք:

Հիշքոք Գիլբերտ Մոնել (Gilbert Monell Hitchcock, 1859-1934) – ամերիկացի կոնգրեսական (1903-1911) և Դեմոկրատական կուսակցությունից ընտրված սենատոր՝ Ներքասկան նահանգից (1911-1923), “Omaha World-Herald” թերթի հիմնադիրը: 1918-1919 թթ. Հիշքոքը, լինելով Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ՝ Ազգերի Լիգայի և Վերսալի պայմանագրի ջերմեռան կողմնակիցն էր:

Հոմս (Homs) – քաղաք Սիրիայի կենտրոնում, գտնվում է Օրոնտես գետի հովտում: Դամասկոսից հեռու է 162 կմ՝ դեպի հյուսիս, Հալեպից՝ 192 կմ դեպի հարավ:

Հուվեր Հերբերտ Քլարկ (Herbert Clark Hoover, 1874-1964) – ամերիկացի պետական և քաղաքական գործիչ, խոշոր արյունաբերող, 1921-1928 թթ. առևտորի նախարար, 1929-1933 թթ. ԱՄՆ-ի 31-րդ նախագահ Հանրապետական կուսակցությունից: 1938 թ. Քլարկը հանդիպել է Հիտլերի հետ և ողջունել «մյունխենյան քաղաքականության»: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նա աշխատել է որպես նախագահի հատուկ հանձնակատար: 1919-1923 թթ. զիսավորել է «Ամերիկյան նպաստամատույց վարչությունը» (American Relief Administration), որի շրջանակներում գործել է նաև «Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեն» և 1919-1931 թթ. նյուրական մեծ օգնություն է կազմակերպել պատերազմից տուժած հայ ժողովրդի ու Հայաս-

տանի համար: Փարիզի խաղաղության վեհաժողովում (1919-1920) Հուվերը վերապահությամբ է վերաբերվել Հայաստանի մանդատը ստանձնելու ԱՄՆ-ի պարտավորվածությանը և գերադասությունը տվել նյուրապես և բարոյապես սատար կանգնելու գաղափարին:

Մալրում Մ. Վարդան (1883-1967) – ամերիկահայ ազգային, հասարակական գործիչ, իրավաբան, գրող: Նրա՝ ԱՄՆ-ում ապրող հայերի մասին՝ “The Armenians in America” աշխատությունը հրատարակվել է 1919 թ.: Ներկայացնելով Բոստոնի հայ համայքը նա անդամակցում էր Ամերիկայի հայ ազգային միությանը:

Մալրում Ջեյմս Արատոն Մալոլմ (James Aratoon Malcolm, ծնվ. 1868թ.) – ազգությամբ հայ բրիտանա-իրանական ֆինանսիստ, գեներալ վաճառական և լրագրող: 1916 թ. սկզբին կաթողիկոս Գևորգ V-ի կողմից նա նշանակվել է հայկական ազգային պատվիրակության հինգ անդամներից մեկը՝ Լոնդոնում պատերազմի ընթացքում և հետո Հայկական հարցը ներկայացնելու և արյունավետ բանակցություններ վարելու համար:

Մեյն Ջոն Հանսոն Թոմաս (John Hanson Thomas Main, 1859-1931) – ամերիկացի գիտնական, ինչ լեզուների մասնագետ, Այովայի գրինել քոլեջի պրոֆեսոր, որտեղ 1892 թվականից դասավանդել է հունարեն: Հետազայում եղել է քոլեջի նախագահի պաշտոնակատար, ֆակուլտետի դեկան, իսկ 1906 թվականից մինչև իր մահը՝ նախագահ: Համաշխարհային պատերազմից անմիջապես հետո եղել է Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի անդամ: 1918 թ. մարտից մինչ 1919 թ. հուլիսը որպես նպաստամատույցի աշխատակից եղել է Հայաստանում, Սիրիայում, Թուրքիայում:

«Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե», Ամերկում (American Committee for Relief in the Near East) –

ամերիկյան բարեգործական ընկերություն: Զեավորվել է Հայսիրիական ամերիկյան նպաստամատույց հանձնախմբի (American Committee for Armenian and Syrian Relief) հիման վրա 1918 թ., կրելով «Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտե» անվանումը: 1919 թ. օգոստոսի 6-ի Կոնքրետի որոշմամբ այդ կոմիտեն վերանվանվում է Մերձավոր Արևելքի Նպաստամատույց (Near East Relief): Ամերկում ստեղծվել է Մերձավոր Արևելքի երկրների՝ պատերազմից տուժած և կարիքավոր բնակչությանը պարենով, հազուստով և դեղորայքով օգնելու նպատակով: Հայաստանում գործել է 1919 թ. մայիսից և շարունակել գործունեությունը նաև խորհրդային իշխանության օրոք:

Մըքթոյ Ֆրանկ Ռոս (Frank Ross McCoy, 1874-1954) – ԱՄՆ-ի բանակի սպա: Ծառայել է Ֆիլիպիններում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: 1917 թ. դարձել է Եվրոպայում ամերիկյան էքսպելիցիոն ուժերի զիսավոր շտաբի անդամ, 1918-1919 թթ. եղել ամերիկյան էքսպելիցիոն կորպուսի տրանսպորտի տնօրեն: 1919 թ. նա ծառայել է Հայաստանում որպես ԱՄՆ-ի ռազմական առաքելության շտաբի պետ: 1938 թ. թողել է զինվորական ծառայությունը, քաղաքացիական գործունեության ասպարեզում եղել արտաքին քաղաքականության ասոցիացիայի և Հեռավորարենյան հանձնաժողովի նախագահ:

Սուեր Ջեյմս (James Monroe, 1758-1831) – ամերիկացի քաղաքական և պետական գործիչ, իրավաբան, դիվանագետ, ԱՄՆ-ի իիմնադիր հայերերից մեկը, հինգերորդ նախագահը (1817-1825): Դեմոկրատական-Հանրապետական կուսակցության անդամ Մոնրոն, այսպես կոչված, Վիրջինիայի դինաստիայի նախագահների վերջին նախագահն էր: Լուիզիանայի գնման կազմակերպիչներից և արտաքին քաղաքական հայեցակարգի մշակողներից մեկը, որը ստացել է «Մոնրոյի ուսմունք»

անվանումը: Մոնրոյի դոկտրինայի առանցքը՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկայում ելքոպական զաղութատիրությանը հակազդելու քաղաքականությունն էր: Նա եղել է նաև ԱՄՆ-ի Սենատի անդամ (09.01.1790-29.03. 1794), Վիրջինիայի 12-րդ նահանգապետը (19.12.1799-01.12.1802), Ֆրանսիայում (28.05.1794-09.09.1796) և Մեծ Բրիտանիայում (18.04.1803-26.01. 1808) ԱՄՆ-ի դեսպան, յոթերորդ պետական քարտուղարը (02.04. 1811-04.03. 1817) և ութերորդ ռազմական նախարարը (27.09.1814-02.03. 1815):

Սորգենթաու Հենրի (Henry Morgenthau, 1856-1946) – ամերիկացի դիվանագետ, 1913-1916 թթ. ԱՄՆ-ի դեսպանն Օսմանյան կայսրությունում, դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, դրան անդրադարձել իր հուշերում: Նա մերժել է ռազմական անհրաժեշտությամբ հայերի տեղահանության թուրքական վարկածը և ապացուցել, որ երիտրուրքական պարագությների նպատակը հայ ժողովրդի իսպառ ոչնչացումն էր: Սորգենթաուն նաև դատապարտել է հայերի հալածանքների նկատմամբ ելքոպական տերությունների անստարերությունը, որն իր հերթին խրախուսել է բուրք ջարդարաններին:

Սուլի Բենջամին Բ. (Benjamin B. Moore) – ամերիկյան բանակի սպա, կապիտոն: 1919 թ. մարտի 17-ից մինչև հոկտեմբերի 20-ը նշանակվելով Թիֆլիսում ամերիկյան քաղաքական-հետաքրննչական խմբի ղեկավար՝ գործուղվել է Անդրկովկաս: Նույն թվականի հունիսին Փարփզի վեհաժողովի ամերիկյան պատվիրակության համար պատրաստում է «Ամերիկյան քաղաքական-հետաքրննչական առաքելությունն Անդրկովկասում» գեկույցը: 1919 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածն անցկացնում է Երևանում և որպես եզրահանգում՝ հեռագրում պետքարտուղար Ռ. Լանսինգին այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունն արտաքին ռազմական օգնության կարիք ունի: Օգոստոսին Կոստանդնուպոլիս՝ Ս.

Բրիսթոլին ուղարկած հաշվետվություններում նա ընդգծում է, որ թարարական գրոհները չեն հրահրվում հայկական կառավարության կողմից: Մուրն արտահայտվում էր Զանգեզուրն ու Արցախը Հայաստանի կազմում տեսնելու օգտին:

Յարրոու Երնեսթ (Ernest Yarrow, 1876-1939) – ամերիկացի քրիստոնյա միսիոներ, աստվածաբանության դոկտոր, Հայոց ցեղասպանության ականատես: 1904-1924 թթ. եղել է Ամերիկյան օտարերկրյա առաքելությունների վարչության անդամ: 1919 թ. Սերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի գլխավոր տնօրեն Թիֆլիսում: 1920 թ. օգոստոսի 1-ից ընդունել է օգնության հարցերով գերազոյն հանձնակատարի պաշտոնը: Նպաստամատույցի տնօրինության աշխատանքները շարունակել են Երևանում մինչև 1924 թ.:

Նյու Շարժ Ստյուարտ (Harry Stewart New, 1858-1937) – ամերիկացի քաղաքական գործիչ, լրագրող, խաղանա-ամերիկյան պատերազմի վետերան: 1900-1912 թթ. եղել է հանրապետականների Ազգային կոմիտեի անդամ՝ 1907-1908 թթ. զբաղեցրել վերջինիս նախազահի պաշտոնը: Նյուն վերադարձել է քաղաքականություն 1916 թ., երբ ընտրվել է ԱՄՆ-ի Սենատի անդամ Ինդիանա նահանգից: Սենատում նա զբաղեցնում էր Տարածքների հանձնաժողովի և Տարածքների ու կղզիների հարցերով հանձնաժողովի նախազահի պաշտոնը: Նախազահ Ռուրեն Գ. Տարդինգի կողմից 1923 թ. նա նշանակվել է կառավարության գլխավոր փոստարարի պաշտոնում, իսկ 1925 թ. վերանշանակվել այս նույն պաշտոնում նախազահ Քելվին Քուլիջի կողմից: Քուլիջի վարչակազմի գործունեության ավարտից հետո Նյուն դադարել է զբաղվել ակտիվ գործունեությամբ:

Շելվուդ Սեսիլ Ռոբերտ, լորդ (Robert Cecil of Chelwood, 1864-1958) – անգլիացի քաղաքական գործիչ, լորդ Ռ. Սուլսբերիի որդին: 1906-1923 թթ. Համայնքների պալատի անդամ

պահպանողական կուսակցությունից, մի շարք կառավարություններում զբաղեցրել է նախարարի և այլ պատասխանատու պաշտոններ: Հետևողականորեն պաշտպանել է հայ ժողովրդի շահերը: 1918 թ. հոկտեմբերին Սեսիլը նշել է, որ հայերը վաստակել են ազատազրկելու և անկախ դառնալու իրավունքը: Նա հայտարարել է, որ Հայկական հարցը փաստորեն կարող է լուծվել միայն Հայաստանի մանդատն ԱՄՆ-ին կամ Ֆրանսիային հանձնելու դեպքում, ընդ որում, ենթամանդատային տարածք համարելով բոլոր հայկական վեց նահանգները: Դեմ է եղել 1919 թ. Հայաստանից անզիւդական զորքերի դուրսբերմանը: Զգուել է Հայաստանն ընդունել Ազգերի լիզայի կազմում:

Պերշինգ Ջոն Չոզեֆ (John Joseph Pershing, 1860-1948) – ամերիկյան բանակի գեներալ, խապանա-ամերիկյան և Առաջին համաշխարհային պատերազմների մասնակից: Երբ ԱՄՆ-ն Առաջին համաշխարհային պատերազմում ընդգրկվեց Անտանտում, Ջոն Պերշինգը նշանակվեց Ֆրանսիայում ամերիկյան արշավախմբերի հրամանատար: Պատերազմից հետո նա մեծ ժողովրդականություն է ձեռք բերել ԱՄՆ-ում: 1919 թ. ԱՄՆ-ի Կոնգրեսը լիազորել է երկրի նախազահին նրան շնորհել ամերիկյան բանակում բարձրագույն՝ ԱՄՆ-ի բանակների գեներալի կոչումը (այդ կոչումը ստեղծվել է հատուկ Պերշինգի համար և հետագայում շնորհվել է միայն Ջորջ Վաշինգտոնին հետմահու, 1976 թ.):

Պողոս Նուրար Փաշա (1851-1930) – հայ ականավոր քաղաքական գործիչ, Եզիդակոսի վարչապետ Նուրար Փաշայի որդին: Պողոս Նուրարը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիրներից է և առաջին նախազահը: Որպես արևմտահայերի՝ Ազգային պատվիրակության ղեկավար, 1919 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության պատվիրակության հետ ներկայացրել է հայերի շահերը Փարիզի խաղաղության

վեհաժողովին:

Ջերարդ Զեյմս Ուոթսոն (James Watson Gerard, 1867-1951) – ամերիկացի իրավաբան, դիվանագետ, հասարակական գործիչ: 1908 թվականից նա ծառայել է Նյու Յորքի Գերագույն դատարանում: Զերարդի առատաձեռն ֆինանսական աջակցությունն օգնել է հնարավոր դարձնել Վ. Վիլսոնի՝ ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը, ինչի արդյունքում 1913 թ. նա նշանակվել է Խսանիայում ԱՄՆ-ի դեսպան: Սակայն ավելի ուշ՝ նոյն թվականին դրա փոխարքն նա ուղարկվել է Գերմանիա, որտեղ իբրև ամերիկյան դեսպան ծառայել է մինչև 1917 թ. զարունք՝ ԱՄՆ-ի մասնակցությունն Առաջին համաշխարհային պատերազմին: 1917 թ. հուլիսին նա ամբողջությամբ հեռացել է դիվանագիտական ծառայությունից, հրատարակել մի շարք մենագրություններ: Զերարդը հայ ժողովորի շահերի և Հայաստանի մանրասի շատագովներից էր, Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի նախագահը:

Ջերուիթ Հ. Ջ. (H. C. Jaquith) – Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի քարտուղարի օգնական: Առաջին անգամ Մերձավոր Արևելք է մեկնել 1919 թ. ամռանը՝ որպես Կիրակնօրյա դպրոցի հանձնախմբի դեկանքար: 1920 թ. Զեկուիթն ու Մերձավոր Արևելքի բժշկական ծառայության տնօրեն դոկտոր Ռիվյամ Վ. Փիթը մեկնում են Ծնև, որտեղ՝ Ազգերի լիգայում հանդես են զալիս ի նպաստ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության: 1921 թ. ապրիլից նա նշանակվել է Կոստանդնուպոլսի մասնաճուղի կառավարիչ-տնօրեն:

Ռավնդալ Ջ. Բ. (G. B. Ravndal) – ամերիկացի դիվանագետ, 1917-1919 թթ. և 1919-1924 թթ. եղել է ԱՄՆ-ի գլխավոր հյուպատոսը Կոնստանդնուպոլսում: 1918 թ. նոեմբերից մինչև 1919 թ. հունվար գրադեցրել է նաև Կոնստանդնուպոլսում ԱՄՆ-ի գերագույն հանձնակատարի պաշտոնը:

Թուզվելտ Թեոդոր Լրուսելը (Theodore Roosevelt Jr., 1858-1919) – ամերիկացի գրող, բնագետ, հետախույզ, պատմաբան և քաղաքական գործիչ, Խաղաղության Նորելյան մրցանակի դափնեկիր (1906 թ.), ԱՄՆ-ի 26-րդ նախագահ 1901-1909 թթ.: XX դարում որպես Հանրապետական կուսակցության առաջնորդ առաջադիմական հասարակության համար եղել է «շարժիչ ուժ»:

Ռութեն, ռուսիններ (Ruthenians) – ռուսական կամ արևելասլավոնական ժողովուրդ, որն ապրում է Ռուսականի արևմուտքում, Ալյովակայի արևելքում, Մերձական Վոևոդինայում, Լեհաստանի հարավ-արևելքում, Հունգարիայի հյուսիս-արևելքում և Ռումինիայի հյուսիս-արևելքում: Եթեմն դիտվում է որպես առանձին ժողովուրդ, իսկ եթեմն՝ Ռուսականի ժողովրդի ենթաճյուղերից մեկը:

Սուլք-Սիրի ռազմական դպրոց – Սուլք-Սիրի հատուկ ռազմական դպրոցը (École spéciale militaire de Saint-Cyr) բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը զբաղվում է ֆրանսիական բանակի և ժանդարմերիայի համար սպայական կադրերի պատրաստմամբ: Դպրոցը հիմնադրվել է 1802 թ. Նապոլեոն Բոնապարտի կողմից Ֆոնտենբլոյում՝ Ֆրանսիական հեղափոխության ժամանակ լուծարված քաղաքուրական ռազմական դպրոցի փոխարեն: Դպրոցն անվանումը ստացել է 1806թ. Փարիզի Սեն-Սիր-Լեկոլ արվարձան տեղափոխվելուց հետո: Գերմանիայի հետ պատերազմում Ֆրանսիայի պարտությունից հետո դպրոցը տարհանվել է Ֆրանսիայի հարավ՝ Էրան-Պրովանս, իսկ 1942 թ. ընդհանրապես դադարել է գոյություն ունենալ: 1945 թ. դպրոցը վերաբացվել է Շառլ դը Գոլի կողմից Հեր քաղաքում (Նորմանդիա): Կրթությունն այստեղ՝ ձևավորելով ու զարգացնելով սպային հատուկ մշակույթ, ապահովում է ռազմական և ակադեմիական՝ սոցիալական, քաղաքական ու հումանիտար ոլորտի գիտելիքներ: Դպրոցի կարգախոսն է՝

«Սովորում են, որ հաղթեն» (Ils s'instruisent pour vaincre): Մեն-Միրի շրջանավարտների թվում են Ֆրանսիայի 11 մարշալ, Ֆրանսիական ակադեմիայի վեց անդամ և պետության երեք դեկավար (Պատրիս Մակ-Մահոն, Անրի Ֆիլիպ Պետեն, Շառլ դը Գոյ), ինչպես նաև երանելի Շառլ դը Ֆուկոն և Պուշկինի մարդասպանը՝ ժորժ Դանտեսը:

Ուիլուգբի Միթ (Willoughby Smith) – Թիֆլիսում ԱՄՆ-ի հյուպատոսն Առաջին համաշխարհային պատերազմից առաջ:

Ուիլտեր Ջորջ (Walter George Smith, 1854-1924) – ամերիկացի հայտնի իրավաբան, քանիինոց տարի եղել է Ֆիլադելֆիայի Ամերիկյան կարույկ պատմական ընկերության անդամ և նրա հինգերորդ նախագահը (1899-1900): Լինելով երիտասարդ փաստաբան՝ Միթը հաջողության է հասնում դատական պրակտիկայում: 1915 թ. Ամերիկայի Կարույկ համալսարանը նրան շնորհել է իրավունքի դոկտորի պատվավոր կոչում: Միթը Փենսիլվանիայի փաստաբանների կոլեգիայի անդամ էր: 1917-1918 թթ. նա ընտրվել է Ամերիկայի Փաստաբանների ասոցիացիայի նախագահ, 1919 թ. եղել Մերձավոր Արևելքում նպաստամատույցի հանձնակատարներից մեկը:

Ավազի Միերան (Ավազյան, Ավազլը, 1863-1935) – հայ ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, գրող, իրապարակախոս, իրավաբան, դիվանագետ: Ազակցել է Հնչակյան կուսակցությանը (1887), եղել Վերակազմյալ Հնչակյան (1896), ապա միացյալ Ռամկավարազատական (1921) կուսակցությունների հիմնադիր-դեկավարներից: Մինչ 1908 թ. ԱՄՆ տեղափոխվելն ու այնուեղ հասարակական-քաղաքական եռանդուն գործունեություն ծավալելը, նա նմանատիպ շարժում է ծավալել նաև Եվրոպայում: Դեռևս 1888 թ. Լոնդոնում նա իրատարակել է «Հայաստան» թերթը, որի էջերում Հայ դատն

առաջին անգամ Եվրոպային են ներկայացրել ժամանակի անգլիացի և ֆրանսիացի քաղաքական և հասարակական մի շարք հայտնի գործիչներ: Նա մասնակցել է Եվրոպայի հեղափոխական շարժումներին՝ ձգտելով Հայկական հարցը ծանոթացնել օտարներին և հայասեր բարեկամներ ձեռք բերել, Եվրոպական և ամերիկյան մամուլում հրատարակել է հասարակական-քաղաքական բնույթի հայերեն, անգլերեն, ֆրանսերեն բազմաթիվ հոդվածներ: Մ. Ավազյանը եղել է 1917 թ. մարտին Բոստոնում հիմնադրված հայ առաջին լոբբիստական կազմակերպության՝ Ամերիկայի Հայկական ազգային միության նախագահը, Փարիզի Հայկական ազգային պատվիրակության ներկայացուցիչը Վաշինգտոնում:

Քենիզելոս Էլեֆթերիոս Կիրիակոս (Eleftherios Kyriakou Venizelos, 1864-1936) – հույն քաղաքական և պետական գործիչ, լրագրող, քարգմանիչ, իրավաբան և հեղափոխական, 1910-1933 թթ. բազմից զբաղեցրել է վարչապետի պաշտոնը: Վենիզելոսի հայցքները տատանվում են լիբերալ հանրապետական և պահպանողական միապետական մոտեցումների միջև, բայց միշտ տարբերվում են ծայրահեղ ազգայնականությամբ: Թուրքական բնապետության դեմ պայքարում նա հետևողականորեն ձգուել է հայ-հունական համագործակցության: 1913 թ. Հունաստանից զգալի քանակությամբ զենք է ուղարկել Զեյթուն՝ հայերին օգնելու նպատակով: Հայաստանի Հանրապետության հոչակումից հետո հայ-հունական հարաբերությունները Վենիզելոսի նախաձեռնությամբ սկսուած են քաղաքական և հասարակական բնագավառներում: Մեծ ջանքեր է գործադրել 1919 թ. պատմական Պոնտոսի տարածքում հիմնվելիք հունական պետության և Հայաստանի Հանրապետության ֆեդերացիա ստեղծելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արևմտյան սահմանները միացյալ ուժերով պաշտպանելու համար:

Վիլսոն Վուդրո Թոմաս (Woodrow Thomas Wilson, 1856-1924) - ամերիկացի քաղաքական գործիչ, ԱՄՆ-ի 28-րդ նախագահ (1913-1921) Դեմոկրատական կուսակցությունից, Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1919): Հայտնի է նաև որպես պատմաբան և քաղաքագետ, 1890-1902 թթ. եղել է Փրինսթոնի համալսարանի պրոֆեսոր, իսկ 1902-1910 թթ. եղան համալսարանի ռեկտոր: 1911-1913 թթ. եղել է Նյու Չերսի նահանգի նահանգապետ: 1918 թ. հունվարին առաջ է քաշել տասնչորս կետից քաղկացած խաղաղության ծրագիր: Առաջին աշխարհամարտից հետո՝ զիսավորել է ԱՄՆ-ի պատվիրա-կությունը Փարիզի խաղաղության վեհաժողովում, որի արդյունքները, սակայն, անբարենպաստ եղան Վիլսոնի քաղաքական հեղինակության համար: Նախագահության ժամկետն ավարտվելուց (1921) հետո նա հեռացել է քաղաքական գործունեությունից:

Վիքրի Չարլզ Վերնոն (Charles Vernon Vickery) – 1915 թ. կազմավորված ամերիկյան բարեգործական ընկերության Հայկական նպաստամատույց կոմիտեի հիմնադիրներից մեկը: Մերձավոր Արևելքի նպաստամատույցի ձևավորման օրից վերջինիս զիսավոր քարտուղարը:

Վուդ Լեոնարդ (Leonard Wood, 1860-1927) – ԱՄՆ-ի բանակի գեներալ-մայոր, բժիշկ և պետական ծառայող: Ռազմական գործունեությունը նա սկսել է որպես ռազմական բժիշկ, սահմանին ստացել է պատվո մեդալ, ծառայել իբրև ամերիկյան բանակի շտաբի պետ, Կուրայի ռազմական նահանգապետ և Ֆիլիպինների գեներալ-նահանգապետ: Խապանա-ամերիկյան պատերազմի ժամանակ նա դեկավարել է հեծելազորը, իսկ Թեոդոր Ռուզվելտը նրա տեղակալն էր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վուդը շրջանցվել է զիսավոր հրամանատարության կողմից, սակայն հետո՝ դարձել

Հանրապետական կուսակցության ականավոր առաջնորդ և 1920 թ. նախագահական ընտրություններում առաջատար թեկնածու:

Տեր-Հակոբյան Արքահամ – Կոստանդնուպոլսում ամերիկյան Ռոբերտս քոլեջի դասախուս: 1919 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Փարիզում հրավիրված համագոյային համագումարի աշխատանքների ընթացքում ապրիլի 4-ին ընտրվել է Պողոս Նուբար Փաշայի զիսավորած՝ արևմտահայության շահերը Փարիզի խաղաղության վեհաժողովին ներկայացնող Ազգային պատվիրակության երկրորդ կազմի անդամ:

Ուայթ Հենրի (Henry White, 1850-1927) – 1890-1900-ական թվականների ամերիկյացի ականավոր դիվանագետ, Վերսայիան պայմանագրի ստորագրողներից մեկը: Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Ուայթը Փարիզում զիսավորել է ամերիկյան պատվիրակության՝ Ավստրիայի և Բուլղարիայի հետ խաղաղ պայմանագրերի մշակման աշխատանքները: Վերսալի պայմանագրից ԱՄՆ-ի հրաժարումը վերջ դրեց Ուայթի դիվանագիտական գործունեությանը:

Ուիլյամս Ջոն Շարպ (John Sharp Williams, 1854-1932) – ամերիկյացի քաղաքական գործիչ, Դեմոկրատական կուսակցության անդամ: 1893 թ. ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատ ընտրված Ուիլյամսը, որը հայտնի էր իր հոետորական վարպետությամբ և սուր խելքով, 1903-1909 թթ. եղել է ժողովրդավարական փոքրամասնության առաջնորդ: Հարթելով հայտնի հակառակորդներին՝ 1911 թ. նա տեղափոխվել է ԱՄՆ-ի Սենատ, դարձել Վ. Վիլսոնի ամենահավատարիմ կողմանակիցներից մեկը՝ սկսած 1912 թ. նախագահի պաշտոնում Վիլսոնի առաջադրումից մինչև 1920 թ. Ազգերի լիգային ամերիկյան մասնակցության վավերացման համար պարտված մարտը: Միսիսիպիից սենատոր եղած ժամանակ նա նաև նախագահել է գրադարանների հարցով հանձնաժողովն ու ԱՄՆ-ի համալսա-

րանական կրթության հանձնաժողովը:

Փանջարցիներ կամ փենջարցիներ (the Panjabis) – պատմաշխարհագրական Փենջարի (ներկայում բաժանված է Հնդկաստանի և Պակիստանի միջև) հիմնական բնակչությունը: Մեծամասնությունը խոսում է փենջարերեն, այլք՝ հինդու և ուրդու լեզուներով: Հնդկաստանում մեծ մասը դավանում է հինդուիզմ, Պակիստանում՝ իսլամ: Ա. ք. ա. III հազարամյակից փենջարցիները հայտնի են որպես բարձր մշակույթ ստեղծողներ և հզոր պետությունների հիմնադիրներ: Փենջարցիների հիմնական գրադարանները հողագործությունն է: Զարգացած են ջուլհակությունը, բրուտագործությունը և փայտի գեղարվեստական փորագրությունը:

Փաստրմաճյան Գարեզին (Արմեն Գարո, 1872-1923) – հայ հասարակական, քաղաքական գործիչ, բնագիտության և քիմիայի դոկտոր: 1895 թ. ստանձնել է Ձեյքունի ապատամբներին օժանդակելու գործը, 1896 թ. մասնակցել «Բանկ Օտոմանի» միջադեպին: 1901 թ. հաստատվել է Թիֆլիսում, որտեղ 1905 թ., հայ-թաթարական բախումների ժամանակ, դեկավարել հայերի ինքնապաշտպանությունը: 1908 թ. ընտրվել է թուրքական խորհրդարանի անդամ: 1914 թ. սեպտեմբերին անցել է Կովկաս, գործուն մասնակցություն ունեցել հայկական կամագորական շարժմանը: 1919 թ. որպես Ազգային պատվիրակության և Ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ, մեկնել է ԱՄՆ և նյութական օգնություն կազմակերպել պատերազմից տուժած հայերին: 1920 թ. ապրիլից եղել է Հայաստանի Հանրապետության դեսպանն ԱՄՆ-ում: Կարևոր դեր է կատարել երիտրուքական պարագլուխներին ահաբեկման միջոցով պատժելու «Նեմեսիս» գործոդության դեկավարման ասպարեզում:

Փիթ Ուիլյամ Ուիլոք (William Wheelock Peet, 1851-1942) – Կոստանդնուպոլսում ամերիկյան օտարերկրյա առաքելություն-

ների վարչության հանձնակատար՝ գանձապետ, ով մեծ փորձ և գիտելիքներ ուներ համակարգի կատավարման և թուրքական բյուրոկրատիայի հետ աշխատանքում: Միսիոներական գործունեությամբ էր գրադարձ Թուրքիայում 1881 թ. աշնանից: Նա իրավունքի դոկտորի պատվավոր աստիճանի է արժանացել թե՝ Գրինել քոլեջի և թե՝ Վերմոնտայի համալսարանի կողմից 1917 թ.: Նա, ըստ եռթյան, առաջիններից մեկն էր, եթե ոչ առաջին աշխարհականը, ով լիազորված էր միսիոներական խորհրդի կողմից կատարել բացառապես աշխարհիկ աշխատանք:

Փոլ Ֆրանկ Լյոն (Frank Lyon Polk, 1871-1943) – ամերիկացի ականավոր փաստաբան և դիվանագետ: Իրավաբանական գործունեությունը սկսել է Նյու Յորքում 1897 թ.: 1914 թ. հունվարին քաղաքապետ Միթչելը նրան նշանակում է կորպորացիայի խորհրդական, իսկ 1915 թ. սեպտեմբերին նա նշանակվում է ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի խորհրդական և մնում այդ պաշտոնում մինչև 1919 թ.: 1919-1920 թթ. Փոլը ծառայել է պետական դեպարտամենտում որպես պետական քարտուղարի տեղակալ, այնուհետև՝ 1920 թ., որպես պետական քարտուղարի պաշտոնակատար: 1919 թ. նա գլխավորել է Փարիզում խաղաղության վեհաժողովին մասնակցող ԱՄՆ-ի պատվիրակությունը, իսկ 1919 թ. նախազահ Վիլսոնի և պետքարտուղար Լանսինգի՝ Փարիզից մեկնելուց հետո, ԱՄՆ-ը ներկայացրել խաղաղության բանակցություններին:

Քաջազնունի Հովհաննես (1868-1938) – հայ հասարակական, քաղաքական գործիչ, ՀՅԴ կուսակցության անդամ, որը եռանդուն գործունեություն է ծավալել 1895-1907 թթ.: 1911-1914 թթ. որպես վտարանդի նա ապրել է Ռուսաստանից դուրս, 1917-1918 թթ. ընտրվել Հայոց ազգային խորհրդի և Անդրկովկասյան սեյմի անդամ, մասնակցել Թուրքիայի հետ Տրավյանի և Բարթումի բանակցություններին: 1918 թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը

Քաջազնունուն ընտրել է Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ: Հայաստանի Հանրապետության առաջին կառավարությունը նա զիխավորել է մինչև 1919 թ. սկիզբը: Այնուհետև մեկնել է Եվրոպա և ԱՄՆ՝ Հայաստանի համար դաշնակից պետություններից օգնություն խնդրելու, մասնակցել 1919-1920 թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսին: 1920 թ. սեպտեմբերին նա վերադարձել է Երևան, ընտրվել Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահի տեղակալ: Խորհրդային իշխանության հաստատումից հետո ձերբակալվել է, իսկ 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ ազատվել բանտից: 1921-1924 թթ. նա գտնվել է վտարանովիության մեջ: 1923 թ. օգոստոսին դուրս է եկել ՀՅԴ կուսակցությունից, իսկ 1924 թ. Վերադարձել հայրենիք՝ Խորհրդային Հայաստան:

Քարտուղան Վահան (1883-1934) – ամերիկահայ ակտիվ քաղաքական գործիչ, իրավաբան: Շուրջ երկու տասնամյակ պայքարել է հայերի իրավունքների համար: Վ. Քարտուղանը Նյու Յորքում հիմնած Մամուլի հայկական գրասենյակի (Armenian Press Bureau) տնօրենն էր և թողարկվող հիմնական նյութերի հեղինակը: 1918 թ. դեկտեմբերին նա հիմնել է Հայաստանի անկախության ամերիկյան հանձնախումբը (American Committee for the Independence of Armenia – ACIA): 1918-1920 թթ. ընթացքում Վ. Քարտուղանի և նրա գործընկերների գործունեության ամենամեծ արդյունքը՝ 1920 թ. ապրիլին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումն էր: Վ. Քարտուղանին հաջողվել է համախմբել ամերիկյան համրային կարծիքն ու քաղաքական կումբն ընդդեմ ամերիկա-բուրքական՝ 1923 թ. օգոստոսի 6-ին Լոզանում կնքված պայմանագրի և կանխել վերջինիս ընդունումն ԱՄՆ-ի Սենատում, ինչպես նաև վերահաստատել հայոց պահանջատիրության հիմքը հանդիսացող՝ ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավաբար վճիռը:

Քինգ Վիլյամ Հենրի (William Henry King, 1863-1949) – ամերիկյան քաղաքական գործիչ և իրավաբան Սովորելու Ամերիկյան Յունիվերսիտետում (Յուլիա): ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի անդամ (1897-1901): Լինելով դեմոկրատ՝ Քինգը 1917-1941 թթ. Միացյալ Նահանգների Սենատում ներկայացրել է Յուլիա նահանգը:

Ֆիլիպս Ուիլյամ (William Phillips, 1878-1968) – ամերիկացի դիվանագետ, քաղաքական և հաստիքով: Նախագահ Վ. Վիլսոնի օրոր՝ 1914 թ., նշանակվել է պետական քարտուղարի օգնական և այդ պաշտոնում մնացել մինչև 1920 թ. սկզբում լինելով երրորդ օգնական, իսկ 1917 թ. հունվարից ստանալով առաջին օգնականի աստիճանը: 1920 թ. մարտի սկզբին նշանակվել է լիազոր նախարար Նիդեղլանդներում և Լյուքսեմբուրգում: Մինչ 1941 թ. Դիվանագիտական աշխատանքից հեռանալը դեսպան է նշանակվել տարբեր երկրներում:

Ֆրանսիական օտարերկրյա լեգեոն (ֆր. Légion étrangère) – զորամիավորում, որն ընդգրկված է Ֆրանսիայի ցամաքային զորքերի կազմում և համալրվում է հիմնականում օտարերկրյացիներից: Ֆրանսիական լեգեոնը 1831 թ. ստեղծել է թագավոր Լուի Ֆիլիպ I-ը մի քանի նախորդ գնդերի հիման վրա: Իր պատմության առանձին ժամանակահատվածներում լեգեոնն ունեցել է ավելի քան քառասուն հազար մարդ: Հիմնադրումից ի վեր՝ XX դարի վերջին, լեգեոնի կանաչ-կարմր դրոշի ներքո ծառայել է ավելի քան 600 հազար մարդ ամբողջ աշխարհից: Լեգեոնի կարգախոսն է՝ «Պատիվ և հավատարմություն»: Այն այսօր ևս, ինչպես 1831 թվականին, ենթարկվում է, միայն մեկ մարդու Ֆրանսիայի նախագահին:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արխիվային փաստաթղթեր

United States National Archives, Washington D.C., Record Group 59, class 860J.01/ document 29.

United States National Archives, Washington D.C., Record Group 59, class 860J.01/ document 53.

United States National Archives, Washington D.C., Record Group 59, class 860J.01/ document 82.

United States National Archives, Washington D.C., Record Group 256, class 867B.00/ document 68.

Տպագիր սկզբանդրութեր

Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրֆ. Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972.

Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., Сост. и пер. Г. Г. Махмурян, изд. 2-ое, доп., Ереван, 2012.

Maintenance of Peace in Armenia. Hearings before Subcommittee of the Committee on Foreign Relations. United States Senate, Sixty-Sixth Congress, First Session on S.J.R.106, A Joint Resolution For the Maintenance of Peace in Armenia, Washington, GPO, 1919.

United States Department of State, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919, The Paris Peace Conference, in 13 volumes, Washington D.C., 1942-1947, vol. XII.

United States Department of State, Papers Relating to the Foreign Relations of the United States, 1919, in 2 volumes, Washington,

1934, vol. II.

United States Congress, Congressional Record, 66th Congress, 1st Session, vol. LVIII, pt. 4, Washington, GPO, 1919.

United States Congress, Congressional Record, 66th Congress, 1st Session, vol. LVIII, pt. 5, Washington, GPO, 1919.

United States Senate, Journal of the Senate, 66th Congress, 1st session, Washington, GPO, 1919.

Պարբերական մամուլ

"Armenian Review", Boston, 1980, vol. 33, N 4; 1981, vol. 34, N 1, N 2, N 4:

Գրականություն

Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:

Հովհաննիսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետություն, Վերսալից-Լոնդոն 1919-1920, հ. II, Երևան, 2014:

Махмурян Г.Г., Армения в политике США 1917-1923 гг., Ереван, 2018.

Ованиսյան Ր. Գ., Международные отношения Республики Армения, 1918-1920 гг., Ереван, 2007.

Hovannissian R. G., The Republic of Armenia, From Versailles to London, 1919-1920, vol. II, Berkeley – Los Angeles-London, 1982.



Աշեր Կլերեսե Դուզլաս



Բարյոն Ջեյմս Լիի



Բրիսթոլ Մարկ Լամբերտ



Հովհեր Ներքերտ Բլարկ



Մալրում Վարդանի
գրքի կազմը



Մեյն Ջոն Հանտոն Թոմաս



Գևորգ Սարգսյան



Լանսինգ Ունդերմեյ



Հասկել Ուիլյամ Նաֆյու



Մոնր Ջեյմս




Մորգենթաու Շենքի



Յարրու Էրենսը



Հարրուր Ջեյմս Փայքբի



Հարդինգ Ուորեն Գամալիել



Հիշրոք Գիլբերտ Մոնտե



Նյու Հարի Մոյուարտ



Ուիլյամ Ջոն Շարպ



Ջեյմս Շեյմս Ուորսոն



Զերուիր Հ. Ք.



Արշակ Պետրոսյան



Սվագյան Միհրան



Վարդան Վարդան Թոոմաս



Գարեգին Նժդեհ



Փոլք Ֆրանկ Լայոն



Քաջազնունի Հովհաննես



Գարեգին Կահան



Ֆիլիպ Ուիլյամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԱԾ	5
ԽԱՂԱՂՈԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ-Ի ՍԵՆԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԽԹԱՀԱՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՌԱՄՆԵՐԻ (27.09.1919 – 10.10.1919) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ	23
ՀԱՄԱՏԵՂ ԲԱՆԱՉԵՎ	29
ՊՐՆ ՄԻՀՐԱՄ ՍՎԱՉԼԻԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	30
ՊՐՆ Մ. Հ. ԳՈՒԼԵՍՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	49
ՊՐՆ Մ. ՎԱՐԴԱՆ ՄԱԼՔՈՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	59
ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ, ՀԱՐԳԱՐԺԱՆ ՈՒԻԼՅԱՄ ՖԻԼԻՊՈՒՄ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	99
ՊՐՆ ԶՈՐԶ Բ. ՀԱՅՈՒ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	113
ՊՐՆ ԱԲՐԱՀԱՄ ԹՈՒԼԻՏԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	123
ԳԵՆԵՐԱԼ ԱՐՄԵՆ ԹՈՐԳՈՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	144
ՊՐՆ ՈՒԽՈՂԹԵՐ ԶՈՐԶ ՍՄԻԹԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	164
ԳՐԻՆԵԼ ՔՈԼԵԶԻ ՏՆՈՐԵՆ ՊՐՆ Զ. Թ. ՄԵՅՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	203
ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՊՐՆ Հ. Ք. ԶԵՐՈՒԹԻԹԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	258
ՊՐՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱԶԱԽՆՈՒՄՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱԿԱԿԻՆ ԱԿԱԿԱՀԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	276
ԴՈԿՏՈՐ Գ. ՓԱՍՏՐՄԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	281
ՊՐՆ ՎԱՀԱՆ ՔԱՐՏԱՋՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ	286
SUMMARY	315
РЕЗЮМЕ	318
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	321
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	350

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼՍՈՒԻՄՆԵՐ

ԱՄՆ-Ի ՍԵՎԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ
(27.09.1919 – 10.10.1919)

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻ
աշխատասիրությամբ

Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
PA, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>